

Հ.Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# ԼԵՂԱԿՈՒՄ ՀԱՅՈՒԹՅԱՆ 1918-1921



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

---

Г. М. АРУТЮНЯН

НАГОРНЫЙ КАРАБАХ  
В 1918–1921 ГГ.

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
ЕРЕВАН

1996

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմուրյան ինստիտուտի գիտական խորհրդի  
որոշմամբ

Պատմախանառու խմբագիր՝  
պատմական գիտուրյանների դոկտոր, պրոֆեսոր  
Վ. Ն. ՂԱԶԱԽԵՅՅԱՆ

Դիրքը նրանացակարյան ևն Երաշխավորել գրախոսոներ՝ պատմական գիտու-  
րյանների թեկնածուներ Ա. Մ. ՀԱՅՐԵՅՅԱՆԻ և Պ. Մ. ՄԱՅԻՅՅԱՆԻ


ՀԱՐԱՒԹՅՈՒՆՅԱՆ Հ. Մ.

Հ 421 Անոնային Ղարաբաղը 1918—1921 րր. (Թատ. խմբ. Վ. Ն. Ղազախեյյան.) —  
Եր.: ՀՀ ԳԱԱ հրատ., 1996. —

1918—1921 րր. Անոնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձուրյունների պատմուրյունը արտացըլող սույն գրքում արձարժվում են Ղարաբաղի իշխանության մարմինների ստեղծման, դեպի Ղարաբաղ բռւմերի կազմակերպած արշավարձի, արցախանայուրյան ներսական պայմանների նիմնախնդիրները:

Արդիիվային նորանայտ փաստերի նամակողմանի վերածուրյան շնորհիվ ցույց է տրվում, որ Արցախը քաղաքական զննասեղան էր բարձրացվել օտար պետուրյունների, նախ և առաջ նորեդային թուսասանի և նեմալական Թաւրիայի շամերի մերձեցման արդյունքում: Նոր լուսաբանում է սահցել Անոնային Ղարաբաղի նկատմամբ Անզիիայի խարդախ և բիրտ քաղաքականուրյունը, Անզիանիկ զորավարի Զանգեզուր նասնելու, բայց Արցախ շմանելու, ինչպես նաև Նուշվա գնդի պատմուրյունը:

Դիրքը նախատեսվում է պատմաբանների և ընթեցող լայն շրջանների նամար:



14-րդ դարից Ղարաբաղ անվանյալ տարածքը պատմական Հայաստանի Արցախ նահանգի մի մասն է:<sup>1</sup> Լեռնային Ղարաբաղը ֆիզիկաաշխարհագրական առումով բնդգրկել է նախկին Լեռնային Ղարաբաղի Խնճնավար Մարզի<sup>2</sup> տարածքը, (Հաղորդի, Մարտակերտի, Մարտոնու, Ասկերանի, Շուշիի շրջանները), ինչպես նաև Լաշինի, Քելլաջարի, Դաշեսանի, Գետարելի, Շահումյանի, Ջերախիլի, Աղդամի, Միր-Բաշիրի (այժմ՝ Թարբան), Աղջարեղի, Ղուբարլուի, Կասում Խօմայիլի (այժմ՝ Գերանբո) շրջանները (ամբողջուրյամբ), Խանլարի, Թովուզի, Շամխարի և Ֆիզուլու շրջանները (մասամբ):

1867 թ. դեկտեմբերի 9-ին Ալեքսանդր 2-րդ ցարը ստորագրեց «Կովկասյան և Անդրկովկասյան Երկրամասի կառավարման բարեփոխումների մասին» կանոնադրությունը, որը գործողության մեջ դրվեց 1868 թ. նունվարի մեկից: Այդ կանոնադրության համաձայն Անդրկովկասը բաժանվեց նինգ նահանգների՝ Պուրայիսիի, Թիֆլիսի, Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի: Հին Գանձակը վերանվանվեց Ելիզավետպոլ, որի անունով էլ կոչվեց նոր նահանգը.<sup>3</sup> Այս նահանգի կազմում մտան Արցախը, Զանգեզուրը և հայկական այլ գավառներ: Արցախի գավառական կենտրոններ դարձան Թարբարը (Զիվանշիրի համար) և Ջերախիլը (համանուն գավառի համար):<sup>4</sup> Ղարաբաղն այս նահանգի կազմում մնաց մինչև 1917 թվականը: 1917 թ. Փետրվարյան նեղափոխուրյունը կործանեց Ռումանիային դարավոր կայսրությունը: Հեղափոխության ալիքը ցնցեց նաև Էրենկրոնական ու մշակութային խայտարդեալ կազմ ունեցող Կովկասը: Հեղափոխուրյունը ազատության միջոցով դեպի անկա-

1 Ю. Г. Барсегов. Право на самоопределение основа демократического решения межнациональных проблем. К проблеме Нагорного Карабаха. Еր., 1989, с. 5.

2 1991 թ. սեպտեմբերից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

3 1918 թ. սկզբին Ելիզավետպոլը վերանվանվեց Գանձակ:

4 Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀՊԿ), ֆ.199, ց.1, գ.128, թ.248:

խուրյուն զնալու հույսեր արքացրեց նախկին կայսրուրյան բազմազգ ժողովուրցների, այդ թվում՝ նայուրյան նոզում:

Անդրկովկասում ստեղծված բաղաշական բարդ ու լարված իրադրուրյանը տիրապետելու և այն ի շահ նեղափոխուրյան խրնդիրներին ծառայեցնելու նպատակներից ելնելով, Ժամանակավոր կառավարուրյունը Երկրամասում կատարեց զործադիր ու օրենսդիր մարմինների փոխուրյուններ, ինչպես նաև վարչատարածքային բաժանումներ: Ժամանակավոր կառավարուրյունը տրամադիր էր անցկացնել Անդրկովկասի վարչատարածքային բաժանումներ՝ ազգային-տարածքային բնդիանուրյան սկզբունքով: Այս բնդիանուր բաղաշական ոլորտում էր կառավարուրյունը դիտունան նաև նայկական զավառների նարցի լուծումը: Նախատեսվող նայկական վարչական միավորի մեջ պետք է մտնեին նայկական բոլոր զավառները, այդ թվում նաև Ղարաբաղը:<sup>1</sup>

Հիմնովին վերափոխվեցին Անդրկովկասի նախկին իշխանուրյունները, իշխանուրյան ներկայացուցիչները և պաշտոնյանները: Ժամանակավոր կառավարուրյունը վերացրեց Կովկասի փոխարքայուրյունը: 1917 թ. մարտի 9-ի որոշմամբ կազմակերպվեց Անդրկովկասյան նախուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ): Անցնելով իր պարտականությունների կատարմանը, նախուկ կոմիտեն ձեռնամուխ եղավ ինքնավարուրյան մարմինների կազմակերպմանը Երկրամասում: Ժամանակավորական, մինչև սահմանադիր ժողովի երավիրումը, զյուղերում, շրջաններում, զավառներում և մարզերում բնադրությունների միջոցով ստեղծվեցին զործադիր կոմիտեներ, որոնք նանդիացան ՕԶԱԿՈՄ-ի մարմիններ:

Փետրվարյան նեղափոխուրյունից հետո Արցախ աշխանքը ապրում էր լիարյուն ինքնուրույն կյանքով: Ինչպես ամենուրեք, այնպիսի էլ կենացին Ղարաբաղում ստեղծվում էին տեղական իշխանուրյան զործադիր մարմիններ: Այդ ուղղուրյամբ արցախայու-

1 Այդ սկզբունքով էլ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը կազմել էր մի ծրագիր (ըստ որի թիֆլիսի, Երևանի, Կարսի և Գանձակի Նահանգների հայկական գաղանձներից պիտի ստեղծվեին հայկական Նահանգները) և ուղարկել Պետրոպալատ՝ Ժամանակավոր կառավարությանը: Մրցպիրը թեև համարության արժանացագազ, բայց Ժամանակավոր կառավարությունը լհացրեց այն կյանքի կողեւ: Տես՝ Առեւն, Հայքագործությանի մը իրշատակները: Թէ՛րան 1932, հ.7, էջ 131:

րյանք մեծ օգնություն ցույց տվեց 1917 թ. մարտի սկզբին Թիֆլիսից Շուշի գործողված Անդրկովկասյան հատուկ կոմիտեի լիազոր ներկայացուցիչ Մ. Ղարաբեկյանը:<sup>1</sup> 1917 թ. մարտի 11-ին Շուշիի բաղաբազում Գերասիմ Մելիք—Շահնազարյանի նախագահությամբ բաղաբան Ղազանչեցոց եկեղեցում հրամիւրվեց նախապատրաստական ժողով, որը բնեարկեց զավանի գործադիր մարմին ընտրելու հարցը: Հաջորդ օր՝ մարտի 12-ին զավանի էվենգիությամբ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի գործադիր մարմին ընտրությունը, որին մասնակցեցին բնակչության բոլոր խավերը: Էնտրվեց 40 հոգուց բաղկացած գործադիր կոմիտե՝ Լեռնային Ղարաբաղի կյանքը դեկավարելու համար:<sup>2</sup> Նշենք նաև, որ Փետրվարյան հեղափոխությունից հետո Շուշի բաղամում ստեղծվեց բանվորական ներկայացուցիչների խորհուրդ, որին հետագայում միացան զինվորական և զյուղացիական համանուն խորհուրդները:<sup>3</sup> Հիշյալ խորհուրդները գտնվում էին Սոցիալ-դեմոկրատների ազգեցուրյան տակ:

Արցախի համար բախտորոշ այդ օրերին Հայ Հեղափոխական Դաշնակցության Ապառաժի (Ղարաբաղ) կոմիտեն հատուկ կոչով դիմեց արցախահայությանը և նրա բաղաբական կազմակերպություններին:<sup>4</sup> Նրանում իրատեսութեն էր զնանատվում Փետրվարյան հեղափոխության պատմական դերը, համակողմանի ներկայացվում նեղափոխությունից հետո Երկրում տիրող բաղաբական իրավինակը և այդ ֆոնի վրա՝ Արցախի դրությունը, ինչպես նաև արցախահայության և նրա բաղաբական ուժերի անելիքները: Կոչը պարզաբնում էր, որ նին իշխանությանը փոխարինել է Պ. Դումայի, բանվորության և զորքի ներկայացուցիչներից կազմված ժամանակագործ կառավարությունը, որը դեկավարում է սկսված հեղափոխու-

1 «Նեցուկ», 18 օգոստոսի 1917 թ.:

2 «Մաշկ», 30 մարտի 1917 թ.:

3 «Նեցուկ», 13 սեպտեմբերի 1917 թ.:

4 Լեռնային Ղարաբաղի իրականության մեջ գոյություն ունեին Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Սոցիալ-դեմոկրատական, Սոցիալիստ-հեղափոխականների և Հայ ժողովրդական կուսակցությունները: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, 1917 թ. վերջին բաժանմեց բոլշևիկյան և մենչենիկյան ճյուղերի: Տես՝ ՀՀՊՊԿ, ֆ.314, գ.1, գ.34, թթ. 41-42:

բյունը և պաշտպանում է լայն ժողովրդական ու ազգային իրավունքների:

«Ինչ պետք է լինի մեր անելիքը» հարցին կոչք պատասխանում էր՝ նեցուկ կանգնել նոր կառավարությանը<sup>1</sup> և պատրաստ լինել ինքնազնարերությամբ ճիշճակած ազատությունը ամրապնդելու համար։ Նոր կարգը ամրապնդելու համար անհրաժեշտ է նույնպես պահպանել ներքին հանգստություն և կարգուկանոն։ Այսպիս, հակառագրական օրերին, երբ դրսից քշնամին է սպառնում, խակ ներսից՝ հին կարգերի կողմնակիցները, երբ վեճովում է դասակարգերի և ազգերի բախտը, շարունակում ենք կարդալ կոշում, պետք է լուս կուտակցական և ազգային տարածայնությունները, անհապաղ խմբվել, խոտանել շարժերը՝ դիմադրելու համար հականեղափոխական փորձերին և իրականացնելու լայն ժողովրդական և ազգային պատություններ։<sup>2</sup>

Լեռնային Ղարաբաղը, դուրս գալով Ելիզավետպոլի նահանգից, դարձավ հայկական առանձին իշխանություն, ստեղծելով իր տեղական Ազգային խորհուրդը, որպես գործադիր իշխանության վերադաս մարմին։ Լեռնային Ղարաբաղի իշխանությունը Հայաստանի նորագույն շրջանի վարչականացական խոշոր կազմավորումներից էր և իր նշանակալի դերն է ունեցել հայ ժողովրդի սոցիալ-տեսական ու մշակութային կյանքում։

«Հայոց արեւից կողմանց»՝ Արցախ աշխարհի բազմադարյան պատմության ամենածանր ու դրամատիկ իրադարձություններով լի ժամանակաշրջաններից մեկը, ըերես 1918-1921 թվականներն են։ Հենց այդ տարիներին էր, որ Լեռնային Ղարաբաղը դարձավ «օլինելի տարածք»։ Աղրբեշանի նորաստեղծ մուսավարական կառավարությունը նետեղական պայման էր մղում Լեռնային Ղարաբաղին, ինչպես նաև Զանգեզուրին և Նախիջևանին տիրելու համար։ Այս գործում Աղրբեշանին բացահայտ կերպով օգնում էին Թուրքիան, որոշ ժամանակ նաև՝ բրիտանական գաղութարարները։ Թուրքիան և բրիտանացիների խպատակներն ակնհայտ էին՝ տարածա-

1 Անգրկով կառում գործող կուսակցությունները, բացառությամբ բոլշեիկների, պաշտպանում էին ժամանակավոր կառավարությանը։

2 «Արև», 27 մարտի 1917 թ.։

շրջանում ծագած «տարածքային վեներ» ծառայեցնել իրենց սեփական շահերին: Մուսավարականների անընդմեջ հարձակումները և տեղական մուսուլմանների զինված խորվությունները ծանր վիճակ ստեղծեցին Լեռնային Ղարաբաղում, իսկ իմաստիալիստական տերությունների միջամտուրյունն ավելի բարդացրեց դրույթունը: Այսպիսի պայմաններում արցախահայությունը տարիներ շարունակ անհավասար գոյապայցար մղեց իր բնօրրան Երկրի վրա ոտնձգություն կատարող քշնամինների դեմ: Այս տեսակեաից Լեռնային Ղարաբաղի հայության 1918—1921 թթ. պատմուրյունը կարոտ է լուրջ ու հանգամանալի ուսումնասիրության: Զենայած այդ հիմնախնդրին նվիրված մի շաբաթ ուսումնասիրությունների<sup>1</sup> և այլ գրեթե<sup>2</sup> գոյությանը, այնուամենայնիվ շկա մի աշխատուրյուն, որը համակողմանուրեն լուսարաններ 1918—1921 թվականների Լեռնային Ղարաբաղի ամբողջական պատմուրյունը: Զենարկելով տվյալ ժամանակաշրջանի Լեռնային Ղարաբաղի պատմուրյան ուսումնասիրում՝ նպատակ ենք դրել իմի բերել արցախահայության կյանքին վերաբերող նյութերը, շարադրել տարածաշրջանի իրական պատմուրյունը, ցույց տալ հայոց նոր պետականության մի հատվածի ազգային ինքնուրյան պահպանման համար պայմանի հարուստ դրվագներով հագեցած իրական-պատմական կենսագրություններ:

Սույն գրի համար աղբյուրագիտական բազա են ծառայել արխիվային նյութերը, այլ սկզբնաղբյուրներ ու պատմագիտական գրականուրյունը: Թեմայի վերաբերյալ առանձնապես հարուստ նյութեր ու տվյալներ են պահպանվում Հայաստանի Հանրապետության պատմուրյան պետական կենտրոնական, Հայաստանի Հանրապետության հասարակական և բաղաշական կազմակերպությունների փաստարձերի կենտրոնական պետական, Հայաստանի Հան-

1 Արցախի Հիմնախնդրի և այդ ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ վերցին տարիներին արժեքավոր ուսումնասիրություններով հանդիս են հեկել Հ. Միռնյանը, Բ. Ռուբարյանը, Լ. Խուրշադյանը, Վ. Միքայելյանը, Հ. Աբրահամյանը, Հ. Կարապետյանը, Հ. Ավետիսյանը, Յու. Բարսեղյանը, և. Բարսեղյանը, Պ. Մուրադյանը:

2 Нагорный Карабах в 1918—1923 гг. «Сборник документов и материалов». Ер., 1992.

բայետուրյան նորագույն պատմուրյան պետական կենտրոնական, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնուրյան արխիվներում:

Մասնավորապես հարուստ տվյալներ է բռվաճակում «Լեռնային Ղարաբաղը 1918—1923 թթ. Փաստարդքերի և նյութերի ժողովածովն»:

Լայնուրեն օգտագործել ենք տեղական ու արտասահմանյան մամուլը, ինչպես նաև դեպքերի ականատես ու մասնակից գործիչների հուշագրությունները:

Մենք համոզված ենք, որ այնպիսի բարդ հիմնահարց, ինչպիսին 1918—1921 թթ. ժամանակաշրջանում կենային Ղարաբաղի պատմուրյունն է, անհնար է մեկ աշխատուրյամբ սպառից պատասխան տալ, ուստի այն կարիք է զգում լրացնիշ ուսումնասիրուրյունների և պարզաբնումների:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՐԱԲԵՂԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹ-  
ԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ.

Փետրվարյան հեղափոխության առաջին խանդավառ ոմեղաբարձրացած հետո սկսվեց առօրյա կյանքի լուրջ վերափոխումը: Կյանքի էր կոչում այն ամենը, ինչն այնքան ոգևորությամբ փառարանվել էր փողոցներում ու հրապարակներում՝ ազատության դրոշի տակ: Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր ընթացք տվեց զարդացող զեպքերին, փոխեց քաղաքական իրադրությունը: Հեղափոխությունը կասեցրեց նախկին կայսրության ժողովուրդների համար փետրվարով սկսված ազատության հաղթարշավը և ազգային պետական նոր միավորումների ստեղծման գործընթացը: Այս ընդհանուր վիճակն ամբողջապես հատկանշական էր նաև Անդրկովկասին: Հայաստանը և Անդրկովկասը ապրում էին տագնապալիօրեր: Քաղաքական անկայուն վիճակն, անիշխանությունը, տնտեսական անկումը, բնակչության կենսամակարդակի կտրուկ վատթարացումը, թուրք—թաթարական հրոսակների հարձակումները և նրանց կազմակերպած խոռվությունները հայ ժողովրդի համար ստեղծել էին շափազանց ծանր ու կործանարար պայմաններ: Անդրկովկասի երեք ժողովուրդների (հայեր, վրացիներ, թաթարներ) ստեղծած գործադիր և օրենսդիր իշխանություններում,<sup>1</sup> ազգային—տարածքային լուրջ վեճերի ու քաղաքական տարածերժգիրքորոշումների հետ կապված, տիրում էր փոխադարձ անվտանգություն և թշնամանը:

Ազգային սեփական իշխանության և Անդրկովկասի հայկական գավառների միավորման ուղղությամբ արդյունավետ գործունեություն ժավալեց թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը<sup>2</sup>, որն

1 1917 թ. նոյեմբերի 15-ին թիֆլիսում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասի կոմիտարիատ, որը կազմվեց ազգային կուսակցական ներկայացուցչության մկրտանքով: Մինչ այդ, թաքվում Ստ. Շահումյանի զիխավորությամբ ստեղծվել էր բանվորների և զինվորների պատգամավորների՝ խորհրդի գործադիր կոմիտե:

2 Ընտրվել է 1917 թ. սեպտեմբերին Թիֆլիսում: Նրա նախագահը գրող Ավետիս Ահարոնյանն էր:

իրավունք էր ստացել Հանգես գալու որպես երկրամասի Հայության լիազոր ներկայացուցիչ՝ օժտված կառավարման ֆունկցիաներով։ Խորհուրդը խնդիր ուներ Թիֆլիսի, Երևանի, Կարսի և Գանձակի նահանգների Հայկական գավառներից ստեղծել Հայկական նահանգներ։ Նա լիազոր ներկայացուցիչներ ուղարկեց Անդրկովկասի Հայարնակ գավառներ, որոնք ամենուրեք կազմեցին տեղական Ազգային խորհուրդներ։ Հայոց Ազգային խորհուրդը դրանով սկիզբ դրեց Անդրկովկասի Հայկական գավառների կենտրոնացմանը Համազգային ամբողջության մեջ։

Ինչպես արձագանքեց Լեռնային Ղարաբաղն այդ ամենին։ Նախ՝ արցախահայության վիճակն ավելի ծանրացավ։ Աղրբեջանական մուսավաթականների և նրանց թիկունքին կանգնած թուրքերի համար Հայաստանը անդամահատելու և ստրկացնելու նպաստավոր պայմաններ ստեղծվեցին։ Հայտնի է, որ 1917 թ. նոյեմբերից սկսած, Անդրկովկասում և թուրքական ճակատում գտնվող ուսուական զորքերը լրեցին դիրքերը։ Ռուսական զորքերը մոլեգնորեն մերկացնում էին ուազմաճակատները և խուժում «դեպի տուն», դեպի Ռուսաստան<sup>1</sup>, իսկ նրանց քայլ առ քայլ հետապնդում էր թուրքական բանակը։ Ռազմաճակատից ուստի զինվորների փախուստը (փախում էին գումարեներով, գնացքներով, հետիոտն) 1918 թ. հունվարին սպառնալից շափեր ընդունեց։ Ռազմաճակատը մերկացրած ուսուական զորքերի տեղը բռնում էին Հայկական նորաստեղծ ազգային դիվիզիաները, որոնք, սակայն, անկարող էին կասեցնել ուազմաճակատի գահավիժումը։

Հայ ժողովողի զիխին կախվեց մահացու վաանգ։ Հայոց Ազգային խորհուրդը թուրք-թաթարական Հարձակմանը դիմակայելու համար փորձեց հենվել Հայաստանում և նրանից գուրս եղած ուսուական զինված ուժերի վրա։ Նա կազմակերպեց ուսուական նոր զորամասեր, նյութապես օղնեց նրանց և փորձեց այդ զորամասերը սրահել կովկասյան ճակատում։ Բայց այդ ջանքերը մնացին անարդյունք, որովհետեւ «Ռուսը, — ինչպես բացատրել է Ռուբեն

1 Քրաստանի տարածքով և երկրամասի մուսուլմանական շրջաններով անցնելիս, ուսուական զորամասերը շատ համարակի ենթարկվում էին Հարձակումների և զինաթափման։

Տեր—Մինասյանը, — կծոտեր տուն վերադառնալ, իսկ Ռուսաստանի համար այնքան էլ արժեք. չեր Հայաստանը, որ մտածեր նրա փրկության համար: Նա զբաղված էր իր ներքին գործերով<sup>1</sup>: Մինչդեռ ոռուների նահանջը, հասկանալի պատճառով, շահեկան էր թաթար բնակչության համար: Ահա թե ինչու, երբ հայերը գերբնական ճիգ էին թափում կանգնեցնելու ոռու զինվորներին, պահելու նրանց Կովկասում, այդ նույն ժամանակ ռմանմեղական ժողովուրդները խնդությամբ էին դիտում ոռու զորքի ոչխարային փախուստը Կովկասից<sup>2</sup>, — նշում էր Ս. Վրացյանը:

Նահանջող ոռու զինվորների զենքը և ռազմամթերքը հիմնական-նում զավթեցին թաթարներն ու վրացիները, իսկ Հայաստանին բաժին հասան թուրքական արշավանքը, բազմահազար հայ գաղթականությունը և թաթար—աղորեջանական թշնամությունը:

Այդ օրերին անդրկովկասյան ժողովուրդներին միավորող Սեյմը իրական ուժ չուներ իր տրամադրության տակ և ոչ էլ ցանկություն (թաթարների և վրացիների թրբասիրական բաղաքականության պատճառով)<sup>3</sup>՝ դիմակալելու արտաքին թշնամիներին՝ զիխավորապես թուրքիային:

Անսանձ էր դարձել նաև ներքին թուրքը: Թուրք բեկությունը ազատության ամիսների ընթացքում կուտակած մաղձը շանում էր թափել արցախահայության զլխին, ուստի եռանդուն կերպով սկսեց զինել թրբական տգետ ու խավար զանգվածներին: Հայ բնակչության համար իսկական չարիք էին դարձել թաթար դասալիք զինվորները: Նրանք զանազան վայրերում, ավագակային խմբեր կազմելով, զբաղվում էին ավագակությամբ ու թալանով: Ավագակախմբերն իրենց ոհմակներով վիստում էին Եվլախ—Շուշի հանապարհի վրա և Մուղանի հարթավայրում: Նրանք մշտապես հարձակվում էին սահմանագծի հայ գյուղերի վրա, սպանում ու խոշտանգում մարդկանց, բռնաբարում կանանց ու աղջիկներին, թալանում ունեցվածքը:<sup>3</sup> «Աշխատավոր» թերթն իր համարներից մեկում նշում է, որ բացի տնտեսական ճգնաժամից ազգաբնակչու-

1. Ռուբեն, նշվ. աշխ., էջ 137:

2. «Հայրենիք», Բութոն, նոյեմբեր 1922, էջ 43—44:

3. ՀՀՊՊԱ, ֆ. 22, ց.1, գ.24, մաս 3, թ. 318:

թյունը, Հատկապես Գանձակի նահանգում, կանգնած է մի այլ մեծ շարիքի հանգեց, զա մեծ շափերի հասնող ավագականությունն է, որը սարսափի մեջ է գցել գյուղացիությանը։ Ավագակություն անողները, ինչպես խոստովանում էին Շուշվա մահմեդականները, գրեթե բացառապես մուսուլմաններ են։<sup>1</sup>

Ազրբեջանական ելուղակները, զինված ոուսական զենքով, ուկորված թուրքերի հաջողություններով, Ղարաբաղի զանազան վայրերում հրահրում էին հայ—թաթարական արյունալի կոփվներ։ Հայ—թաթարական ընդհարումների վտանգը զնալով սաստկանում էր, ճիշտ է, թաթարական զանգվածները անկազմակերպ էին, սակայն մինչև ատամները զինված էին։ Մինչդեռ արցախահայությունը, թեև համախմբված էր, բայց վատ էր զինված։ Այս և նման կարգի հանգամանքները նկատի ունենալով, Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը ամեն միջոց գործազրում էր, որպեսզի խուսափեր ընդհարումներից։

Անիշխանության ճիրաններում հեծող լեռնային Ղարաբաղը հայտնվեց նաև մեկուսացման մեջ, ամբողջովին կարվեց Բաքվից ու Զանգեզուրից։ Բոլորովին փակվեցին հաղորդակցության ճանապարհները։ Դրսից մթերքների ներմուծումը դադարեց։ Եղած պաշտարները սպառվում էին։ Գները կտրուկ աճեցին։ Փողովուրդը հեղնանքով ասում էր, որ Շուշիում մթերքները թանկանում են ոչ թե օրերով, այլ ժամերով։<sup>2</sup> Պարենային ճգնաժամը մեղմելու համար քաղաքային պարենավորման կոմիտեն ընտրեց 12 հոգուց բաղկացած հանձնաժողով։<sup>3</sup> որը պետք է նոր սակագներ նշանակեր մթերքների վրա։<sup>4</sup>

Գավառի ներքին կարգ ու կանոնին հետևելու և բնակչության պարենի հետ կապված խնդիրները լուծելու համար Շուշիում կաղմբեց խառը հանձնաժողով, բաղկացած հայ և թուրք բնակչության ներկայացուցիչներից։ Հանձնաժողովի նախագահ՝ նշանակվեց գավառական կոմիտեար Լ. Վարդապետյանը։<sup>5</sup> Ցավոք, ձեռ-

1 Աշխատավորը, 12 գեկտեմբերի 1917 թ.։

2 Նեցուկը, 8 նոյեմբերի 1917 թ.։

3 Նոյեմբերում, 10 նոյեմբերի 1917 թ.։

4 ԱՄշակը, 12 նոյեմբերի 1917 թ.։

Նարկված միջոցառումները ցանկալի արդյունք շտվեցին։ Լեռնային Ղարաբաղում սոցիալական լարվածությունը օր-օրի խորանում էր։ Դրությունն այն աստիճան հուսահատական էր, որ Շուշվա գործադիր կոմիտեի նախագահը հարկադրված հեռագրեց Անդրկովկասյան կոմիտարիատին, տեղեկացնելով, որ Լեռնային Ղարաբաղում ավելի քան մեկ ամիս պարենային ճգնաժամ է՝ չկան ալլուր, շաբար և այլ անհրաժեշտ մթերքներ, իսկ պարբենի սպասված պաշարը կողոպրտվել է Եվլախ կայարանում։<sup>1</sup>

Գանձակում և Ղարաբաղում տիրող իրավիճակին ծանոթաւու, անիշխանությանը վերջ տալու, բնակչությանը պարենով ապահովելու և Հայ—թաթարական լարված հարաբերությունները մեղմելու առաքելությամբ Գանձակ ուղարկվեց Անդրկովկասյան Սեյմի պառլամենտական պատվիրակությունը՝ Գերասիմ Մախարաձենի զիխավորությամբ։ Պատվիրակության կազմում էին Համիդրեկ Շահթախտինսկին, Միրդատ ղազի Սեիդովը, Թէհրութ պահծիվանշիրը, Ավետիք Սահակյանցը, Խորեն Համասփյուռը, Գերասիմ Մելիքը—Շահնազարյանը և ուրիշներ։ Թվով 15 մարդ։<sup>2</sup>

Գանձակի նահանգի և Արցախի Հայ ազգաբնակչությունը որոշակի հույսեր էր կապում հանձնաժողովի հետ։ Ցավոք, շուտով նըրբանը հուսախար եղան։ Բանն այն է, որ Հարցն առանց Համակազմանի ուսումնասիրելու, հանձնաժողովը հայշտապ քննարկեց Հայ և մահմեդական ժողովուրդների լարված հարաբերության հարցը և «գտավ», որ իրադրությունը այնքան էլ պայթյունավտանգ չէ, որ այն նորմալանալու միտում ունի։<sup>3</sup> Կայացվեց անխոհեմ որոշում, որը, ինչպես ասում են, կրակի վրա նոր յուղ ավելացրեց։ Պարզենք մեր միտքը։ Գանձակում ու զավառում Հայ և մահմեդական ժողովուրդների միջև հարաբերությունները սրվել էին նաև լուժարման ենթակա 219-րդ գնդի գույքին տեր զառնալու հողի վրա։ Հանձնաժողովը որոշեց Հարցը լուծել հետեւալ կերպով։ քաղաքի հայկական մասում պահպող հիշյալ գնդի զենքն ու զինամթերքը հանձնել մահմեդական Աղգային խորհրդին, իսկ պարենամթերքը

1 «Մշակ», 18 Հունվարի 1918 թ.

2 Նույն տեղում, 14 մարտի 1918 թ.

3 Նույն տեղում, 29 մարտի 1918 թ.

Հայերին։<sup>1</sup> Մեծ երեակայություն պետք չէ կռահելու համար, թե Գանձակի և Շուշվա գավառի ոչ մահմեդական բնակչության զիսին ինչ ահավոր աղետ ու փորձանք կկախվեր, եթե իրականացվեր այդ որոշումը։ Իրենց գոյությանը սպառնացող վտանգը կանխելու համար ոչ մահմեդական ժողովուրդներն այդ մասին ահազանգեցին երկրամասի իշխանության կենտրոնական մարմիններին։ Այսպես, Գանձակի ազգամիջյան միությունը, պետական ծառայողների միության հետ համատեղ, Անդրկովկասյան կոմիսարյատին և Սեյմին ներկայացրին հիշյալ պատվիրակության գործունեության դեմ ուղղված հետևյալ բողոքը։

1. Պ. Մախարաձեի ստորագրությամբ Թիֆլիսի լրագրերում լույս տեսած հանգստացնող տեղեկությունը հակասում է Գանձակում և նրա գավառում ծավալվող անիշխանությանը և այն ընդհանուր առկա դրությանը, որը վտանգ է սպառնում ամբողջ ազգաբնակչությանը։ Բողոքելով դրա դեմ, պահանջվում է Գանձակությանը իրագործություններով՝ իրական դրությունը պարզելու և արտակարգ միջոցներ ձեռնարկելու համար։<sup>2</sup>

Անդրկովկասի օրենսդիր և գործադիր դեկանավար մարմիններին հասցեագրված բողոքը մնաց անպատճախան։

Բանն այն է, որ այդ մարմիններն այնքան թույլ ու իրավագուրկ էին, որ ցանկության դեպքում էլ չէին կարող էական փոփոխություն մտցնել երկրամասի ոչ մահմեդական բնակչության սոցիալ-տնտեսական ու իրավական կացության մեջ։ Դա պայմանավորված էր նրանով, որ ժամանակավոր կառավարության վերացումից հետո նրա տեղական մարմինները թշնամական վերաբերմունք դրսեորեցին Անդրկովկասյան կոմիսարիատի ու Սեյմի նկատմամբ և ամբողջ երկրամասը մատնեցին անիշխանության ու քառոսի։

1917 թ. նոյեմբեր—գեկտեմբեր ամիսներին Լեռնային Ղարաբաղում իշխանություն գրեթե չկար։ Գավառը հեծում էր անիշխանության ճիրաններում։ Գոյություն ունեցող միակ տեղական մարմինը՝ 72 անդամներից բաղկացած գործադիր կոմիտեն, լիովին

1 «Մշակո», 29 մարտի 1918 թ.։

2 նույն տեղում։

անգործության էր մատնված։<sup>1</sup>

Համարցախյան իշխանության բացակայության հետևանքով շարունակաբար խորանում էր գավառի տնտեսական ճգնաժամը և մեծանում սոցիալական լարվածությունը։ Ամբողջովին անկառավարելի էր գառնում գավառի՝ առանց այդ էլ խաթարված ներքին կյանքը։ Արցախի գյուղացիության ժամր վիճակը դառնում էր ավելի անտանելի։ Գյուղացիության շրջանում աճեցին հոգումներն ու դժգոհությունները։ Նրանք տեղական իշխանություններից և կազմակերպություններից պահանջում էին դիմել կտրուկ քայլերի՝ կեռնային Ղարաբաղում տիրող անիշխանությանը վերջ տալու համար։

Արցախ աշխարհը տնտեսական ու քաղաքական կործանարար վիճակից գուրս բերելու և անիշխանությանը վերջ տալու հրամայականը պահանջում էր գավառի բոլոր ազգեցիկ քաղաքական ուժերի միավորում։ Արցախահայության բոլոր քաղաքական ուժերը բռնեցին համագործակցելու ճանապարհը։ լոեցին կուսակցական վեճերն ու տարածայնությունները։

1917 թ. նոյեմբերին գավառի նախկին կոմիսար Լ. Վարդապետյանի նախաձեռնությամբ, նրա բնակարանում, հավաքվեցին մի շարք կուսակցությունների ու քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ և քննության առան կեռնային Ղարաբաղը ստեղծված կացությունից գուրս բերելու հարցը<sup>2</sup>

Որոշվեց բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից ստեղծել տեղական իշխանության ժամանակավոր մարմին, որը գավառի ներքին կյանքը զեկավարելու հետ մեկտեղ, պետք է բնակչությանը նախապատրաստեր կեռնային Ղարաբաղում առաջիկայում հարավիրելիք համբենդհանուր համագումարին, որը Ղարաբաղի համար ընտրելու էր իսկական ժողովրդական կառավարություն։

Ընտրվեց Արցախի տեղական իշխանության ժամանակավոր մարմին՝ «Հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակեր-

<sup>1</sup> ՀՀՊԿԱ, ֆ. 222, ց. 1, գ. 30, թ. 21:

<sup>2</sup> Նույն արխիվ, ֆ. 314, ց. 1, գ. 111, թի. 27—28

պությունների Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդ» (որը հետագայում կոչվեց «Միջկուսակցական բյուրո» կարճ անունով): Խորհրդի կազմում ընտրվեց 14 հոգի՝ հինգ դաշնակցական, երեք մենշևիկ, երեք բոլշևիկ, երեք էսէռ Խորհրդի նախագահ ընտրվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ Հայրապետ Մուսայելյանը:<sup>1</sup> Հարկ է նշել, որ հետագայում բոլշևիկները, ինչ որ սկզբունքային պատճառաբանություններ հրապարակ բերելով, հեռացան խորհրդի կազմից:<sup>2</sup> Խորհրդակցության հիմնադիր նիստում միաձայն ընդունվեց գործունեության հետևյալ ծրագիրը:

ա) Ամեն գնով պաշտպանել Հայ և թուրք ժողովուրդների համերաշխանությունը:

բ) Վերջ տակ քաղաքում և շրջաններում գլուխ բարձրացրած անիշխանությանը:

գ) Ամրապնդել երկրամասի ինքնապաշտպանությունը:<sup>3</sup>

Նորաստեղծ ժամանակավոր կառավարությունը կեռնային Ղարաբաղի կազմում նկատի ուներ նաև Գանձակ գավառի ողջ լեռնային շրջանները, որի բնակչության 90%-ից ավելին հայեր էին:<sup>4</sup>

Տեղին է նշել, որ Ղարաբաղի ժամանակավոր խորհրդի գործունեությունը սահմանափակվում էր Շուշի քաղաքի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ նա վարում էր քաղաքի բոլոր ազգային գործերը: Ինչ վերերում է կեռնային Ղարաբաղի լորս՝ Դիզակ, Խաչեն, Վարանդա և Ջրաբերդ գավառներին, ապա նրանք մնացել էին առանց իշխանության:

Ազգային կոմիտե ստեղծեց նաև Շուշի քաղաքի թուրք բնակչությունը, որը ոչ պակաս քան հայերինը՝ վարում էր թօրքության գործերը:<sup>5</sup>

Զնայած նրան, որ Միջկուսակցական բյուրոն իր կազմավորման օրվանից իրեն չէր համարում ազգային մարմին՝ ընդհա-

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.314, գ.34, թի. 48—49:

2 Խոյն տեղում:

3 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ.:

4 Հ. Թումյան, Դեպքերը լեռնային Ղարաբաղում 1917—1920 թթ. «Խորհրդական Ղարաբաղ», 5 Խոյեմբերի 1989 թ.:

5 ՀՀՊՊԿԱ, գ.199, գ.1, գ.38, թ.11:

Նուր միասնական վերահսկողություն իշխանության մարմինների (նաև մուսուլմանների Ազգային կոմիտեի) վրա իրականացնելու համար, այդուհանդերձ արցախահայության մեծամասնությունը, ինչպես նաև մուսուլմանների Ազգային կոմիտեն, այն համարում էին հայկական սղղային իշխանություն։ Մինչդեռ, իրականում, հայկական Միջկուսակցական բյուրոն երբեք չի համարվել և չի ցանկացել հանդիսանալ իրեւ իշխանություն։ Այն կոչված էր լինելու ընդիմադիր վերահսկիչ մարմին՝ գործադիր կոմիտեի նկատմամբ<sup>1</sup>։

Շուտով Ղարաբաղում դեպքերն այնպիսի ընթացք ստացան, որ Միջկուսակցական բյուրոյի վերակազմության անհրաժեշտություն դդացվեց։ Շուշի—Եվլախ մայրուղու վրա նոր ավազակախմբերի հայտնվելու պատճառով դրությունը չափազանց սրվեց։ Այդ կապակցությամբ մուսուլմանների Ազգային կոմիտեն որոշեց Շուշի քաղաքի բնակչությունից շտապ կարգով հավաքել 100000 ռուբլի և այն օգտագործել անիշխանության դեմ պայքարելու համար։ Դրան հետևեց հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակերպությունների Ղարաբաղի ժամանակավոր խորհրդի ընդլայնված նիստը, որին մասնակցեցին հայ ազգաբնակչության բոլոր խավերի, զիսավորապես առևտրականների ներկայացուցիչները։ Նիստը միաձայն հավանություն տվեց մուսուլմանների Ազգային կամմիտեի որոշմանը<sup>2</sup>։

Հարց է ծագում. ո՞վ պետք է գործնականում իրականացներ հիշյալ որոշումը, ո՞վ պետք է կազմակերպեր մայրուղու վրա տիրող անիշխանության դեմ պայքարը։ Համենայն դեպք՝ ոչ Ղարաբաղի գործադիր կոմիտեն, որը, ինչպես ասացինք, դարձել էր մեռած մարմին։ Սույն հարցերը, որ լրջորեն մտահոգում էին Արցախի բնակչությանը, համակողմանիորեն քննարկվեցին Միջկուսակցական բյուրոյում և մուսուլմանների Ազգային կոմիտեում։ Կայացվեց համանման որոշում. լուժարել Ղարաբաղի գործադիր կոմիտեն և փոխարենը ստեղծել ավելի ճկուն ու աշխատունակ նոր մարմին։

1 Նույն արխիվ, ֆ.221, գ.1, գ.30, թ.21.

2 Նույն արխիվ, թ.231.

1917թ. դեկտեմբերի 20-ին Հրավիրվեց Ղարաբաղի գործադիր կոմիտեի արտահերթ նիստ։ Մուսուլմանների Ազգային կոմիտեի ներկայացուցիչները և Միջկուսակցական բյուրոյի անդամները պահանջնեցին, որ գործադիր կոմիտեն Հրաժարական տա Առաջարկը ընդունվեց միաձայն։ Գործադիր կոմիտեն Հրաժարական տվեց։ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ստեղծվեց նոր մարմին, որը հայտնի է Միջազգային կամ Ազգամիջյան կոմիտե անունով։ Այն կազմված էր 13 հոգուց (վեց հայ, վեց մուսուլման և մեկ շեզոք անձ, որպես զեկավար)։ Միջազգային կոմիտեի նախագահ ընտրվեց Շուշիի ազգամիջյան դատավոր Խոսիֆ Իլեր Կորինը։ Նոր մարմնի կազմում հայերից վեց անդամ առաջարկեց Միջկուսակցական բյուրոն, իսկ վեց մուսուլման՝ մուսուլմանների Ազգային կոմիտեն։ Ինչ վերաբերում է հայ առևտրականների գասին՝ նրանք Միջկուսակցական բյուրոյում ներկայացուցիչներ չունեին, և հետևաբար, շընտրվեցին նոր մարմնի կազմում։ Տեղի հայ առևտրականների խորհուրդը պաշտոնապես դիմեց Միջկուսակցական բյուրոյին իր ներկայացուցիչներին բյուրոյի կազմում ընդգրկելու համար։ Սակայն Միջկուսակցական բյուրոն պատասխանեց, որ միությունը չի կարող մարդիկ ունենալ այնտեղ, որտեղ միայն կուսակցությունների ներկայացուցիչներ են։<sup>1</sup>

Միջազգային կոմիտեին տրվեցին լայն իրավասություններ։ Նա պետք է պաշտպաններ երկու ժողովուրդների ընդհանուր շահերը և կարգավորներ ազգամիջյան հարաբերությունները։<sup>2</sup>

Իշխանության մարմիններ ստեղծվեցին նաև տեղերում։ նշանակվեցին քաղաքացիական, դատական և զինվորական լիազորներ։ Տեղական վարչական և դատական հիմնարկությունները ունեին ինքնուրույն աշխատելու որոշակի լիազորություններ։ Սակայն տեղական նշանակության կարևոր հարցեր լուծելիս՝ այդ հիմնարկությունները և նրանց պաշտոնյաները պարտավոր էին դիմել ազգային մարմիններին, նրանցից համապատասխան ցուցումներ ստանալու համար։<sup>3</sup>

1 ՀՀՊՊԿ, ֆ.221, ց.1, գ.30, թ.24։

2 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ.։

3 Նույն տեղում։

Շուշիում զործող Միջկուսակցական բյուրոյից, թուրքերի Ազգային կոմիտեից ու Միջազդային կոմիտեից և ոչ մեկը շղարձավ ընդհանուր ճանաշում և հեղինակություն վայելող իսկական կենուրունական իշխանություն։ Անդրադառնալով՝ այդ օրերին կեռնային Ղարաբաղում տեղի ունեցող քաղաքական անցուղարձին, «Կավեկազսկոյե սլովո» թերթը գրում էր. «Անդրկովկասի կոմիսարիատը պետք է լրջորեն մտածի քաղաքում և գավառում տեղական իշխանություն ստեղծելու մասին, առանց որի անկարելի է կյանքը նորմալ հունի մեջ դնել»<sup>1</sup> Իսկապես, որ կյանքը դուրս էր եկել սովորական հունից։ Կարճ ժամանակով բացված Եվլախ—Շուշի մայրուղին կրկին վտանգվեց։ Աղդամում գտնվող «Վայրի դիվիզիան», Քոշարլու զիխավորությամբ, զինաթափ արեց մայրուղին Հսկող ջոկատներին և նորից փակեց այն։ Միաժամանակ փակվեց նաև Գորիս—Ավդալար (Լաշին) — Շուշի ճանապարհը<sup>2</sup> Պարենային և Փինանսական ճգնաժամը ընդունեց սուր բնույթ։ Ժողովրդին բոլորից շատ հուզում էր հացի խնդիրը։ Տարվա անհաջող թերթի, կանոնավոր հազորդակցության բացակայության և սպեկուլացիայի անհագ շահախնդրության պատճառով կեռնային Ղարաբաղում սոսկալի ժանր գրություն էր ստեղծվել։ Ամբարներում սպառվել էին հացահատիկն ու ալյուրը։ Ժողովուրդը հալում էր լինում թանկության ճիրաններում։ Սովոր ու համաճարակը մոլեգնում էին հայկական զյուղերում և խլում հաղարավոր կյանքերը։ Ղարաբաղի հայկական զյուղերից մեկում յուրաքանչյուր շարաթ սովից ու հիվանդությունից մեռնում էր ավելի քան 7.0 մարդ։<sup>3</sup> Փրկության «միակ միջոցը» մնացել էին կողոպուտն ու ավազակությունը, որոնց իշխանությունները հանցավոր անտարերությամբ էին վերաբերվում։ Եվ ամեննեին էլ պատահական չէր, որ դրանք շատ հաճախ կատարվում էր ոչ գաղտնի։ Կողոպուտն ու թալանում էին օրը ցերեկով, իշխանությունների աշխատաց։

Այդ ամենում իր հանցավոր բաժինն ուներ ճանապարհների շրջափակումը։ Դա զգում էին բոլորը։ Այդ օրերին Արցախում թևավոր

1 «Кавказское слово», 15 апреля 1918.

2 ՀՀՊՊԱ, ֆ. 221, գ.1, գ.30, թ.24:

3 Նույն տեղում։

խոսք էր դարձել հետեւյալ արտահայտությունը. «Տվեք ինձ ճանապարհ՝ ևս գնում եմ աշխատանքի և կողոպտիշ շեմ դառնա»:<sup>1</sup>

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղում ստեղծվել էր բազում ծանր հետեւանքներով հղի բավականին բարդ իրավիճակ:

Միջկուսակցական բյուրոն, մուսուլմանների Ազգային կոմիտեն և Միջազգային կոմիտեն սկզբում առանձին—առանձին, այնուհետև համատեղ քննարկելով գավառում տիրող դրությունը, որոշեցին հայ—մուսուլմանական պատվիրակություն ուղարկել Թիֆլիս։ Պատվիրակությունը պետք է կենտրոնին իրազեկ դարձներ Լեռնային Ղարաբաղում տիրող դրությանը և խնդրեր գավառ ուղարկել վրացական կամ հայ—թուրքական խառը զորամաս։ Սակայն, աղբեջանական գյուղերում բեկերի դեմ բռնկված գյուղացիական հովումների, սկսված կողոպուտի և թալանի պատճառով ձախողվեց Թիֆլիս պատվիրակություն ուղարկելու միտքը։

Պատվիրակության անդամները մեկնեցին գավառի խոռվարար շրջաններ՝ կարգ ու կանոն հաստատելու համար, քանի որ բոլոր տեսակի ուժային մեթոդները օգուտ չեին տալիս։<sup>2</sup>

Միջկուսակցական բյուրոն պատվիրակության փոխարեն Թիֆլիս ուղարկեց Միջազգային կոմիտեի անդամ Հայքապետ Մուսայելյանին։

Լեռնային Ղարաբաղ զորամաս ուղարկելու նրա խնդրանքը մերժվեց։ Սակայն, դրա փոխարեն, նա մեծ ջանքերի զնով կարողացավ զինվորական զորամաս ստեղծելու համաձայնություն ձեռք բերել։ Նա անմնացորդ նվիրումով ձեռնամուխ եղավ զորամասի կազմավորման աշխատանքներին։ Դա Շուշիի ապագա գունդ կոչվող զորամասն էր (նրա պատմությանը կանդրադառնանք առանձին)։ Հատկանշական է, որ Հ. Մուսայելյանին Թիֆլիս գործուղելու հետ միաժամանակ, Միջկուսակցական բյուրոն Հարություն Թումյանի գլխավորությամբ, Շուշուց լեռնային ճանապարհով մի արշավախումբ ուղարկեց դեպի Գանձակ։<sup>3</sup>

1 Նույն տեղում, թ.25

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, թ.26

Արշավախմբի նպատակն էր՝ ծանոթանալ տեղանքին և կազմել ճանապարհների վերանորոգման ծախսերի նախահաշիվ: Նպատակը պարզ էր՝ բանուկ գարձնել Լեռնային Ղարաբաղը Գանձակի ու Բաքվի հետ կապող ճանապարհները և դրանով գավառը որոշ չափով դուրս բերել շիքափակումից: Սակայն, ինչպես Հ. Մուսայելյանի առաքելությունը Թիֆլիս, այնպես էլ Հ. Թումյանի ղեկավարած արշավախմբի գործունեությունը որևէ կերպ չփոխեցին Լեռնային Ղարաբաղի սոսկալի վիճակը:

Եռշվա գումզը Արցախի ճանապարհին ցիրուցան եղավ: Ինչ վերաբերում է ճանապարհների վերանորոգմանը, ապա անհրաժշտ ֆինանսական ու նյութական միջոցների բացակայության պատճառով այն ես կյանքի շկոշվեց և մնաց որպես բարի ցանկություն ու հուշ:

Մինչդեռ Լեռնային Ղարաբաղում իրադրությունը արագընթաց կերպով մթագնում էր, տնտեսական ճգնաժամը խորանում, և մեծանում էր թշնամության վիճը երկու ժողովուրդների միջև:

- Աղբբեջանի անկախ հանրապետության ստեղծման հետ կապված, մեծացավ նաև արտաքին վտանգը: Նորաստեղծ Աղբբեջանի մուսավաթ կառավարությունը ցանկանում էր բռնությամբ իր հանրապետությանը միացնել Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի գավառները (այդ մասին ավելի հանգամանորեն՝ իր տեղում):

Լեռնային Ղարաբաղի ընդհանուր վիճակը էլ ավելի թուլացրեց տեղական իշխանությունների, առանց այն էլ խարիսկված դիրքերը և նրանց կանոնեցրեց կազմալուծման փաստի առջև: 1918 թ. հունիսի 16-ին ինքնալուծարման ենթարկվեց Միջկուսակցական բյուրոն: Նրա փոխարեն ստեղծվեց մի մարմին, որը կոչվեց «Ղարաբաղի հայ ժողովրդական ժամանակավոր կառավարություն» կամ «Կոմիսարների խորհուրդ»:

Կառավարության նախագահը ընտրվեց Լեռնային Ղարաբաղի Հայ Հեղափոխական Դաշնակցության ղեկավար Հայրապետ Մուսայելյանը: Կառավարության կազմում ընդգրկվեցին մենշևիկ Աշոտ Օսիպովը (արգարադատության կոմիսար), դաշնակցական Հարությունը Թումյանը (ռազմական գործերի կոմիսար), մենշևիկ Արսեն

Բակունցը (արտաքին գործերի կոմիսար), սոցիալիստ-հեղափոխական Արամ Միքայելյանը (ֆինանսների կոմիսար), դաշնակցական Արտաշեն Պետրոսյանը (ներքին գործերի կոմիսար), դաշնակցական Ասատրիք Ավետիսյանը (արդյունաբերության կոմիսար):

Կոմիսարների խորհրդի քարտուղար նշանակվեց սոցիալիստ-հեղափոխական Ռուբեն Տեր—Գասպարյանցը<sup>1</sup>:

Բոլշևիկները գանազան անհիմն պատճառաբանություններ հրապարակ հանելով, հրաժարվեցին մտնել կառավարության մեջ: Ինչ վերաբերում է Հայ ժողովրդական կուսակցությանը, ապա նրա անդամները մի շարք սկզբունքային հարցերում անհաջտվողականություն հանդես բերելու պատճառով վտարվեցին կառավարության կազմից:<sup>2</sup> Լեռնային Ղարաբաղը բաժանվեց երկու վարչական շրջանի և յուրաքանչյուրի համար նշանակվեց լիազոր:

Վարանդայում և Դիբակում կոմիսարների խորհրդի զիսավոր լիազոր նշանակվեց դաշնակցական Եղիշե Իշխանյանը, իսկ Խաչենում և Ջրաբերդում՝ սոցիալիստ-հեղափոխական Արսեն Հովհաննիսյանը (Արսո):<sup>3</sup>

Լիազոր ներկայացուցիչները բնակչության շրջանում մեծածավալ աշխատանք կազմակերպեցին՝ նրանց Ղարաբաղի գյուղացիության առաջիկա համագումարին նախապատրաստելու համար: 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիի թեմական դպրոցի դահլիճում գումարվեց արցախահայության առաջին համագումարը, որի աշխանանքը շարունակվեց մինչև հուլիսի 28-ը:<sup>4</sup> Համագումարին մասնակցում էր յուրաքանչյուր գյուղական հասարակությունից մեկ պատգամավոր: Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջաններից համագումար էին

1 ՀՀ ՊՓԿ, ֆ. 221, ց. 1, գ. 30, թթ. 27—28, ֆ. 200, ց. 1 գ. 309, թթ. 204—207

2 Նույն արխիվ, ֆ. 221, ց. 1, գ. 30 թթ. 28:

3 Նույն տեղում:

4 1918—1920 թթ. Արցախի պատճությանը նվիրված ուսումնասիրություններում համագումարների հրաժրման, նրանցում բարձրացված ու քննության առնված հարցերը վերաբերյալ գոյություն ունեն իրարամերժ տեսակետներ: Բանեն այն է, որ համագումարների վավերագրերը Շուշիի 1920 թ. մարտյան հրդեհի ճարակ են դարձել: «Այդ է պատճառը, իրավացիություն եղաւ մ. Ռէպուբլիկանը, որ ուսումնասիրությունը, վատահերթ հետագայում այսուհետեղ հրապարակված վերհուշներին ու քննարկումներին, սպիտակած են հայտնեն իրարամերժ տեսակետներ՝ անստույգ կամ ոչ այնքան հավանական»: Տե՛ս՝ թ. Ռէպուբլիկան: Արցախան դուռապահքարը: Եր., 1994, էջ 30:

հեկել 180 պատգամավորներ: Համագումարին խորհրդակցական ձայնով մասնակցում էին նաև Շուշի քաղաքում գործող հասարակական հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առաջին համագումարը քաղաքական կարևոր իրադարձություն էր արցախահայության կյանքում:

Համագումարը լսեց կառավարության՝ կոմիսարների խորհրդի նախագահի հաշվետվությունը կառավարության գործունեության, երկրի վիճակի և հայ ազգաբնակչության անվտանգությանը սպառնացող վտանգի, հայ-թաթարական հարաբերությունների կարգավորման, նոր կառավարություն կազմելու մասին: Զեկուցողը, համակողմանի վերլուծության ենթարկելով տաճիկների և գերմանացիների՝ դեպի հայերն ունեցած վերաբերմունքը, հայրենակիցներին կոչ արեց շարունակել պայքարը Ռուսաստանի հետ միալու համար:

Համագումարը Արցախը հայտարարեց անկախ վարչապահական միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ և լուժարեց հին կառավարությունը: Կազմվեց նոր կառավարություն՝ կոալիցիոն սկզբունքով: Այն ստացավ «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» անունը: Կառավարությունը բաղկացած էր 7 հոգուց, որոնք ներկայացնում էին Ղարաբաղի գրեթե բոլոր քաղաքական հոսանքները: Կառավարության անդամները կոչվում էին կառավարիչներ: Գաղտնի քվեարկությամբ կառավարության կազմում ընտրվեցին դաշնակցական Եղիշե Իշխանյանը (նախագահ և ներքին ու արտաքին գործերի կառավարիչ), սոցիալիստ—հեղափոխական Արսո Հովհաննիսյանը (պարենավորման կառավարիչ), մենշևիկ Արշավիր Քամալյանը (հողային և արդարադատության կառավարիչ), գաշնակցական Հարություն Թումյանը (զինվորական գործերի կառավարիչ), բոլշևիկ Մելիքսեբքեկ Եսայանը (կառավարության քարտուղար), Զիվանշիրի գավառի ներկայացուցիչ Մարկոս Տեր—Աստվածատրյանը (ֆինանսների կառավարիչ), զինվորական խորհրդի ներկայացուցիչ, պորուշիկ Մարտիրոս Ալվարյանը

(Հաղորդակցության կառավարիլ):<sup>1</sup> Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը ամենաբարձր մարմինն էր Արցախում, որի իրավասությունը տարածվում էր ոչ միայն քաղաքի, այլև ամբողջ գավառի վրա: Առաջին համագումարը հայ և մուսուլման ժողովուրդների շահերից բխող մի շարք որոշումներ ընդունեց. բացել ճանապարհները ուղևորների և քողվորների համար, խիստ միջոցներ ձեռք առնել ավագակների և կողոպատիչների դեմ, կանոնավորել դատական և վարչական մարմինների գործունեությունը, գանձել հարկերը և այլն:

Հուլիսի 24-ին ընդունվեց Ղարաբաղի ժողովրդական կառավարության հոչակագիրը, որտեղ շարադրված էին նորաստեղծ սեփական իշխանության հիմնական խնդիրները:<sup>2</sup> Հոչակագրի ընդունումը ավարտին հասցրեց Արցախի ժողովրդական կառավարության կազմավորման գործընթացը: Այսպիսով՝ 1918 թ. հուլիսի 24-ին<sup>3</sup> հեղափոխական ուժերի ստեղծած ազգային ճակատի ժամանակավոր կառավարությունը Ղարաբաղում փոխարինվեց ժողովրդի կողմից ընտրված օրինական կառավարությամբ,<sup>4</sup> — զրում է նորընտեր կառավարության հայտնի գործիչներից մեկը՝ Հարստիյուն Թումյանը:

Նույնային Ղարաբաղի նորընտեր ժողովրդական կառավարությունը նույնություն է բարելով լուծվեց տեղերում իշխանության մարմինների ստեղծման գործին: Քաղաքի և նրա մերձակա շրջանների անվտանգությունը արդարացվելու համար հուլիսի 27-ին հաստատվեց պարետություն, որի պարետ նշանակվեց կապիտան Արտաշես Վարդապետյանը: Գավառի ներքին խնդիրները լուծելու համար կառավարության հուլիսի 29-ի որոշմամբ ստեղծվեց շորս հանձնաժողով՝ ֆինանսական, պարենավորման, բժշկա-սանիտարական և վարչա-իրավական:

Գյուղական լիազորների փոխարեն նշանակվեցին գավառային

1 «Հորիզոն», 17 սեպտեմբերի 1918 թ., «Մշակ», 25 հուլիսի 1918 թ.

2 «Մշակ», 25 հուլիսի 1918 թ..

3 Այ թե հուլիսի 24-ին այլ հուլիսի 16-ին:

4 Հարություն Թումյան, Գևագերը նեստին Ղարաբաղում 1917—1920 թթ.  
«Խորհրդավոր Ղարաբաղ», 5 նոյեմբերի. 1939 թ.

և քաղաքային կոմիսարներ:

Զրաբերդ—Գյուլխստանում, Խաչենում, Դիգակում, Շուշիում հիմնվեցին Հաշտարար դատարաններ: Իրեն բարձրագույն վճռարեկ ատյան՝ Շուշիում ստեղծվեց շրջանային դատարան և նրան կից Հատուկ գործերի բննիշ հանձնաժողով:<sup>1</sup>

1918 թ. օգոստոսի 3-ին կառավարությունը բաց թողեց մի քանի շրջաբերականներ՝ սպեկուլյացիայի, փողի արժեզրկման, նպաստների, հայ—թաթարական հարաբերությունների մասին և այլն:

Այս ամենով հանդերձ, Շուշի քաղաքում գործում էին նաև հետեյալ հասարակական մարմինները՝ քաղաքային ինքնավարությունը, զինվորկան միությունը, ոստիկանությունը և աղքատախնամ հոգեբարձությունը: Հարկ է բնդգծել, որ նշված բոլոր մարմինները, բացառությամբ քաղաքային ինքնավարության, որը մեռած մարմնի տպավորություն էր թողնում, զուտ հայկական էին և գործում էին քաղաքի հայկական մասում:<sup>2</sup>

Այսպիսով, Ղարաբաղի ժողովրդական կառավարության ստեղծումով ավարտվեց Ղարաբաղի հայկական անկախ իշխանության կազմավորման երկարատև ու դժվարին գործընթացը:

Ժողովրդական կառավարության ստեղծումով Ղարաբաղում ներքին կյանքը սկսեց աստիճանաբար մտնել նորմալ հունի մեջ և մենազիսավոր ու անհետաձգելի խնդիրը նորաստեղծ կառավարություն և համարում էր այն հիմնախնդիրների առաջնակարգ լուծումը, որոնք կապված էին ժողովրդի անմիջական ապահովության հետ: Կառավարությունը ամենից առաջ վճռական պայքար սկսեց գոյություն ունեցող անիշխանական երկույթների դեմ՝ ներքին կարգ ու կանոն հաստատելու, ժողովրդի անվտանգությունը և իրավունքները ապահովելու, ինչպես նաև աղղամիջյան վիճելի խնդիրները արդարացի լուծելու համար:

Առնային Ղարաբաղի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող դրական տեղաշարժերը, հասկանալի պատ-

1 ՀՀՊՊԿ, ֆ.314, ց.1, գ.34, թթ. 60.

2 «Հորիզոն», 17 սեպտեմբերի 1918 թ.:

ճառներով, լրջորեն անհանգստացնում էին Աղբբեզանի մուսավաթական կառավարությանը։ Այսպիսով, — զրել է «Մշակ» թերթը 1919 թ. փետրվարի 23-ի համարում, — Ղարաբաղի ժողովրդական կառավարության ստեղծումով հայերը հոշակեցին նրա անկախ գոյության իրավունքը, որը, հարկավ, սկսեց տհաճություն պատճառել թուրքերին։<sup>1</sup>

1 «Մշակ», 23 փետրվարի 1919 թ.

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԼԵՇՆԱՅԻՆ ՊԱՐՍԲԱԴ ԵՎ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԱՊԱԾՊԱՆԱԿԱՆ ԿՐԻՎՆԵՐԸ

### 1. Աղբեկանի փորձերը Լեռնային Ղարաբաղին տիրելու համար

1918 թ. ապրիլի 9-ին, Թուրքերի և մուսավաթականների մնջման տակ, Սեյմի արտակարդ նիստը հայտարարեց Թուսաստանից Անդրկովկասը անշատելու և երկրամասի անկախության մասին։ Երկրամասը Թուսաստանից անկախ հայտարարելուց հետո, թուրքերը կատարեցին հաջորդ քայլը։ Բաթումի շարադեսքանակցությունների օրերին, երբ Թուրքիայի և Անդրկովկասյան իշխանությունների պատվիրակությունները քննարկում էին երկրամասի ժողովուրդների համար ստեղծվելիք վարչակարգի հարցը, թուրքական սպառնալիքների և վրացի ու աղբեկանցի պատվիրակների մնջման տակ Սեյմը հայտարարեց ինքնալուծարման մասին։ Անդրկովկասում ստեղծվեցին երեք անկախ պետություններ։

Հայաստանի անկախ հանրապետությունը ստեղծվեց 1918 թ. մայիսի 28-ին։ Մինչ այդ, մայիսի 26-ին և մայիսի 27-ին վրացական ու աղբեկանական ազգային խորհուրդների կողմից հոշակվել էր Վրաստանի և «Արևելա-կովկասյան մուսուլմանական հանրապետությունը»։ Վերջինը դեռևս չոներ որոշակի տարրերակիշ, որովհետև անցյալ չէր ունեցել, ետ նայելիս չէր կարող ազգային վարչական որևէ միավորի փորձ վկայակուշել։ Նորաստեղծ հանրապետությանը, հենց այդ ժամանակ թուրքերի կողմից շնորհվում է իրանի հյուսիսային նահանգի «Աղբեկան» անվանումը։ Իսկ «նոր աղպին»՝ նրա ապագա տերերին՝ «աղբեկանցիներ»։

Բաթումի դաշնադրով Թուրքիան ճանաշեց Հայաստանի «անկախությունը»։ Այդ «բարեհոգությունը» թանկ նստեց Հայաստանի վրա։ Թուրքերը նրանից խլեցին Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի շրջանները, երեսնի նահանգից՝ Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքը և Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գա-

1 В. М. Сысоев, Краткий очерк истории Азербайджана. Баку. 1925. с.5.  
նակ՝ թ. Թուրքարյան, Արցախյան գոյապայմարը. Եր., 1994, էջ 4-5:

վառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը, Շարուր—Դարա-  
լազյաղի գավառի մեկ հինգերորդը: Այլ խոսքով ասած՝ այդ դաշ-  
նագրով Թուրքիան Արևելյան Հայաստանից բռնազավթեց 28 հազ-  
րամ. կմ տարածություն: <sup>1</sup> Հայաստանը բաղկացած էր լինելու  
նոր Բայազետի գավառից, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի  
և Ղարաբիլիսայի գավառների առանձին մասերից: Այդ դաշնա-  
պիրը, ինչպես նշել է Լեռն, «Հայաստանին տալիս էր մի տարա-  
ծություն, որ հազիվ բավական լիներ հայ ժողովրդի գերեզմանը  
դառնալու: Դա ... մի լեռնոտ, մեծագույն մասով անպատճ երկիր  
է Սեանա լճի արևմտյան, հարավ-արևելյան կողմերում»:<sup>2</sup>

Բաթումի խորհրդաժողովում թուրքական պատվիրակությունը  
բացի վերը նշված տարածքներից, պահանջեց նաև ամբողջ  
Գանձակի նահանգը՝ Ղարաբաղի հետ միասին և Նախիջևանի գա-  
վառը:<sup>3</sup>

Բանակցությունների միջոցին Ալ. Խատիսյանի զիխավորած դի-  
վանագիտական հանձնախումբը համաձայնություն է տալիս, որ  
Ղարաբաղը պատկանի Սղորեհանին, իսկ Զանգեզուրը՝ Հայաստա-  
նին: Աղրբեջանցիները շեն բավարարվել այդ առաջարկով, շարու-  
նակել են պահանջել նաև Զանգեզուրը:<sup>4</sup>

Բաթումում այս զիջումը տեղի ունեցավ մայիսի 21-ին:

Բաթումի բանակցություններում թուրքերի ագրեսիվ գիրքորո-  
շումը Հայաստանի հարցում զիխավորակես պայմանավորված էր,  
այն արգելվով, որ Հայաստանն ուներ համաթուրքիզմի պլանների  
ճանապարհին: Ասվածից հետեւմ է, որ Ղարաբաղի և հայկական  
մյուս գավառների խնդրում թուրքերին ավելի շատ հետաքրքրում էր  
ոչ թե Աղրբեջանի ճակատագիրն, այլ Օսմանյան կայսրության նախ-  
կին հողերում իրենց ազդեցության ոլորտի ընդլայնումը: Արխիվնե-

1 Ա. Պողոսյան, Սոցիալ-անտեսական հարաբերությունները Կարսի մարզում 1878—1920 թթ. Եր., 1961, էջ 307.

2 Լու. Թուրքահայ յեղափոխության գաղափարաբանությունը, Հ.Բ.: Փարիզ, 1935, էջ 201.

3 «Մշակ», 2 հունիսի 1918 թ.

4 Տիգրան Յանձնական հայության ազգային պատմության առաջնային գործառնությունները, Երևան, 1925, էջ 425, Բ. Ակուբա-  
րյան, նշվ. աշխ., էջ 18—19:

բում, մամուկում և այլ հրապարակումներում կան այդ միտքը հաստատող բազմաթիվ տվյալներ:

Այսպիս, երիտթուրքերի հանցագործ զեկավարներից մեկը՝ Բեհաեդդին Շարիր բելը Բաթումի խորհրդաժողովում բավական խիստ արտահայտություններով իր վերաբերմունքն է Հայտնել Հայկական պատվիրակության զեկավար Ալ. Խատիսյանին. «Հայերը կանգնած են մեր համախյամական և համաթուրքական սրբազն իդեալների իրականացման ճամփի վրա, և մենք անխռուսափելիորեն բախվում ենք նրանց հետ: ...»

Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնել մեր ճանապարհի վրա այն ամենը, ինչը արգելը է հանդիսանում մեր ազգային սրբազն իդեալներին»:<sup>1</sup>

Ասված է պարզ ու հասկանալի: Սակայն բերենք նույն խորհրդաժողովում թուրքական բանակի հրամանատար Վեհիր փաշայի խոսքը ևս՝ ուղղված Հայկական պատվիրակությանը: Մենք հեռացանք Բալկաններից, նշել է նա, հեռանում ենք նաև Աֆրիկայից, բայց սեատը է տարածվենք գեղի արևելք: Մեր եղբայրները Բաքվում, Թաղստանում, Թուրքստանում և Աղրբեջանում են: Մենք պետք է ճամփա ունենանք գեղի այնտեղ: Եվ դուք՝ Հայերդ կանգնած եք մեր ճանապարհի վրա: Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճանապարհ տաք:<sup>2</sup> Այս նույն առնչությամբ Բաքվում լույս տեսնող «Զեամյա տրուդա» թերթը 1918 թ. մայիսի 21-ի համարում նշում էր, որ Հայերի տարածվածությունն Անդրկովկասի տարածքում խանդարում է համաթուրքիզմի ծրագրի իրականացմանը, որովհետեւ նրանք, զբաղեցնելով Թուրքիայի և Արևելյան մուսուլմանության միջև ընկած տարածքը, բնականորեն արգելք են Հանդիսանում Բուսաստանի և Թուրքիայի մուսուլմանների միավորման համար:<sup>3</sup>

Վերոհիշյալ տվյալներն անառարկելիորեն ապացուցում են երկու բան՝ Թուրքիան ու Աղրբեջանն իրար բերող ճանապարհին ըն-

1 Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը: Թերթ, 1968, էջ 77: Նաև՝ կեսը Վարդան, Հայկական տասնհինգը և Հայությալ գույքերը: Թերթ, 1970, էջ 214:

2 Տես՝ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 96:

3 «Знамя труда» 2 мая 1918.

կամ Հայաստանը կամ պիտի մի կողմ քաշվեր, կամ պիտի բնաշնչվեր, որպեսզի նրանք միավորվեին, <sup>1</sup> և մյուսը՝ թուրքերը համաթրքության շահախնդրությունից բխող իրենց պլանները կարող էին իրականացնել միայն Աղրբեջանին տիրելու միջոցով։ Ահա թե ինչու երիտթուրքերը դոհացած չէին Հայաստանի հսկայական-տարածքներին տեր դառնալուց և Բաթումի խորհրդաժողովում հրատապ խնդիր ունեին ճշտելու, թե իրենց զորքերն ինչպես շարժել դեպի Բաքու, որպեսզի տիրանան Անդրկովկասին։ <sup>2</sup>

Թուրքիան ծրագրել էր զորք ուղարկել Արևելյան Անդրկովկաս երկու ուղղությամբ՝ մի ճանապարհով Կարս—Ախալքալաք—Բորչալու—Ղազախն էր, որ տանում էր դեսի Գանձակ, մյուսը գնում էր Շարուր—Նախիջևան—Զանգեզուրով՝ Կուրի հովիտ։ <sup>3</sup>

Անկասկած, այս հանգամանքը նկատի ունենալով է Բ. Ռուբարյանը եզրակացության հանգել, որ Արցախն աղրբեջանցի թուրքերի ու նրանց հովանավոր օսմանյան թուրքերի համար մի սովորական ինքնակա հարց չէր, այլ բաղկացուցիչը համաթուրքական շահախնդրությունների առանցքը կազմող մի զերինդրի։ <sup>4</sup> Արդյոք դա չէր պատճառը, որ Աղրբեջանի հանրապետությունը գեռ չէր հասցրել զործի անցնել, երբ նրա մուսավաթ կառավարողներն անմիջապես բռնեցին հակահայկական դիրք, և ազգային-տարածքային վեճերը հօգուտ Աղրբեջանի վճռելու համար սկսեցին ազեսիվ քայլեր կատարել Հայկական տարածքների նկատմամբ։ Մուսավաթ զեկավարությունը Խան Խոյսկու գլխավորությամբ, Աղրբեջանի հանրապետության կազմում հայտարարեց Բաքվի և Գանձակի նահանգներն ամրողությամբ։ Դա բացահայտ զավթողական քաղաքականություն էր՝ ուղղված Հայաստանի Հանրապետության դեմ։ Այդ հայտարարությամբ Աղրբեջանը ցանկանում էր զավթել Հայաստանի անբաժան մասը կազմող, միատարր հայ

1. Բ. Ռուբարյան, Եղվ. աշխ., էջ 23։

2. Ստ. Շահումյան, Ելժ. հ. 5, էջ 17—18։

3. Ալ. Խատիսյան, Եղվ. աշխ., էջ 86։

4. Բ. Ռուբարյան, Եղվ. աշխ., էջ 23։

բնակչություն ունեցող<sup>1</sup> Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի գավառները։ Դեռևս խանձարուրի մեջ գտնվող Աղրբեջանի կառավարությունն իրեն տեր ու տնօրեն համարելով Լեռնային Ղարաբաղին ու Զանգեզուրին, Հայաստանի մի շարք տարածքների նըկատմամբ ևս ուներ նվաճողական պլաններ։ Բերված աղյուսակը ցույց է տալիս թաթարների կողմից կովկասի հայկական նահանգների նկատմամբ պահանջը։ (Բայտ Անդրկովկասի ազգային տարածքային սահմանագծման, երբ Անդրկովկասը հոչակվեց Ռուսաստանից անկախ)։<sup>2</sup>

	Տարածքը քառ. կմ.	Ժողովուրդ		
		Հայեր	մահմեդա- կաններ	այլ գեր
1. Զիվանշիր	37000	22000	15000 <sup>3</sup>	
2. Շուշի	2300	130000	30000	
3. Զանգեզուր (մի մասը)	6000	100000	50000 <sup>4</sup>	
4. Նախիջևան	500	10000	12000	
5. Գանձակ	4000	40000	25000	1000
6. Բասարգեչար (այժմ Վարդենիս)	600		25000	
7. Դարալապյազ (այժմ՝ Եղեգնաձոր)	1300	10000	10000	
8. Կարակյունի (մի մասը)	100	25000		
	18500	337000	167000	1000

1 1917 թ. դրությամբ Լեռնային Ղարաբաղի բնակչության կողմն այսպիսին էր. Հայեր՝ 150 հազար (70 տոկոս), մուսուլմաններ՝ 58 հազար (27 տոկոս), այլ ազգեր՝ 5 հազար (3 տոկոս)։ Տես՝ ՀՀՊՊԿ, ֆ. 199, ց. 1, դ. 128, թ. 249։

2 Նույն արխիվ, ֆ. 200, ց. 1, դ. 104, թ. 12։

3 Բոլորը բրդեր են։

4 Որից 8000 բրդեր։

Մուսավաթականների իշխանության գլուխ անցնելուց հետո, Լեռնային Ղարաբաղին և Զանգեզուրին տիրելու Կովկասի թաթարների ցանկությունը պետական քաղաքականության աստիճանի հասցվեց: Խոսքը այն մասին է, որ եթե մինչ այդ հիշյալ հայկական գավառների հանգեց ազրբեջանցիների ոտնձգությունները շափազանց դգուշավոր էին ու զանազան պատրվակներով քողարկրված, ապա Ազրբեջանի անկախ հանրապետության ստեղծումից հետո այն դարձավ ավելի բացահայտ ու ագրեսիվ: Դա թերագոված էր հետեւյալ հանգամանքներով:

Ա) Ազրբեջանը ստեղծեց կազմակերպված ու մարտունակ բանակ, որը նրան թույլ էր տալիս արտաքին քաղաքականության մեջ դիմելու ավելի կտրուկ ու համարձակ քայլերի:

Բ) Թուրքերի հարձակումը Հայաստանի վրա վերջինիս ու շագրությունը՝ շեղում էր Թարգի ճակատից:

Անդրկովկասում երեք ազգային հանրապետությունների կաղմանվորման հենց առաջին օրերից, տարածքային հարցերի հետ կապված, նրանց միջև ծագեցին սուր տարածայնություններ ու զինված բախումներ:

Հայաստանի և Ազրբեջանի հանրապետությունների միջև տարածքային-սահմանային վեճերը բորբոքվել էին հիմնականում Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի շուրջը:

Երկու հանրապետությունների միջև միջյանց հանդեպ խորացող ատելությունն ու թշնամնքը շուտով իր շարունակությունը գտավ նաև Արցախում: Ազգամիջան խորացող ատելությունը վաղ թե ուշ գավառին կանգնեցնելու էր ներքին կռիվների ողբերգական փաստի առաջ, որից հետո այն մարելը գրեթե անհնարին կլիներ: Այդ բանի գիտակցումով էլ Ղարաբաղի իշխանությունները կտրականակես դեմ էին ուժային մեթոդներով վիճելի հարցերը լուծելուն և ամեն ինչ անում էին, որպեսզի նման հարցերը լուծում ստանային քաղաքակիրթ ձևով՝ բանակցությունների միջոցով: Խաղաղության հնարավությունների խորացմանը ձգուղ Ղարաբաղի կառավարությունը դիմեց այնպիսի քայլերի, որոնք կարող էին ընդլայնել խաղաղ գործընթացի հնարավորությունները:

Երկու ժաղովուրդների շահերը հաշվի առնելով, կեռնային Ղարաբաղի համար ընդունելի լուծում գտնելու, նրա ճակատագիրը որոշելու անկեղծ ցանկությամբ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը մուսուլման ազգաբնակչության Ազգային խորհրդի հետ մի շարք անգամ հանդիպումներ ունեցավ:

Ընդունելով հանգերձ, որ կոնֆլիկտը լուծելու անհրաժեշտությունը հրատապ է դարձել, մուսուլմանական Ազգային խորհուրդը, անշուշտ, Բաքվի թելադրանքով, այդուհանդերձ, ցանկանում էր հարցը լուծել իր ձևով՝ Ղարաբաղը Ազրբեջանին միացնելով<sup>1</sup>:

Հայոց Ազգային խորհուրդը, արտահայտելով գավառի բացարձակ մեծամասնությունը կազմող հայ ազգաբնակչության միասնական կամքը, արդարացիորեն պահանջում էր, որ Ղարաբաղը պետք է վերամիավորվի մայր Հայաստանի հետ: Ղարաբաղի հայության կողմից մերժողական պատասխան ստանալուց հետո մուսավաթ պարագլուխները որոշեցին օգնության համար դիմել մեծ սեղրորդ՝ Թուրքիային: Այդ պատճառով Ազրբեջանի կառավարությունը միակողմանիորեն հայտարարեց, որ Հայաստանի և Ազրբեջանի միջև գոյություն ունեցող տարածքային կոնֆլիկտը պետք է լուծի Կոստանդնուպոլիսի կոնֆերանսը, որը գումարվելու էր 1918 թ. հունիսի վերջին: Սակայն հանգամանքները այնպիսի զարգացում ստացան (գլխավոր պատճառը թուրքերի անհաջողություններն էին ռազմաճակատում), որ կոնֆերանսը լրկայացավ: Հայաստանի պատվիրակությունը, Ալ. Խատիսյանի գլխավորությամբ, որը մնելու էր Կոստանդնուպոլիս կոնֆերանսին մասնակցելու համար, շորս ամիս սպասելուց հետո վերադարձավ:<sup>2</sup>

Հայկական պատվիրակությունը Ղարաբաղի խնդրի կապակցությամբ հանդիպումներ ունեցավ Թուրքիայի ղեկավար գործիչների հետ և համոզվեց, որ այդ հարցում տաճիկները վճռականորեն պաշտպանում են մուսավաթականներին: Ահա թե ինչ է գրում Ալ. Խատիսյանը. «Մեր զիտողությունները Հայաստանի սահմանների շափազանց նեղ լինելու մասին շարունակ հանդիպում էին

1 «Կավկազու լուսաբառ», 27 հունիս 1918.

2 «Մշակ», 7 հունիս 1918 թ.

թուրքերի համառ դիմադրությանը։ Նրանք գեմ էին, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը տրվեն Հայաստանին, որովհետև ցանկանում էին իրենց ճանապարհը բաց պահել դեպի Բաքու։<sup>1</sup>

Մուսավաթական պարագլուխները շարունակում էին փայփայել Լեռնային Ղարաբաղի ու Զանգեզուրի գավառները նվաճելու ծրագիրը։ Գործելով թուրքերի թելադրանքով, նրանք դիմում էին ուժային մեթոդների գործադրման ու ահարեկման քաղաքականությանը։

Ազրբեջանի զավթողական ձգտումները նախկինի նման հանդիպեցին արցախահայության մերժողական պատասխանին։ Այսպես, երբ Գանձակից ազրբեջանական հեղինակավոր պատվիրակությունը ժամանեց Եուշի և պահանջեց ընդունել Ազրբեջանի իշխանությունը, ստացավ այսպիսի պատասխան։ «Ղարաբաղը չի ցանկանում մտնել «Ազատ Ազրբեջանի հանրապետության» մեջ, իրեն անկախ է Հայտարարել ու ընտրել առանձին կառավարություն, որի կազմում կան նաև տեղական թուրքերի ներկայացուցիչներ, ինչպես, օրինակ, Լյուֆթալի բեկ Բեհրութովը»։<sup>2</sup>

Սակայն, Ազրբեջանի զեկավարությունը Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը նվաճելուց հրաժարվելու միտում շուներ Նա սպասում էր հարմար պահի՝ իր ծրագրերը արցախահայության նկատմամբ իրականացնելու համար։ Պահը իրեն ուշացնել շտվեց։ Գանձակ էին շտապում օսմանյան թուրքերը։

1. «Հայրենիք», 1924, դեկտեմբեր, էջ 206.

2. «Հորիզոն», 22 օգոստոսի 1918 թ., ՀՀՊԿ, ֆ.200, գ.1, գ.7, թ.98։

## 2. Պալքար թուրքական նվաճողների դեմ

1917 թ. դեկտեմբերի 5-ին ոռւսական և թուրքական գործող բանակների միջև Երզնկայում կնքվեց զինադադար: Դադարեցին մարտական գործողություններն ամբողջ ճակատում՝ Սև ծովից մինչև Վանա լճի հարավային ափի շրջանները, Կովկասյան—պարսկական ճակատում և Սև ծովի վրա: Թուրքական հրամանատարությունն, ընդումին, ավելի շահեց այդ զինադադարից: Կովկասյան ճակատի ոռւսական հրամանատարությունը շհասցրեց «կարգ» սահմանել բանակում, մինչդեռ թուրքերն արագ վերադասավորեցին իրենց ուժերը, նոր զորամասեր քաշեցին դեպի ճակատային գիծը և, խախտելով զինադադարի պայմանագիրը, 1918 թ. հունվարի 30-ին անցան հարձակման, գրավեցին Շահթախթին, Երզնկան, Տրապիզոնը և մի շարք այլ քաղաքներ ու սկսեցին շարժվել գեպի երկրի խորքը<sup>1</sup>: Խնչպես արդեն նշվել է, վրաց մենշևիկների ու մուսուլմանական մեծամասնության ճնշման տակ 1918 թ. ապրիլի 9-ին Սեյմը հայտարարել էր Ռուսաստանից Անդրկովկասի անջատման և երկրամասի անկախության մասին (կատարվել էր թուրքերի պահանջը): Այդ որոշումը լիովին արձակեց երիտթուրքերի կառավարող վերնախավի և թուրք հրամանատարության ձեռքերը: Դա նպաստավոր համարվեց նոր արկածախնդրական գործողությունների դիմելու համար:

Կովկասյան ռազմաճակատի ամբողջ երկայնքով թուրքական զորքերի գեմ կանգնած էին հայկական ազգային զորամասերը, որոնք, ինչպես հետագայում ընութագրել է Լյուդենդորֆը, ութ ամիս շարունակ կասեցրին Բաքվի գրավումը<sup>2</sup>: Սակայն ուժերն անհավասար էին: Թուրք ագրեսորները նվաճեցին նորանոր տարածքներ: Վրացական մենշևիկների դեկավարության թուրքամետքաղաքականության հետևանքով, թշնամին առանց կովի տիրեց կարսին (ապրիլի 11-ին): Գրեթե նույն սցենարով թուրքերը գրավեցին Աղեքսանդրապոլը, Արդահանը և այլ քաղաքներ: Անդրա-

1 Ֆ. Գալյան, Պատմության բառուղիներում: Եր., 1982, էջ 202:

2 С. Х. Карапетян. Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении. Еր., 1959, с. 113.

դառնալով այն օրերի իրադարձություններին, երկրամասում տիրող  
 քաղաքական կացությանը և Կովկասյան ճակատում ուղմա-  
 կան ուժերի հարաբերակցությանը, Հ. Սիմոնյանը ենթա-  
 դրում է, որ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում  
 թուրքերի առաջխաղացման հիմնական մեղքն ընկնում էր Անդր-  
 կովկասյան Սեյմի կառավարության վրա: Բանն այն է, որ Անդր-  
 կովկասում կար հսկայական զինուժ, որը պատրաստ էր գործ-  
 գալ Թուրքիայի դեմ: Վերջինս, դաշնակիցների հետախուզության  
 տվյալների համաձայն, ամբողջ ուղմանակատում՝ սկսած Աւ-  
 ծովից մինչև Պարսկաստան, ուներ ընդամենը 18—20 հազ. հոգ-  
 նած, կազմալուծված՝ զորք: Հայկական զորամասերում կար 30  
 հազ. ճակատային զինվոր:<sup>1</sup> Ներխուժման լուրջ սպառնալիք առա-  
 ջացավ Անդրկովկասի վարչական, տնտեսական ու քաղաքական  
 կենտրոնների համար: Առանձնապես ծանր կացություն ստեղծվեց  
 հայ ժողովրդի համար: Դժվարին օրերին հայ ժողովրդին առաջ-  
 նորդեց հայրենիքի փրկության ու ազգի հարատեման զիտակցումը  
 և նա ազգովի թշնամու դեմ պայքարելու վճռականություն հանդես  
 բերեց: Դրա փայլուն վկան էր 1918 թ. մայիսին Սարդարապատի  
 հերոսամարտը, ուր թուրքերը ջարդված հետ նահանջեցին: Վաղե-  
 մի թշնամին հսկայական կորուստներ ունեցավ նաև Բաշ—Ապա-  
 րանի ու Ղարաբիլիսայի կոփիներում: Մայիսյան հերոսամարտե-  
 րում հայ ժողովրդի բոլոր խավերի անձնուրաց պայքարը ձախո-  
 ղեց Հայաստանի արևելյան հատվածը նվաճելու և նրա հայ քնակ-  
 շությանը բնաջնջելու երիտթուրքական ծրագիրը: Սակայն հակա-  
 ռակորդի գեռ նախկինի պես ուժեղ էր և մեծ վտանգ էր ներկայա-  
 ցնում Հայաստանի ու ողջ երկրամասի համար: Բնավ էլ պատա-  
 հական է, որ Հայաստանի օդը գեռ շէր մաքրվել մայիսյան կոփի-  
 ների վառողի ծխից, երբ թուրքական զորքերը Ղաղախ—Աղստա-  
 ֆա գծով շարժվեցին գեղի Բաքու, նպատակ ունենալով մի կող-  
 մից, կանխել զերմանացիներին,<sup>2</sup> մյուս կողմից՝ գրավել Բաքուն

1 Հ. Սիմոնյան, Թուրք—Հայկական հարաբերությունների պատմությունից, էջ 302—303:

2 1918 թ. ամռանը գերմանական հրամանատարության հիմնական խնդիրներից մե-  
 կը համարվեց Բաքի գրավումը: Տես՝ Յ. Լյուդենդորֆ. Мои воспоминания  
 войны 1914—1918 гг., т. 2, с. 219—220.

և նախադրյալներ ստեղծել համաթուրքական նպատակների իրականացման համար:<sup>1</sup>

Այդ զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց Նուրի փաշան՝ Թուրքիայի ռազմական մինիստր էնվեր փաշայի եղբայրը: Թուրքական զորքերի առաջխաղացման լուրը ցնծությամբ ընդունեց Գանձակի մուսուլման բնակչությունը: «Գանձակում սպասում են էնվեր փաշայի եղբոր (խոսքը Նուրի փաշայի մասին է) ժամանմանը: Կայարանը բարձարված է, և այդ արել է մահմեդական մտավորականությունը: Մարդիկ միմյանց ողջունում են Աղրբեջանի առաջիկա անկախության համար: Սպասում են թուրքական զորքերի ժամանմանը», — ասված է այն օրերի իրադարձությունները լուսաբանող վավերագրերից մեկում:<sup>2</sup> Էնդ որում, դեռևս մայիսին սկսվել էր թուրքական կանոնավոր զորամասերի փոխադրումը Թավրիզի վրայով դեպի Ղազախ և Գանձակ: Նրանց առաջապահ զոկատները Գանձակ ժամանեցին մայիսի 25-ին:<sup>3</sup> Ղազախ—Աղստաֆա գծով արշավող օսմանյան զորքերը տեղի մուսուլման բնակչության զինական օգնությամբ գրավեցին Գանձակը: Այստեղ, ինչպես արդեն նշել ենք, թիկունքում ունենալով թուրքական զորությունը, մուսավաթականները կազմեցին Աղրբեջանի կառավարությունը, ևան ևոյսկու գլխավորությամբ: Նախքան թուրքական զորքերի Գանձակ մտնելը, տեղի մուսավաթականները հսկայական աշխատանք էին տարել նրանց հետագա անելիքները հեշտացնելու համար: Մահմեդական զորամասերից կազմվել էր ազգային կորպուս

1 Թուրքին իրենց արշավանքներն Անդրկովկասի վրա կատարում էին մահմեդական բնակչությանը օգնելու պատրիարքի տակ: Օրինակ, Նուրի փաշան Կոստանդնուպոլիս հղած հնագրերում հայտարարում էր, որ ինքը գետի Գանձակ և Բարս է շարժվում տեղի մահմեդականներին բոլշնիներից և հայերից փրկելու համար: Shv. E. Ph. Լուծավեյթ. Տուրցիա в годы первой мировой войны. М., 1966, С. 212—213.

2 Միաժամանակ մուսավաթականները տարածում էին սագրիլ լուրեր, թե Թարգում իր սպասում է մուսուլմանների կոտորած, ուստի անհրաժեշտ է թուրքական զորքերի օգնությունը: Shv. E. A. Токаржевский. Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане. Баку, 1957, с. 50.

3 Նույն տեղում, էջ 207:

2 Աշ. Հարությունյան, Խշկ. աշխ., էջ 206—207:

բարական բանակի նախկին գեներալ Ֆերիկ Ալի աղա Շիխլինսկու հրամանատարությամբ։ Գանձակում կենտրոնանալուն պես ապակազմավորված ադրբեջանական գորամասերն ու թուրքական գորքերը միավորվեցին՝ ստեղծելով «Կովկասյան իսլամական բանակը», որի բնդցանուր հրամանատարությունը ստանձնեց Նուրի փաշան։ Դեպի Բաքու շարժվող մուսուլմանական բանակից առանձնացավ մի գորախումբ, և Կովկասյան Հ-րդ դիվիզիայի<sup>1</sup> հրամանատարներից Զեմիլ Ջահիդ<sup>2</sup> բեյի գլխավորությամբ գնաց դեպի Ղարաբաղ ու բանակատեղի դարձրեց Աղդամը՝ Լեռնային Ղարաբաղի սահմանային դարպաններից մեկը, որը բանալի էր գավառ ներխուժելու համար։ Մուսուլմանական բանակը և թուրքական խոժանը ժրաչան կերպով նախապատրաստվում էին հարձակվել Լեռնային Ղարաբաղի վրա։

Ղարաբաղի հայության վրա նորից կախվեց ահարկու վըտանգը։ Դրությունը հատկապես սրվեց 1918 թ. մայիսից, երբ Ղարաբաղի զանազան շրջաններում (Աղդամի, Շուշիի, Կարյագինոյի, Զերբարյիլի և այլն) երևացին և ժամանակավոր բնակություն հաստատեցին թուրք սպաները, որոնց թաթարները կոշում էին «փաշա»։<sup>3</sup>

Գանձակում բնավորված Նուրի փաշան, իբր կարգ պահպանելու համար, հատուկ հրամանով այդ մասերում հաստատեց պարետություն և «փաշաներից» նշանակեց զինվորական պարետներ։<sup>4</sup> Հատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղի մուսուլմանական շրջաններում պարետային կառավարման ձև մտցնելուց հետո մուսուլմանական Աղդամի կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը և լուծարվեց։ Տեղերում ամբողջ իշխանությունը կենտրոնացավ պարետների ձեռքում։ Թուրքական պարետները անտանելի շարիքներ պատճառեցին Արցախի հայ բնակչությանը։ Նրանք տեղի մուսուլմաններից կազմակերպում էին զինված բանդաներ և

1 Որոշ ազգյարեներում նշվում է նաև 1-ին զիվյալի հրամանատար։ ՀՀՊՊԿ, ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 28։ Ճիշտը 2-րդ զիվյալի է։

2 Մի շաբաթ փաստաթյաներում հանդիպում ենք նաև Զեմիլ Ջահիդ ձեռք։ ՀՀՊՊԿ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 68։

3 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ.։

4 «Нагорный Карабах в 1918—1923», с. 19.

նրանց օգտագործում ոչ մահմեղական բնակչության դեմ, իսկ շատ հաճախ էլ թուրքական հրամանատարության և աղրբեջանական կառավարության անունից վերջնագրային պահանջներ (զենքը հանձնել, հպատակվել) էին ներկայացնում Արցախի հայությանը:<sup>1</sup> Այդ օրերին Լեռնային Ղարաբաղում թուրք պարետների ներկայությունը այսպիս է բնութագրել իրադարձություններին մոտ կանգնած Հարություն Թումյանը. «Վիճակը զնալով ավելի կերպ հայունանար, եթե լինեին Ղարաբաղի սահմանամերձ շրջաններում թուրքերի նշանակած «կոմմենդանտները», որոնց միջոցով կատաղի համախոլամական և պանթուրքական բարող էր կազմակերպվում մահմեղականների շրջանում»:<sup>2</sup>

Թուրքական զորքերը Գանձակ մտնելուց հետո քաղաքի հայ և ոչ մուտքման մյուս ժողովուրդների նկատմամբ սկսեցին դործադրել բռնություններ ու հալածանք: Հետեւ ելով եղորք՝ հայակեր էնվերի օրինակին, նուրի փաշան միջոցների առաջ կանգ չէր առնում, Գանձակի հայության հետ հաշվեհարդար տեսնելու համար:

Խոլամական բանակի հրամանատարը հեռուն տանող նաև տակներ ուներ: Նա ծրագրել էր արյան մեջ խեղդել արցախահայության գոյապայթարը, նվաճել հայոց «արծվաբույնը», որը անառիկ բերդի նման փակում էր Զուղայի գծով և Գանձակից եվլախ շարժվող թուրքական զորամասերի միավորման ճանապարհը: Տաճիկների Արցախ տանող ճանապարհը սկիզբ էր առնում Գանձակից, ուստի Գանձակը դառնալու էր բազա՝ լեռնային Ղարաբաղը նվաճելու համար: Ահա թե ինչու նուրի փաշան առաջինը հաշվեհարդար տեսավ Գանձակի հայության հետ, որպեսզի վերջինիս լիովին զրկի պայքարելու հնարավորությունից: Նա հրամայեց դինաթափել բոլոր հայերին՝ «աշխարհազորը զինելու համար»: Այդ մասին հայերին գրավոր զգուշացում արվեց. անհապաղ հավաքել զենքը և հանձնել թուրքերին, հակառակ դեպքում տեղն ու

1 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ., ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.309, թթ. 204—207:

2 Հ. Թումյան, Քննքերը, լեռնային Ղարաբաղում 1917—1920 թթ., «Խորհրդային Ղարաբաղ», 5 նոյեմբերի 1989 թ.:

տեղը կգնդակահարվեն նրանք, ում մոտ հայտնաբերվի զենք<sup>1</sup>: Ահա մի փաստաթուղթ ևս՝ այդ օրերին թուրքերի կողմից Գանձակի հայության նկատմամբ նախապատրաստվող արյունաւի սպանդի վերաբերյալ: «Հայեր նախազգուշացնում եմ, — գրում էր Նուրի փաշան, — դուք հանգիստ նստեք և շմիանաք Անդրանիկին, հակառակ դեպքում, ես ինձ զերծ եմ համարում ամեն պատասխանատվությունից և հայտնում եմ, որ այստեղ էլ կկրկնվի Ադանայի կոտորածը»<sup>2</sup>:

Սակայն Նուրի փաշայի սպառնալիքները շրնկձեցին գանձակահայության հերոսական ոգին, և նա մնաց անդրդվելի: Գանձակի հայությունը կտրականապես հրաժարվեց զենքերը հանձնելուց, համոզված լինելով, որ զինաթափությունը հավասարագոր էր թրշնամու երախը նետվելուն: Միանգամայն պարզ էր, որ «անհնագանդության» զիմաց հայերը պետք է հատուցեին: Թուրք նվաճողները և նրանց միացած Ազրբեջանի զինական ուժերը Գանձակի հայկական թաղամասը շրջապատեցին ու փակելով բոլոր ճանապարհները՝ իսլամական բանակի հրամանատարի հրամանով ենթարկեցին հրետանային ուժակոծությունը:<sup>3</sup> Իւլյամական ունաշին հունիսի 15-ին սկսեց մարտուկան գործողություններ ծավալել Բարվի ուղղությամբ: Նրանց ճանապարհը փակեցին Բարվի կոմունայի գերադանցապես հայերից կազմված կարմիր բանակի զորամասերը և զուտ հայկական զորքերը:<sup>4</sup> Վերջիններս ենթակա Ենի Բարվի Հայոց Ազգային խորհրդին, որտեղ վճռական դեր էր խաղում Հայ Հեղափոխական Դաշնակցության Բարվի կոմիտեն:<sup>5</sup> Բարվի վրա հարձակումը թուրքերին հաջողություն չբերեց: Կովկասյան մուսուլմանական բանակը հանդիսեց կոմունայի զորքերի անկոտրում

1 ՀՀՊԿ, «Հավաքածու», գ. 112, թ. 31:

2 «Ժողովրդի ձայն», 15 սեպտեմբերի 1918 թ.:

3 ՀՀՊԿ, «Հավաքածու», գ. 112, թ. 32:

4 Մոտ 18000 մարտիկներ, որոնք ընդդրկված էին թվով 4 բրիգադներում, 22 գումարտակեներում, 1918 թ. ապրիլի 25-ին Բարվի Հայոց Ազգային խորհուրդը գրեց Սահմանադրության պահպարտ ժողովրդական կոմիտարների խորհրդի տրամադրության տակ: Հարկ է նշել, որ Բամբումի գաշնազրով թուրքական կողմը պարտավորեց նույն էր: «Բարվի Հայոց Ազգային խորհուրդը շիտարեց այդ որոշումը: Բարերախտարար Բարվի Հայոց Ազգային խորհուրդը շիտարեց այդ որոշումը:

5 Հ. Միմունյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից: Եր., 1991, էջ 309:

դիմադրությանը: Առանձնապես աշքի ընկան հայ մարտիկները և Հարգածելով դարավոր թշնամուն, նրանք քաջ գիտակցում էին, որ կովելով Բաքվի կոմունայի համար, կովում են ամենից առաջ Բաքվի 100 հազար հայ բնակչության, Ղարաբաղի ու հայկական մյուս գավառների և Հայաստանի Հանրապետության համար: Այս թե ինչ է զրում մուսավաթական բանակի հրամանատարներից Հաջինսկին Ռասով Զաղեին<sup>1</sup> ուղղված զեկուցագրում: «Մեր վիճակը ուղղմանակատում շատ աննախանձելի է: Այլև շենք կարող առաջ շարժվել: Բուշիկները շատ արկեր ունեն և հիանալի կովում են: Այդ բոլորի մասին ես ձեզ մանրամասն հեռագրել եմ և խնդրել էնվերից պահանջել շուտափույտ կերպով ուղարկել ես մեկ զիվեղիա, հակառակ դեպքում՝ ամեն ինչ կկործանվի և մենք Բաքուն շենք ստանա: Թուրքերի հեղինակությունը ընկնում է, ավելի ճիշտ այն արդեն սկսել է ընկնել»:<sup>2</sup> Եեղվելով դեպքերի ընթացքից, մենք ցանկացանք ցույց տալ, որ 1918 թ. ամռանը Թուրքիայի վիճակն այնպիսին էր, որ նա չեր կարող մեծարանակ զինուժ կենտրոնացնել կեռնային Ղարաբաղի դեմ, թեև թուրքերը շատ անհանգիստ էին, թիկունքում մշտապես զգալով Ղարաբաղի շնչառությունը: Հարկ ենք համարում վկայակոչել նաև իրադարձությունների ակունքի մատ կանգնած մուսուլմանական բանակի հրամանատար Նուրի Փաշայի՝ տվյալ դեպքում անկողմնակալ, ուղիղ խոսքը: «Գյանցայի նահանգում, Կուրից հարավ, հայերն իրենց հանգիստ են պահում: Որպեսզի ինձ ապահովեմ Ղարաբաղի հայերից, Զուլֆայի և Օրդուրադի վրայով անյտեղ կուղարկվի ոչ մեծ ջոկատ»:<sup>3</sup> Թուրքական բանակի գլխավոր հրամանատարությունը հավանություն շտվեց Ղարաբաղ ջոկատ ուղարկելու Նուրի Փաշայի ցանկությանը, քանի որ մտադիր էր այնտեղ նետել ամբողջ գիվեղիա, իհարկե, Բաքուն գրավելուց հետո միայն:<sup>4</sup> Վերախմբավորելով ուժերը և բարձրացնելով բանակի մարտական ողին, Թուրքական հրամանատարությունը վերսկսեց հարձակումը

<sup>1</sup> Թուրքիայի մշտական ներկայացուցիչը Բաքվում:

<sup>2</sup> ՀՀՊՊԱՅ, «Հավաքածու», գ.112, թ. 46:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, թթ. 46—47:

Բարքի վրա: Հուլիսի 15-ից 18-ը Կովկասյան մուսուլմանական բանակի զորամասերը զրավեցին ու ամրացան Քյուրդամիր—Աղոստ—Շաբաղիշ և Սալլանի շրջանում՝ նոր վասիլեկա և Բանիք բնագծերում: Հուլիսի 19-ին թուրքերը ընդհանուր ճակատով հարձակում սկսեցին Բարքի ուղղությամբ:<sup>1</sup> Այս մարտերում նույնպես հիմնական ծանրությունը ընկած էր հայկական զորամասերի վրա: Ու թեև վերջին պահին հայ մարտիկները տեղի տվեցին, բայց այդ ճակատամարտերը ամիսներով դանդաղեցրին թուրքական բանակի առաջնադաշտումը,<sup>2</sup> — նշում է «Ալիք» թերթը:

1918 թ. սեպտեմբերի 15-ի առավոտյան թուրքական հրետանին սկսեց հրետակոծել Բարքուն: Քաղաքում սկսվեց խուճապ: Հայկական զորամասերը և քաղաքի հայությունը հերոսարար մարտնչեցին թուրքերի դեմ: Վերջիններս Բարքուն ներխուժեցին նույն օրը, անզիւդական ուժերի կողմից գիրքերը լքելուց հետո: Մուսուլմանական զորքը և տեղական թաթարական ամբոխն իրենց հաղթանակի խրախճանքը նշեցին Բարքուն՝ հայերի սպանդ կազմակերպելու միջոցով: Դա պատահական չէր. հայ մարտիկների և Բարքի հայության ամիսներ տեսած համառ գիմադրությունը նրանց կատաղության էր հասցրել: Ամենուրեք հերթական առիթը լրացրաստ էր՝ իրը հայերը նշում նն մասնակիաններին, որին՝ նրանց բնակավայրերը պիտք է քարուքանդ անել, իսկ բնակչությանը ոչնչացնել: Քաղաքում սկսվեց հայերի կոտորածք: Այդ կապակցությամբ Վրաստանում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար Ա. Զամալյանը Վրաստանում Աղբեկանի գործերի հավատարմատար Զաֆարովին բողոքեց, որ «Բարքի զրավումը ուղեկցվել է հայ բնակչության կոտորածով: Զոհերի թիվը հասնում է 25—30 հազարի: Բարբարոսությունը տեսլ է երեք օր: Դրանից հետո նոր միայն կառավարությունը միջոցներ է ձեռք առել»;<sup>3</sup> Իսկապես, որ թուրք-թաթարական ուղմամոլները Բարքում ահավոր ոճրագործություն էին կատարել: Բարքի զրավման ականատեսները իրենց հուշերում պատմում էին կանաց, երեխաների սպանության սրտաճմիկ տե-

1 Այ. Հարությունյան, Եղվ. աշխ., Էջ 235:

2 «Ալիք», Թեհրան, 31 մարտի 1919 թ.

3 «Աշխատավոր», 18 Հոկտեմբերի 1918 թ.:

սարանների մասին: «Որբացած ընտանիքները, — զրել է «Աշխատավոր» թերթը, — ահարեկված ու սարսափած վաղում էին փողոցներում և կատաղի աղաղակով անհծում էին սպանիչներին ու կողոպտիչներին: Կանայք իրենց երեխաների տանջանքը տեսնելով՝ խելագարվում էին, սարսափահար երեխաները բնագդորեն բռնում էին իրենց մոր շրջապահութի փեշերից և վտանգը նախագալով՝ հեկեկում էին»:<sup>1</sup>

Թուրքերի նողկալի գաղանությունները խորապես հուզեցին Բարվում գտնվող շեղոք պետությունների (Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Պարսկաստան) հյուպատոսներին և նրանք սեպտեմբերի 18-ին համատեղ բողոք ուղարկեցին Նուրի փաշային և Հայտնեցին, որ իրենց պարտքն են համարում բողոքել այն սիստեմատիկ եղեռնի գեմ, որ կատարվեց Բարու քաղաքը գրավելուց հետո:<sup>2</sup>

Լեռնային Ղարաբաղի Հայ բնակչության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգն ավելի իրական ու սպառնալի դարձակ թուրքերի կողմից Բարվի դրավումից հետո: Բարվի անկումը լիովին ազատ արձակեց թուրք—մուսավաթական նվաճողների ձեռքերը: Ազրբեջանը, որ միշտ աջակից և զնորդակից է եղել Թուրքիայի կողմից Հայության դեմ ուղղված գործողություններին, այս անգամ նույնպես անմասն շմեաց:

Բարվի գրավումից հետո մուսուլմանական բանակի Հրամանատարությունը վճռեց մեծ ուժերով շարժվել դեպի Ղարաբաղ, ներխուժել Զանգեզուր, Հաշվեհարդար տեսնել Հայ բնակչության հետ, ապա կապվել նախիչևանին և վերջ տալ Հայաստանի Հանրապետության գոյությանը: Թուրքերի Հարձակման նախօրյակին Ազրբեջանը տնտեսական շրջափակման հնթարկեց Հայկական Ղարաբաղին: Այդ կապակցությամբ «Նոր Հորիզոն» թերթը Հայտնում էր. «Տնտեսական այն բոյկոտը, որ կյանքի մեջ է մտցված տաճկական փաշաների այստեղ դալուց ի վեր, Ազրբեջանի կառավարությունը Հայերին ճնշելու համար դարձրել է պետական քաղաքականությունը»:<sup>3</sup>

1 «Աշխատավոր», 5 Հոկտեմբերի 1918 թ.:

2 «Նոր Հորիզոն», 26 նոյեմբերի 1918 թ.:

3 «Նոր Հորիզոն», 6 հուլիսի 1918 թ.:

Երջափակման հետևանքով Առողջին Դարաբաղը կանգնեց անտեսական ու քաղաքական ծանր դրության առաջ: Ժամանակի մամուլի էջերը հարուստ են թուրքական հարձակման նախօրյակին արցախահայերի տնտեսական ու իրավական ողբալի վիճակը նկարագրող թղթակցություններով: «Շուշիի հայկական» մասում իսկական սովէ է: Եվլախի խճուղին փակ լինելու պատճառով նըրանք ոչ մի կենսամթերք չեն ստանում: Շատերը հետզհետե ծախում են տան իրերը՝ կենսամթերք ձեռք բերելու համար: Աղքատ դասը մի քանի ամիս ի վեր միայն բույսերով և արմատներով է կերակրվել: Ամբողջ առևտուրը կենարոնացված է թաթարների ձեռքը»,<sup>1</sup> — նշում է «Հորիզոն» թերթը: «Ժողովուրդը հալումաշ էր լինում անիշխանության թոհուրո՞ի մեջ: Քաղաքում իշխանություն չկա, դատարանը չի գործում, ազգային կոմիտեները կարդ հաստատել չեն կարող, իսկ կոմիտարիատը թուրքերի կողմից ցրված է: Հայերի և թուրքերի հարաբերությունները ծայրաստիճան սրվել են: Ռուս բնակչությունը թողել է իր տեղերը, սրանց պյուղերը թալանված են ու հրդեհի մատնված: Թուրք բեկերը անհամբեր սպասում են տաճիկների գալուն»,<sup>2</sup> — կարդում ենք «Հորիզոն» թերթի հունիսի 13-ի համարում:

Թուրքական բանակի հրամանատարությունը և Աղքաբեզանի կառավարությունը Դարաբաղը կտրելով արտարին աշխարհի հետ կապող ուղիներից, միաժամանակ խստիվ արգելեցին հայերի ելքն ու մատքը Դարաբաղը: Շատ խիստ վերաբերմունք էին ցույց տալիս դրսից Գանձակ և կած հայերին, առանձնապես երիտասարդներին: Աղքաբեզանական իշխանությունները արգելում էին նաև քաղաքից հեռանալը՝ մանավանդ գեպի Դարաբաղ գնացողներին: Մեր պահանջն է, — ասում էին նրանք, — որ ոչ մի հայ Հարժվածի դեպի Դարաբաղ կամ այլ կողմեր, քանի դեռ Բաբվի խնդիրը լուծված չէ:<sup>3</sup> Վերջին տողերից դժվար չէ կուհել, որ Աղքաբեզանի դեկավարությունը և թուրքական բանակի հրամանատարությունը լրջութեն երկուղել են կեռնալին Դարաբաղից և իրենց դավթողական

1. «Հորիզոն», 13 հունիսի 1918 թ.:

2. «Հորիզոն», 13 հունիսի 1918 թ.:

3. «Ժաղաղողովի ձայն», 10 սեպտեմբերի 1918 թ.:

ծրագրերը իրականացնելիս չեն անուսուել նաև նրա «վտանգավորությունը»:

Այսպիսով, թուրքական հարձակման նախօրյակին լեռնային Ղարաբաղում ստեղծվել էր տագնապալի իրավիճակ, որը ցանկացած պահի կարող էր պայթել և աղետալի հետեւանքներ ունենալ հայ, ինչպես նաև մահմեղական ժողովուրդների համար: Վտանգը կանխելու մտահոգությամբ Վրաստանում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար Ա. Զամալյանը դիմում է Վրաստանում Աղրբեջանի իր պաշտոնակից Մ. Զաֆարովին և առաջարկում հայ—թաթարական հատուկ պատվիրակություն ուղարկել Ղարաբաղ՝ երկու ժողովուրդների միջև ծագած լարված հարաբերությունները մեղմելու համար:<sup>1</sup> Ինչպես երևում է Զամալյանին՝ Զաֆարովի օգոստոսի 23-ի պատասխան դրությունից, ընդունելով հանդերձ Ղարաբաղ պատվիրակություն ուղարկելու առաջարկը, վերջինս, այնուամենայնիվ, այդ գաղափարը ընդունելի համարեց՝ սայմանով, որ Հայաստանի կառավարությունն, իր հերթին, շպետք է խանգարի, եթե Աղրբեջանը հանդես դա Հայաստանի սահմաններում ապրող մուսումնակշության վրա իր ազդեցությունը գործադրելու համար:<sup>2</sup>

Զաֆարովի պատասխանը իրականությունը խեղաթյուրելու միտում ուներ, կամ, որ նույն է, ինչպես ընդունված է ասել, միջոցները արգարացնում են նպատակը: Այդ պատասխանը լիովին համապատասխանում էր Ղարաբաղի նկատմամբ աղրբեջանական իշխանությունների որդեղրած քաղաքականությանը, այն է՝ նվաճել երկրամասը, ինչ ճանապարհով էլ ուղում է լինի:

Զաֆարովին ուղարկած պատասխան գրության մեջ Զամալյանը հայտնում է, որ հայկական կողմը միանգամայն իրավասու և խառնվելու Ղարաբաղի հարցերին, իսկ աղրբեջանական կողմի փոխադարձ ներկայացվող պահանջը իրավական հիմքերից զուրկ է: Անդրադառնալով Ղարաբաղի հարցում երկու հանրապետությունների իրավասության շրջանակներին, Զամալյանը պատաս-

1 Տես՝ «Նոր Հոգիզոն», 29 օգոստոսի 1918 թ.

2 Նույն տեղում:

իւանում է, որ Ղարաբաղ պատվիրակություն ուղարկելու մասին  
պետք է նկատել, որ իր առաջարկությունը գնահատելիս Զաֆարովը  
անտեսել է մի էական հանդամանք, որը նրան ցցել է ցավալի մոլորու-  
թյան մեջ: Զամալյանն իր առաջարկությամբ ամենենին շի մտածել  
ներխուժել Ազրբեջանի հանրապետության ներքին գործերի մեջ: Եթե  
հաբցը վերաբերվեր Ազրբեջանի հանրապետության որևէ վիճելի  
շրջանի, շարունակել է Զամալյանը, ապա ինքը չէր փորձի  
իր ծառայությունն առաջարկել: Գրության վերջին պարբերու-  
թյունն իր մեջ կենտրոնացնում է ամբողջ ասելիքը. «Սակայն խըն-  
դիրը Ղարաբաղի վիճելի հարցի և տեղի տիրապետող հայ բնակ-  
շության մասին է: Այս վիճելի խնդիրը իր վերջնական լուծումը  
կստանա կամ Պոլսի կոնֆերանսում կամ Ղարաբաղի ազգարնակ-  
շության աղատ կամքի արտահայտությամբ»<sup>1:</sup>

Վերախմբավորելով իսլամական բանակի մնացյալ ուժերը,  
ինչպես նաև հավաքագրելով ոչ մուսուլման ժողովուրդների ղեմ  
«սրբադան» պատերազմի մոլուցքով լցված մահմեդականներին,  
Նորի փաշան շտապում էր ղեպի Արցախ:

Լեռնային Ղարաբաղը նվաճելու պլանի իրականացումը դրվեց  
թուրքական Կովկասյան բանակի 2-րդ դիվիզիայի հրամանատար  
Զեմիլ Զահիդ բեյի վրա, որի ռազմական շտաբը և բնակատեղին  
գտնվում էին Աղդամ քաղաքում: Թուրք զորահրամանատարը, վրս-  
տահ իր ուժերի վրա, ծրագրել էր սրբնթաց գրոհով վերցնել Շու-  
շին՝ Արցախ աշխարհի սիրտը:

Իր խնդիրը ավարտած համարելով, Նորի փաշան Գանձակի  
հայերից ու թաթարներից բազկացած մի պատվիրակություն ուղար-  
կեց Շուշի, որպեսզի նրա բնակչությանը համոզին հոժարկամ, ա-  
ռանց դիմագրություն ցույց տալու ընդունել Ազրբեջանի պատա-  
կությունը: Հայերից պատվիրակության կազմում էին Գանձակի  
քաղաքագլուխ Խ. Մ. Համասփյուռք և Կ. Գ. Մելիք Շահնազարովը  
(Շահնազ): Շուշեցիները «անհյուրասեր» գտնվեցին պատվիրակու-  
թյան անդամների նկատմամբ: Շուշի մտնելու հենց առաջին օրը  
նրանց; որպես հայրենիքի դավաճանների, շուշեսիները բանտար-

1 «Նոր Հորիզոն», 8 սեպտեմբերի 1918 թ.

կեցին։ Շուշիա մտավորականության ջանքերի շնորհիվ հաջողվեց հնգօրյա բանտարկությունից հետո նրանց ազատ արձակել։ Գանձակի հետդարձ ճանապարհը բռնած պատվիրակությանը շուշիցիները հրահանգեցին, որ իրենց անունից տաճկական հրամանատարությանը տեղյակ պահեն, որ իրենք վճռականորեն դեմ են Աղրբեջանի իշխանությանը<sup>1</sup>։

Հայերի հանդունքն պատասխանը անակնկալի բերեց նուրի փաշային։ Վերջինս մի գրությամբ Ղարաբաղի հայերից պահանչեց «վերջ տալ անհնազանդությանը և ճանաշել Աղրբեջանի իշխանությունը»<sup>2</sup>։

Սա Արցախի նկատմամբ թուրք-թաթարական դավադիր երկակի զավթողական քաղաքականության գրսնորման երկրորդ քայլն էր (վերոհիշյալ պատվիրակության Ղարաբաղ կատարած այցից հետո) և թուրքերից ստացված առաջին դրավոր վերջնագիրը։ Ընդ որում, վերջնագրում թուրքերն առաջին անգամ պաշտոնապես հայտարարել էին, որ Ղարաբաղն Աղրբեջանի անքաժունելի մասն է։

Իսլամական բանակի հրամանատարի վերջնագիրը Ղարաբաղցիներին շընկրկեց։ Ավելին, թուրքերի սպառնալիքը առիթ ծառայեց արագացնելու երկրամասի պաշտպանական կառույցների ամրապնդումը։

Նուրի փաշան լիովին համոզվեց, որ Լեռնային Ղարաբաղը համառորեն հրաժարվում է ընդունել Աղրբեջանի իշխանությունը և ջանում է միանալ Հայաստանի Հանրապետությանը։ Նա որոշեց բռնությամբ տիրել Արցախին։ Թուրքերի կողմից Ղարաբաղի նրկատմամբ բռնությունների սաստկացումը թևավորեց տեղի մուսուլման բնակչությանը, և նրանք նկատելիորեն ակտիվացան։ Օգտվելով այդ հանգամանքից, տաճկական բանակի հրամանատարությունը, մուսավաթական պարագուխների ամենագործունազակցությամբ, երկրամասում հրահրեցին հայ-թաթարական ընդհարումներ, որոնք մի շարք տեղերում արյունալի վերջարան ունե-

1 «Нагорный Карабах в 1918—1923», с.20.

2 «Նոր հորիզոն», 18 սեպտեմբերի 1918 թ.:

ցան: Երկու հարեան ժողովուրդների միջև պատերազմը դառնուժ էր անխուսափելի: Ղարաբաղի դեմ թուրքերի հարձակմանը նախորդեց Ղարաղլաղ (ներկայիս Բերդածոր) հայկական մեծ զյուղի կործանումը, որը ծանր հարված էր Ղարաբաղին: Այդ մասին կանդրադառնանք հետագա էջերում, իսկ այսուղ նշենք միայն, որ զյուղը պատկանում էր Զանգեզուրի գավառին և սահմանակից էր Շուշի քաղաքին: Ղարաբաղի համար այն ուներ ուազմավարական նշանակություն: Գորիսից Շուշի միակ ճանապարհը անցնում էր Ղարաղլաղով: Ղարաղլաղի անկումը քաջալերեց տեղական թուրքերին, և նրանք որոշեցին ձեռք բերած հաջողությունը զարգացնել: 1918 թ. սեպտեմբերի 10-ին տեղական թուրքերը տաճկական զորամասերի աջակցությամբ երկու՝ Կոռնիձորի և Խանածախ—Խողնավար ուղղություններով հարձակվեցին Զանգեզուրի վրա:

Սակայն հաջողության շհասնելով, սեպտեմբերի 16-ին հարկադրոված նահանջեցին:<sup>1</sup>

Կասկածից գուրս է, որ Զանգեզուրում անհաջողություն կրելուց հետո, թուրքերը պետք է շրջվեին զեպի Ղարաբաղ, մանավանդ, որ արդեն տիրացել էին Ղարաղլաղ զյուղին: Այսպիսի պայմաններում, 1918 թ. սեպտեմբերի 6-ին, Ղարաղլաղի անկումից երկու օր Հետո Շուշիում հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի հայության երկրորդ համագումարը, որը տեսց մինչև սեպտեմբերի 13-ը: Նրա աշխատանքներին մասնակցում էր 200 մարդ, այդ թվում՝ ներկայացուցիչներ բոլոր քաղաքական կուսակցություններից: Այն պետք է քննարկեր երկրի ներքին և արտաքին կյանքին վերաբերող միշտ հարք հարցեր՝ ժողովրդական կառավարության հաշվետվությունը, թուրքական վտանգը դիմագրավելու նախապատրաստվածությունը և Ղարաղլաղի բնակիչներին իրենց զյուղը վերադարձնելը;<sup>2</sup> Համագումարի աշխատանքի օրերին Աղդամում գտնվող թուրքական Կովկասյան բանակի երկրորդ դիվիզիայի հրամանատար, Նուրի փաշայի օգնական, Բաքվի տիւրահողակ «Հերոս» Զեմիլ Զահիդ բեյի անունից երկու վերջնազիր է ստացվում՝ մեկն ուղղված Ղարաբաղի հայոց

1 «Նոր հորիզոն», 18 դեկտեմբերի 1918 թ.:

2 «Նոր հորիզոն», 18 սեպտեմբերի 1918, «Մշակ», 22 փետրվարի 1919

Հոգևոր առաջնորդին, իսկ մյուսը՝ գավառի հայ աղքաբնակշությանը:<sup>1</sup> Այս առնշությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն օրերի Ղարաբաղի ռազմական գործերի կառավարիլ Հ. Թումյանը վկայում է, որ թուրք զորավարն ուղարկել է մեկ գրություն, այն էլ շրջ համագումարից առաջ՝ նշելով, միաժամանակ, որ դա սամանցիների առաջին հանդունքն պահանջն էր: Այս հաղորդումը տեղ է գտնել նաև Բ. Ռուբարյանի գրքում:<sup>2</sup> Սակայն, ինչպես նկատեցինք, ուղարկվել է երկու գրություն, այն էլ համագումարի օրինին, և դա առաջին հանդունքն պահանջը չէր:

Հայկական կողմից միակողմանի զիջումներ պահանջող վերջնագիրը բովանդակում էր հինգ կետ: 1. Երեք օրվա ընթացքում բոլոր գինըերը հանձնել տաճկական հրամանատարությանը և անձնատուր լինել, 2. վերջ տալ երկրում տիրող անիշխանությանը, 3. Հետեւել Անդրանիկին, որը միայն նոր գաղթականության պատճառ է դառնում, 4. բաց անել Շուշի—Աղդամ խճուղին, 5. ճանապարհ տալ բոլցորներին:

Այդ պահանջները կատարելու դեպքում հայերին «բարեհոգաբար» խստացվում էր կյանքի և գույքի ապահովություն:<sup>3</sup>

Ռուշագրավ է, որ Զեմիլ Զահիդ բեյը վերջնագրով պաշտոնապես խստանում է նաև, որ Ղարաղլաղը կործանվել է թուրքական կտուավարության որոշմամբ:<sup>4</sup> Ըստ էության, թուրք զորահրամանատարի «խստացվանությունը» միտում ուներ հասկացնել տալ արցախահայությանը, որ թուրքիան հարկ եղած դեպքում նույն կերպ կվարվի նաև Ղարաբաղի հետ:

Հիշենք, որ սույն վերջնագրի պահանջների մի մասի վերաբերյալ արցախահայության առաջին համագումարը արդեն իր սրոշումը կայացրել էր, այն է՝ վերջ տալ անիշխանությանը, բացի ճանապարհները ճանապարհորդների ու բոլցորների համար և բարիդրացիական հարաբերություններ հաստատել մուսուլմանական ընակլության հետ:<sup>5</sup>

1 ՀՀՊԿԱ, ֆ.221, ց.1, գ.24, մաս 3, թ.46, ֆ.199, ց.1, գ.38, թ.11, «Մշակ», 27 փետրվարի 1919 թ.:

2 Բ. Ռուբարյան, նշվ. աշխա., էջ 29:

3 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ.:

4 ՀՀՊԿԱ, ֆ.221, ց.1, գ.24, մաս 3, թ.147.

5 Նույն տեղում:

Երկրորդ համագումարը երեք նիստերում քննարկեց թուրքական հրամանատարության վերջնազիրը և տվեց հետևյալ պատասխանը: 1. Ստեղծված ժողովրդական կառավարությունը նպատակ չունի որևէ քաղաքական արկածախնդրության, այլ խնդիր է դրել մնշել ներքին անիշխանությունը, վերջ տալ ավագակություններին, թալանին և ամեն կարգի օրինազանցություններին: 2. Ղարաբաղի հայությունը որևէ հարձակողական տրամադրություն և նպատակներ չունի: 3. Անկախ քաղաքական հեռանկարներից՝ հայ թուրքական հարաբերությունները Ղարաբաղում պետք է լինեն եղբայրական: Դարավոր հարևանները՝ հայերն ու թուրքերը պիտի հաշտ ապրեն կողք կողքի և խորապես հարգեն միմյանց իրավունքները: 4. Կազմակերպված կամ անկազմակերպ հարձակումները խաղաղաշխատավոր ազգաբնակչության վրա մեծապես վնասում են հայերի ու թուրքերի բարի գրացիությանը:<sup>1</sup>

Համագումարը միաժամանակ որոշում է խնդրել թուրքական հրամանատարությանը՝ բնակչությանը զինաթափ չանհի, քանի որ դա աղատություն կտա ավագակներին, և նրանք անպատճիժ կթալանեն ժողովրդին:<sup>2</sup>

Երկրորդ համագումարը մերժեց Ազրբեջանի կազմի մեջ մտնելու մասին թուրքական հրամանատարության և Ազրբեջանի կառավարության պահանջը:<sup>3</sup> Մակայն, Հնարավոր առևակատումից խուսափելու համար համագումարը կազմեց հատուկ պատվիրակություն, որը պետք է մեկներ Ազգամ և երես առ երես բանակցեր թուրքական հրամանատարության հետ: Հաջողության հասնելու դեպքում պատվիրակությունը պետք է այցելեր նաև Բաքու և Ազրբեջանի կառավարության հետ անմիջական բանակցություններ վարեր:<sup>4</sup>

Համագումարի պատգամավորները լավատեղյակ էին, որ գավառի բնակչությունը պատրաստվում է թուրք—թաթարական զավթիչների գեմ կովել վճռական կերպով: Մակայն, համագումարը որոշեց զենքի շղիմել՝ գտնելով, որ Ղարաբաղը լիովին դեռ պատրաստ

1 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ.:

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.11:

3 «Մշակ», 22 հոկտեմբերի 1918 թ.:

4 ՀՀՊՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.11:

չէ պատերազմի: Դրա համար էլ բնակլությանը հղեց հետևյալ շրջաբերականը . «Ղարաբաղի դրությունը հետզհետե լրջանում է: Մենք կոչ ենք անում հայ գյուղացիներին բարեկամական վերաբերմունք պահպանել թուրք հարևանների հետ: Թուրքական հրամանատարությունը սպառնում է թալանների ու սպառնությունների շարունակման դեպքում զորք մտցնել Ղարաբաղ: Հայ գյուղացիներ. մենք այնպես շանենք, որ մեր երկիրը մատնենք սրածության»:<sup>1</sup>

Ինչ վերաբերում է Ղարաղջաղի հետ կապված հարցին, ապա համագումարը այդ կապակցությամբ ընդունեց հատուկ որոշում, որով տաճկական հրամանատարության առաջ խնդիր էր դրվում դիմել տեղական թուրքերին, որպեսզի նրանք թույլ տան զարաղջաղցիներին վերադառնալու իրենց գյուղը:<sup>2</sup>

Երկրորդ համագումարը սեպտեմբերի 11-ի նիստում Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը վերանվանեց Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհուրդ, որը կազմված էր 10 մարդուց: Այս անվանափոխումը թելադրված էր առկա լարված իրադրությամբ և միտում ուներ մեղմելու թուրքական հրամանատարության և Աղրքեցանի կառավարող շրջանների զայրուցիթը ինքնիշխան լեռնային Ղարաբաղը՝ հանդեպ:

Նկատի ունենալով երկրամասում ստեղծված շափաղանց բարդ ու լարված իրավիճակը, համագումարը նույն նիստում որոշում կայցրեց, որ պատգամավորների կեսը մեկնի գյուղերը՝ տեղական իշխանություններին օգնելու, իսկ մյուս մասը՝ մնա քաղաքում, որպեսզի աջակցի ժողովրդական խորհրդին:<sup>3</sup> Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհրդը պիտի իրագործեր համագումարի ընդունած շատ պատասխանատու մի որոշում՝ ընտրեր Աղդամ մեկնող պատվիրակություն:

Երկու օր շարունակ խորհրդը և քաղաքում գտնվող պատգամավորները զբաղված էին պատվիրակների ընտրությամբ: Այս ոք շէր ցանկանում մտնել պատվիրակության կազմում: Պատճառն այն էր, որ ամեն ոք վախենում էր, թե իրեն ժողովուրդը պիտի նայի որ-

1 «Մշակ», 27 փետրվարի 1919 թ.:

2 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ.:

3 «Մշակ», 27 փետրվարի 1919 թ.:

պես դավաճանի: Երկօրյա վեճերից հետո կազմվեց Հինգ հոգիանոց պատվիրակություն, որի կազմում ընդգրկվեցին Գերասիմ Մելիք Շահնազարյանը (Շուշվա քաղաքագուխ), (Նախագահ), Հայրապետ Մուսայելյանը (Դուկասյան Օրիորդաց դպրոցի տեսուչ), Աշոտ Մելիք Հովսեփյանը (իրավաբան), Արշավիր Քամալյանը (թեմական դպրոցի ուսուցիչ) և Դանիել Առաքելյանը (դյուլացի):<sup>1</sup>

Ապահովության համար պատվիրակներին պիտի ուղեկցեին Աղդամիջյան կոմիտեի թուրք անդամները: Սակայն նրանցից միայն ինժեներ Լյուֆթալի բեկ Բեհբութովը համաձայնվեց պատվիրակության հետ գնալ Աղդամ:<sup>2</sup> Այս հանգամանքը վկայում է, որ համագումարի ընդունած որոշումները, որոնք ուղղված էին գավառի լարված մինուրատը մեղմելուն, մուսուլմանների սրտով չէր: Դա երեվաց նաև Ղարազջաղի հարցում: Երբ Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհուրդը գիմեց տեղական թուրքիրին՝ օգնելու զարադշաղցիներին հայրենի գյուղ վերադառնալու, նրանք առարկեցին, պատճառարաններով, թի գյուղի դեմ ուղղմական դործողություններ սկսել է թուրք համանատարությունը, ուստի և պետք է գիմել նրան:<sup>3</sup>

Մեկտեմբերի 15-ին պատվիրակությունը մեկնեց Աղդամ: Նույն օրը նրանք ներկայացան Զեմիլ Զահիդ բեյին: Վերջինս, որ արդեն առել էր թուրքերի Բաքու ներխուժելու լուրը, ինչպես նաև քաջատեղյակ էր համազումարի որոշումներին և այդ կապակցությամբ, «զայրացած» արցախահայության դեմ, առանց պատվիրակների խոսքը լսելու, նրանց ներկայացրեց նոր պահանջներ. 1. հպատակվել Աղդամի կառավարությանը, 2. զինաթափ լինել, 3. հանապարհ տալ թուրքական և աղբբեջանական զորքերին անցնելու Շուշի:<sup>4</sup> Թուրք զորահրամանատարի վերջնադիրը միանգամայն անակրնկալ էր պատվիրակության համար: Զեմիլ Զահիդ բեյին նրանք հայտնեցին, որ իրենք լիազորված չեն նման հարցերին պատասխան:

1. Բ. Ակտորարյանի գրքում (էջ 29) Դանիել Առաքելյանը նշված է որպես պատվիրակության նախագահ:

2. «Մշակ», 27 փետրվարի 1919 թ., ՀՀՊԿԱ, ֆ.314, գ.1, գ.34, թ.66, ֆ.221, գ.1, պ.30, թ.28:

3. «Մշակ», 27 փետրվարի 1919 թ.:

4. Նույն տեղում:

տալու: Հայ բանագնացները խնդրեցին բեյին, որպեսզի թույլ տա իրենց վերադառնալ Ղարաբաղ՝ զեկուցելու ներկայացված նոր պահանջների մասին: Սակայն թուրք հրամանատարը պատվիրակներին թույլ շտվեց հեռանալ Աղդամից: Ազելին, պահանջեց բանագնացներից վերջնագրի մասին գրավոր հայտնել արցախահայությանը: Պատվիրակության անդամները կտրականապես հրաժարվեցին որևէ գրություն գրելուց և պահանջեցին իրենց ազատ արձակել: Զեմին Զահիդ բեյը հարկադրված էր փոխել իր վճիռը և պատվիրակության անդամներից երկուսին՝ Հ. Մուսայելյանին ու Դ. Առաքելյանին թույլատրեց վերադառնալ Շուշի՝ պայմանով, որ տեղում իրենց խնդիրը կատարելուց հետո վերադառնան Աղդամ և իրազեկ դարձնեն Ղարաբաղի հայ ազգաբնակչության մտադրության մասին: Պատվիրակներից երեքին, այդ թվում և կյուփթալի բեկ Բեհբուրովին, որպես պատանդ նետեցին բանտ:<sup>1</sup>

Վկայակոչելով Հ. Թույլյանի մի հաղորդումը, Բ. Ալուբարյանը գրում է. «Այս օրերին էր, որ Աղդամում հայտնվեց նուրի փաշան»<sup>2</sup> Մինչդեռ Նուրի փաշան Աղդամ է ժամանել հայ պատվիրակների այնտեղից վերադառնալուց երեք օր հետո՝ սեպտեմբերի 19-ին: Այս մասին քիչ հետո:

Սեպտեմբերի 16-ին պատվիրակության երկու անդամները հասան Շուշի: Անհրաժեշտություն զգացվեց նոր համագումարի հրավիրման, որը պետք է քննարկեր թուրքերի վերջնագիրը և տար պատասխան: 1918 թ. սեպտեմբերի 17-ից 22-ը գումարվեց Ղարաբաղի հայության երրորդ արտակարգ համագումարը, որին հրավիրված էին մեծ թվով պատգամավորներ՝ յուրաքանչյուր զյուղից երկուսական, իսկ Շուշի քաղաքից՝ 18 ներկայացուցիչ: Պատգամավորների ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 200-ի:<sup>3</sup> Համագումարի աշխատանքները ընթանում էին բուռն վեճերի պայմաններում: Պատգամավորների մեծ մասը առաջարկում էր մերժել թուրքերի վերջնագիրը և պատրաստվել պատերազմի: Սակայն, համագումարի կազմակեր-

1 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ., ՀՀՊԿ, ֆ.222, գ.1, գ.24, մաս 3, թ.428:

2 Բ. Ալուբարյան, նշվ. աշխ., էջ 30:

3 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ., ՀՀՊԿ, ֆ.222, գ.1, գ.24, մաս 3, թ.428:

պիշներն աշխատում էին ամեն կերպ՝ համոզել նրանց՝ որ անհրաժեշտ է թուրքերի հետ լեզու գոնել, խուսափել կռվից՝ նկատի ունենալով Ղարաբաղի մեկուսացված վիճակը, նրա տնտեսական ծանր պայմանները և ամենազլիսավորը՝ զինամթերքի ու հանդերձանքի պակասությունը:

Համագումարի երրորդ օրն Արաեն Հովհաննիսյանին (Արսո) իր ընդարձակ ելույթով հաջողվեց մեղմել հավաքվածների բորբոքված կրքերը և նրանց համոզել, որ տվյալ պահին Լեռնային Ղարաբաղի հայության շահերին ուղղմավարությունը անհարիր է։ Համագումարը, երեք օրվա ըուն քնննարկումներից (ելույթ ունեցավ 78 պատգամավոր) հետո միաձայն որոշեց արյունահեղությունից խուսափելու համար, առանց կռվի գնալ համաձայնության։<sup>1</sup> Հայ պատմագրության մեջ սույն որոշումը տարբեր մեկնարանությունների տեղիք է տվել։ Այսքանը հետազոտողների համար հաստատուի հիմք է դարձել, որպեսզի նրանք, մի կողմ թողած մյուս բոլոր աղբյուրները, հայտնեն, թե համագումարը զիջողական դիրք է բուհել և հնարավոր է համարել, որպեսզի գավառը ժամանակավորապես, կամ գոնի պայմանով քննունի Աղբյուրեջանի գերիշխանությունը։<sup>2</sup> Այս տեսակետի կողմնակիցներին, ըստ երևույթին, շփոթմունքի մեջ է զցել որոշման այն մասը, որտեղ ասված է, թե «առանց կռվի գնալ համաձայնության»։ Այդպիսի ենթադրության կարելի է հանգել միայն որոշման բովանդակությանն ուղղակի իմաստով վերաբերելու դեպքում և երկրորդը՝ ուսումնասիրությունից դուրս թողնելով համագումարի աշխատանքները լուսաբանող աղբյուրագիտական առավել կարևոր այլ տվյալները։

Մեզ հայտնի սկզբնաղբյուրների հանգամանալի քննությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ որոշումն ընդունելով, համագումարը խնդիր չուներ Ղարաբաղը ենթարկելու թուրքերին, այլ կամ ենում էր փոխրժեաման ու փոխզիջման ճանապարհով համաձայնության գալ թուրքական բանակի հրամանատարության հետ, և իսպաղ կերպով լուծել ծագած վիճելի հարցերը։ Ասվածի վկայությունը տես-

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.243, թ.94, գ.276, ց.1, գ.16, թթ. 14—15։

2 Տե՛ս՝ Գր. Հովհաննեսյան, Սովորական իշխանության հաստատումը և Առաջին Ղարաբաղաման Եր., 1971, էջ 92—93։ Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, էջ 386։

Նում ենք համագումարի աշխատանքները լուսաբանող փաստաթղթերից մեկում։ Նրանում զետեղված են այն ուղիներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ էին ընդհանուր համաձայնության դալու համար։ Դրանք են՝ 1. Համագումարը մերժում է Աղրբեջանին ենթարկվելու պահանջը, 2. զինաթափման առաջարկը չի ընդունվում, մինչև որ արցախահայության անվտանգության ապահովման համար շարպեն հուսալի երաշխիքներ, 3. Աղրբեջանի զինված ուժերը չպետք է մատնեն Լեռնային Ղարաբաղ, 4. թույլատրել, որ տաճկական փոքրիկ զորագունդ մտնի Շուշի<sup>1</sup>, 5. ստեղծել հայ-թուրքական խառը մարմին՝ և նրան իրավունք վերապահել անիշխանության դեմ պայքարի միջոցներ որոնել։<sup>2</sup>

Մինչ համագումարը զբաղված էր Զեմիդ բեյի վերջնագրի պատասխանով, սեպտեմբերի 19-ին Աղդամ ժամանեց Կովկասում զործող իսլամական բանակի զինվոր հրամանատար Նուրի փաշան, մի ոմն Լեռն վարդապետի և Գանձակի բաղաքային վարչության անդամ Սարգիս Տեր-Խորացիլյանի ուղեկցությամբ։ Վերջիններս խնդիր ունեին արցախցիներին կոչելու հնագանդության ու համոզելու, որպեսզի նրանք զենք լրարձրացնեն մուսուլմանական ուժերի գեմ և զավասի բնակչության կյանքը վտանգի շենթարկեն։ Նույն օրը Նուրի փաշան ազատ արձակեց բանտարկված պատվիրակներին, և վերը նշված անձնագործությունների հետ միասին ուղարկեց Շուշի։ Նուրի փաշան վերջնագիր ուղարկեց Շուշի, որով դարարացիներից պահանջում էր՝ 1. 24 ժամում զինաթափվել, 2. ճանաշել Աղրբեջանի իշխանությունը, 3. ճանապարհ տալ թուրք—աղրբեջանական զորքին՝ անցնելու Շուշի։

Թուրք փաշան պատասխանի համար տալիս է 24 ժամ՝ ժամանակ և հայ բանագնացներին պատվիրում՝ համոզել բնակչությանը ընդունելու վերջնագիրը։ Ապա սպառում է, որ պայմանը խախտելու դեպքում կդիմի ուղղմական զործողությունների։

Հայ պատվիրակները մեծ դժվարությամբ հասան Շուշի։ Երրորդ համագումարը սեպտեմբերի 20-ի նիստում Նուրի փաշայի վերջնա-

1 ՀՀՊԿ, ֆ.314, գ.1, դ.34, թ.69։

2 «Մշակ», 25 փետրվարի 1919 թ., ՀՀՊԿ, ֆ.222, գ.1, դ.24, 3-րդ ժամ, թ.418։

դիրք քննարկելուց հետո որոշեց թուրքերի հետ բանակցելու համար նոր պատվիրակություն ուղարկել Ազգամ։ Պատվիրակության մեջ մտան Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք Շահնազարյանը, Լևոն վարդապետը և համագումարի նախագահ Գ. Ղարագյուղյանը։

Համագումարն իր բանագնացներին պատվիրեց՝ ամեն գնով հասնել նրան, որ վիճելի հարցերը լուծվեն առանց ուժ գործադրելու, այլ խոսքով, որպէս զի բանը զենքի շհասնի<sup>1</sup>։ Պատգամագործությանը շհաջողվեց նշված ժամկետին լինել Ազգամում, որովհետեւ գավառից եկած զյուղացիների մի մեծ խումբ, գժուհ լինելով համագումարի որոշումից (արցախահայության զերակշիռ մեծամասնությունը դեմ էր թուրքերի հետ ամեն տեսակի զիջողության), թույլ չի տալիս նրանց մեկնելու ի վերջո, սեպտեմբերի 21-ին բանագնացների խումբը դուրս է գալիս Շուշից, Խմբի հետ միասին դեպի Ասկերան է ուղևորվում նաև քաղաքից ընտրված մեկ այլ պատվիրակություն, անդամակցությամբ Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի և Բյուզանդ վարդապետի, որոնք պետք է հորդորեին Ասկերանի շրջանի զյուղացիներին՝ խաղաղությամբ լնցունելու թուրքերէն և շիհմադրելու նրանց Ասկերանով անցնելիս։ Աւկերանում երկու պատվիրակության անդամներն էլ մեղադրվելով հայրենիքի զավաճանության մեջ, բնակչության կողմէց ձերբակալվում են։ Թիմի առաջնորդից վերջնելով մեքենան, նրան ոտքով ուղարկում են Շուշի, իսկ մյուսներին բանտարկում Ասկերանի մոտ գտնվող հանարադ զյուղում։<sup>2</sup> Որոշ մանրամասներ պարզելուց հետո, երկու օր անց, այսինքն՝ սեպտեմբերի 21-ին նրանց ազատ են արձակում։ Նրանք Ազգամ հասան սեպտեմբերի 21-ին, երբ արդեն լրացել էր նուրի փաշայի վերջնագրի ժամկետը։ Այս բոլորը բավարար հիմք են տալիս ասելու, որ գավառը Ազգականին ենթարկելու ջեմիլ ջահիդ բեյի պահանջը երրորդ համագումարը շի բնույնել։ Այս կարծիքի օգտին է խոսում նաև հետևյալ հանգամանքը։ Ինչպես վերը տեսանք, ջահիդ բեյի վերջնագրի վերաբերյալ համագումարը որոշում էր կայացրել սեպտեմբերի 19-ին,

1 «Նոր Հարիզոն», 19 Հոկտեմբերի 1918 թ

2 նույն անգում։

այսինքն՝ Աղդամ Նուրի փաշայի հայտնվելու օրը: Կանկած չկա, որ Նուրի փաշան արդեն տեղյակ էր որոշման բովանդակությանը: Հետեւարար, եթե համագումարը թուրքերի համար ձեռնտու որոշում ընդունած լիներ, բնականաբար, նոր վերջնազիր ուղարկելու անհրաժեշտություն չէր ծագի: Մինչդեռ, ինչպես նկատեցինք, Նուրի փաշան նոր վերջնազիր ներկայացրեց դարարազցիներին և պահանջեց 24 ժամում կատարել հրամանատարության կողմից ներկայացված պահանջները: Ինքնին հասկանալի է, թե խոսքն ինչ պահանջների մասին է: Մեր տեսակետը հաստատող մեկ այլ փաստարկ էս: Եթե համագումարը թուրքերի պահանջներին բավարարություն տված լիներ, ապա ինչու պիտի նոր պատվիրակություն ուղարկեր Աղդամ, թուրքական բանակի հրամանատարության հետ բանակցելու համար: Ուրեմն, իսկապես, դրա անհրաժեշտությունը կար:

Այսպիսով, ամբողջ շարադրանքից կարելի է եղրակացնել, որ համագումարը խնդիր չի ունեցել զավառն Աղդամինին հանձնելու: «Եթե թուրքերն իրենց պահանջներին զիջողական պատասխան ստացան լինեն, ապա խաղաղ ու հանդարտ ընթացքով Շուշի կմտնենին և այնտեղ կվայելեն տիրող արտոնությունները»<sup>1</sup>, — իրավացիուրեն գրում է Բ. Ռուբուրյանը:

Վերջնազրի պատասխանը չստացած, թուրքական հրամանատարությունն արդեն սկսել էր զինաթափել հայերին: Այսպես, 1918 թ. սեպտեմբերի 20-ին Զեմիլ Զահիդ բեյը Խաչենի երեք հասարակության (Խանքենդ, Խանաբադ, Ալիստենքի) 20-ից ավելի հայկական զյուղերից պահանջեց ճանաշել Աղդամինի իշխանությունը և զինաթափ լինել: Արյունահեղությունից խուսափելու համար բնակչությունը հանձն է առնում զինաթափվել, պայմանով, որ թուրք ասկյարները շմտնեն զյուղերը և բռնություններ չգործադրեն խաղաղ բնակչության նկատմամբ: Հարկ է նշել, որ թուրքական հրամանատարությունը և գավառապետ Խոսրով քեկ Ֆալատովն իրենց խոստումը կատարեցին թուրքական ձևով. նրանք ծեծի ու սպանությունների սարսափի տակ ժողովրդից խլեցին բոլոր զեն-

1 Բ. Ռուբուրյան, նշվ. աշխ., էջ 32:

քերը և տեղափոխեցին Աղդամ:<sup>1</sup> Կասկածից դուրս է, որ այդ գենքն  
ու զինամթերքը հանձնվեց մի քանի օր հետո Շուշի արշավող թուր-  
քական զորքին: Սեպտեմբերի 22-ին թուրքական զորքը մտավ Լեռ-  
նային Ղարաբաղ: Թուրք—թաթարական զինված կազմավորումները  
սեպտեմբերի 22—23-ին լայնածավալ հարձակում սկսեցին Ղարա-  
բաղի զեմ Դաշբուշից (Քարազլուխ) մինչ Միրուշենլի:<sup>2</sup> Սկսվեց Ղա-  
րաբաղի արյունաներկ պատմությունը:<sup>3</sup>

Թուրք—թաթարական զորքերը հանկարծակի բերելով զիրքա-  
պահ Հայ զյուղացիներին՝ սեպտեմբերի 22—23-ին մեկը մյուսի  
հետեւց զրավեցին Ասկերանի աջ ու ձախ կողմերի Միրշալու, Դաշ-  
րաղ, Վարազարուն, Փրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ,  
Խանաբաղ, Ղլիջրաղ, Քարազլուխ զյուղերը:<sup>4</sup> Այդ զյուղերի զրավու-  
մով անպաշտպան է մնում Շուշի տանող ճանապարհը: Թուրքական  
զորքերը Զահիդ բեյի զինավորությամբ շարժվում են դեպի Շուշի՝  
ճանապարհին ավերելով ամեն ինչ: Նկատի ունենալով դաշնակից  
պետությունների փայլուն հաղթանակներն Արևմտյան ճակատում և  
Բուլղարիայի անձնատուր լինելը՝ Ղարաբաղի կառավարությունը  
իրավամբ ենթադրում էր, որ Բուրժուրի տիրապետությունը քաղա-  
քում երկար անել չի կարող: Այդ պատճառով գերադասեց նրանց  
զինված զիմադրություն ցույց շտալ, որովհետեւ զիմադրելու դեպ-  
քում քաղաքում հայերի և թուրքերի միջև կտորածն անխուսափե-  
լի կդառնար: Շուշին առանց կովի անձնատուր եւալ թուրքեցն: Տաճիկ ասկյարները, որոնց թիվը հասնում էր շուրջ 2000-ի,<sup>5</sup> Շու-  
շի մտան սեպտեմբերի 24-ին: Նրանք տեղավորվեցին քաղաքի  
դպրոցական շենքերում, զորանոցներում ու թուրքական թաղում: Ասկյարներն ունեին ութ թնդանոթ և մի քանի տասնյակ զնդացիր:  
Զորքի հետ քաղաք էր ժամանել նաև մուսավաթական կառավարու-

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.221, գ.1, գ.88, թ.5:

2 Նույն արխիվ, ֆ.200, գ.1, գ.243, թ.94:

3 «Մշակ», 28 սեպտեմբերի 1918 թ.:

4 «Մշակ», 22 փետրվարի 1919 թ., ՀՀՊՊԿԱ, ֆ.222, գ.1, գ.24, 3-րդ մաս, թ.418:

5 «Նոր հորիզոն», 19 հոկտեմբերի 1918 թ.: Որոշ ազգութեաներում այդ թիվը հաս-  
նում է 4000-ի (ան'ս «Մշակ», 27 փետրվարի 1919 թ.) և 5000-ի (ան'ս ՀՀՊՊԿԱ,  
ֆ.276, գ.1, գ.16, թ.16):

թյան պաշտոնական լիազոր իսմայիլ խան Զիաթխանովը՝ հրահանգ ունենալով համոզել բնակչությանը ընդունելու Աղբբեջանի իշխանությունը:<sup>1</sup> Դեպի Շուշի շարժվող զորքի հետևից զնում էին տեղական թաթարների հազարավոր խմբեր: Նրանց այստեղ էր ձգում թալանի ու կողոպուտի մոլոցը:<sup>2</sup>

Քաղաք մտած տաճիկ զորքին միացան տեղական քրդերը: Թուրքերը զրավելով Շուշին, այնտեղ մտցրին ուղղմական դրություն: Շուշիի պարետ նշանակվեց Նազմ բեյը, իսկ ընդհանուր նահանգապետ՝ Իսմայիլ խան Զիաթխանովը:<sup>3</sup>

Այսպիսով, թուրքական տիրապետության հետևանքով Աղբբեջանի իշխանությունը տարածվեց Շուշի քաղաքի և Քարինտակ, Շոշ ու Ղայրալու գյուղերի վրա:<sup>4</sup> Ճիշտ է Շուշին ընկել էր, բայց կանգուն էին մյուս շրջանները՝ Զիվանշիրը, Ջրաբերդը, Դիզակը և Վարանդան: Հատկանշական է, որ դեռևս թուրքական հարձակման նախօրյակին այդ շրջանների զինված ուժերը ինքնարերաբար համախմբվեցին գավառի աշքի ընկնող զործիլների շուրջը և բոլորովին շենթարկվեցին թուրքական հրամանատարությունն ու Աղբբեջանի կառավարությանը: Վարանգայի զինական ուժերի հրամանատարն էր Սոկրատ բեկ Մելիք Շահնազարյանը, Դիզակինը՝ Արտեմ Լալյայինը, Ջրաբերդինը՝ Բագրատ Նազարյանը և Զիվանշիրինը՝ Ալեքսան Դային: Ալսքանից հետո թուրքերը մոլորություն շունեին կարծելու, թե իրենց Շուշի մտնելը բավական է, որպեսզի տիրեին ողջ Լեռնային Ղարաբաղին: Թուրքերն ու թաթարները Ղարաբաղում իրենց հանգիստ ու անվտանգ շէին զգա այնքան ժամանակ, քանի դեռ վերջնականապես շէին նվաճել այն:

Ահա թե ինչու, թուրք-թաթարական զավթիլները ձգտում էին ամրապնդել Շուշին և այն դարձնել հուսալի հենարան ամբողջ Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը զրավելու համար: Աղբբեջանի կառավարության թելադրանքով թուրք հրամանատարությունը ցրեց

1 «Նոր Հորիզոն», 19 Հոկտեմբերի 1918 թ.

2 ՀՀՊԳԿ, թ.200, գ.1, գ.143, թ.60,

3 «Նոր Հորիզոն», 19 Հոկտեմբերի 1918 թ.,

4 Արձագանք, 15 օգոստոսի 1919 թ.:

Հարաբաղի կառավարությունը, զինաթափ արեց Հայ բնակչությանը և սկսեց հալածել ու կողոպտել նրան: Խուժելով քաղաք, տաճիկ ասկյարները, քրդերն ու տեղական թուրքերը սկսեցին կողոպտել Հայերի տները, խանութները և կոտորել նրանց: Սարսափելի կոտորածն ու թալանը տեսցին երկու օր և դադարեցին երրորդ օրը միայն, պարետ նազմ բերի Հրամանով:<sup>1</sup>

Թուրք—թաթարական ռազմամոլները առաջին հերթին հաշվեարդար տեսան Արցախի Հայ մտավորականության հետ: 1918 թ. Հոկտեմբերի 1-ի գիշերը, տաճիկ ասկյարները «ընդհանուր» նահանգապետ Զիաթթանովի հրահանգով խուժեցին մտավորականների տները: Սարսափահանար անելով կանանց ու երիխաներին, նրանք խուզարկության անվան տակ հափշտակում էին արժեքավոր իրերը: Միայն այդ գիշեր ձերբակալվեցին մի քանի առանյակ մտավորականներ, այդ թվում՝ Եղիշե Իշխանյանը (կառավարության նախագահ), Արսեն Հովհաննիսյանը (Արտ) (պարենազորման կոմիսար), Լևոն Վարդապետյանը (կառավարության անդամ), իրավաբան Մանդինյանը, Նիկոլայ Խաչիսանյանը (զինվորական միության նախագահ), Մ. Ալվազյանը (կառավարության անդամ), Արտավազդ Վարդապետյանը (նախկին պարետ), Արտաշես Առուստամյանը, Մելիքսեթ Խայանը, Տիգրան բեկ Յուզբաշյանը, ի. Մելիք Շահնազարյանը, Ռուբեն Տեր—Գասպարյանը, Գուրգեն Օհանյանը, Թումյան ծնողները (ձեռքակալվեցին որդիների փոխարին), Աստուր Ավետիսյանը (պարենազորման նախկին կոմիսար) և ուրիշներ, ավելի քան 60 հոգի:<sup>2</sup> Նրանցից հարցաքննության ենթարկվեցին միայն 4—5 մարդ: Հարցաքննության ժամանակ ծեծի ու բռնությունների ենթարկվեց Եղիշե Իշխանյանը:<sup>3</sup>

Համ երեսութին, Ազրբեցանի «դեմոկրատական» կառավարությունը որոշել էր թուրք ասկյարների միջոցով հաշվեարդար տեսնել քաղաքի Հայ մտավորականության հետ և դրանով Դարաբաղի Հայությանը զրկել իր դեկավար ու կազմակերպիչ ուժից:

1 «Նոր Հարիզոն», 27 սեպտեմբերի 1918 թ.:

2 «Նոր Հարիզոն», 19 հոկտեմբերի 1918 թ., «Արև», 4 մարտի 1919 թ.:

3 «Արև», 4 մարտի 1919 թ., ՀՀՊԿԱ, ֆ.201, գ.1, գ.41, թթ. 21—22,

«Կավազսկое слово», 22 октября 1918.

Ստեղծված կացության շուրջը թուրքական հրամանատարության հետ բանակցելու համար, սեպտեմբերի 26-ին հայերից ընտրվեց հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Գրիգոր բեկ Մինասրեկյանը, Գրիգոր Քալանթարյանը, Ալիբեկ Փիրումյանը, Թուրքեն Շահնազարյանը և ուրիշներ:

Հանձնաժողովի ստեղծումից մեկ օր անց, այսինքն՝ սեպտեմբերի 27-ին, թուրք հրամանատարությունը պահանջեց հանձնաժողովից՝ մինչև երեկոյան ժամը 7-ը հայ ազգարնակշությունից հավաքել բոլոր զենքերը և հանձնել: Գյուղացիությունը հրաժարվեց զենքերը հանձնել: Թուրքերը քահանա Եղիշ Թարխանյանին, Հարություն Վարդապետյանին և աշխի ընկնող մի քանի այլ մարդկանց ուղարկեցին շրջաններ, որպեսզի համոզիին ընակլությանը զինաթափ լինել: Սակայն զյուղացիությունը հրաժարվեց զենքերը հանձնելուց և ժաղը ու ժանակով բանագնացներին ճանապարհեց:<sup>1</sup>

Թուրքերն էլ ավելի սաստկացրին ընակլության հետապնդումները: Ծուշի քաղաքը ապրում էր խիստ ռեժիմի պայմաններում: Երեկոյան ժամը 7-ից հետո արգելվում էր փողոց գուրս գալը. ում տեսնում, ձերբակալում էին: Նույնիսկ քաղաքից դուրս կամ զյուղից քաղաք զնալու համար պահանջվում էր անցաթուղթ:<sup>2</sup>

Բնակչության գլխին կախված բոլոր տեսակի զժվարություններից ամենից սարսափելին սովոն էր:

Թուրքերի մուտք գործելուց հետո զյուղացիները բռյկոտ հայտարարեցին քաղաքին և թույլ չէին տալիս, որ որևէ մեկը կենսամթերք բերեր քաղաք, դա այն զեպքում, երբ քաղաքը կտրված էր դրսի աշխարհից, հաղորդակցություն չուներ թէ Գանձակի և թէ Գորիսի հետ: «Եթե այդպիս 10 օր շարունակվի, — վկայում էր ականատեսներից մեկը, — ապա քաղաքը սովամահ կլինի»:<sup>3</sup>

Թուրքերի վարած քաղաքականության հետևանքով քայլայվում ու սնանկանում էին նաև հայկական զյուղերը:

Բանն այն է, որ զրավելով քաղաքը՝ թուրքերը Խանքենդում

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.276, ց.1, գ.16, թ.15.

2 Նույն արխիվ, ֆ.323, ց.1, գ.1, թթ. 44—46:

3 Նույն արխիվ, ֆ.222, ց.1, գ.24, 3-րդ համ, լ.418:

(Հնում՝ Վարարակն) և Ասկերանում հիմնեցին դինվորական պարեկություններ, որոնք «պարզապես թալանում էին անցուղարձող հայերին, խուզարկության ժամանակ նրանցից բռնագրավելով արժեքավոր բոլոր ուրերն ու դրամը ... նաև սնանկացրեցին հայկական գյուղերը՝ պահանջելով անհաշիվ քանակությամբ հացահատիկ ու այլ բնամթերքներ, իսկ հետագայում՝ նաև գեղեցիկ կանանց ու աղջիկների»:<sup>1</sup> Այսպիսով, Շուշիի անկումը, Արցախի հայությանը կանգնեցրեց ավելի ծանր կացության առջեւ: Նրանք ընկան շրջափակման մեջ և կտրվեցին արտաքին աշխարհից, անհայտ էր մնում զաշնակիցների ուր լինելը, իսկ Գորիսում գտնվող Անդրանիկի զորամասը հանգամանքների բերումով չէր կարողանում օգնության հասնել: Վտանգը Արցախ աշխարհին շրջապատել էր բոլոր կողմերից: Սակայն, Լեռնային Ղարաբաղի գավառների, գլխավորապես Զրաբերդի ու Վարանդայի հայությունը զենքը ձեռքին պատրաստ էր մեռնելու, բայց երբեք անձնատուր շինելու թշնամուն: Այդպես էլ լինում է: Մեպահմբերին, երբ թուրք—աղրբեզանական զորքերը խուժում էին զեպի Շուշի, Զիվանշիրի գավառի բնակչությունը իսկուն հրավիրեց ժողով՝ և միաձայն որոշեց՝ մեծից փոքր կովել մինչև արյան վերջին կաթիլը, երբեք շզինաթափվել և անձնատուր չենել բարբարուներին:<sup>2</sup> Այն օրերին, երբ թուրքերը շարժվում էին զեպի Շուշի, Զիվանշիրի գավառի հայությունը անհավասար կովում ջարդեց և դուրս շպրտեց իր հողը ներխուժած թուրքերին: Թուրքերը Զիվանշիրի վրա նորից հարձակվեցին Շուշիի անկումից հետո: Թուրք—թաթարական զորքը մտավ Զիվանշիր գավառը և ուղղություն վերցրեց զեպի Մարտակերտ գյուղը: Վերջինս ուղղավարական կարևոր նշանակություն ուներ՝ փակում էր Զրաբերդ տանող լեռնային ճանապարհը: Հասկանալի է, թե ինչու թշնամին գլխավոր ուժերը կենտրոնացրել էր Մարտակերտի զեմ: Այդ ուղղությամբ շարժվող թուրքական ջոկատին ուղեկցում էին նաև գավական բժիշկ Դ. Լեմբերանսկին, «վայրի զիվիզիայի»<sup>3</sup> սպա Շիրին բեկը և հայտնի ավազակ

1 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.49, թ.47:

2 Նույն տեղում, թ. 46:

3 «Վայրի զիվիզիան» ձեռքորդիկ է տառչին համաշխարհային պատերազմի ընթացքում, կովկասարենակ մահմեդականներից:

Շահմալին:<sup>1</sup> Զրաբերդի գավառ ներխուժած թուրք—աղբբեջանական զորքերի գեմ ոտքի ելան Հայկական կազմակերպված ուժերը և Մարտակերտի ու Լուլասաղի (այժմ՝ Հակոբ Կամարի) մատուցներում կասեցրին թշնամու հերթական գրոհները: Հակառակորդը տալով մեծ կորուստներ, պարտված ու ամոթահար նահանջում է:<sup>2</sup> Նահանջելիս նրանք ներքին Գետաշեն դյուդում ձերբակալեցին «զյուղի պատվարժան գեմքերին»<sup>3</sup> տարան Թարթառ կայարան, որտեղ և բոլորին տանջաման արեցին:<sup>4</sup> Զիվանշիրի Հայերի հերոսական գիմադրությունը կանխեց թուրք—թաթարների մուտքը Զրաբերդի շրջան և բնաջնջումից փրկեց տեղի Հայությանը:

Զիվանշիրի գավառի Հայ ազգարնակչությունից կրած ջախչախիչ պարտությունը տաճկական հրամանատարությանը մտածել տվեց իր հետադա անելիքների մասին: Այս անդամ նա վճռում է Վարանդան գրավել առանց արյունահղության: Երբ թուրք—մուսավաթական հրոսակները մոտեցել էին Վարանդայի սահմանին, Վարանդայի զորահրամանատար Սոկրատ բեկ Մելիք Շահնադարյանի անունով Շուշից ստացվում է մի զրություն, որի հեղինակները, անշուշտ, թուրքերի դրդմամբ, խորհուրդ են տալիս նրան հետ կանգնել առստամբությունից և սրածության շենթարկել գավառի Հայ բնակչությանը:<sup>5</sup> Վարանդայի բնակչությունը դա մերժեց: Թուրքական հրամանատարությունը վճռեց Վարանդայի վրայով մի զորամաս ուղարկել Կարյագինով՝ միանալու Մուզանի դաշտով շարժվող թուրքական մեկ ուրիշ զորամասի հետ և միասնական ուժերով զրավել Վարանդանը և Դիղակը:<sup>6</sup> Թուրքական 400 զինվորներից բազկացած զորամասը (4 թնդանոթով և 6 զնդացիրով զինված)

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.49, թ.50:

2 Նույն արխիվ, ֆ.199, գ.1, գ.38, թ.11:

3 Նույն արխիվ, ֆ.200, գ.1, գ.49, թ.50:

4 «Նոր Հորիզոն», 12 գետնեմբերի 1918 թ.:

5 Հ. Արրանամյան, Արցախան գոյամարտ: Եր., 1991, էջ 11:

6 Դիղակի շրջանը, որն սկզբում ենթարկվում էր Շուշին, վերջինիս անձնատուր լինելուց հետո առանձնացավ, կազմակերպեց մշտական զորք (Հաղորություն), իսկ զանազան վայրերում նշանակվեցին հրամանատարներ, ընդհանուր ինքնապաշտամությունը կազմակերպվու համար: ՀՀՊՊԿ, ֆ.200 թ. 1, գ.38, թթ. 11—21:

Քյաղիմ բեյի հրամանատարությամբ Շուշից շարժվեց գեղի Հաղպութ, Հայկական զյուղերը դինաթափելու համար:<sup>1</sup>

Թուրքական զորամասը առանց դիմադրության հանդիպելու մտավ Շուշիքենդ, այնուհետև՝ Տոնավարդ (այժմ՝ Կարմիր) և Խաչմալ զյուղերը: Հոկտեմբերի 17-ի երեկոյան թշնամին Հասավ Վարանդայի Մամնա զյուղը և գիշերեց այնտեղ: Թուրքերի Վարանդամտնելու լուրք արագորեն տարածվեց ողջ գավառում: Ջենքի ընդունակ բնակչությունը ոտքի կանգնեց: Ամենուր կազմակերպվեցին աշխարհազորային ջոկատներ:

Վարանդայի հրամանատարությունը վճռում է մուսուլմանական զորքին ջախջախել Վարանդայում, մինչև նրա Կարյագինո հասնելը: Հայկական զորամասերին հանձնարարվեց թշնամուն շրջապատել երեք կողմից՝ Շեխսեր, Հաղորտի, Զանախչի, Թաղավարդ և Հարավ գյուղերի մոտերքում:<sup>2</sup> Նույն օրը՝ Հոկտեմբերի 17-ին, Դիզակի շրջանի զինված ուժերի հրամանատար Արտեմ Լալայանի հանձնարարությամբ Հայկական մի ջոկատ Ասլան Մուրադիսանյանի (Ասլանիկ) զլխավորությամբ ամրանում է Մաշագիշեն (այժմ՝ Կոլխոզաշեն) զյուղի մոտ ընկած բարձունքներում, փակելով գեղի Ամարասի ձոր տանող միակ ճանապարհը: Հայ զինյալները փակեցին նաև դեպի Շուշի տանող նահանջի ուղիները: Այսպիսով, Հայկական զորամասերը և աշխարհազորայինները հակառակորդին առնում են աքցանի մեջ: Գիշերվա խրախճանքի հաճույքը դեռ շվայելած, թուրք ասկյարները և թաթար զինվորները հոկտեմբերի 18-ի լուսարացը զիմավորեցին շրջապատման մեջ ընկած:<sup>3</sup> Թուրք բարձրաստիճան սպան հրաժարվեց հանձնվելու հրաման արձակել: Հայկական ուժերը անցան վճռական հարձակման: Խուճապի մատնված հակառակորդը Ամարաս գնալու փոխարեն շարժվեց զեպի Խոնաշեն (այժմ՝ Մարտունի), այնտեղից Կարյագինո անցնելու մտադրությամբ:<sup>4</sup>

Երշապատումից զուրս դալու թշնամու բոլոր ջանքերը ապար-

1 ոնոր Հորիզոն, 12 դեկտեմբերի 1918 թ.:

2 Ալբն, 21 փետրվարի 1919 թ.:

3 ՀՀՊՊԿ, ֆ.314, գ.1, գ.34, թ.65:

4 Նույն տեղում:

դյուն անցան: Կոխվը տևեց մի ամբողջ օր: Հակառակորդը մարտաշաշտում թողեց մի քանի տասնյակ զինվորներ, այդ թվում և Քյաշիմ բեյի անշնչացած մարմինը, ինչպես նաև 3 թնդանոթ, 4 գնդացիր և ռազմամթերքով բեռնավորված 30 զորիներ: Հակառակորդի կենդանի մնացած աննշան թվով զինվորները, օգտվելով մառախչապատ եղանակից, ժածուկ քաշվում են դիմացի անտառը, իսկ այնտեղից, զիշերով, մեծ դժվարությամբ հասնում Շուշի:<sup>1</sup> Թուրքերի գեմ տարած այդ հաղթանակը մեծ ոգևորություն առաջ բերեց Արցախ աշխարհում, նույնքան էլ մեծ տադնապ ու երկյուղածություն՝ մուսուլմանների շրջանում:

Ինչպես և սպասվում էր, Մամնայի ճակատամարտից հետո տաճկա—թաթարական զավթիչները դարձել էին ավելի վախվորած ու զգուշավոր: Համոզվելու համար բերենք հետեւյալ օրինակը: Մամնայի ճակատամարտից մի քանի օր անց, գեպի վարանդաշարժվող թուրքական 600 հոգիանոց զորամասը Շեյխսեր գլուղի մոտ հայկական ուժերի կողմից թեթևակի հարձակման ենթարկվելով, անկանոն կերպով նահանջեց Շուշի՝ պատճառաբանելով, թե հայ զինվորները փակել և աշալրջորեն հսկում են բոլոր ճանապարհները:<sup>2</sup>

Ամփոփենք: Շուշին ընկավ առանց դիմադրության, սակայն Արցախի գավառները թշնամու համար մնացին անմատչելի: Վարանդայի, Դիզակի, Խաչենի և Զբարերդի զորահրամանատարները այդ շրջաններում ամբողջ իշխանությունը կենտրոնացրին իրենց ձեռքը, պաշտպանեցին երկիրը վերահս վտանգից և կառավարեցին այն մինչև անզինական ներկայացուցչության դալը:

Մամնայի ճակատամարտով շվերջացավ թուրքերի տիրապետությունը Ղարաբաղում: Տիրելով Արցախ աշխարհի սրտին՝ Շուշի քաղաքին և նրա մերձակա բնակավայրերին, տաճիկները, մուսավաթարականները և տեղացի թաթարները շարունակում էին անպատիժ կերպով թալանել ու կողոպտել արցախահայությանը, սպանել, վիրավորել ու անարգել նրա ազգային արժանապատվությունն ու

1 «Արք», 21 դիւներարի 1919 թ.

2 Նույն տեք-

## բնտանեկան պատիվը

Ղարաբաղի աշխատավոր զյուղացիությունը, մտավորականությունը, հաճախ այդ ամենի համար մեղաղրում էին Ազգային խորհրդին և Արարատյան կառավարությանը: Ղարաբաղի հայ ազգարնակը լուսավորությունը Ազգային խորհրդից և Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջում էր վճռական միջոցների գիմել, որպեսզի թուրքական զորքերը հեռանան Ղարաբաղից, քանի որ մուսավաթական Ազրբեջանն այդ զորքերը օգտագործում է իր զավթողական նպատակների իրականացման համար:<sup>1</sup> Նախ, պատասխաններ՝ մի հարցի: Կարո՞ղ էր արդյոք Հայաստանի Հանրապետությունը ուժային մեթոդներով լուծել այդ հարցը: Ուզդակի պատասխաններ՝ ոչ: Այն կախված չէր ոչ Հայաստանի Հանրապետության, ոչ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի կամքից: Հայաստանի ոչ վճռական լինելը Ղարաբաղի, ինչպես նաև Զանգեզուրի հարցում, պայմանավորված էր նրա ընդհանուր վիճակով: Հանգամանքների բերումով Հայաստանի նորաստեղծ հանրապետությանը վիճակված էր լուծելու բաղաքական, տնտեսական և ռազմավարական շատ բարդ խնդիրներ:

Բաթումի պայմանագրից (1918 թ. հունիսի 4) հետո Հայաստանի վիճակը կարելի է բնութագրել որպես անհուսալի: Այդ դաշնադրով, ինչպես ասվել է, Հայաստանը կորցրեց իր տարածքների գույնի մասը:

Հայ թուրքական պատերազմի հետևանքով երկիրը ունեցավ նյութական մեծ կորուստներ ու տասնյակ հազարավոր մարդկային զոհներ: Արդյունաբերությունը, զյուղատնտեսությունը և տրանսպորտը խորը ճգնաժամ ապրեցին: Արագործն անհետ արևմտահայ գաղթականության թիվը: Պատերազմի հետևանքով առաջացած դժվարություններին գումարվեցին աղջային հողի վրա ծագած հայ մահմեղական կռիւլները: Նախիշեանի, Շարուրի, Սուրմալուի, Զանգեզուրի, Բասարգելարի (այժմ՝ Վարդենիս) շրջաններում և այլուր, մասմեղական բնակչությունը զենք էր ճոճում նորաստեղծ հանրապետության դեմ: Այդ ամենը կատարվում էր նախապետական գույնի մշակված ծրագրով: Հարկավ, այդ բոլոր ապստամբական բռնկում-

<sup>1</sup> ՀՀՊԱԿ, ֆ.222, ց.1, գ.24, մաս 3, թ.418:

Ները, որոնք իրար չետ սերտորեն կապված էին, ուղղված էին Հայաստանի Հանրապետության դեմ և նպատակ ունեին մուսուլմանական գերիշխանությունը ուժեղացնելով, հայությանը շրջափակել թուրքական օղակով, զավթել նրա տարածքները, խանգարել հայոց պետականության կայացմանը։ Տաճկա—թաթարական գաղտնի բաղաքական կաղմակերպություններն իրենց գործակալների միջոցով բորբոքում էին հայաստանաբնակ մահմեդակահների թշնամական տրամադրությունները, մատակարարում նրանց թ՛ե որրամական միջոցներ, թ՛ե դենք և թ՛ե ռազմամթերք, նպատակ ունենալով մուսուլմանական արշավանք կազմակերպել Ղարաբաղի և Զանգեզուրի վրայով գեպի նախիջևանի շրջան և Աղրբեջանի գերիշխանությունը տարածել մինչև նախկին ուստական սահմաններն ու միանալ թուրքերի հետ։

Այս գործում ոչ պակաս դեր խաղաց նաև Փարփղի վեհաժողովի հայտարարության հանդեպ Հայաստանի իշխանությունների ունեցած սին հույսերը՝ թե Կովկասում դաշնակիցները ինչ վիճելի հողամասեր տեսնել են, պիտի այդ դրության մեջ մնան մինչև վեհաժողովի վերջնական վճիռը։<sup>1</sup> Ինչ խոսք, որ այդպիսի պայմաններում Հայաստանը չէր կարող Ղարաբաղի հարցում մուսավաթական Աղրբեջանի և Թուրքիայի նվաճողական քայլերի հանդեպ ուժալին մեթոդներ գործադրել։

Վերը ասվածից շահետք է կարծել, թե Հայաստանի կառավարությունը մոռացության էր մատնել Արցախ աշխարհին և ոչինչ չէր անում այդ ուղղությամբ։ Հայաստանի Հանրապետությունը մշտապես մտահոգված էր Ղարաբաղի խնդրի լուծումով։ Այդ հարցը Հայաստանի համար կենսական նշանակություն ուներ։ Հետեւարար, այդ հայաբնակ զավառը, որը պատմական Հայաստանի անրաժան մասն է կազմել, Արարատյան կառավարությունը ոչ մի դեպքում չէր զիշի Աղրբեջանին։ Խնդրին այն է, որ Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր Հայաստանի և Աղրբեջանի միջև գոյություն ունեցող վիճելի հարցերը, այդ թվում նաև Արցախի հարցը, լուծել բանակցությունների միջոցով, այնպես, ինչպես այդ որոշել էին հայկական բոլոր կուսակցությունները 1917 թ. սեպտեմբե-

1 «Աշխատավոր», 24 ապրիլի 1919 թ.:

րին կայացած Աղջային համախորհրդակցությունում։<sup>1</sup>

Հավատարիմ մնալով իր որդեգրած արտաքին քաղաքականությանը՝ Հայաստանի կառավարությանը բազմիցս դիմեց Աղրբեցանի կառավարությանը՝ համատեղ կոնֆերանս հրավիրելու պահանջով։ Կոնֆերանսը պետք է քննարկեր երկու հանրապետությունների սահմանների հարցը և ստեղծեր հանձնաժողով, որը իրավասու լիներ լուծելու այդ հարցերը։<sup>2</sup> Սակայն արհեստական դժվարություններ ստեղծելու ճանապարհով Աղրբեցանը մշտապիս ձախողում էր կոնֆերանսի հրավիրումը։

Հասկանալի է, որ հարցի խաղաղ կարգավորմանը Աղրբեցանի դեմ լինելու նպատակը կեռնային Դարարազին բոնությամբ տիրելու տենչն էր։ Նա հաստատ համոզված էր, որ արցախահայությունը վճռականապես դեմ է Աղրբեցանի իշխանությունը ընդունելուն և պատրաստ է նույն զոհարերությունը անել նաև ապագայում, միայն թե շնանաշի ոչ մի մահմեդական դիրիշխանություն։

Կեռնային Դարարադի հարցը խաղաղ կերպով լուծելու ուղղությամբ Հայաստանի կառավարությունը գործնական բայլեր կատարեց նաև Արցախի վրա թուրքերի հարձակման օրերին։ Երբ 1918 թ. սեպտեմբերին թուրք—մուսավաթական զորքերը շարժվում էին գեպի կեռնային Դարարադ, Աղրբեցանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը դիմեց Աղրբեցանում թուրքիայի հավատարմատար Արդուլ Քերիմ փաշային և պահանջեց միջոցներ ձեռք առնել դադարեցնելու այդ զործողությունները։ Միաժամանակ, Հայաստանի կառավարությունը բանակցություններ սկսեց թուրք բարձրաստիճան սպաններ Մահմեդ Ալիի և Խալիլ փաշայի հետ՝ Դարարադ պատվիրակություն ուղարկելու պահանջով, որը պետք է կարգավորեր հայ թաթարական լարված հարաբերությունները, իսկ այդ միջոցին նորի փաշան պետք է դադարեցներ պատերազմական զործողությունները Դարարադում։<sup>3</sup>

Թուրքական հարձակման նախօրյակին Պոլսում գտնվող Հայ-

1 «Ժողովուրդ», 23 Հոկտեմբերի 1918 թ.:

2 Տե՛ս ՀՀՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.17, թթ. 23—25, 31—33, 39, «Մշակ», 10 հունվարի 1918 թ.:

3 «Ժողովուրդ», 23 Հոկտեմբերի 1918 թ.:

կական պատվիրակությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ<sup>1</sup> հանդիպումներ ունեցավ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի և ուղղմական ուժերի նախարար Էնվերի հետ։ Նրանք Հայաստանի կառավարության անունից բողոք հայտնեցին, որ թուրքական զորքը պատրաստվում է հարձակվել Ղարաբաղի վրա։<sup>2</sup> Նորից կեղծիքներ. Հայոց գահիները հավաստեցին, որ այդպիսի հարձակում չի լինի։<sup>3</sup> Սակայն, ինչպես տեսանք, այդ հարձակումը շուշացավ։ Իսկ, երբ սկսվեց թուրք—թաթարական հրոսակների ներխուժումը դեպի Ղարաբաղ, Հայաստանի պատվիրակությունը բողոքեց թուրքական կառավարությանը ու Պոլսում Աղրբեջանի ներկայացուցությանը այդ դեպքերի առիթով և պահանջեց Ղարաբաղը ազատել թուրքական զորքերից։ Ի պատճիւտան այդ բողոքի, Հոկտեմբերի 15-ին Թուրքիայի վարչապետ Իզզեթ Փաշան հայտնեց Հայկական պատվիրակությանը, որ անմիջապես կհանձնարարի թուրքական զորքերը դուրս հանել Ղարաբաղից։<sup>4</sup>

Թուրքիայի վարչապետի խոստումը իր կարինետի պատերից այն կողմ շանցավ։ Ճիշտ է, այդ դեպքից մի քանի օր անց տաճիկները թողեցին Ղարաբաղը, բայց դա ոչ մի կապ չուներ թուրք քարձաստիճան պաշտոնյայի հայտարարության հետ։ Իրականությունը այսպիսին է։ Առաջին համաշխարհային պատերազմում գերմանական բլուկը, որի կազմում էր նաև Թուրքիան, պարտվեց։ Հոկտեմբերի վերջին թուրքական զորքերը սկսեցին հեռանալ Լեռնային Ղարաբաղից։ Անդրկովկասում և Ղարաբաղում նրանց փոխարինեցին անզիւցիները։

Այսպիսով, թուրք—մուսավաթական կանոնավոր զորքերը և թաթարական խուժանը, որոնք պանթուրքիզմի դրոշի տակ մասնիկներ առնասարակ ամրող հայության շրջանում, շկարողացան խարդավանքով ու բռնությամբ ընկճել Արցախն ու Զանգեզուրը։ Արցախի հերոս ժողովուրդը անմռունչ ու աներկյուղ, մինչև վերջ տարավ իր կոհվը թե՛ թուրքական և թե՛ աղրբեջանական հրոսակների դեմ։ Մուսավաթականների կրթութեազանքը, այն է՝ նվաճել լեռնային Ղարաբաղը, իրականություն շղարձավ։

1 Պատվիրակությունը եկել էր մասնակցելու Պոլսում Հրամիրվելիք կոնֆերանսին։

2 «Հայրենիք», 1924, գեկտեմբեր, էջ 106—107։

3 «Հայրենիք», 1924, գեկտեմբեր, էջ 106—107։

4 «Մշակ», 25 հոկտեմբերի 1918 թ.։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՀՈՒՅՍԻ ԱՍՏՂԵՐ

#### 1. ԱՆԴՐԱՆԻԿԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՏԱՆԱՊԱՔՆԵՐԸ

«Հայոց արևելից կողմանց»՝ Արցախ աշխարհի հայ ազգայնականության դարավոր պայքարի ամենածանրը ու բախտորոշ ժամանակաշրջանի՝ 1918—1919 թվականների գոյապայքարը զուգադիպում և առնչվում է Զանգեզուրում Անդրանիկի հայտնվելու և նրա գործունեության հետ:

Մի քանի խոսքով Անդրանիկի Զանգեզուրում հայտնվելու մասին: Դարաբիլիսայի անկման լուրն առնելով և վերլուծելով իրավիճակը, Զորավարը զորքին հրամայեց Ռողնել Դսեղը<sup>1</sup> և նահանջել Դիլիջան: Դարաբիլիսան դրավվել էր թուրքերի կողմից: Դեպի Թիֆլիս գնալը բացառվում էր, որովհետեւ մենշևիկների համաձայնությամբ թուրքական զորամասերը Բաթումից էջելուններով ժամանում էին Թիֆլիս, այնտեղից Գանձակ անցնելու համար: Թիֆլիս—Սաղալու դիմը նույնակա գտնվում էր թուրքերի հսկողության տակ: Անդրանիկին մնում էր նահանջի միայն մեկ ճանապարհ՝ Լոռվա սարերով անցնել դեպի Դիլիջան և ապա որոշել հետակա անելիքները: Այդ ծրագիրն իրականացվում է: Մայիսի 27-ին Դսեղից դուրս դալով, Առանձին Հարվածող Զորամասը

1 1918 թ. ապրիլ—մայիս ամիսներին Անդրանիկի զորամասը պաշտպանում էր Ալեքսանդրապոլ—Ախալքալաք գիծը: Մայիսի 16-ին Անդրանիկը ստանում է կորպուսի հրամանատար, գններալ թագմատ Նազարբեկյանի հետագիր՝ հրամայում և՛ ձեր զորամասով դիրքեր գրավել վորոնցովկայի մատ, պաշտպանելով լորիի տափաստանը և որբան Շաբաթով է կտրելով թուրքերի առաջնազարդը: Տես՝ Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրությունը: 1914—1917, օրագրված Զորավարին թիկնապահ զինվորեն: Բռնթու, 1924, լ. 165: Հրամանը ստանալուց անմիջապես հետո, Անդրանիկը գտնարտակի հրամանատարներին կարգադրում է իրենց ստորաբաժանումներով հետ բաշվել առանց խումապի: Մկանում է նահանջի արյունալի մարտերով: Մայիսի 17-ին Անդրանիկը հասավ Զարլոզի: Այսադու կոռվա ներկայացուցիչների հետ երան դիմավորում է Հով. Թումանյանը: Մայիսի 22-ին զորամասն ու գաղթականությունը թաղնում են Զալալօղլին և շարժվում դեպի Քոլագիրան կայարանը: Մայիսի 23-ին Զորավարը հասնում է Քոլագիրան, որից հետո՝ Դան:

դաղթականությունը մայիսի 30-ին մեծ դժվարությամբ հասան Դիլիջան։<sup>1</sup> Դեռ ճանապարհին, մայիսի 29-ին Զորավարը նազարեկանից հրաման էր ստացել՝ Դիլիջան հասնելուն պես ընդունել ջոկատի հրամանատարությունը։<sup>2</sup> Զորավարը համաձայնվեց և ստանձնեց ջոկատի հրամանատարությունը։ Հարվածող Զորամասը և Դիլիջանի ջոկատը խնդիր ունեին պաշտպանել Դիլիջանը, որպեսզի լրվատանգվեր Երևանի թիկունքը։ Հայոց մեծանուն հերոսին, սակայն, վիճակված չէր պաշտպան կանգնել Դիլիջանին, թեև նախապես հեռագրել էր Երևանում գտնվող զեներալ Նազարեկանին և նրան հավաստել Դիլիջանը մինչև վերջին շոնչը պաշտպանելու իր վճռականության մասին։ Այն օրերին ծավալվող բուռն իրադարձությունները բոլորովին նոր կացություն ստեղծեցին երկրամասում։ Ինչպես արդեն նշվել է նախորդ էջերում, Թուրքիայի և Անդրկովկասի անկախ հանրապետությունների պատվիրակների միջև Բախումում ընթանում էին բանակցություններ։ Հունիսի 1-ին Դիլիջան ժամանեց թուրքական մի պատվիրակություն։ Գրաբերները հազորում արեցին, որ իրենք տաճկական հրամանատարությունից բերել են նաև ակ, որով նրանք հայտնում են, որ շուտով հաստավելու է զինադադար և պահանջում՝ անհապաղ կատարել այդ որոշումը։ Նրանք իրենց հետ բերել էին նաև առաջիկայում կնքվելիք հաշտության դաշնագրի նախնական տարրերակը։<sup>3</sup> Գաշնագրի բովանդակությունը խորապես հուզեց ու զայրացրեց Անդրանիկին։ Երեք օր անց, այսինքն՝ հունիսի 4-ին, Բախումում ստորագրվեց այդ դաշնագրիը։ Հենց նույն օրը Դիլիջանում ստացվեց Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի նամակը, որտեղ շարադրված էին դաշնագրի առանցքային կետերը, այդ թվում և շարարտաստիկ 5-րդ հոդվածը Հարվածող Զորամասը լուծարելու մասին։<sup>4</sup> Այդ հոդվա-

1 Ա. Մեացականյան, Հ. Հակոբյան, Զորավար Անդրանիկ, Հ. Ա. Մոսկվա, 1991, էջ 194։

2 Հոկատի կազմում կար մեկ ուսումնական հրետակազմ, որը գտնվում էր Պողոսի իշխանություն, մեկ մաշտ և մեկ Հարյուրակ, որոնք տեղաբաշխված էին բաղաբան, իսկ Երկու վաշտ և մեկ Հարյուրակ գտնվում էին Սեմյոնովկայի ինքնանցքում։ Տես՝ «Բաները Հայաստանի արխիվների», թիվ 3, 1992, էջ 145։

3 «Հայկական Առանձին Հարվածող Զորամասը» ժեներալ Անդրանիկը, էջ 129։

4 Թերզիրացյան, Ավետիս, Անդրանիկ։ Փարիզ, 1942, էջ 368—369, Ա. Զելիպյան, Զորավար Անդրանիկ, զիրք Բ։ Եր., 1990, էջ 151։

ծի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը  
 պարտավորվում էր «գործուն կերպով հակադել, որպեսզի ոչ մի  
 բանդա շկազմավորվի և զինվի իր տարածքի սահմաններում, ինչ-  
 պես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն  
 թաքնվել այնտեղ»:<sup>1</sup> Բանդա համարվեց նաև Անդրանիկի Առան-  
 ձին Հարվածող Զորամասը և հայկական կորպուսի հրամանատար  
 թովմաս Նազարելյանի հրամանով լուծարվեց: Գեներալը սրտի  
 մեծ ցավով լսեց այդ լուրը և որոշեց չենթարկվել հրամանին, հա-  
 մարելով դա թուրքական զինվորական իշխանության պահանջի  
 կատարում: Նա իր զինվորներից խստօրեն պահանջեց. «Հզնալ  
 Հայաստանի Հանրապետության սահմանների մեջ և ոչ մի պայմա-  
 նով զինաթափ Այնել, առանց եվրոպական և հայկական պետու-  
 թյունների երաշխիքների: Այս պայմանները շրնդունելու դեպքում  
 հարկադրված եմ հանուն թուրքահայ վերջին մնացած բեկոր  
 գաղթականության և զորամասերի ֆիզիկական և բարոյական ա-  
 պահովության, զենքը վայր շղնել մինչև վերջին շունչը»:<sup>2</sup> Զորա-  
 մասը լուծարելու լուրը խոր զայրույթ առաջ բերեց ամբողջ ճակա-  
 տում և թիկունքում: Զինվորներն իրենց բողոքի ձայնն էին բարձ-  
 րացնում այդ որշաման դիմ: Զնայած պատմական փաստերի իրո-  
 դությանը, դա շնակցած է եկավար որոշ գործիչներ փորձում էին  
 հաստատել, որ Անդրանիկի Հարվածող Զորամասի լուծարումը  
 թելադրված է ժամանակի պահանջով և որևէ կապ չունի Բաթումի  
 պայմանագրի հետ:

Այդ օրերին Թիֆլիսում Հայաստանի Ապահովության խորհրդի  
 նախագահը Անդրանիկին հասցեագրված նամակում փորձում էր  
 համոզել, որ «... Ազգային խորհուրդը, նույնպես և բժիշկ Հ. Զավ-  
 րիյանը ձեր ցանկությանը զեմ են այն պատճառարանությամբ, որ  
 Զեր առանձին զորամաս ունենալը կբայթայի մնացած բոլոր տաճ-  
 կահայ զորամասերը, որտեղից զինվորները պիտի օգտվեն առիթից,  
 առելով, թե մենք զնում ենք Անդրանիկի մոտ և այսպիսով քայ-  
 րային իրենց զորամասերը, մանավանդ, որ վերջիններս կիսաքայ-  
 րայման դրության մեջ են և որոնց Ազգային խորհուրդը աշխատում  
 է կարգ ու կանոնի մեջ պահել»:<sup>3</sup>

<sup>1</sup> ՀՀՊՊԱ, ֆ.200, գ.1, գ.11, թ.99;

<sup>2</sup> ՀՀՊՊԱ, ֆ.370, գ.1, գ.2, թ.7:

<sup>3</sup> Խույն տեղաւում, թ.3:

Հենթարկվելով հանրապետության կառավարության պահանջ-  
ներին, նա որոշեց, որ այստեղ՝ Հայաստանում այլևս անելիք չու-  
նի: Անդրանիկի հոգում բուն էր դրել նոր ցանկություն՝ թողնել  
Հայաստանը: «Ես պարտավոր չեմ ենթարկվելու նրա (Ազգային  
խորհրդի՝ Հ.2) ստորագրած հաշտության գաշնագրին: Բայց  
որովհետեւ ևս իրավունք չունեմ ապրելու այս երկրի մեջ և նրա հա-  
մար դժվարություններ ստեղծելու, դուրս կելնեմ նրա սահման-  
ներից»:<sup>1</sup> — Հայտարարում է Անդրանիկը: Ականատեսները պատ-  
մում են, որ զրոյցին մասնակից հայերից մեկի այն հարցին, թե  
ի՞նչ պիտի անի զորքը, զեներալը պատասխանում է. «Պարսկաս-  
տան պիտի տանեմ նրանց իմ հետ»:<sup>2</sup> Նա որոշել էր իր զորամասով  
և արևմտահայ հազարավոր գաղթականներով անցնել Միջազգետք,  
միանալ դաշնակից անգլիացիներին՝ նրանց օգնությամբ Թուրքիայի  
դեմ պայքարելու, Արևմտահայաստանում գաղթականությանը տեղա-  
փորելու համար: Անշուշտ, դա բավականին համարձակ գաղափար էր,  
սակայն, միևնույն ժամանակ հիմքից զորք իրականություն դառ-  
նալու համար: Բանն այն է, որ Անդրանիկը ցանկանում էր իրակա-  
նացնել ուղմավարական շափազանց բարդ մի ծրագիր, որի համար  
շուներ անհրաժեշտ ուժ ու միջոցներ: Ոչ միայն դա: Նրա շորս  
հազարանոց զորամասի հետեւից գնում էին ավելի քան 20 հազար  
արևմտահայ գաղթականներ, որոնք անկասկած, լրացուցիչ դժվա-  
րություններ էին ստեղծում նրա համար: Այդ ամենը Անդրանիկի  
մտահացման մեռելածին լինելու մի կողմն էր: Մյուս ամենացա-  
վալի կողմն այն է, որ Անդրանիկը թյուր կարծիք ուներ Մերձա-  
վոր Արևելքում գտնվող Անգլիայի և գաշնակից մյուս երկրների ուղ-  
մական պլանների, նպատակների ու խնդիրների մասին: Նա հա-  
մոզված էր, որ գաշնակից բանակները Թուրքիային ջախչախելով՝  
կօգնեն աշխարհի երեսին սփռված հայությանը վերադառնալու իր  
պատմական հայրենիքը: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը,  
Թուրքիայի ջախչախումից հայությունը ոչինչ շատացավ, քանզի մեծ  
պետություններից յուրաքանչյուրն ուներ իր շահերն ու նպատակ-  
ներն այդ տարածաշրջանում: Օրինակ, Անգլիան իր առջև խնդիր էր

1 Թէրքիապաշյան, Ավետիս, Անդրանիկ, էջ 369:

2 Նույն տեղում:

դրել ամրապնդվել Մերձավոր Արևելքում, այն դարձնել սարատեղիական հենակետ Անդրկովկասում հաստատվելու, ամենազլխավոր՝ տիրելու Բաքվի նավթին։ Դաշնակից մյուս երկրների ախորժակը տարածաշրջանի նկատմամբ ոչնչով չէր զիշում անգլիականին, եթե շատենք ավելին էր։ Միայն հետագայում Անդրանիկը համոզվեց, որ 20-րդ դարասկզբի մեր պատմության բարդ ու հակասական կեռմաններում իր ժողովրդի ցավերին ուրիշները դարման չեն անի։ Այդ մասին ամիսներ անց նա դառնացած ու հիասթափված գրում է. «Երբ Բաթումի մեջ կնքվեց հաշտության գաշնազիրը թուրք կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև, այլև ես իմ և իմ զորամասի ներկայությունը Հայաստանի սահմանների մեջ անպետք և անհնար համարեցի, սարերն ու ձորերը և անջրդի ամայությունները շափեցի՝ հասնելու համար անգլիական դաշնակից բանակին, որով կհուսայի փրկել Տաճկահայաստանի ծաղիկ բնեկորներք»<sup>1</sup>

Զորամասի զինվորական խորհուրդը ընդունեց որոշում՝ թողնել Կովկասը։ Հայաստանից Անդրանիկի հեռանալու ճանապարհը սկսվեց Դիլիջանից։

1918 թ. Շունիսի 6-ին Անդրանիկի Առանձին Հարգածող Զորամասը և գաղթականությունը դուրս գալով Դիլիջանից, շարժվեցին դեպի Ելենևրվկա (Ներկայիս՝ Սևան) — Նոր Բայազետ (Ներկայիս՝ Դավառ) — Ղարանլուզ (Ներկայիս՝ Մարտունի) — Դարալագյաղ — Մալիշկա — Նախիջևան։

Հաղթահարելով բազմաթիվ արգելքներ ու գժվարություններ, զորամասը Շունիսի 20-ին հասավ Ջուղֆա։ Գրոհով անցավ Ջուլֆայի կամուրջը, հույս ունենալով ճնշել թուրքերի պաշտպանությունը Բաղդապի ուղղությամբ և միանալ անգլիական զորքին։ Սակայն, Շունիսի 23-ին հոյում հանդիպելով թուրքերի կատաղի դիմադրությանը, նահանջեց Ջուլֆա։ Այստեղից Անդրանիկն իր զորամասի հետ շարժվեց դեպի Գողթան դավարը՝ Կապանի վրայով Գորիս անցնելու համար։ Շունիսի 25-ին զորամասը և նրան կրնկակոխ

1 «Եօր հորիզոն», 13 գնկամբերի 1913 թ.

հետեւզ գաղթականությունը՝ հասան Յաիչի գյուղը։ Տեղի թուրքերի զինված զիմադրությունը ճնշելոց հետո, նրանք հուլիսի 3-ին մտան Յղնա, որից հետո՝ Բիստ գյուղերը։ Հուլիսի 12-ին դորամտոր Ապրակունիս զյուղում էր Ապրակունինում էլ Անդրանիկը Նախիջևան գավառը հայտարարում է Խորհրդային Ռուսաստանի անբաժան մասը և այդ մասին հեռագրով տեղյակ պահում Քարվի Խորհրդի նախադա՞ս Ստ. Շահումյանին, միաժամանակ խնդրելով նրա օգնությունն ու կարգադրությունը։ Հուլիսի 23-ին Զորավարը բռնեց գեպի Զանգեզուր տանող ճանապարհը, որն անցնելու էր Քաջարան—Կապան—Տաթև—Գորիս խճուղով։ Օգոստոսի 3-ին զորամասը և գաղթականությունը մտան Գորիս։ Այստեղ Անդրանիկին ու նրա հոգնատանը զինվորներին հեշտ ու հանգիստ օրեր շէին սպասվում։ Ղարաբաղը և Զանգեզուրը բոցերի մեջ էին։ Խալիլ Փաջայի բանակը զբավելով Նախիջևանը, սպասնում էր Սիսիանին, իսկ նուրի փաշան Ղարաբաղից ձգտում էր գեպի Գորիս։ Թուրքական մեկ ուրիշ զորաբանակ Մուղանի դաշտով խուժում էր գեպի Կապան։ Ինչպես տեսնում ենք, դարավոր թշնամին բոլոր կողմերից օղակել էր Զանգեզուրը՝ կտրելով Երևանից և Շուշիից։ Արտաքին թշնամուն միացավ ներքինը՝ տեղական մահմեդական ազգաբնակչությունը։ Այդպիսով, Զանգեզուրը, որտեղ բարձր էր ժողովրդի ազգային ինքնարդարակին արդեն կանգնած էր թուրք—թաթարական Հարձակման վտանգի առջև։ Ի՞նչ անել, ինչպես վարվել, զենքը վայր գնել, թե շարունակել գոյապայքարը։ Զանգեզուրի հայությունը, նրա Ազգային խորհուրդը, օգտվելով ժողովրդական հերոսի և հայոց քաջարի զորամիավորման ներկայությունից, բացառիկ իրատես վճիռ կայացրեց՝ զիմել ինքնապաշտպանության։ «Մենք ուզեինք թե շուշեինք, պիտի պատրաստվեինք զիմադրելու մեզ վրա եկող թշնամուն, որ ոշխարի պես շմորթեր մեզ։ Մանր էր, տհաճ ու մեր ուժից վեր սկսվող պատերազմը, բայց պիտի կովեինք։ Ահա հենց այդ պահին էր, մեր գոյության հարցը վճռելու շնմքին։

1 Նախիջևանի և Հուլիսայի գաղթականությունը միացել էր արեմտահայ գաղթականությանը, և նրանց թիվը կազմել էր 35 հազար։ Ա. Չելեպյան, նշվ. աշխ., էջ 516։

էինք, որ մեր երկիրը ոտք դրեց Սասունի հերոսը, օսմանցու աջ ու սարսափ Անդրանիկը և ղեկավար շրջանների դիմումին անսալով համաձայնեց մնալ մեղ հետ միասին, կրելու մեզ վիճակված ծանր բեռը,<sup>1</sup> — հաղորդում է ղեպքերին մոտ կանգնած գործիշներից մեկը:

Այդ ամենը նկատի ունենալով, շափառանցություն շի լինի, եթե ասենք, որ Զանգեզուրում Անդրանիկի գտնվելը (1918 թ. օգոստոսի 3-ից մինչև 1919 թ. ապրիլի 1-ը) բախտորոշ իրադարձություն էր տեղի հայ ազգաբնակչության համար:

Ֆիդայական հերոսական մարտերի թոհուրո՞ւմ թրծված երեսի այրն ու նրա մարտիկները մասնակից դարձան այդ օրերին Զանգեզուրում և Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող գոյամարտերին՝ նորից ու նորից թափած արյամբ ապացուցելով իրենց նվիրվածությունը ազգին ու հայրենիքին: Անդրանիկն իր զորամասով պատրաստ դիմավորեց ժողովրդական փոթորիկը և կանգնեց կենաց ու մահու պայքարի առաջին բնագծում: Նրա ներկայությամբ Զանգեզուրի հայությունը ապրում էր հոգեոր ներշնչման բարձր մթնոլորտում: Բուռն ոգևորության մեջ էր նաև Արցախ աշխարհի հայությունը, որն այդ բախտորոշ օրերին մեծ հույսեր էր կապում Անդրանիկի հետ:

Մանր օրեր էր ապրում Զանգեզուրը: Դրությունը ժամ առ ժամ դառնում էր պայթյունավտանգ: Զգացվում էր ուժեղ ձեռքի անհրաժեշտություն: Զանգեզուրի Ազգային խորհուրդը գավառում մտցրեց արտակարդ գրություն և զինվորական դիկտատոր հաստատեց Շուշվա գնդի հրամանատար Միքայել Մելիքը Շահնազարյանին:<sup>2</sup>

1918 թ. օգոստոսի 18-ին Զանգեզուրի Ազգային խորհուրդը կոչով դիմեց գավառի հայ բնակչությանը: Կոչում տրված էր Զանգեզուրում տիրող ծանր կացությունը, թուրք—թաթարական ռազմամոլների նպատակները, ինչպես նաև այդ կացությունից դուրս գալու ազատագրական պայքարի անհրաժեշտությունը: «Մեր առջև երկու ճանապարհ կամ պետք է առանց

1 «Աշխատավոր», 16 մարտի 1919 թ.:

2 ՀՀՊՊԿ, ֆ.370, գ.1, դ.33, թ.19:

կովի զինաթափ լինենք, հանձնվենք տաճիկին ու թաթարին, տանք նրանց բռնաբարելու մեր բույրերին մեր աշքի առաջ, ապա ոչխար-ների պես մորթվենք բոլորս՝ կամ ամենքս միանդամից պետք է պատրաստ լինենք զենքը ձեռքներս պաշտպանելու մեր գոյությունն ու պատիվը: ... Թաթար ցեղը, որ ուզում է ունենալ անկախ Աղրե-ջան, վճռել է նվաճել Ղարաբաղի Հայերին:

Մեր Հարեան թաթարների բռնած դիրքը դեպի տաճիկները, երկար ու ծիգ ամիսների ընթացքում ճանապարհներ փակելը և Հարյուրավոր Հայ անցորդներին կոտորելը, Հայերին բոլոր շուկա-ներում բոյկոտ Հայտարարելը, զանազան մութ նպատակներով շտապողական մոքիլիղացիա կատարելը, այս բոլորը մեզ Համոզում են, որ դժբախտաբար այլևս մենք մի ընդհանուր քաղաքական լեզ-վով խոսել մեր Հարեանների հետ շենք կարող:

Զանգեզուրի Հայությունը շի կարող ուրիշ ճանապարհ ընտրել, նա հետեւելով իր մեծ եղրոր՝ Ղարաբաղի Հայության օրինակին, պետք է բռնի կովի ճանապարհը»:<sup>1</sup>

Այդ օրերին թուրք—մուսավաթական նվաճողների դրդմամը սուրբ ելազ Գորիսի շրջանի մուսուլման բնակչությունը: Տեղի թուրքերին թևագորում էր այն Հանգամանքը, որ այդ օրերին Անդրանիկն իր զորամասով գտնվում էր Սիսիանում: Գորիսից Սի-սիան Անդրանիկի տեղափոխվելը Հարկադիր քայլ էր: Նախ, անհրա-ժեշտ էր կասեցնել Նախիջևանից Սիսիան շարժվող թուրքերի գրոհը: Նախիջևանի կողմից Սիսիանի վրա թուրքական զորքերի սպաս-վող Հարձակման մասին լուրերը թևավորել էին տեղի մուսուլման բնակչությանը և նրանք թուրք էմիսարների զեկավարությամբ խժգժություններ էին սարքում, շրջանի ներքին կյանքն ապակայու-նացնում: Սիսիանից բազմաթիվ նամակներ էին հասնում Գորիս, Անդրանիկի անունով: Շրջանի բնակչությունը Զորավարի օգնու-թյանն էր դիմում:<sup>2</sup>

Մյուսը՝ զորամասին պարենով ապահովելու մտահոգությունն էր, որը Գորիսում անհնարին էր լուծել, գավառում տիրող տնտե-

1 Նույն արխիվ, ֆ.370, ց.1, գ.33; թ.19, ֆ.323, ց.1, գ.1, թ.16:

2 Տես՝ նույն անդում, գ.35, թ.1, գ.51, թ.1:

սական ծանր պայմանների հետևանքով։ Պահպանվել է այն օրերին Անդրանիկի անձնական բարտուղարի մի հաղորդում, որտեղ բառ հնարավորին ճիշտ է ներկայացված տիրող կացությունը. «Երկար ժամանակ է, ինչ զորքը գետնախնձորից բացի ուրիշ սննդամթերք չի կերել։ Բոլոր զինվորների համար հայտնի էր ամեն օրվա ճաշացուցակը՝ առավոտյան փաթթես (կարտոֆիլ), կեսօրին՝ գետնախնձոր, երեկոյան՝ կարտոֆիլ (բոլորն էլ գետնախնձոր)»<sup>1</sup>.

Զորամասի և զաղթականության անելանելի վիճակն անհանգրացրել էր նաև Զանգեզուրի Ազգային խորհրդին։ Նրա նախագահ Միքայել (Միշա) Պարոնյանն Անդրանիկին շատքեցնում էր զորամասով անցնել Սիսիան։<sup>2</sup> Ծառեսական զժվարին վիճակում գտնվող Գորիսի շրջանում հնարավոր չեղ կերակրել նաև տասնյակ հազարվոր սովոր սոկրացած զաղթականությանը։

Վերը նշված հանգամանքներից զատ, կար մեկ այլ դրդապատճառ ևս։ Զորամասում մնալ լցանկացող զինվորները (զժրախտարար այդպիսիներ կային) հնարավորություն կունենային Պարագայակ—Նոր Բայազետ—Ելենովկա խճուղով անցնել Երևան։<sup>3</sup>

Զորքի և զաղթականության սոսկալի վիճակը հարկադրեցին Անդրանիկին անցնել Սիսիանի շրջան։ Օգոստոսի 27-ին զորամասի հիմնական ուժերը և զաղթականության ստվար մտոր Զորավարի առաջնորդությամբ Գորիսից շարժվեցին գեպի Սիսիան։ Ճանապարհին Աղուղի և Վաղուղի աղբբեկանարնակ գյուղերի դիմադրությունը ճնշելուց հետո, զորքն ու զաղթականությունը շարունակեցին ճանապարհը և կանգ առան Անդրեակոթ գյուղում։ Այստեղ գտնված օրերին Անդրանիկը մեծածավալ աշխատանք կատարեց շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու, բնակչության ուժերը մորթիղացնելու, պարեն ու զինամթերք ձեռք բերելու ուղղությամբ։

1 Քաջումի, Եղիշե, Հայկական Առանձին Հարվածող Զորամասը։ Ժեներալ Անդրանիկի, Բոստոն, 1921, էջ 89։

2 ՀՀՊՊԱԱ, թ.370, ց.1, գ.18, թ.8։

3 Առաջացած զժվարությունների և ընդհանուր հուսալրության պատճառով մի շարք զորախմբեր լքվելու գորամասը և անցան Արարատյան Հանրապետություն։ Հարվածածող Զորամասի մարտիկների թիվը 4000-ից կրճատվեց և հասավ 1300-ի։ Տես՝ Հայկական Առանձին Հարվածող Զորամասը։ Ժեներալ Անդրանիկը, էջ 95։

Ղարաղլաղի հաջող օպերացիալից գոտեպնդված թուրքերը  
երկու ուղղություններով նետվեցին Զանգեզուրի վրա: Էռոնաշխարհի  
դիմին նորից ամպեր կուտակվեցին:

Հաշվի առնելով Անդրանիկին Գորիս հրավիրելու շրջանի բնակ-  
չության միասնական ցանկությունը՝ Զանգեզուրի Ազգա-  
յին խորհուրդը իր ներկայացուցիչներին ուղարկեց Սիսիան,  
Անդրանիկի մոտ՝ նրան Գորիս վերադարձնելու խնդրանքով: «Մենք  
մեր ամբողջ ֆիզիկական ուժով ձեր արամաղրության տակ ենք,  
պատրաստ ձեզ հետ գործելու ու ձեզ հետ մեռնելու»,<sup>1</sup> — այսպիսի  
խոսքերով Ազգային խորհրդի անդամները դիմեցին Անդրանիկին:  
Սեպտեմբերի 14-ին Ազգային խորհուրդը ստացավ Անդրանիկի  
դրավոր պատասխանը «... Ամսու 17—18-ին կլինեմ Գորիսում:  
Աշխատեցեք ամեն գնով պահպանել ու պահել ֆրոնտը»:<sup>2</sup> Սեպտեմ-  
բերի 15-ին զորամասը շարժվեց դեպի Գորիս: Խմանալով Անդրանի-  
կի Գորիս վերադառնալու մասին՝ քաղաքի վրա հարձակվոր թուր-  
քերը նահանջեցին: Հաջորդ օրը, երեկոյան Զորավարը մտավ Գորիս:

Անդրանիկը ցանկացավ Զանգեզուրի Ազգային խորհրդի  
միջոցով պարզել ինչո՞ւ է վերադառնում Գորիս, ո՞րն է  
իր անելիքը: Այդ նպատակով սեպտեմբերի 17-ին, այսինքն՝ Գորիս  
հասնելու օրը, նա Զանգեզուրի Ազգային խորհրդին հղեց  
այդպիսի բովանդակության դիմում: Պատասխան տալու հա-  
մար սեպտեմբերի 23-ին Գորիսում հրավիրվեց 11 գյուղերի 22  
ներկայացուցիչների ժողով Անդրանիկի, գնդապետ Մելիք Շահնա-  
դարյանի, Ազգային խորհրդի անդամներ Պարոնյանի, Գ. Տեր-Մի-  
նասյանի, Սականդարյանի և կոռպատացիայով հրավիրված բժիշկ Մինասյանի մասնակցությամբ:

Հարցի կապակցությամբ ելույթ ունեցան շատերը: Բոլորի  
եղրակացությունը մեկն էր՝ ինքնապաշտպանությունից բացի այլ  
որոշում կայացնելը կործանարար է: Զանգեզուրը ամբողջովին  
կորված էր դրսի աշխարհից և օգնություն ստանալու որևէ հույս

1 ՀՀԳՓԿ, թ.370, ց.1, գ.30, թ.5:

2 Նույն արխիվ, գ.35, թ.12:

շկար, իսկ նրա զինական ուժերն էլ թույլ էին։ Ստեղծված իրավիճակը հաշվի առնելով, ժողովը որոշեց՝ ինչքան հնարավոր խուսափել թուրքերի հետ զինված առնակատումից և այդ ընթացքում լավագույն ձևով նախապատրաստվել, մինչև որ կհասնի նպատավոր պահը։

Անդրանիկը ևս պաշտպանեց զանգվածների ինքնապաշտպանության գաղափարը:<sup>1</sup>

Մեր կարծիքով, տվյալ պահի համար դա ամենաճիշտ որոշումն էր, որ կայացրեց նոյեմբերի 23-ին Գորիսում տեղի ունեցած զյուղերի ներկայացուցիչների ժողովը։ Այդ օրերին Զանգեզուրի հայ ազգարնակշության հիմնական զանգվածները բարոյահոգերանական տեսակետից գտնվում էին զժվարին կացության մեջ։ Կտրված լինելով դրսի աշխարհից, նրանք ոչ մի օգնության հույս չունեին շգիտեին՝ որտեղ ինչ է տեղի ունենում, անգամ կցկտուր էին Զարաբաղի ու Շուշիի վերաբերյալ տեղեկությունները։

Զանգեզուրի հայ ազգարնակշությունը Ազգային խորհրդի ղեկավարությամբ եռանգուն կերպով ձեռնամուխ եղավ զավառի ինքնապաշտպանության խնդիրների լուծմանը։ Այդ օրերին Անդրանիկը մեծածավալ աշխատանք կատարեց բանակը համար համալրելու, նրան անհրաժեշտ զենքով ու զինամթերքով հանդերձավորելու, ինչպես նաև զինվորական կարգապահությունը բարձրացնելու ուղղությամբ։ Այդ նպատակով անցկացրեց 25—30 տարեկան տղամարդկանց զորահավաք և հաշվառման ենթարկեց բնակչության զենքն ու զինամթերքը։ Նույն կերպ վարվեց նաև Գորիսում գտնվող Շուշիի գնդի և Գանձակի գումարտակի հետ։<sup>2</sup>

Անդրանիկի վերադարձը լուրջ անհանգստություն պատճառեց Շուշիում գտնվող թուրքական հրամանատարությանը։ Սեպտեմբերի վերջերին նուրի փաշան սպառնալից նամակով դիմեց Անդրանիկին և պահանջեց անհապաղ անձնատուր լինել։ Պատասխան նամակում Զորավարը բազմաթիվ փաստերով թուրք փաշային հիշել տվեց նրա անփառունակ անցյալը, ինչպես նաև իրեն դիմած խոսքերի կեղծությունը։ «24 տարի պայքարել եմ տաճիկ փաշաների

1 Նոյեմբեր, թ. 12—14։

2 Նոյեմբեր։

դեմ, — զրել է Անդրանիկը, — ինչպես 24 ժամում կարող եմ անձնատուր լինել»:<sup>1</sup> Վերջում խոստանում էր մոտալուտ հանդիպում:<sup>2</sup>

Երկու կողմերի համար պատերազմը դառնում էր անխուսափելի: Թուրք ասկյարները և մուսավաթական բանդաները Դարարաղից պատերազմական գործողություններ սկսեցին Զանգեզուրի դեմ: Մուսավաթականների գրգմամբ ոտքի ելան տեղի մահմեցականները: Այդ ամենի հետևանքով Զանգեզուրում դրությունը բավականին սրվեց: Ինքնապաշտպանության մարտավարությունը սպառեց իրեն: Անհրաժեշտ էր կիրառել նոր՝ պատերազմական վիճակին համապատասխան մարտավարություն: 1918 թ. սեպտեմբերի 30-ին Գորիս քաղաքում գումարվեց Զանգեզուրի շրջանային համագումար, որը որոշեց կովով դիմադրել թշնամուն և կատարել Անդրանիկի զինական և պարենավորման բոլոր պահանջները:<sup>3</sup>

Հոկտեմբերի 2-ին Գորիսի Կենտրոնական Ազգային խորհուրդը հատուկ կոչով դիմեց գավառի բնակչությանը. «Տաճիկը զինաթափման ու ջարդի ենթարկեց Ալեքսանդրապոլի, Նախիչևնի, Շամախու և Բաքվի հայերին: Վերջացնելով իր գործը այդ շրջաններում, նա դիմեց դեպի Շուշի, այսօր մեզանից է խրոխտաբար հպատակություն պահանջում, իսկ վաղն արգեն հերթը Երևանին կհասնի: Զանգեզուրի հայ ժողովուրդ, ընկնելու վրա է մեր գարավոր թշնամին և այս բոպեին նա իր կաշին փրկելու մասին է մտածում: Ինչ վերաբերում է Ազգբնաշանի ոճրագործներին, — ասված է կոչում, — մենք նրանց մի պատասխան միայն ունենք տալու: Համեցեք ու փորձեցեք մեր ուժը: Մեր ուժը ահեղ է ոչ միայն թուրք խուժանի դեմ, այլ անգամ տաճկական զիվիզիաների դիմաց, եթե մենք կուռ շարքերով, իրեկ մի հոգի, մի մարմին դարձած խմբենք մեր պաշտելի ազգային հերոս Անդրանիկի շուրջը և կուրծքներս դեմ տանք թշնամուն»:<sup>4</sup> Կոչը լայն արձագանք գտավ բնակչության շրջանում: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 3-ին, շրջանի մի շարք զյուղերի բնակիչներ Զանգեզուրը պաշտպանելու և Ղարաբաղին օգնելու կապակցությամբ իրենց վճռականությունն ու հաստատակամու-

1 Արձագանքը, 9 դեկտեմբերի 1918 թ.

2 ՀՀՊՊԱ, ֆ.370, ց.1, գ.33, թթ.2—3:

3 Նույն տեղում, թ.43:

4 Նույն տեղում, թ.43:

թյունը հավաստեցին Անդրանիկին: «Մենք պատրաստ ենք Զեր բոլոր պահանջները կատարել»,<sup>1</sup> — գրում էին նրանք:

Դարավոր թշնամու զեմ պայքարելու համաժողովրդական ցասումը, անշուշտ, լրացուցիչ լիցք հաղորդեց Զորավարին և նրա քաջարի զինվորներին:

Բանակի մեջ և բնակչության շրջանում կարգապահությունը բարձրացնելու, ինչպես նաև բանակի ղեկավարությունը կենտրոնացնելու նպատակով 1918 թ. հոկտեմբերի 6-ին Ազգային խորհրդի կողմից Անդրանիկը հոշակվեց գավառի գերագույն զինվորական հրամանատար և նրա ենթակայությանը հանձնվեց բոլոր զորամասերի հրամանատարությունը:<sup>2</sup>

Այսպիսով, Ազգային խորհրդի և Անդրանիկի եռանդուն ջանքերի շնորհիվ Զանգեզուրի գավառը կազմ ու պատրաստ էր թշնամուն դիմագրավելու համար: Զորավարն իր գործն ավարտած համարելով, որոշեց նորից մեկնել Սիսիան, որտեղից լուրիր էին հասնում, թե նախիջևանի կողմերից սպասվում է հարձակում: Հոկտեմբերի 11-ին Գորիսում կատարվեց անհավատալին: Շուշից եկան երեք հայ բանագնացներ (Արօհն Բակունց, Մաւշեղ Զաքարյան, Սերգեյ Բաղրամի) (Բաղրամյան), որոնց թուրքական բանակի հրամանատարության հարկադրանքով բնտրել և այստեղ էր ուղարկել Ղարաբաղի հայության երրորդ համագումարը: Դորիսում բանագնացներին միացավ վարդապետ Թարխանյանը,<sup>3</sup> Բանագնացները խնդիր ունեին համուշելու զանգեղուրցիներին, որպեսզի նրանք ընդունեն Ազրբյանի իշխանությունը: Շուշի քաղաքի անկման լուրը, անշուշտ, որոշ շափով ազդել էր զանգեղուրցիների ընդհանուր տրամադրության վրա և բարոյալքել նրանց մի մասին: Սակայն ազգաբնակչության գերակշիռ մեծամասնությունը չէր կորցրել հոգու արիությունը, և նրանք զայրութով ընդունեցին թուրք սպասության և Ազրբյանի մուսավաթական կառավարության վերջնագիրը: Դա ցայտուն կերպով երևաց հոկտեմբերի 13-ին, շրջանի բոլոր գյուղերի ներկայացուցիչների ժողո-

1 ՀՀՊՊԿ, ֆ.370, ց.1, գ.33, թ.42:

2 Նույն արխիվ, գ.47, թ.17:

3 Նույն արխիվ, ֆ.276, ց.1, գ.6, թ.15:

վում, որին մասնակցում էին վճռական ձայնի իրավունքով 61 պատգամավոր, ինչպես նաև Անդրանիկը, Աղգային խորհրդի անդամներ, զյուղական և շրջանային կոմիսարներ: Ժողովը քննարկեց սույն վերջնագլութք: Ժողովականների հիմնական մասը (ներկայացնում էին գավառի զյուղական բնակչությանը), ազատությունը վերդասելով ստրկամտությունից, պահանջում էր դիմել ինքնապաշտպանության, մինչև վերջին շունչը պայքարել թուրք—մուսավաթական հրոսակների դեմ, իսկ փոքրամասնությունը (ներկայացնում էին քաղաքացին բնակչությանը) կողմ էր հնազանդվելուն: <sup>1</sup> Ավելի կոնկրետ՝ 27-ը քվեարկեց «մինչև վերջ թշնամուն դիմագրելու» օգտին, 21-ը քվեարկեց դեմ, իսկ 13-ը՝ ձեռնպահ մնաց: Ժողովի բան ընթացքից ու քվեարկության արդյունքներից խիստ դժգոհ՝ Անդրանիկը հայտարարեց. «Ես կգնամ Սիսիանի ժողովրդի մոտ: Նա ավելի հայրենասեր է, զոհարերով»:<sup>2</sup> Հոկտեմբերի 14-ին Հարվածող Զորամասը և նրա հետ Շուշիի դնդի և Գանձակի գումարտակի զինվորներն ու սպաները ճանապարհվեցին դեպի Սիսիան:

Զորավարի՝ Սիսիան վերադառնալուց հետո Գորիսի շրջանում թուրքերը նորից ակտիվացան: Տեղական թուրքերի զինյալ խմբերը, որոնց մեջ կային նաև զգալի թվով ասկյարներ, մշտապես հարձակումներ էին գործում գավառի սահմանամերձ հայկական զյուղերի վրա, կողոպտում, ավերում և կոտորում բնակիչներին: Հոկտեմբերի 15-ին Գորիսում հրավիրվեց ամբողջ շրջանի զյուղական ներկայացուցիչների համագումար, որը բննության ենթարկելով ստեղծված ռազմաքաղաքական դրությունը, ընդունեց որոշում՝ հրավիրել Անդրանիկին Սիսիանից: Աւելինդրելով զանգեզուրցիների կանչին, Զորավարը զորքի զյուղավոր ուժերը շարժեց դեպի Գորիս՝ օգնելու աշխարհագորայիններին ու զինված կազմավորումներին՝ Դարարաղից եկող թուրքերի գրոհը կասեցնելու համար: Հոկտեմբերի 16-ի առավոտյան Հարվածող Զորամասը բանեց Գորիսի ճանապարհը և երեկոյան հասավ տեղ: Նրա վերադարձը մեծ արձագանք ունեցավ շրջանում և Գորիս քաղաքում: Ամենուր ժողովուրդը ցըն-

<sup>1</sup> Նույն արխիվ, ֆ.276, ց.1, գ.6, թ.15:

<sup>2</sup> «Մշակ», 25 Հոկտեմբերի 1918թ.:

ժության մեջ էր: Ցնծության մեջ էր և արցախահայությունը: Իրականանալու շեմին էր նրա երազանքը. Անդրանիկի զորամասը շուտով պիտի մտներ Ղարաբաղ և օգնության ձեռք մեկներ պալքարից հոգնած ու արյունաբամ Արցախ աշխարհին: Նույն մտահոգությունը համակել էր նաև Հայրենասեր Զորավարին և նրան քուն ու հանդիսաւ շէր տալիս: Այդ օրինին նա պիտի գրեր. «այս մորիլիկացված ժողովրդին և իմ բանակին մնում էր մեզ հետ կապել բուն պատմական Ղարաբաղը, որ սակայն, նախքան այդ ընկապ թուրքերի տիրապետության տակ»:<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք, Անդրանիկը շէր թաքցնում իր նպատակը՝ մտնել Արցախ ու օգնել տեղի հայությանը: Այդ մասին նա բազմիցս ասել է, որ անհրաժեշտ է օգտվել ամեն մի առիթից նպաստավոր լուծում տալու համար Ղարաբաղի հարցին:<sup>2</sup> Հարկ է նշել, որ Ղարաբաղ մտնելու Անդրանիկի ցանկությունը ինքնանպատակ շէր, այլ՝ պատմա—քաղաքական պայմանների օրինաշափ պահանջ: Անդրանիկին ամենից առաջ Ղարաբաղ էր ձգում հարազատ ժողովրդի արյան կանչը: Երկու տարուց ավելի էր, ինչ հայ ժողովրդի արցախյան հատվածը անհավասար գոյամարտ էր մղում թաթարների և նրանց զինակցող տաճիկների դեմ: Նա գնում էր, որպեսզի փրկության հասներ իր ժողովրդին: Երկրորդ: Հակառակորդը՝ նույն դարավոր թշնամին էր, որից Անդրանիկը ցանկանում էր վրեժիխնդիր լինել: Երրորդ: Անկախ ու միացյալ Հայաստանի սահեծման գաղափարի իրականացումը, որը, իրավամբ, պիտի սկսվիր Արցախ աշխարհը Արարատյան Հանրապետության հետ միացումով: Չորրորդ: Արեմտահայ գաղթականության համար «ծածկ» գտնել Արցախ—Զանգեզուրում: Հինգերրորդ: Զորավարից դա էր պահանջում Զանգեզուրի հայությունը: Այսպես, օրինակ, 1918 թ. հոկտեմբերի 17-ին Գորիսում կայացած շրջանի 16 գյուղերի ներկայացուցիչների ժողովը, մասնակցությամբ Անդրանիկի, Շուշվան զնդի հրամանատար Մելիք Շահնազարյանի, Ազգային խորհրդի անդամների և Սիսիանի շրջանի ներկայացուցիչների, ուր քննարկվում էր Ղարաբաղին օգնություն ցույց տալու հարցը, բոլոր ելույթ ունեցողները կոչ արեցին մեկ մարդու նման

<sup>1</sup> ՀՀՊՊԿ, ֆ.370, գ.1, գ.30, թ.7:

<sup>2</sup> «Նոր Հորիզոն», 12 գեկտեմբերի 1918 թ.:

Նեցուկ կանգնել արցախահայության սրբազան պայքարին:<sup>1</sup> Վեցերորդը: Լեռնային Ղարաբաղի հայության մշտական խնդրանքը, որի հանդեպ նա անուշադիր մնալ չէր կարող: «Երկու անգամ է Շուշիից նամակ կստանամ: Այնտեղ միշտ սպասող են»,<sup>2</sup> — գրում էր նա Հովհաննես Թումանյանին:

Բազմաթիվ վավերագրերից կցանկանայինք վկայակոչել մեկը: Այսպես, 1918 թ. օգոստոսին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը Անդրանիկին հայտնում է. «... Իմանալով ձեր ցանկությունը, որ շեք ուզում մտնել Արարատյան Հանրապետության շրջանը, խնդրում ենք ձեզ մի պատկառելի գորամասով անցնեք Շուշի: Դա է Ղարաբաղի ժողովրդի իղձն ու ցանկությունը: Եթե հայներուք վճռել է ինչ ինչ պատճառներով մնալ Սիսիան գավառում, այն ժամանակ, խնդրում ենք Զեղ որոշ ուժեր հատկացնել Շուշի անցկացնելու համար՝ գնդապետ Մելիք Շահնազարյանի հետ միասին: Լիահույս ենք, որ դուք անտես շեք անի մեր խնդրանքը և ձեր շնորհիվ պատմական Ղարաբաղը հնարավորություն կստանակատարելու իր կոշումը»:<sup>3</sup>

Եվ Զորավարը աննկատ շեր թողնում իրեն հասցեագրված բոլոր դիմումներն ու խնդրագրերը: Նա նամակագրական կապերի մեջ էր Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Ջրաբերդի գորահրամանատարների հետ: Հոկտեմբերի կեսերից այդ կապերը դարձան ավելի կանոնավոր: Սուրհանդակների և նամակների միջոցով գեներալը պարբերաբար տեղեկություններ էր ստանում Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին, ազատագրական պայքարի ամենածանր պահերին քաջալերում էր արցախցիներին, որ թշնամին շի կարող նրա կամքը կոտրել, անգամ ամենավայրագ մեթոդներով:

Հոկտեմբերի վերջերին Արցախի վերը նշված շրոս շրջանների գորահրամանատարները համատեղ գրությամբ դիմում են Անդրանիկին և խնդրում նրան, որ Զանգեզուրից շարժվի Ղարաբաղ, իսկ իրենք պարտավորվում են ամրանալ ուազմավարական կարևոր

1 ՀՀՊՊԿ, ֆ.370, ց.1, գ.38, թթ.1—2:

2 Նույն տեղում, գ.8, թթ.2—3:

3 ՀՀՊՊԿ, ֆ.370, ց.1, գ.35, թթ.2—3:

նշանակություն ունեցող կետերում և թիկունքից Հարվածել թշնամուն: Հարձակումը պետք է սկսվեր նոյեմբերի 5-ին: Սակայն Վարանդայի գորահրամանատար Սոկրատ բեկ Մելիք Շահնազարյանի խնդրանքով այն 10 օրով հետաձգվեց: Բանն այն է, որ նրա ապաշնորհության ու գանդաղկոտության պատճառով Վարանդայի բանակը մարտական պատրաստվածության դեռ չէր բերված: Անզրանիկը ստիպված ընդուած գնաց այդ խնդրանքին:

Նոյեմբերի 16-ին Անդրանիկը իր զորամասով շարժվեց դեպի Ղարաբաղ: Արյունահեղ կոփվներում թուրքերը տեղի են տալիս: Զարուղի ձորն անցնելիս Հաջի Սամլուի բրդերն ու Ազրբեջանի զինյալ խմբերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին: Նոյեմբերի 17-ին և 18-ին Զարուղում տեղի ունեցան թեժ մարտեր, երկուստեքմեծ կորուստներով:<sup>2</sup>

Անդրանիկի զորամասը մեծ դժվարությամբ անցավ Զարուղը և գրավեց Ավդալլար գյուղը (ներկայիս՝ Լաշին): Բացվեց Գորիսը Շուշիի հետ կապող միակ ճանապարհը: Գլխավոր պատնեշը Հաղթահարված էր, մնում էր անարդել մտնել Շուշի: Զորավարը և նրա մարտիկները իրենց արդեն զգում էին Արցախի հողում: Եվ պատահական չէ, որ այդ օրերին Անդրանիկը ոգևորված զրում էր. «Ես և իմ զորամասը անցանք պատմական Ղարաբաղի լեռները՝ մեր բմբոստ ոգիներն ազատ պահնելու օտարի ստորացուցիչ մնշումներից»:<sup>3</sup> Սակայն, Անդրանիկին քախտ չէր վիճակված մտնել Շուշի և իր մարտիկներին առաջնորդել Արցախ աշխարհի խորքերը, մասնակից դառնալ նրա ժողովրդի հերոսական պայքարին: Ազրբեջանի կառավարությունը գլուխը կորցրել էր: Նա փորձում է Բաքվում անգլիական բանակի հրամանատար Թոմմսոնի միջոցով կանգնեցնել Անդրանիկի զորաշարժը դեպի Շուշի: Եվ դա նրան հաջողվում է: Անդրանիկի զորամասը դեռ չէր հասցրել վայելել Զարուղի Հաղթանակի բերկրանքը, երբ նոյեմբերի 19-ին Ավդալլար գյուղում գեներալի անունով ստացվեց Թոմմոնի հեռագիրը: Անգլիացի

1 «Հայրենիք», Հռկանմբեր, 1933, էջ 111—112:

2 ՀՀՊՊԿ, ֆ.370, ց.1, գ.50, թի.9—10, «Զանգ», 15 հունվարի 1919 թ.:

3 «Յար Հորիզոն», 12 դեկտեմբերի 1918 թ.:

գեներալը հայտնում է, որ արդեն ընդհանուր զինադադար է կնքված։ Միաժամանակ հավաստում է, որ արդեն դաշնակից երկրների կողմից հրամայված է ազրբեջանական ու թուրքական իշխանություններին, որ նրանք որևէ թշնամական գործողությունները չանեն հայերի գեմ։ Հեռագրի վերջում Թոմսոնը Անդրանիկից պահանջում է դադարեցնել պատերազմական գործողությունները և հրաժարվել Շուշի գնալու մտքից։<sup>1</sup> Հաջորդ օրը՝ նոյեմբերի 20-ին, երկու սպաներ<sup>2</sup> անգլիացի կապիտան Ազյուտը և ֆրանսիացի կապիտան Պասֆելդը<sup>3</sup> հանձնեցին Անդրանիկին նրան ուղղված Թոմսոնի հատուկ նամակը։ Բրիտանացի գեներալը Զորավարից վերստին պահանջում էր գաղարեցնել ուղարկան գործողությունները և միաժամանակ զգուշացնում, որ մարտական գործողությունները շարունակելու դեպքում արյունահեղության ամրող պատասխանատվությունն ու ծանրությունը ընկնելու է նրա վրա։<sup>4</sup> «Այդ հիման վրա, — գրում է Անդրանիկը, — դադարեցրի ուղարկան գործողությունները»։<sup>5</sup>

Վարանդայի, Դիլակի, Խաչենի և Զիվանշիրի զինվորական հրամանատարներին տեղյակ պահելով Թոմսոնի հեռագրի և նամակի մասին, Անդրանիկը նրանցից կտրականապես պահանջում է՝ հրամանը ստանալու պես թուրքերի և թաթարների դեմ գաղարեցնել պատերազմական գործողությունները։ Բոլոր հարցերը, — հայտնում էր Զորավարը, — պետք է հաշտության խորհրդադողություն լուծվեն, իսկ թշնամական գործողությունները կարող են վատ անդրա-

1 ՀՀՊՊԱԱ, ֆ.370, ց.1, գ.50, թթ.9—10։

2 Նոյեմբերի 16-ին Շուշիում լուր ձեռանում Անդրանիկի մոտ նշված սպաների գնալու մասին։ Ղարաբաղցիները կուահում են բանախացների նպատակը՝ թոյլ շառակ Անդրանիկին մտել Շուշի։ Ղարաբաղի աշքի ընկնեղ մի քանի գործիչներ (Ե. Իշխանյան, Հ. Մուսայելյան, Ա. Քամալյան և այլիներ) սրացում են ձախողել այդ հանդիպումը՝ Ղարաբաղի գնդերը Անդրանիկին ընդառաջ տանելու միջոցով, որպեսզի նա օր առաջ մտնի Շուշի և անգլիացիներին կանգնեցնի կատարված փաստի առաջ։ Սակայն քաղաքավուն Գերասիմ Մելիքը Եանեազարյանը Ղարաբաղի հրամանատարներից պահանջեց ձեռնապահ մետք սրացման կատարումից։ Ինչպես տեսանք, աշբարաստիկ այդ հանդիպումը կայացավ։ Տես՝ «Հայրենիք»։ Հոկտեմբեր, 1933, էջ 111—112։

3 Ազրբյանները տարրեր անուններ են նշում՝ Գոլզամիս, Կամֆիլդ, Ազումա, Գաս-ֆուդ, Ակունք։

4 ՀՀՊՊԱԱ, ֆ.370, ց.1, գ.39, թ.2, գ.50, թթ. 9—10։

5 Նույն տեղում, գ.50, թթ. 9—10, «Նոր հորիզոն», 14 գեկտեմբեր 1918 թ.։

դառնալ հայոց հարցի լուծման վրա:<sup>1</sup>

Պատերազմական գործողություններին վերջ տալու նախապատշական պահանջով Անդրանիկը դիմեց նաև Կապանի և Մեղրիի շրջանների Ազգային խորհուրդներին:<sup>2</sup>

Հարկ է նշել, որ մինչև Անդրանիկի՝ սույն հրամանի հասնելը Արցախ, Շուշիում արդեն ստացվել էր Թոմասի հեռագիրը մարտական գործողություններին վերջ տալու վերաբերյալ: Խաղաղության կոչով Ղարաբաղի հրամանատարներին դիմեց նաև Շուշվա քաղաքավունիք Գելիք Շահնազարյանը:<sup>3</sup>

Ղարաբաղի գորահրամանատարները զինադադարի հրաման արձակեցին և այդ մասին տեղյակ պահեցին Անդրանիկին. «Դանվում ենք Զեղանից 20—25 վերստ հեռավորության վրա: Գեներալ Թոմասի հեռագիրը ստիպեց մեզ առայժմ կանգ առնել»:<sup>4</sup>

Ի դեպ, դաշնակցության Ապառաժի (Ղարաբաղ) կոմիտեն կտրականապես մերժեց դաշնակից զորքերի հրամանատարության պահանջը: Կոմիտեն գտնում էր, որ առանց ավելորդ ժամանակ կորցնելու պետք է օգնության հասնել Անդրանիկին, որպեսզի նա օր առաջ մտնի Ղարաբաղ:<sup>5</sup>

Ցավոր, Հարաբարի զորամասերի ընդհանուր հրամանատար Սոկրատ բեկ Շահնազարյանը<sup>6</sup> հրաժարվեց կատարել Ապառաժի պահանջը և դրանով իւկ դժվարացրեց Ադրբեջանի զեմ համակարգված պայքարի պատրաստվելու արցախայինների ջանքերը: Ապաշնորհ հրամանատարին վերահամոզելու բազմաթիվ անհաջող փորձերից հետո Եղիշե Եշիւանյանը նոր առաջարկություններ արեց:

1. Վարանդայի ուժերը անմիջապես դուրս բերել նախատեսված

1 «Արձագանք», 1 փետրվարի 1919 թ., «Հառաջ», 29 հունվարի 1919 թ.:

2 ՀՀՊԿ, ֆ.370, ց.1, գ.50, թթ. 9—10, «Նար հորիզոն», 14 դեկտեմբերի 1918 թ.:

3 «Հայրենիք», Հոկտեմբեր, 1933, էջ 111—112:

4 ՀՀՊԿ, ֆ.370, ց.1, գ.40, թ.3:

5 Նույն ակտում, գ.38, թթ.17—19:

6 Սոկրատ բեկ Մելիք Շահնազարյանը, գեներալ Բագրատոնու կողմից ստացել էր զեղապեսի զինվորական կոչում և գարձել Ղարաբաղի զորամասերի ընդհանուր հրամանատար: Տե՛ս «Հայրենիք», Հոկտեմբեր, 1933, էջ 112—113:

վայրերը և տալ Հարձակման հրաման:

2. Քաղաքագլխին պատասխանել, թե հեռազիրն ու նամակը ստացվեցին այն ժամանակ, երբ գործողոթյունները սկսվել էին և որոնց դադարեցնելը իրենից շի կախված, այլ Անդրանիկից, որին ենթարկվում են Հարաբաղի բոլոր հրամանատարները:

3. Անմիջապես Յոգուց բաղկացած մի խումբ ուղարկել Շուշի-Գորիս խճուղու վրա գտնվող Ղալ-Գեորգեան վայրը և, երբ Թումսոնի Ներկայացուցիչները կմոտենան, կրակի տակ առնել և վերադարձնել: Համառելու գեպում հրացանազարկ անել: Մինչև լուրը կհասներ Բաքու, և Թումսոնը զորք ու քննիչ կուղարկեր, կանցներ բազական ժամանակ, որից կօգտվեին Հայերը, մանավանդ Հացի Սամլուի թաթարները խուճապահար փախչում էին գեպի Աղդամ: Այդ պահին Անդրանիկը իր զորամասով անարգել կմտներ Ղարաբաղ: Թող հետո քննություն կատարվեր, թե ինչու Թումսոնի հրամանը շի կատարվել: Դաշնակիցների ներկայացուցիչների շեղութացվելու գեպօրում պատասխանատվությունը ամբողջովին իր վրա էր վերցնում Ապառաժի կոմիտեն:<sup>1</sup>

Դժբախտաբար, Սոկրատ բեկ Մելիք Շահնազարյանը այս անգամ ևս մնաց անդրդիմելի, բաց թողնելով Արցախի հարցի լուծման, մեր կարծիքով, աննախագեպ, ամենաբարենպաստ և իրական պահը:

Հարաբաղ՝ անգլիական ներկայացուցչության ոտք դնելուց հետո գավառի քաղաքական վիճակը մնաց օգից կախված, դարձավ ավելի անորոշ: Անգլիացիների թողարկությունից օգտվելով՝ Ադրբեջանը էլ ավելի ուժեղացրեց ճնշումը կեռնային Հարաբաղի նկատմամբ: Կեռնային Հարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը և ողջ արցախահայությունը շարունակում էին հույսեր կապել Անդրանիկի հետ, նրան համարելով իրենց ազատաբարը: Արտահայտելով Արցախի հայ ազգարնակշության միասնական կամքը, Հայ Հեղափոխական Դաշնակցության Շուշիի շրջանային կոմիտեն 1919 թ. հունվարի 3-ին հուզիլ նամակով դիմեց Անդրանիկին: «Երկար տարիների ընթացքում Զեզ իր ծոցում գուրգուրող Հայ Հեղափոխական

1 Ե. Խշանյան, Գեպքերը կեռնային Հարաբաղում, «Հայքնիք», 1933, թ.12, է2 112—113:

Դաշնակցությունը, հանձինս Ղարաբաղի կենտրոնական կոմիտեի, գիմում է Զեզ և կանչում Ղարաբաղ, հանուն վերջինիս 300 հազարանոց հայ ժողովրդի փրկության»: Այնուհետեւ հայտնվում էր, որ «Ղարաբաղի հայությունը չի կարող հանդուրժել երկու տասնյակ հազար թրքության հպատակությունը, մանավանդ, որ Սասունի արծիվը (նկատի ունի Անդրանիկին — Հ. Հ.) մեզանից շատ հեռու չէ: Այսօր, երբ մենք զուրկ ենք մի ուժեղ և հանճարեղ անհատից, Ղարաբաղի հայությունը, փաշա, իր աշքերը հառել է Զեզ և ցանկանում է Զեզ տեսնել, ունենալ իր մեջ, ամողք գործի գլուխը կանգնած»: «Դրությունը միայն դուք կարող եք փրկել, — նշված է նամակում, — հետևապես հապաղելը հանցանը է: Ղարաբաղի հայությունը կանչում է ձեզ և դուք պետք է գաք»:<sup>1</sup>

1919 թ. փետրվարի 19-ին Զորավարին օգնության կանչով դիմեց նաև Ղարաբաղի Ազգային խորհուրդը: Այն օրից, երբ ձեր քաջարի զորքերը իջան և բանակ դրեցին Զանգեզուրի սահմաններում, — զրել է խորհուրդը, — Ղարաբաղի հայությունը, թեև շրջապատված թշնամիների կուր շղթաներով, մինչև վերջին ժամանակներու իր հույսը չի կտրում և սպասում է բւրժմաշարշար հայ ժողովրդի աշեղաբեր հեռատպետի գալուստին:<sup>2</sup> Ավելացնենք, որ բազմաթիվ են նույնատիպ նամակները, որոնք այդ օրերին Արցախից ստացվում էր Անդրանիկի հասցեով:<sup>3</sup>

Ղարաբաղ մտնելու համար այլպիսի զրակաց պայմաններ՝ դեպքում թվում է, թե Անդրանիկը առանց ժանրութեթև անելու պարտավոր էր իր զորամասն առաջնորդել դեպի Շուշի, որը, ինչպես արդեն նշել ենք, Զանգեզուր մտնելուց հետո դարձել էր նրա զիխավոր երազանքը: Դժրախտարար, այդ վճռորոշ պահին Զորավարը դրսերեց անվճռականություն և ձեռքից բաց թողեց Արցախը Զանգեզուր—Սյունիքին միացնելու նպաստավոր պահը, որպեսզի այս լեռնաստանը մեկընդիշտ ապահովեր «Ազրբեջանի նվաճողական նկրտումներից»:<sup>4</sup>

1 ՀՀՊՊԱ, գ.370, գ.1, գ.40, թթ.7—9:

2 Նույն տեղում, գ.38, թթ.17—19:

3 Նույն տեղում, գ.40, թթ.11—16:

4 Ե. Խյանյան, Դեպքերը Լեռնալին Ղարաբաղում, «Հայրենիք», 1933, թ.12, էջ 130:

Լուսաբանենք այն հարցը, թե ինչը Անդրանիկին հետ պահց Դարաբաղի ճանապարհից: Չէ որ նա կարող էր ու պարտավոր էր շարժվել դեպի Շուշի և աղատագրել ողջ Ղարաբաղը: Անդրանիկի այդ շրջանի գործունեությունը ուսումնասիրող հեղինակները հարցի վերաբերյալ պաշտպանում են թեր ու դեմ կարծիքներ, այն է՝ կամ դիտվել է որպես հարկադիր քայլ, կամ որպես անզիւցիներին միամտորեն հավատալու արդյունք:

Տասնամյակների հեռավորությունից և հեշտ է, և միաժամանակ դժվար դատողություններ անել, կարծիք կազմել և գնահատել ինչպես դեպքերի ընթացքը, այնպես էլ դրանց հետ կապված անհատների գործունեությունը: Փորձենք ներկայացնել և հիմնավորել մեր կարծիքը:

Առաջին: Արդյո՞ք անզիւցիների խոստումներին միամտորեն հավատալու պատճառով Անդրանիկը կասեցրեց զորամասի հաղթական մուտքը Շուշի, այն դեպքում, երբ դրա համար շկար որնէ խանգարող հանգամանքը: Սկզբնական շրջանում մինչեւ առաջին համաշխարհայինի ավարտը, Զորավարը վստահում էր դաշնակիցներին և նրանց մեջ տեսնում պաշտելի հայրենիքի ու ժողովրդի աղատագրությունը անօրեն թուրքերի տիրապետությունից:

Ինչպես արդեն նշել ենք, Անդրանիկին վիճակված չէր անցնել իրաք և դաշնակից բանակների կազմում մարտնշել դարավոր թշնամու դեմ: Հանգամանքների բերումով այդ բանը նրան հաջողվել էր անել Զանգեղուրում: Առաջին աշխարհամարտը տանուլ տված թուրքերը հեռացել էին Ղարաբաղից: Նրանց տեղը դրավեցին անզիւցի գաղութարարները և պահանջեցին Անդրանիկից գաղարեցնել պատերազմական գործողությունները: Զորավարը հավատաց դաշնակիցներին, որովհետև բրիտանական զեներալը խոստացել էր հարցը լուծել խաղաղ ճանապարհով: Հավատաց և զորքերը ետ քաշեց:

Այդ հարցում անզիւցիներին շհակադրվելու նկատառումներից բացի, մեր կարծիքով, որոշակի դեր են կատարել նաև այլ հանգամանքներ:

Նախ՝ Անդրանիկի ղորամասը երկարատև կոփվներ մղելու համար շուներ անհրաժեշտ քանակությամբ ռազմամթերք։ Հայտնի է, որ Ղարաբաղի և Զանգեզուրի հայ ազգաբնակչության անունից նա բազմիցս դիմել էր Հայաստանի կառավարությանը փող և ռազմամթերք ստանալու խնդրանքով։<sup>1</sup> Մյուսը՝ հաղարավոր գաղթականներ տնտեսական ու հակասանիտարական ծանր պայմանների մեջ, պոչ դարձած՝ քայլ առ քայլ հետևում էին զորամասին, իսկ Անդրանիկը շուներ հնարավորություն նրանց կերակրելու։ Գաղթականության թշվառ կացությունը թուլացնում էր նրա թափը և խոշընդուռում պատերազմական գործողություններին։ Այս թե այդ օրերին ինչ էր զրում Անդրանիկը։ Այս բովեին 26000 հայ գաղթականություն Սիսիանի, Մեղրիի, Ղափանի, Զանգեզուրի շրջաններում մատնված է սովոր։ Հարկավոր է արագ օգնություն։ Ոչ մի տեղից օգնություն չի ստացվում։ Ես ստիպված եղա իմ զորամասի պահեստից գաղթականներին տալ 2150 փութ ցորեն, բայց ավելին շունեմ օգնելու համար Անգլիական ներկայացուցչության առաջարկությամբ ես համաձայնվեցի մնալ այստեղ։<sup>2</sup>

Անգլիացիները խոստացան անմիջական օգնություն հասցնել գաղթականությանը՝ Բաբվից դրամ փոխադրել և դնել Անդրանիկի տրամադրության տակ։<sup>3</sup> Իրականում այդ առաջարկության տակ թաքնված էին գեներալ Թոմասնի իսկական մտադրությունները։ Շուտով դա պարզ դարձավ նաև Անդրանիկի համար։ Նա հասկացավ, որ անգլիացին հանուն շահի պատրաստ է գոճել նաև հայրենիք կոչված այս մի «բուռ» հողակտորը։ Անդրանիկը խոր հիասթափություն ապրեց։ Թեև ինքը չէր գտնվում Ղարաբաղում, բայց տեղեկություններ ուներ, որ այստեղ անգլիացիները վարում են ադրբեջանամետ քաղաքականություն և ամեն ինչ անում են, որպեսզի զավառի վրա տարածեն մուսավաթականների իշխանությունը։ Անգլիացիք եկան այստեղ կարծեր հայ ժողովրդին զսպելու և

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.370, ց.1, գ.38, թթ.7—8, ֆ.121, ց.1, գ.109, թ.34։

2 «Արձագանք», 7 ապրիլի 1919 թ.։

3 Արշակ Երիբեյյանն ու Նիկոլայ Հովսեփյանը (երկուսն էլ Զանգեզուրի կենտրոնական Ազգային խորհրդի անդամներ), որպես Անդրանիկի լիազոր ներկայացուցիչներ, Շուշի վրայով մեկնեցին Բաքու։ Այնտեղ ստանալով 2 մլն. ռուբլի մղթադրամ, վերադարձան Գորիս։ Տես՝ «Հայրենիք», Հոկտեմբեր, 1933, էջ 116—117։

Աղբքաջանին հպատակ դարձնելու նպատակով»,<sup>1</sup> — 1919 թ. փետրվարի 10-ին գրում էր Անդրանիկին Լեռնային Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը: Դեպքերի և իրադարձությունների ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ անգլիացիների նկատմամբ անվստահությունը Անդրանիկի մեջ ծայր առավ հատկապես նոյեմբերի կեսերից: Նա տեղյակ էր, որ Թումանուն—Սուլթանով դավագիր երկյալը տեսնդորեն ավելացնում է զորքերի քանակը Շուշիում, Խանքենդում, Ասկերանում և մարզի մյուս բնակավայրերում, որպեսզի Լեռնային Ղարաբաղը բռնությամբ հանձնի Աղբքաջանին:

Այդ կապակցությամբ Անդրկովկասում գաշնակիցների զորքերի գլխավոր հրամանատարին 1919 թ. փետրվարին Անդրանիկը գառնացած գրում էր, որ իրեն հավաստիացրել էին, թե միջոցներ են ձեռնարկված կանխելու ամեն մի ազրեսիվ գործողություն կամ զինաշարժ, թե անցյալի գիրկն են անցել մուսուլմանների կողմից ճրնշում զործ զնելու անգամ ամեն մի միտք: «Ես հավատ ընծայեցի այդ բոլորին և վերադարձա Զանգեզուր՝ ազնիվ խոսք տալով գործադրել չանքերս, որպեսզի վերականգնվի խաղաղությունն ու հանգստավետ կյանքը: Ցավոք, — շարունակում է Անդրանիկը, — ներկայումս ինձ հայտնի է զարձել, որ Ղարաբաղում և Զանգեզուրում մուսուլմանական զորամասերը տեղաշարժեր են կատարում, ուժ կենտրոնացնում և մարտական զինամթերք տեղափոխում տեղից տեղը: Զորավարը առաջարկել է հանուն ազգաբնակչության բարեկեցիկ կյանքի, միջոցներ ձեռք առնել վերականգնելու այն իրավիճակը, որ գոյություն է ունեցել մինչև նոյեմբերի կեսերը»:<sup>2</sup>

Անդրանիկը, որ մշտական ուշի—ուշով ու տագնապով հետևում էր Ղարաբաղում անգլիացիների խարդախ ու նենգ հակահայկական քաղաքականությանը, վերջնականապես համոզվեց, որ դաշնակից պետություններից և ոչ մեկը, այդ թվում և Անգլիան, շահ շունեն Ղարաբաղի հարցում, հասկացավ, որ հայ ժողովուրդը զուր տեղն է ուժից վեր ճիգեր զործադրել, այս կամ այն չափով նպաստելով դաշնակիցների հաղթանակին: Արդյունքում՝ կորցրած հայրենիք, խոշտանգված ու բնավեր հայրենակիցներ, զերեզմանատեղի դարձած Արցախ ու Զանգեզուր:

1 ՀՀՊՊԿ, ֆ.370, ց.1, գ.38, թթ.27—28:

2 Նույն արխիվ, գ.39, թ.7, ց.2, գ.52, թ.73:

Դաշնակից երկրների հրամանատարությունից, ի դեմս անզլիացի գեներալ Թոմասոնի, խիստ վիրավորված ու վրդովված Զորավարն առիբ է ունեցել 1919 թ. աւրիլի 1-ին իր զայրույթը հրապարակավ հայտնել մայոր Գիպոնին, որը նրան ուղեկցում էր Զանգեզորից էջմիածին։ Գիպոնի այն հարցին, թե արդյո՞ք գեներալը չի ցանկանում հանդիպել Թոմասոնին և նրան ուղղակիորեն հայտնել իր մտադրությունը, Անդրանիկը շպրտում է նրա երեսին։ «Դուք գնացեք և ասեք բրիտանացիներին, թե այս օրերից սկսած իմ ձեռքերը լվացել եմ դաշնակիցների հետ եղած բոլոր գործողություններում։ Վստահելով ձեզ՝ մենք խաղաղությունը պահպանեցինք ի վնաս մեզ, ու սպառեցինք համբերությամբ մեր փրկության համար։ Դուք ասում էիք, թե մենք թուրքերից անկախ Հայաստան պիտի ունենանք։ Մինչդեռ շատ շանցած այնտեղ բնակվելու համար հայ գոյությունը չի ունենա»<sup>1</sup>։

Դաշնակիցների նկատմամբ Անդրանիկի վերաբերմունքի կրտրուկ փոփոխությունը աննկատ շմնաց անզլիացիների համար։ Անդրանիկի մեջ նրանք տեսնում էին իրենց վտանգավոր ախոյանին։ Անզլիական դիվանագիտական ներկայացուցչությունը հաճախ դավեր էր լարում նրա դեմ, որոգայթներ պատրաստում։ Եվ, եթե նրանց շնչացողվեց հաշվեհարդար տեսնել Անդրանիկի հետ, ապա դրանում հիմնականում «մեզավոր» էին Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը և դաշնակցության Ապառաժի (Ղարաբաղ) կոմիտեն, որոնք մշտապես Անդրանիկին տեսլյակ էին պահում վերահաս վտանգի մասին։ Դրա ապացույցն է 1919 թ. փետրվարի 21-ին Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի կողմից Անդրանիկին ուղղված այս տողերը։ «Ղարաբաղի Ազգային խորհուրդը դիմում է ձեզ և թախանձագին խնդրում, լրջորեն մտածել Անզլիայի կողմից տարվող այս քաղաքականության մասին, չենթարկվել նրանց մերենալություններին, և թե ձեր անձը, և թե մեր դատը վտանգի չենթարկել»<sup>2</sup>։

Այսպիսով, ինչպես տեսանք, սկզբնական շրջանում դաշնակից-

1 Եռոյն տեղում, գ. 39, թ. 7, ց. 2, գ. 52, թ. 73.

2 Նույն տեղում, գ. 40, թթ. 18—19։

ների նկատմամբ ունեցած հավատն ու վստահությունը դավաճանեցին Անդրանիկին, և նա դադարեցրեց զորաշարժը զեպի Շուշի, այն դեպքում, երբ թուրքերը հապշտապ դուրս հանելով իրենց զորքերը, տեղը զիջում էին վերջին օրերին տեղացի մահմեդականներից հավաքադրված անվարժ զորախմբերին։ Զորավարն, անշուշտ, կարող էր և պարտավոր էր օգտվել հանգամանքների այդպիսի զասավորությունից և իր զորամասը մտցնել Ղարաբաղ, փրկության ձեռք մենքնել անպաշտապան հայ ժողովրդին։ Այդ բանը նա կարող էր անել առանց մեծ ջանքերի։ Մեր խորք համոզմամբ, նոյնեմբերի կեսերից սկսած Ղարաբաղ շմտնելու Անդրանիկի գործելակերպը, ըստ էության, ոչ մի կապ չուներ անզիփացիներին վստահելու հետ, որոնցից նա մինչև հոգու խորքը դառնացած էր ու հիասթափված։

Ուրեմն ո՞րն էր իրական պատճառը, ի՞նչը ստիպեց Անդրանիկին մոռացության տալ սրտի խորքում մշտապես ծխացող վրեժից առառնելու մասին, որի համար նա առանց հուսահատվելու, երեք տասնամյակից ավել պայքարել է։ Դեպքերի և իրադարձությունների ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ նման որոշում կայացնելու համար հիմնական պատճառ են հանդիսացել՝ 1. դաշնակիցների նկատմամբ վստահության կորուստը, 2. անվստահությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հանդեպ, 3. վերջինիս անվճռականությունը Ղարաբաղի հարցում, 4. հիասթափությունը Ղարաբաղի աղբբեջանամետ ուժերից, 5. իր զինվորների և գաղթականության ճակատագրի հանդեպ պատասխանատվությունը և այլն։

Հիմնավորենք դրանք։ Անդրանիկը չէր կարող վստահաբար շարունակել պատերազմը, խորանալ Ղարաբաղում, նախապես իմանալով անզիփացիների դիրքորոշումը Ղարաբաղի խնդրում։ Չո՞է որ, այն քաղաքականությունը, որ անցկացնում էին անզիփացիները նոյնեմբերի կեսերից սկսած, հենց այն էր, ինչը թույլ էր տվել մուսավաթական Ազգությանին Ղարաբաղում կենտրոնացնել մեծ թվով

դինուժ, որի հետ ընդհարումը կարող էր գորամասի և գաղթականության համար ողբերգական ավարտ ունենալ: Զանգեզուրից էջմիածին զնալիս, ճանապարհին Անդրանիկը հիշելով դաշնակիցների հետ կապված մի շարք դառն ճշմարտություններ, անգլիական մայորին ասում է. «... Երեք ամիս է, որ անգլիացիները այս շրջանը եկած են, բայց դեռ ոչինչ չեն արել հայ ժողովրդի համար, կկաշկանդեն մեր բոլոր շարժումները և արգելք կ'անդիսանան մեր արդար ցանկություններին»:<sup>1</sup> Թուրք—մուսավաթական կանոնավոր զորքերի ութաթարական զինված բանդաների հետ մշտական կոփիվների ու ընդհարումների հետևանքով Անդրանիկի զորամասը թուլացել ու կորցրել էր նախկին մարտունակությունը: Վերհիշելով այդ մասին, Զորավարը Գորիսից Թիֆլիս ուղարկած մի նամակում ցավով նրանում էր. «Դաժան օրեր էին այն օրերը, երբ զորամասը մտավ Ղարաբաղ, բանակը քայլայված, զորքը հյուծված, գաղթականությունը սարսափահար և ուկրացած էր»:<sup>2</sup> Այնուհետև խոսելով մի շարք պահաստ պայմանների մասին, որոնք մեծապես դժվարացնում են բանակի զորաշարժը, Անդրանիկը ավելացնում է, որ տեղական ժողովուրդը ցույց տվեց սառը, անտարբեր և երբեմն նույնիսկ թշնամական վերաբերմունք և այդ վերաբերմունքի հետևանքով էր, որ զորամասի մեծ մասը հեռացավ Ղարաբաղից, և ինքը մնաց միայն իր որոշ թվով զինվորներով:<sup>3</sup>

Ղարաբաղյան արշավանքին դեմ էր նաև զանգեզուրյան զործիչների մի խումբ, Զանգեզուրի Աղգային խորհրդի անդամ Գեղեռն Տեր—Մինասյանի գլխավորությամբ: Հատկապես դա բացահայտ երեաց դեպի Ղարաբաղ սկսված արշավանքի պահին: «Ո՞ւր եք գնում, փաշա, — հայտնում էր նա, — տաճիկները հեռանում են. Աինի» թե Զեր ներկայությունը (Ղարաբաղում) խուճապ առաջ բերի և կոտորածի առիթ լինի, որ գոնե այժմ ցանկալի չէ»:<sup>4</sup>

Անկասկած է նաև, որ առանց մայր Հայաստանի բազմակողմանի օգնության, Անդրանիկը շէր կարող տիրել Ղարաբաղին:

1 Նույն արխիվ, թթ. 3—4:

2 «Նոր Հորիզոն», 12 դեկտեմբերի 1918 թ.:

3 ՀՀՊՊԿԱԾ, ֆ.370, գ.1, գ.49, թթ.1—6:

4 Նույն տեղում, գ.32, թ.18:

Դժբախտաբար, Հայաստանի կառավարությունը էական օգնություն ցույց շտվեց կամ չկարողացավ ցույց տալ Անդրանիկին։ Այդ օրերին Երևանից Զորավարին հասցեազրկած հեռագրերում ավելի շատ խոսվում էր «Հմիջամտելու», «զգույշ և շրջահայաց վարպելու», «կոնֆլիկտի մեջ չներքաշվելու» և այլն, քան որևէ օգնություն կազմակերպելու մասին։

Ասվածի վկայությունն է դեներալ Բագրատունու նամակը. ուղարկված Անդրանիկին։ Նամակում, հանրապետության կառավարության անունից, գեներալը անհանգստություն էր հայտնում Ղարաբաղում ստեղծված կացության կապակցությամբ։ Ազրեցանի կառավարությունը աշխատում է Ղարաբաղում կազմակերպել իր կառավարման մարմինները, և նրանց օգնությամբ «խաղաղ» կերպով նվաճել Ղարաբաղի հայաբնակ մասերը, — զրում էր Բագրատունին։ Միաժամանակ, զեներալը Անդրանիկին հայտնում էր իր կարծիքը, որը, անշուշտ, նաև կառավարության տեսակետն էր, այն է՝ «շատ կարեոր է ներկա հանգամանքներում մի կերպ աշխատել, մի կողմից խաղաղությունը պահպանելու համար, որ նոր կողմից չառաջանա, մյուս կողմից թույլ շտալ, որ թուրքերը իրենց վարչություններով մուտք գործեն Ղարաբաղի հայաբնակ շրջանները»<sup>1</sup> Բագրատունին, սակայն, այդպես էլ չէր նշում, թե ինչ միջոցներով կարելի կլիներ խափանել թուրքերի մտագրությունը։ Այդ ամենը նկատի ունենալով, Զորավարը 1918 թ. նոյեմբերի 22-ին գրել է. «Երևանի հայկական հանրապետությունը ոչ միայն ոչ մի օգնություն չէր ուզում հասցներ, այլև փորձում էր խորհուրդ տալ մինչև անգամ զինաթափ լինել և երբեք տեղի շտալ ընդհարումների»<sup>2</sup> Անդրանիկի և նրա զորամասին նկատմամբ հանրապետության կառավարության ոչ այնքան բարյացակամ վերաբերմունքը նաև նրանց միջև եղած սառը հարաբերությունների հետեւնքն էր։ Հրապարակի վրա այնքան շատ են ու ակնհայտ Հայաստանի կառավարության և գեներալ Անդրանիկի միջև եղած ոչ դյուրին հարաբերությունների վկայությունները, որ հարկ չկա նոր նյութերի հրապարակման։ Սակայն կարծում ենք, որ կարելի է այստեղ բերել այն օրերի ան-

1 ՀՀՊՊԿ, ֆ.370, ց.1, գ.49, թթ.1—6։

2 «Նոր Հորիզոն», 12 հոկտեմբերի 1918 թ.։

ցուդարձը ներկայացնող մի փաստաթուղթ ևս: 1918 թ. օգոստոսին Երևանում Խալիլ Փաշայի հետ Հանրապետության ղեկավարության պաշտոնական հանդիպումների ժամանակ խոսք է բացվել նաև Զանգեզուրում Անդրանիկի գտնվելու մասին: Թուրք փաշան նշում է, որ Պոլսում այն կարծիքին են, թե Անդրանիկը հայոց կառավարության ներշնչումով է գործում և մասնավորապես նրա հրահանգով է մտել Զանգեզուր: Հետևում է վարչապետ Քաջազնունու զգուշավոր պատասխանը. «Անդրանիկը պաշտոնական դինվորական հրամանով վտարված է մեր զորաշարքերից: Նա Զանգեզուր է գնացել ու թե մեր երկրից, այլ Նախիջևանից, որը գտնվում է տաճկական տիրապետության տակ: Եթե Անդրանիկի գալն այդքան սխալ մեկնարանությունների տեղիք է տալիս, ապա Հայաստանի կառավարությունը պատրաստ է. մի զորամաս ուղարկել՝ նրան Զանգեզուրից վտարելու համար, ի՞արեկ, եթե Ազրբեջանը սրա դեմ առարկություն չունի»:<sup>1</sup>

Հանրապետության ղեկավարության երկշուտությունն ու անհարկի զգուշավորությունը առիթ են տալիս Խալիլին հոխորակու և իր կամքը թելադրելու Հայաստանի կառավարությանը: Թուրք փաշան Անդրանիկին Զանգեզուրից դուրս հանելու համար առաջարկում է հայերից, ազրբեջանցիներից ու թուրքերից կազմված խառը զորամաս ուղարկել այնտեղ: Հետևում է վարչապետի «մտահոգ» պատասխանը, թե այդ քայլը նպատակահարմար չէ, քանի որ դա սիունդ կտա Անդրանիկի այն քարոզվությանը, թե Հայաստանի կառավարությունը վաճառված է Թուրքիային: Եթե այդպիսի խառը զորամաս ուղարկվի Անդրանիկի դեմ, ապա Զանգեզուրի և Ղարաբաղի հայ երիտասարդությունը կհամախմբվի նրա շուրջը, մինչդեռ, եթե մենակ հայերը դուրս գան Անդրանիկի դեմ, ապա հարցը բոլորովին այլ բնույթ կտանա: <sup>2</sup>

Զանգեզուրում Անդրանիկի ներկայության և նրա գործունեության վերաբերյալ Հանրապետության կառավարության դրսեռած վերաբերմունքը հայ սուստմագրության մեջ տեղիք է տվել տարրեր մեկնարանությունների: Մի շարք ուսումնասիրողներ այդ վերա-

<sup>1</sup> ՀՀՊԳԿԱ, ֆ.276, ց.1, գ.37, թթ.46—48:

<sup>2</sup> Նույն տեղում:

բերմունքը համարել են տվյալ պահից բխող անհրաժեշտություն, որը խնդիր ուներ մոլորության մեջ զցել թշնամուն,<sup>1</sup> ոմանք էլ բացասաբար են գնահատել,<sup>2</sup> իսկ ոմանք էլ ընդհանրապես խուսափել են շոշափել այդ հարցը: Իրականությունն այն է, որ այդ օրերին Հայաստանի ղեկավարությունն ամեն ինչ անում էր թուրքիացին պատերազմի առիթներ շտալու համար, որպեսզի նորաստեղծ հանրապետությունը կայունանալու հնարավորություն ստանար: Ինչ վերաբերում է Անդրանիկի ներկայությանը Զանգեզուրում, իրոք, որ դա լրջորեն անհանգստացնում էր թուրքերին, և նրանք մշտապես սպառնում էին Հայաստանի կառավարությանը և բազմիցս պահանջում նրանից Զորավարին դուրս հանել այնտեղից: Հայաստանի իշխանություններն էլ շարունակարար խոստումներ էին տալիս նուրքերին, թե հնարավոր ամեն ինչ կանեն Անդրանիկին շեզոքացնելու համար: Այստեղ օրինաշափորեն հարց է առաջանում՝ հանրապետության ղեկավարությունը այդ ճանապարհով ցանկացել է արդյուք մոլորության մեջ զցել թուրքերին, ինչպես կարծում են ոմանք,<sup>3</sup> թե իսկապես անզոր է գտնվել կատարելու թուրքերի պահանջը, եթե ենթադրելու լինենք, որ Երևանի կառավարությունը, տվյալ դեպքում նրա վարչապետն իր բացատրություններով ցանկացել է մոլորության մեջ զցել թուրք բարձրաստիճան զինվորականին, իսկ նրա միջոցով էլ թուրքական իշխանություններին, ուրեմն, պետք է քննունենք, որ Անդրանիկի Զանգեզուրում գտնվելը, իրոք, խրախուսվել է Հայաստանի Հանրապետության կողմից: Նույնիսկ, եթե մի պահ ենթադրենք, թե դա այդպես է, ապա պետք է որ, Հայաստանի իշխանությունները հնարավորությունների սահմաններում, ինչ որ ձևով, իրենց բարյացակամ վերաբերմունքն արտահայտեին Անդրանիկի հանդեպ: Յավոք, սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հակառակն է ապացուցում՝ հանրապետության կառավարությունը շթուրացող հետեւղականությամբ ձգտել է իր խոստումներն իրականացնել նաև գործնականում, բարեբախտաբար արդյունքի շասնելով: Զօտավալվելու համար քննության առնենք

1 Տես՝ Միմոնյան, Անդրանիկի ժամանակը, էջ 339—347

2 Ա. Մեացականյան, Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 241—244:

3 Հ. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 347—348:

միայն աղբյուրագիտական առավել անառարկելի տվյալները:  
1918 թ. սկզբում թիրի 19-ին Զանգեզուրի Ազգային խորհրդի անդամ  
Արշակ Շիրինյանն այցելում է Երևան՝ խնդիր ունենալով ռազմա-  
կան օգնություն ստանալ Հայաստանի Հանրապետությունից և հենց  
նույն օրն էլ Հանգիպումներ է ունենում Հանրապետության դեկա-  
վարների հետ: Հանգիպման արդյունքները հուսադրող շէին: Շիրին-  
յանին առանձնապես հիասթափեցրեց վարչապետ Քաջազնունու  
տարօրինակ վերաբերմունքը: Վարչապետը վճռականապես հրա-  
ժարվեց Զանգեզուրին ռազմական օգնություն կազմակերպելու  
խնդրանքից: Ավելին, նա զանգեզուրցիներին խորհուրդ տվեց են-  
թարկվել Աղբյուրանի իշխանությանը:<sup>1</sup> Այս նույն առնչությամբ  
Քաջազնունին անդրադառել է նաև Վրաստանում Հայաստանի  
դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Զամայլյանին հոկտեմբերի  
8-ին գրած նամակում: «... եկել էր այստեղ հատուկ հանձնարարու-  
թյունով Զանգեզուրի Ազգային խորհրդի (այսինքն այնտեղի այս-  
օրվա կառավարության) անդամներից մեկը (խոսքը Ա. Շիրինյանի  
մասին է — Հ. Հ.) ... տեղեկանալ քաղաքական կացության հետ,  
խորհուրդ հարցնել և օգնություն խնդրել: Մենք բացատրեցինք մեր  
գրության փափկությունը և այն, որ ի վիճակի շենք ակտիվ օգնու-  
թյուն անելու: Խորհուրդ տվինք զինված դիմադրություն շանել, եթե  
տաճիկները փորձ անեն զորք մտցնել երկրի մեջ, որովհետև նա-  
խատեսում ենք, որ դիմադրության հետեւանքն անխուսափելիորեն  
լինելու է պարտություն, կոտորած ու փախուստ ազգաբնակչության  
մեր սահմանները, ուր նա սովորամա՞ն է լինում: Մինչեւ մեզ հաջողվի  
լուծել հարցը դիվանագիտական ճանապարհով, Պարաբազն ու Զան-  
գեզուրը պիտի աշխատեն ամեն կերպ խույս տալ սուր կոնֆլիկտ-  
ներից և հարմարվել՝ աշխատելով շահել ժամանակ: Եթե ուրիշ ելք  
շմեաւ, համաձայնի նույնիսկ լոելլայն հաշտվել Աղբյուրանի կառա-  
վարության ներկայությանը ...»:<sup>2</sup> Արտահայտեւով իր կարծիքը  
Զանգեզուրում Անդրանիկի գտնվելու վերաբերյալ, Քաջազնունին  
միանշանակ հայտնում է. «Անդրանիկի մասին մեր կարծիքն այն է,

1 ՀՀՊՊԿ, ֆ.276, ց.1, գ.68, թթ. 3—4:

2 Նույն տեղում:

որ նրա ներկայությունը Զանգեզուրում շարիք է, որ նրան պետք է շեղոքացնել, դուրս հանել երկրից»:<sup>1</sup> Անկախ նրանից, թե Թուրքիայի զեկավար շրջաններն ինչպես պիտի վերաբերվեին Հայաստանի իշխանությունների խոստումներին, այնուհանդեռձ, արված մեջքերումներից շի կարելի չեղքակացնել, որ Թաջազնունին և հանրապետության մյուս զեկավարները խուսափելով թուրքական ներխուժման վտանգից, մտահոգված Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությամբ, իրոք կողմնակից էին Զանգեզուրից Անդրանիկի հեռանալուն: Եվ ճիշտը սա է:

Ինչ վերաբերում է Հայաստանի կառավարության շափազանց պարզավոր քաղաքականությանը Ղարաբաղի խնդրում, ընդհանրապես, այդ մասին ավելի հանգամանալից կխոսվի իր տեղում:

Որ աղբբեջանական մուսավաթականների և նրանց հետ համագործակցող անզիւացիների առաջնակարգ նպատակներից մեկը Արցախի հայության ուժերը ջլատելն էր, այդ կասկածից վեր է: Իսկ մի՞թե զրա արդյունքը չէր Շուշվա քաղաքավլուիս Գերասիմ Մելիք Շահնազարյանի և նրա նմանների աղբբեջանամետ գործունեությունը: Այդ ամենը հաստատող փաստերի մենք գեռ կհանդիպենք, երբ կանդրադառնանք Լեռնային Ղարաբաղում անզիւացիների վարած քաղաքականությանը: Պարտվողական հոգնեանություն ծլարձակել էր նաև բանակում: Դիվակի և Վարանդայի հրամանատարների հանցավոր գործունեության պատճառով այդ շրջանների զորամասերը քայլալվեցին: Նույնը կարելի է ասել մյուս շրջանների մասին: Դրանում համոզվելու համար ծանոթանանք այդ օրերին Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի կողմից Անդրանիկին ուղարկված մի նամակի հետ, որը 1919 թ. փետրվարի 10-ին հրապարակել է «Նոր Հորիզոն» թերթը: «Մինչև այժմ ոչ մի համաձայնություն շի կայացել աեղի հրամանատարների միջև: Նրանցից յուրաքանչյուրը գործում է անջատ, առանց փոխադարձ համաձայնության»:<sup>2</sup>

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը մայր Հայաստանի հետ վերամիավորելու հարցում, որի համար այնպես համառորեն արցախահայությունը պայքարում էր, քավարար հիմքեր չկան արդարացնելու Անդրանիկի անվճռական գործելակերպը:

1 Նույն տեղում:

2 «Նոր Հորիզոն», 10 փետրվարի 1919 թ.

## 2. ՇՈՒԾԻ ԳՈՒՆԴԸ

Թուրք—մուսավաթական զավթիչների դեմ արցախահայության մղած հերոսական պայքարի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում անտեսվել է Հայրենիքից գուրս ապրող զարբացիների մասնակցության հարցը։ Այդ տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Շուշիի, կամ Շուշվա գնդի պատմությունը։

1918 թ. սկզբներին Հայաստանին սպառնացող ներքին և արտաքին վտանգը Թիֆլիսի Հայոց Ազգային Կենտրոնական խորհրդին ստիպեցին միջոցներ ձեռնարկել մի շարք հայկական վայրերում ստեղծել ազգային գնդեր։ Հայաստանի ներքին ճակատների ինքնապաշտպանության համար Կովկասյան ուղղմահակատի ընդհանուր հրամանատարի հրահանգով ստեղծվեցին կոումա գունդը, Նախիջևանի գումարտակը, Շուշվա կամ Շուշիի գունդը և այլն։

Այդ ժամանակ, ինչպես լուսարաննեցինք վերենում, Արցախի դրությունը շափականց օրհասական էր։ Թաթարները, թուրքերի թողտվությամբ ու ակտիվ մասնակցությամբ, Ղարաբաղում անցան կտրուկ գործողությունների։ Թուրքերը ուղղմավարական մի շարք կետերում ամրապնդվելուց հետո, արդեն սպառնում էին Շուշիին։ Քաղաքը, որը ուղղմավարական մեծ նշանակություն ուներ ոչ միայն Ղարաբաղի հայության, այլև ամբողջ հայության ինքնապաշտպանության տեսակետից՝ կարող էր վերջնականացն ընկնել թուրքերի ձեռքը։ Վտանգը կանխելու համար անհրաժեշտ էր ուժեղացնել Շուշիի ինքնապաշտպանությունը։ Այդ նպատակին էլ պետք է ծառայեր նորաստեղծ գունդը։ Տեղին է նշել, որ այդ օրերին Թիֆլիսի Հայոց Ազգային Կենտրոնական խորհրդի անունով Հայաստանի տարրեր շրջաններից՝ Արցախից և Անդրկովկասի հայարնակ այլ վայրերից ստացվում էին բազմաթիվ նամակներ ու հեռազեր, որոնց հեղինակները թախանձագին խնդրում էին արագ կերպով լուծել գնդի զինման ու պարենավորման հարցերը և նրան անհապաղ ուղարկել Ղարաբաղ։ Ուշագրավ է, որ շտապ կերպով գունդը Ղարաբաղ տեղափոխելու տեսակետի վճռական կողմնակից էր նաև այդ օրերին Թիֆլիսում գտնվող բոլշևիկյան նշանավոր գործիչ

Ստ. Շահումյանը: Երբ Ստ. Շահումյանը, Հայոց Ազգային խորհրդի ղինվորական ուժերի վարիչ Խութեն Տիր—Մինասյանի և Զավրիկի հետ մշակում էին գործողությունների պլան, ընդունվեց նաև հատուկ կետ՝ Թիֆլիսում կազմված զարաքաղցիների գունդը: ուղարկել Շուշի, ուժեղացնել Ղարաբաղի պաշտպանությունը:<sup>1</sup> Շուշվագունդը կազմվեց Հայրապետ Մուսայելլանի ակտիվ ջանքերով, որին Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը գործուղել էր Թիֆլիս՝ լրացուցիչ զինական ուժեր բերելու:

Գունդը կազմավորվեց զանազան ճակատներից եկած և Թիֆլիսում հավաքված արցախցի և զանգեզուրցի նախկին ղինվորներից: «Համարյա ամեն օր գնում էինք կայարան և հանդիպում բաղմաթիվ հայրենակից զինվորների, որոնք կազմալուծված ոռոսական զնդերից, առանց հրացանի, զնալու էին զինվորական տեղական պետերին ներկայանալու իրենց ծննդավայրում: Սակայն, ճանապարհ շկար զրանց համար, քանի որ Եվլախ—Բաքու երկաթգիծը փակված էր բրիստոնյաների, մանավանդ հայերի համար: Մնում էր տուն գնացող զինվորները մեր ուղած ճանապարհով գային, մանավանդ, որ մենք խռատանում էինք նրանց կերակրել և զինել: Մեր խոսքին անմիջապես հետևում էր գործը: Շուտով զինվորների թիվը հարյուրների հասավ»,<sup>2</sup> — իր հուշերում գրում է զնդի ակտիվ կազմակերպիչներից Հովակ Ստեփանյանը:<sup>3</sup> 1918 թ. նոյեմբերի վերջին Շուշվագունդը կազմավորվել էր: Նրա կազմում հաշվվում էր 1500 մարդ (անլ աղբյուրներում՝ 400 զինվոր, 15 սպա և 2 բժիշկ):<sup>4</sup> Նրանցից 600-ը ցուցակագրված և պարենավորվող զինվորներ էին, մնացած 900-ը ազատ և կամավոր ուղեկիցներ, որոնք Եվլախի խճուղին փակ լինելու պատճառով ստիպված հետևում էին զնդին:<sup>5</sup>

Մեծ ջանքերի գնով կազմակերպիչներին հաջողվեց ձեռք բերել

1 Բետրեն, Նշվ. աշխ., էջ 142:

2 «Հայրենիք», Խոյեմբեր, 1934, էջ 95:

3 Հովակ Ստեփանյանը նշանակվեց նորակազմ զնդի առաջին գումարակի պետ և սկզբից մինչև վերջ մասնակցեց զնդի երկար ու ձիգ ամիսների զժվարին երթին: Թիֆլիսի Հայոց Ազգային Կենտրոնական խորհուրդը միաժամանակ նրան նշանակեց Ղարաբաղ—Զանդեզուրի ընդհանուր լիազոր: «Հայրենիք», Խոյեմբեր, 1934, էջ 89—91:

4 «Կայձ», 8 զեկունմբերի 1918 թ.:

5 «Հայրենիք», զեկունմբեր, 1934, էջ 83—84:

Տ գնդացիր (80 հազար փամփուշտով), 1300 եռագիծ Հրացան (185—ական փամփուշտով) և 500 բերդան (200—ական փամփուշտով):<sup>1</sup>

Ղարաբաղցիների ցանկությամբ, Կովկասյան բանակի հայկական կորպուսի Հրամանատար, գեներալ Նազարբեկյանի Հրամանով գնդի Հրամանատար հաստատվեց ծննդով արցախցի, գնդապետ Միքայել բեկ Մելիք Շահնազարյանը:

Թիֆլիսի Ղարաբաղի նորաստեղծ Հայքենակցական միությունը գնդի համար հանգանակեց 40000 ոռուլի, իսկ Հայոց Ազգային Կենտրոնական խորհուրդը հատկացրեց մոտ 20000 ոռուլի: Այդ գումարները պետք է ժամանակեին գնդի սպասարկման, զինվորական ոռնիկների, ռազմամթերքի ու պարենի տեղափոխության և ազգային տեղական խորհուրդների կարիքների համար:<sup>2</sup>

Ղարաբաղ մեկնող Շուշիի գնդի գումակը բազկացած էր 100 ձիասալիքից (բոլորն էլ առանց ձիերի), ավելի քան 7000 փութբեռներվ՝<sup>3</sup>

1913 թ. փետրվարի 18-ին գունդը թիֆլիսի երկաթուղային կայարանից ուղերովեց դիալի Ղարաբիլիսաւ (ներկայիս Վանաձոր) և տեղ հասավ Հաջորդ օրը՝ փետրվարի 19-ին:

10 օր հետո գունդը հայտնվեց Դիլիջանում: Գնդի բեռները Դիլիջան փոխադրվեցին Ղարաբիլիսաւի և Դիլիջանի բնակչության փորսադրամիջոցներով: Դիլիջանում նրան միացավ Գանձակի ռումարտակը իր 4 թնդանոթով և մեկ մլն. փամփուշտով:<sup>4</sup>

Քանի որ Գանձակ—Եվլախ գծով երթենկելը մեծ վտանգի հետ էր կապված, ուստի, զեռևս թիֆլիսում եղած ժամանակ, որութել էր, որ գունդը պետք է զնա Արցախ Սկանա լճի ափերով՝ նոր

1 «Կայձ», 8 դեկտեմբերի, 1918 թ.

2 «Հայքենիք», նոյեմբեր, 1934, էջ 94:

3 Նույն տեղում, էջ 92:

4 Գանձակի զումարտակը ստեղծվել է 1918 թ. հունվարի 10-ին թիֆլիսում: Այն համարվել է ճակատական ոտուն գնացող» զանձակցի զինվորներով և թիֆլիսի զանձակցի ուսանողներով: Պումարտակի կազմակերպիչն էր գանձակի բժիշկ Հայկ Մելքոնյանը, որը թիֆլիս էր ենել Մտական Շահումյանին անվտանգ տեղ հացնելու պատճառով: Թուրքնեն, նշվ. աշխարհ, էջ 142, «Հայքենիք», փետրվար, 1935, էջ 89—90:

թայաղետ (այժմ՝ Գավառ), — Բասարգելար (այժմ՝ Վարդենիս) խճուղով, որպեսզի Զոռի լեռնանցքով ուղիղ մաներ Թարթառի հովիտը: Գանձակի գումարտակը, որի կազմում կար մոտ 2000 մարդ, ցանկություն ուներ Դիլիջանից անցնել Գանձակ՝ Զարիսեջ—Ճամբարակ—Բաշքենդ—Գետարեկ գծով: Սակայն վերջին պահին ստացվեց Թիֆլիսի Հայոց Ազգային Կենտրոնական խորհրդի հրահանգը, որով խստիվ արգելվում էր գանձակցիներին այդ ճանապարհով մասնելը, քանի որ գա տեղացի թուրքերի հետ կարող էր կոփների տեղիք տալ: 1500 զինվորներ չեն ենթարկվում այդ պահանջին և Բաշքենդից զիշերով, աննկատ անցնում են Գանձակի շրջան: Դումարտակից 500 մարտիկներ վերադառնում են Դիլիջան և որոշում միանալ Շուշվա գնդին ու նրա հետ միասին անցնել Ղարաբաղ:<sup>1</sup> Դիլիջանից գունդը պիտի շարժվեր դեպի Ելենովկա (Ներկայիս Սևան): Դիլիջանում գնդի սպայական խորհուրդը նպատակահարմար գտավ գնդի ամբողջ զույքը մեկն փոխադրել Բասարգելար կամ Նոր Բայազետ, ուստի մոլականների սայլերով՝ դրա համար վճարելով տեղական իշխանությունների որոշած սակագներով: Սակայն գնդապետը հակառակեց: Նա ձգտում էր փոխադրությունը կատարել անվճար: Եվ գա բավական դժվարացրեց գնդի զորաշարժը: Նման անտեղի հաշվենկատություն ցուցաբերելու դեպքում մեր գնդի ամբողջ ուստամությունն այլ կլիներ,<sup>2</sup> — հետագայում գրել է Հովակ Ստեփանյանը:

Մարտի 4-ին գունդը համանում է Ելենովկա: Մարտի 9-ին գնդի առաջապահ ջոկատներն ուղևորվում են դեպի Նոր Բայազետ: Երթուղին բավականին վտանգավոր էր: Ելենովկա—Նոր Բայազետ խճուղու վրա գտնվող 8 զյուղերից 6-ը թուրքարնակ էին, մեկը՝ Նոր Նիկոլաևկան կամ Զելյնալը (Ներկայիս Զելյովկա) ուստարնակ, իսկ վերջինը՝ Օրդաքուն (Ներկայիս Լաշեն) հայարնակ:

Գանձակի թուրքերը նախապես լավ զինել էին խճուղու թրբությանը և հրահանգել՝ ամեն գնով ձախողել գնդի զորաշարժը դեպի Ղարաբաղ:

1 «Հայութեաիք», գեկտէմբեր, 1934, էջ 86—90:

2 «Կայձա», 8 դեկտեմբերի 1918 թ.:

Մարտի 13-ին Ելենովկա—Նոր Բայազետ ճանապարհի միջնամասում՝ Հաջի Մուխանում (այժմ՝ Սովաղարդ) թուրքերը անսպասելի զինված հարձակում գործեցին զորամասից հետ մնացած միքանի ձիասալլերի վրա: Զինվորները հարկադրված դիմեցին զենքի: Երկու կողմից էլ եղան սպանվածներ ու վիրավորներ: Մարտում 12 զինվոր սպանվեց, իսկ 30-ը զերի ընկան, որոնց թուրքերը գաղանարար սպանեցին: Թուրքերի կորուստները շատ ավելի մեծ էին: Զորամասը հարկադրված նահանջում է Ելենովկա:<sup>1</sup>

Դնդանիութ Միքայել Մելիք Շահնաղարյանը կոչով դիմեց թուրքերին՝ թուլ տալ որպեսզի գունդը անարգել անցնի Նոր Բայազետ: Գանձակի մուսավաթականների թելադրանքով, նրանք կտրականապես մերժեցին: Երկու կողմերի համար զինված ընդհարումը դարձավ անխուսափելի: Երևանից Ելենովկա տեղափոխվեց 2-րդ պարտիզանական գունդը, Ա. Թարվերդյանի հրամանատարությամբ: Դնդին հրամայված էր՝ պատժել հաջիմուխանցիներին և ապահովել նոր Բայազետ խճուղու աղատ ու անվտանգ երթևեկությունը: Նախքան պատժից զորամասի գործի անցնելը, նոր Բայազետի մտավորականությունը փորձեց խաղաղ կերպով վերջ տալ այդ ցավալի ռեպրերին: Մարտի 18-ին նոր Բայազետի քաղաքավությունը Վահան Աֆրիկյանը, կոմիսար Ա. Թաղապյանը և շրջանի դորժակալ Եղինիկ վարդապետը նոր Բայազետից այցելեցին լճափնյա խճուղու վրա ընկած Այրիվան (այժմ՝ Հայրավան), Աղողերիր (այժմ՝ Լճափ), Հաջի Մուխան, Աֆանդի կամ Խալմանքենդ-էֆենդիքենդ (ներկայիս Նորաշեն) և Բեղլու—Հուսեյին կամ Սարաջու (այժմ՝ ավերակ) թուրքարնակ գյուղերը՝ համոզելու ընակշությանը, որ շնանգարեն զնդի առաջնադաշտանը: Հիշյալ զյուղերի բնակիչները, բացառությամբ Հաջի Մուխանի, դատապարտեցին այդ արարքը և պահանջեցին խստորեն պատժել մեղագորներին: Դնդի ճանապարհը զեպի նոր Բայազետ առաջինը անցնելու էր Բեղլու—Հուսեյին թուրքարնակ գյուղով: Մարտի 19-ին Միքայել բեկ Մելիք Շահնաղարյանը իր սպաներից մեկին, Օրգարլու զյուղից երկու հայերի ուղեկցությամբ, ճանապարհոց Բեղլու—Հուսեյին,

1 «Զանգ», 24 մայիսի 1918 թ.

բնակչությանը բացատրելու, որ նրանց գեմ գունդը ոչինչ շունի: Հայերի մեծահոգի վերաբերմունքին թուրքերը զոռողարար պատասխանեցին, որ իրենք ոչ միայն Շուշվա գնդին, այլև ոչ մի թոշունի անգամ թոյլ չեն տա անցնելու իրենց գյուղով: Երբ գունդը բռնեց Նոր Բայազետ տանող ճանապարհը, Բեղլու—Հուսեյնի թրբությունը կրակոցներով զիմավորեց նրան: Զինվորներից մի քանիսը սպանվեցին ու վիրավորվեցին: Կոխվը տեսեց երեք ժամ: Թուրքերը փախուստի զիմեցին: Գերի ընկած կանանց ու երեխաներին՝ թվով 65 հոգի, տեղափոխեցին Օրդարու գյուղը, հաջորդ օրը հարևան թուրքերին հանձնելու համար:<sup>1</sup> Մարտի 20-ի երեկոյան զնդի զինվորները մտան Նոր Նիկոլաևկա և այտեղ զիշերեցին: Մարտի 21-ի վաղ առավոտյան, պատճող զորամասի երկրորդ վաշտը և Շուշվա զնդի մարտիկները համառ մարտերից հետո զրավեցին Ռախմանքինդ—էֆենդիքենդ թուրքարնակ գյուղը: Հազթահարելով ճամփին ընկած մյուս թուրքարնակ գյուղերի զիմադրությունը ևս, մարտի 26-ին Շուշվա զնդի և նրան օգնության եկած երկրորդ պարտիզանական զնդի մարտիկները մտան Նոր Բայազետ:<sup>2</sup>

Կարճատե հանգստից և ուժերը կարգի բերելուց հետո, ապրիլի 5-ին Նոր Բայազետից գունդը ճանապարհ ընկավ դեպի Ներքին Ղարանլուղ (այժմ՝ Մարտունի): Այստեղ հասավ նաև Գանձակի 500 հոգանոց գումարտակը, և մտավ Շուշվա զնդի հրամանատարության տակ:

Ներքին Ղարանլուղում զնդի սպայական կազմի մեծ մասը, զնդապետի զիխավորությամբ, հրաժարվեցին Բասարգելար—Զաղ գծով Ղարաբաղ մտնելու որոշումից:

Բանն այն է, որ Բասարգելարը շրջապատված էր տեղական թուրքական ուժերի կողմից: Գնդի առաջխաղացումը այդ ուղղությամբ անխուսափելիորեն առաջ կրերեր ընդհարում թուրքերի հետ: Մինչդեռ Երևանից հրահանգ էր ստացվել ճանապարհը անցնել միանգամայն խաղաղ, առանց մի զնդակ արձակելու:<sup>3</sup> Գունդը

1 «Հայրենիք», գեկտեմբեր, 1933, էջ 91—92:

2 «Ժողովորդ», 17 մայիսի 1918 թ.:

3 «Հայրենիք», հունվար, 1933, էջ 103—104:

կանգնեց դժվարին դրության առաջ, որը նրա հրամանատարության գանգաղաշարժության և անհեռատեսության արդյունք էր: Հովակ Ստեփանյանը խոստովանել է, որ գունդը նման դրության մեջ շեր գտնվի, եթե «զնդապետը հեռատես լիներ և Ղարաբիլիսայից գույքը տեղափոխեր ոռուների միջոցով: Այն ժամանակ այդ գյուղն էլ չէր պաշարվի, մենք էլ շատ շուտ կհասնեինք Ղարաբաղ և փոխանակ Օրդաքլու—Բայազետ տանող խճուղու թրքական գյուղերում սպառելու մեր եռանդն ու ռազմամթերքը, կմաքրեինք Բայազետ Զիվանշիր գիծը, որը ավելի կարևոր էր»:<sup>1</sup>

Ավելացնենք, որ գունդը շահած կլիներ, եթե Զոդի լեռնանցքով ժամանակին դուրս գար գեղի Զրաբերդ, և որի գեպքում քաղաքական իրադարձություններն այլ կերպ կդասավորվեին: Հետագա իրադարձությունները լիովին հաստատեցին նման կանխազգացումների ճշտությունը:

Լեռնային Ղարաբաղ տանող միակ ճանապարհը մնում էր Սելիմ—Գարալաղյաղ—Միսիան—Գորիս խճուղին: Այս ճանապարհով էլ մայիսի առաջին կեսին սկսվեց գնդի դժվարին ու երկարատև երթը զեպի Արցախ: Մեծ դժվարություններ հաղթահարելով մայիսի 26-ին գունդը հասավ Վայոց Չոր:

Երկելով բուն նյութից՝ հարկ ենք համարում նշել, որ իրականությանը շեն համապատասխանում այն պնդումները, թե իբր Շուշի գունդը մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին:<sup>2</sup> Այդ օրերին գունդը գտնվում էր Վայոց Չորի մատուցներում:

Թազմամթերքը և պարենը մաս—մաս տեղափոխվեց Միսիանի շրջանի հայկական գյուղերը: Հովհանի 20-ին գունդը հասավ Միսիան, իսկ այստեղից՝ երկու շաբաթվա ընթացքում տեղափոխվեց Գորիս: Այդ օրերին էր, որ Զուլֆայում և Նախիջևանում կոիվներ տալուց հետո, Անդրանիկը եկել էր Գորիս: Գորիսում Շուշի գունդը և նրան միացած Գանձակի գումարտակը անցան Անդրանիկի հրամանատարության տակ:

Այսպիսով, փետրվարի վերջերին Շուշիի գունդը գուրս գալով

1 «Հայրենիք», Հունվար, 1935, էջ 103—104:

2 Բ. Ռուբարյան, Նշվ. աշխ., էջ 18:

թիֆլիսից, երկար ու ձիգ ամիսների ընթացքում, մարդկային ու նյութական մեծ կորուստներ տալով, օգոստոսին հասավ Գորիս: Իսկ Արցախում մեծ աշխատանք էր տարվում գնդին կազմ ու պատրաստ ընդունելու համար: Թաղաքածում համոզված էին, որ շուտով գունդը տեղ կհասնի: Սակայն անհանգստացնում էր նրա զինման ու հանդերձավորման խնդիրը: Տեղի դինանոցներում զենք չկար: Թաղաքի բնակչությունը որոշեց կազմակերպել զենքի ու զինմթերքի արտադրությունը: Սակայն, գա բավականին լուրջ դժվարությունների հետ էր կապված. չկար պայթուցիկ նյութ, վառող և անհրաժեշտ այլ նյութերը: Այդուհանդերձ, քաղաքի բնակչությունը 7—8 ամիսների ընթացքում պատրաստեց արհեստանոցներ և ձուլման փոքր արտադրամասեր, որտեղ արտադրեց մի քանի տասնյակ հազար փամփուշտ, ձեռքի նոնակ և զինամթերքի այլ տեսակները:<sup>1</sup>

Թեև Արցախում անհամբեր սպասում էին գնդի ժամանելուն, սակայն, ճանապարհին իզուր ամիսներ կորցրած և այժմ Գորիսում նստած գունդը և նրա հրամանատարությունը չէին շտապում: Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը հարկադրված մի քանի անգամ նամակով դիմեց Զանգեզուրի Կենտրոնական Ազգային խորհրդին ու գնդի հրամանատարությանը և պահանջեց արագացնել զնդի տեղափոխումը Ղարաբաղը: Այսպես, 1918 թ. օգոստոսի 11-ին Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Տեր-Հովհաննիստանը գնդի դիմումը էր. «Տարօրինակ անտարբերությամբ դուք մեր օգոստոսի 2-ի նամակի ու մի կետի շեք պատասխանել: Այս ժանր, տագնապալի դրությունը, որ ապրում ենք մենք, ստիպում է կրկին անգամ դիմել ձեզ: Ղարաբաղի հայ ժողովրդի համար ներկա պահին օդի շափ անհրաժեշտ է գնդի այստեղ տեղափոխելը, մանավանդ և ռազմամթերքի: Մենք կանգնած ենք հավանական, անխուսափելի անակնկալի առաջ: Եթե մինչև ամսի 25-ին ուազմամթերքի պաշար չստանանք, կարելի է վճռականապես և հասնատ ասել, որ մենք կորած ենք»:<sup>2</sup>

1 ՀՀՊՊԿ, ֆ.276, ց.1, գ.16, թ.14:

2 Նույն արխիվ, ֆ.370, ց.1, գ.38, թթ.1—2:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ զնդի հրամանատարությունը չէր շտապում մեկնել Ղարաբաղ։ Փաստերի ուսումնասիրությունից պարզվում է, որ զրա համար կային մի շարք պատճառներ։

ա) Ճանապարհին կրած գմբարությունների հետեանքով դունդր բնկճվել էր հոգեպես։ Տալով մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ, նա կորցրել էր մարտունակությունը։<sup>1</sup> Սպառվել կամ սպառվելու վրա էին զենքի ու զինամթերքի պաշարները։

Այդ է վկայում զնդի հրամանատար Միքայել բեկ Մելիք Շահնազարյանի 1919 թ. մարտի 19-ին հազորդումը, արված Լեոյի նախագահությամբ Թիֆլիսում կայացած Ղարաբաղի հայրենակցական միության նիստում։ «Անցնելով Ղարաբիլիսայից Դիլիջանի վրայով Նոր Բայազետի և Գարալագյաղի գավառները, ապա Միսիան և Զանգեզուր, — նշել է զնդապետը, — զունդը դարձել էր կթի կով հայ ընչասեր գլուղացիների ձեռքին, որոնք հայտնի թե անհայտ ճանապարհներով քաշել ու տարել են նրա ուազմամթերքն ու գուլքը։ Դյուղացիների գիշատիչ հակումներին բնդառաջ են զնացել հայ զինվորները, որոնք տարված բոլցնիկյան հովերով կամ անցել են կողոպտիշների կողմը և կամ լրել զունդը»։<sup>2</sup>

բ) Գնդի հրամանատարության և Անդրանիկի միջև ծագած անհամաձայնությունը։ Ղարաբաղ մտնելու խնդրի առնչությամբ և զինամթերքին տիօրինելու հարցում անհամաձայնությունը զնդի հրամանատարության և Անդրանիկի միջև կայանում էր հետեւյալում։ զնդի սպայական կազմի մեծ մասը, զնդապետ Միքայել Մելիք Շահնազարյանի գլխավորությամբ, կամենում էր զենքի ուժով բացել Անգեղակոթ—Գորիս—Շուշի խճուղին, խուսափելով Զանգեզուրի շրջանի թրբության հետ ընդհարվելուց, թրբություն, որն արդեն զենք էր բարձրացրել գավառի հայության գեմ։ Այդ կապակցությամբ Ղարաբաղի և Զանգեզուրի լիազոր Հովակ Ստեփանյանը 1918 թ. օգոստոսի 12-ին Անդրանիկին հաղորդում է, որ ինքը, տեղի Ազգային խորհուրդը, ինչպես և Շուշվա զնդի հրամանատար զնդապետ Միքայել Մելիք Շահնազարյանը հարկադրված են որոշում կայացնել զենքի ուժով բացել Անգեղակոթ—Գորիս—Շուշի խճուղին, խնդրելով Անդրանիկին մասնակցել այդ գոր-

1 Տես՝ «Մշակ», 22 մարտի 1919 թ.։

2 «Մշակ», 22 մարտի 1919 թ.։

ծողությանը:<sup>1</sup> Բոլորովին հակառակ կարծիքի էր Անդրանիկը: Նա ձգտում էր Զանգեզուրում հաստատել հանգստություն, ամրապնդել թիկունքը, լուծել գաղթականության բնակեցման հարցը, ապա շարժվել դեպի Շուշի: Դնդի սպայական կազմում առանձին մարդիկ պաշտպանում էին Անդրանիկի տեսակետը, ելնելով նրանից, որ միայն դնդի ուժերով (մնացել էին 470 զինվորներ) հնարավոր չէր նեղել խճուղու արգելքը և դուրս գալ Շուշի: Նրանք գտնում էին, որ Զանգեզուրում եղած բոլոր զինական ուժերը պետք է համախմբել Անդրանիկի զորամասի շուրջը, ստեղծել ուժեղ և մարտաւակ զորք, ամրապնդել թիկունքը, ապա շարժվել դեպի Շուշի:

գ) Առանց լրացուցիչ օգնության, գունդը չէր կարող մտնել Ղարաբաղ: Բացի օժանդակ զինուժից, անհրաժեշտ էին նաև փոխադրամիջոցներ՝ զինամթերքը Շուշի հասցնելու համար: Իսկ Ղարաբաղից խստացված օգնությունը ուշանում էր:

1918 թ. օգոստոսի 20-ին գնդապետ Միքայել Մելիք Շահնազարյանը օգնության խնդրանքով զիմեց նաև Անդրանիկին: «Այս պատմական օրերին, — ասել է նա, — բովանդակ Ղարաբաղը իր ամրող ուշադրությունը հառել է մեր երկուսի վրա: Ուրեմն մենք ննք, որ պիտի ճիգ ու ջանք թափենք, լարենք մեր բոլոր ուժերը ընդառաջ գնալու այն ահազանգին, որ հնչում է Ղարաբաղի լեռներից: Իմ թախնձագին խնդրանքն է, գեներալ, անկատար շթողնել այն բոլոր դիմումները, որ արվել են ձեզ»;<sup>2</sup>

Անդրանիկը չէր շտապում բավարարել գնդապետի խնդրանքը: Վերջինս ճարահատյալ փորձեց գունդը համալրել բնակչության մեջ զորակու կատարելով: Նա 1918 թ. սեպտեմբերի 5-ին Զանգեզուրի շրջանում հայտարարեց ռազմական դրություն: Սակայն զորակույթ այս փորձը հաջողություն չունեցավ»;<sup>3</sup>

դ) Զանգեզուրի մի շարք շրջաններում տաճիկների և մուսավաթականների դրդմամբ մուսուլման բնակչությունը ապստամբել էր գավառի իշխանությունների գեմ: Անդրանիկը զրազված էր խոռվությունները ճնշելով, իսկ գնդապետ Միքայել Մելիք Շահնազարյա-

1 Նույն տեղում, գ.35, թ.1:

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.370, գ.1, գ.38, թ.3:

3 Նույն տեղում:

նին հանձնարարված էր մնալ Գորիսում՝ Հաջի Սամլուի թաթարների հարձակումից թիկունքը պաշտպանելու համար։

ե) Գնդապետ Միքայել Մելիք Շահնազարյանը անվճռական, դանդաղաշարժ, ինքնուրույնությունից ու նախաձեռնությունից գուրկ ուսպմական գործիչ էր։ Զինվորականին անհարիր այս հատկանիշներով օժտված գնդապետը հաճախ էր ձեռնպահ մնում վճռական որոշումներ կայացնելուց։

զ) Գնդի հրամանատարության և Ղարաբաղի իշխանությանների միջև կազմ շափականց թույլ էր։ Վերջիններս աղոտ տեղեկություններ ունեին գնդի վիճակի, նրա հիմնախնդիրների մասին։ Հրամանատարությունը ևս հստակ պատկերացում շուներ Ղարաբաղի ներքին ճակատի ինքնապաշտպանության մակարդակի և խնդիրների վերաբերյալ։ Այդ բացը նկատելիորեն լրացվեց, երբ արդեն գունդը վերջնականապես կազմակուծվում էր։

Ղարաբաղի Ազգային խորհուրդը ծանոթանալով Զանգեզուրում կանգնած գնդի գրությանը, որոշեց փոխադրամիջոցներ կազմակերպել (սալեր 200-ից ավելի, չորի—մինչեւ մոտ 200) և 900 մարդկանց պաշտպանությամբ ուղարկել գնդին ընդառաջ։<sup>1</sup> 1918 թ. օգոստոսի 11-ին Ղարաբաղի Ազգային խորհուրդը Զանգեզուրի Ազգային խորհրդին հասցեագրած նամակում տեղյակ պահեց, որ փոխադրամիջոցները կհասնեն Ղարաղլաղ մինչև օգոստոսի 18—20-ը։

Նամակը, որը այդ օրերի ճշմարիտ անցուղարձը ներկայացնող կարեոր վավերագիր է, հարկ ենք համարում մեջքերել ամբողջությամբ, որը կօգնի նոր լույս սփռել Ղարաղլաղ գյուղի կործանման առնչությամբ պատմագիտության մեջ տիրող վիճահարուց կարծիքների վրա։ «Մատավորապես մինչև ամսի 18—20-ը այդ տրանսպորտը կհասնի Ղարաղլաղ։ Այդ գործը մենք հաջողությամբ կկատարենք։ Բայց այդ հաջողությունը մեզանից չի կախված։ Գնդի գալը գաղտնիք չէ տեղական թուրքերի համար։ Զնայած շրջաններից մեզ հասած տեղեկությունների համաձայն թուրքերը նպատակ ունեն հարձակվելու, թե մեր տրանսպորտի և, թե գնդի վրա», — կարդու մենք նամակում։

1 Նույն տեղում, թթ. 1—2։

Հաջորդ պարբերությունն իր մեջ կենտրոնացնում է ամբողջ ասելիքը. և որպեսզի այդ հարձակման ժամանակ մեր գործը չվիճի և առաջին պատասխանատվություն շրնկնի թ' ե ձեզ և թ' ե մեր վրա, խնդրում ենք ձեռնարկել և ամենակարճ ժամկետում իրազործել հետեւյալ միջոցները.

1. Մեզ զրել ներկա սուրհանդակի միջոցով, թե ո՞ր օրը (18—20—21) կարող է մեր տրանսպորտը շարժվել Դարադջալաղից դեպի Գորիս:

2. Կենտրոնացնել տեղում 500—600-ի շափ զինվորական ուժ, գնդացիրներով և թնդանոթներով, որը կարողանա բռնել Զարուղի և Հաբարուի միջև տարածված լեռնաշղթան ու Տեղ զյուղից Զարուղի գետն իջնող սարահարթը, որպեսզի այդ կողմից տրանսպորտի անվտանգ անցնելը ապահովվի:

3. Այդ պայմանները կատարելուց հետո, ինչպիսի ազդանշանով կարող եք և պիտի իմաց տաք, որպեսզի տրանսպորտը կարողանա առաջ շարժվել:

Հաբարու գետի մեր ափի անտառուտ լեռնաշղթան դարադջալցիների աջակցությամբ մենք կաշխատենք բռնել՝ ապահովելու տրանսպորտի անցը այս կողմից և զիմավորել գնդին:

Պետք է զգուշացնենք, որ դեպի Դիզակ (Ջերրայիլ) բավականական ուղարկելը ուղարկելու բացատրվում է նրանով, որ հետո արդեն ուշ կինին և միանգամայն ավելորդ գնդի ու ուղամթերքի տեղափոխությունը:

Այս հանգամանքին խնդրում ենք իրազեկ դարձնեք գնդապետ Մելիք Շահնազարյանին»:<sup>1</sup>

Այդ օրերի իրադարձությունները այլ կերպ է ներկայացնում դեպքերի մասնակից Հովակ Ստեփանյանը: Նա վկայում է, որ Միքայել Մելիք Շահնազարյանն անձամբ է զիմել Դարաբաղի Ազգային խորհրդին՝ փոխադրամիջոց ուղարկելու խնդրանքով: Նա գրում է, որ Շուշիի գնդի գնդապետը հրամանագիր ուղարկեց Շուշի, որ գավառներից մոտ 200 սայլ բերեն Գորիս, որպեսզի տեղափոխին ուղամթերքը: «Ես,— նշում է Հովակ Ստեփանյանը,— առանձին

Նամակով պարտք համարեցի մերկացնելու իրողությունը և շեշտելու, որ այդ սալլերն առանց խոշոր սազմական ուժերի չպիտի ճանապարհվեն Շուշիից և ամբողջ խճուղու տարածության վրա բոլոր իշխող դիրքերը պետք է գրավվեն սկզբից և պահպանվեն մինչև այդ գործողությունը վերջանալը, որ կարող է տևել 10—14 օր»:<sup>1</sup>

Այս վկայությունը կեղծիք է և իրականության հետ ոչ մի կապ չունի: Վերը, ինչպես տեսանք, փոխադրամիջոցներ ուղարկելու գողափարը ոչ թե գնդապետինն էր, այլ Ղարաբաղի Ազգային խորհրդինը:

Ի դեպ, գնդապետ Միքայել Մելիք Շահնազարյանի գործունեությանը (կապված Շուշվա գնդի հետ) վերաբերող և իրականությանը համապատասխանող տվյալների կարելի է շատ հանդիպելու հերենք դրանցից մեկը ևս. դիմենք դարձյալ Հով. Ստեփանյանին: «Ես և մի քանի սպաներ, — գրում է նա, — պնդում ենք, որ մենք նախկին ուժը շունենք, չենք կարող հանել կարավաններ ու զինվորական ուժեր ո՛չ Զանգեզուրից և ո՛չ էլ Ղարաբաղից, ավելի լավ է մեր ձեռքի տակ եղած ուժերը և սազմամթերքը միացնենք Անդրանիկի հարվածող զորամասին և կազմենք մի ուժեղ բռուցք և հարկ եղած դեպքում հարվածենք թշնամուն խոցելի կերպով»:<sup>2</sup>

Տարօրինակ է: Զէ որ մեզ արդեն հայտնի մեկ այլ գրության մեջ, անձամբ Հով. Ստեփանյանն էր Զանգեզուրի Ազգային խորհրդի, իր և գնդապետի անունից Անդրանիկին հայտնում, որ վճռել են զենքի ուժով բացել Անգեղակոթ—Գորիս—Շուշի խճուղին, խնդրելով նրա աջակցությունը: Դժվար չէ նկատել, որ նամակի բռվանդակությունը լիովին համապատասխանում էր այդ հարցում գնդապետի տեսակետին:

Բայց լրիվ համոզվելու համար, որ գունդը Շուշի տեղափոխելու հարցում Հով. Ստեփանյանը լիովին համակարծիք էր Միքայել Մելիք Շահնազարյանի հետ, ծանոթանանք այդ օրերին (26 օգոստոսի 1918 թ.) Անդրանիկին հասցեագրված մեկ այլ գրության հետ, որի տակ ստորագրել են Զանգեզուրի Ազգային խորհրդի նախագահ Մ. Պարոնյանը, գնդապետ Մելիք Շահնազարյանը և Ղա-

1 «Հայրենիք», մարտ, 1935, էջ 80—81:

2 նույն տեղում, էջ 80—82:

բարաղ—Զանգեզուրի լիազոր Հով. Ստեփանյանը, որտեղ գեներալին խնդրում էին օգնություն առանձնացնել Շուշի անցկացնելու համար։<sup>1</sup> Տարիներ անց պատմական իրողությունները կեղծելու Հով. Ստեփանյանի վարմունքը, մեղմ ասած, անազնվություն է և զինվորական երդմնադանցություն։

Հասկանալի է, որ իրականությունը զլխիվայր շուրջ տալու նպատակը զնդապետին վարկարեկելու միտումն էր։ Ըստ երեսութին, Հով. Ստեփանյանը իրեն պատմության և ժողովրդի առաջ արդարացնելու համար է, որը, օգտվելով զնդապետ Միքայել Մելիք Շահնդարյանի զինվորական կարողությունների վերաբերյալ ժամանակակիցների թեր ու գեմ զնանատականներից, չանք ու եռանդ չի խնայել զնդի անհաջողությունների ամրող մեղքը բարդելու նրա վրա։

Ինչեւ։ 1918 թ. օգոստոսի 24-ին Ղարաբաղի Ազգային խորհրդի դրությանը զնդապետ Միքայել Մելիքը Շահնազարյանը պատասխանում է, որ ինքը պատրաստ է ընդունել ուղարկրվելիք փոխադրամիջոցները, զնդի զենքն ու հանդերձանքը Շուշի տեղափոխելու համար։

250 սալլերից բաղկացած զումակը<sup>2</sup> (այլ աղբյուրներում 200 սալլ)<sup>3</sup> և 200 բեռնակիր ձիեր ու զորիներ,<sup>4</sup> 300<sup>5</sup> (այլ աղբյուրներում 200<sup>6</sup> և 120<sup>7</sup>) զինված մարդկանց ուղեկցությամբ Շուշից շարժվեց զեպի Գորիս։ Մեծ դժվարությամբ նրանք հասան Զանգեզուրի շրջանի Ղարազշլաղ հայարնակ գյուղը։ Թաթարները արգելեցին զումակին անցնել Զարուղի կամբջով։<sup>8</sup> Ղարազշլաղից սուրճանդակ ուղարկվեց Գորիս այդ մասին զնդապետին հաղորդելու համար։ Վերջինիս հասցեագրված նամակում բացատրվում էր զումակի առաջիւաղացման դժվարություններն ու վտանգավորությունը և

1 ՀՀՊՊԿ, ֆ.370, գ.1, զ.35, թթ. 2—3։

2 Նույն արխիվ, ֆ.276, գ.1, զ.16, թ.14։

3 Նույն արխիվ, ֆ.200, գ.1, զ.309, թ.125։

4 Նույն արխիվ, ֆ.276, գ.1, զ.78, թ.278։

5 Նույն տեղում, զ.16, թ.18։

6 Նույն տեղում, թթ. 14—15։

7 Նույն արխիվ, ֆ.200, գ.1, զ.309, թ.125։

8 Նույն արխիվ, ֆ.276, գ.1, զ.16, թթ. 14—15։

զնդապետին խորհուրդ էր տրվում անհապաղ գունդը շարժել գեպի Ղարաղջլաղ: Պատասխան նամակով Մ. Մելիք Շահնազարյանը հայտնում էր, որ ինքը մինչև սեպտեմբերի 1-ը չի կարող սկսել զորաշարժը, քանի որ Զանգեզուրում թաթարները կազմակերպել էին զինված խոռվություն: Միաժամանակ խոստանում էր սեպտեմբերի 1-ից Հետո լրացուցիլ տեղեկություններ ուղարկել: Սակայն, գեպերը այլ ընթացք ունեցան: Հետդարձի ճանապարհին, դարանակալած թուրքերը ձերբակալեցին սուրհանդակին և նրա մոտ հայտնարեցին նամակը: Սեպտեմբերի 1-ին զնդապետը նոր ցուցումներ շավեց: Այդ կարճ ժամանակամիջոցում թուրքերը մեծ ուժեր են կենարոնացրել Ղարաղջլաղի ուղղությամբ:

Մի քանի խոսք Ղարաղջլաղ գյուղի մասին: Ղարաղջլաղ գյուղը, որի համայնքի մեջ մտնում էին 6—7 գյուղեր, պատկանում էր Զանգեզուրի գավառին և սահմանակից էր Շուշի քաղաքին: Իր գիրքով և զինական ուժով Ղարաղջլաղը ուղմավարական կարևոր նշանակություն ուներ Ղարաբաղի համար. այնտեղով էր անցնում Շուշի—Թիուզուր—Ղարաղջլաղ—Ազգալլար (ներկայիս Լաշին) — Ղարուղ—Գորիս ճանապարհը, Քաջ գիտակցելով Ղարաղջլաղի ուղմավարական նշանակությունը Ղարաբաղի համար, թուրք հրամանատարությունն աշխատում էր ամեն կերպ իր ձեռքը զցել այն: Ղարաբաղը Զանգեզուրի հետ կապող այդ գյուղի կարևոր նշանակությունը շատ լավ էին հասկանում նաև Ղարաբաղի և Զանգեզուրի զեկավար մարմինները: Սակայն, նրանք անկարող գտնվեցին ժամանակին միջոցներ ձեռնարկել և կանխել նրա աղետը:

Վերադառնանք դեպքերի ընթացքին: Թուրքական շուրջ շորս հազարանոց բանակը Կարյագինո գավառի թուրքական մասով անցնում է Շուշվա թիկունքը և Ղարաղջլաղում փակում գումակի ճանապարհը: Տեղի են ունենում անհավասար մարտեր: Թշնամին այրում է սայլերը և զգալի կորուստներ պատճառում դրանք ուղեկցող գումարտակին: Տաճկա—թաթարական ուժերը շրջապատեցին Ղարաղջլաղը և սեպտեմբերի 4-ին սկսեցին հրետակոծել այն: Բնակչությունը գիմեց ինքնապաշտպանության, որի կազմակերպիչներն էին Մանուչարը, Սարգսիսը և Զահանդիրը: Գյուղի երեք

թաղամասերը երեք օր շարունակ հերոսարար պաշտպանվեցին թուրքերի հարձակումներից: Ոչ մի տեղից օգնություն չտանալով, զյուղի պաշտպանները և բնակչությունը զգալի կորուստների գնով ճեղքեցին պաշարողական շղթան և դուրս եկան շրջափակումից, իրենց հետ տանելով կանանց և երեխանների մեծ մասին: Նրանց հաջողվեց հասնել Շուշի: Փախստականները տեղավորվեցին Խաչենի, Վարանդայի, Դիզակի շրջաններում ու Շուշի քաղաքում: Մնացածներին, որոնք թաքնվել էին մարագներում, խոտի գեղերում և այլուր, թուրքերը գտան և կոտորեցին:<sup>1</sup> Ղարաղլաղի թեժ մարտերի պահին, Զանգեզուրի շրջանի Տեղ զյուղի հարթությունից գնդապետ Միքայել Մելիք Շահնազարյանը ոմբածիդ թնդանոթներով փորձում էր ոմբակոծել Զարուղի և Մարքեզի դիրքերը, մինչդեռ կրակի հեռաձգությունը հազիվ 200—300 քայլ էր: Գնդապետին և Զանգեզուրի Ազգային խորհրդի անդամ Նիկ Օսիպովին շհաջողվեց իրենց վաշտերով միանալ Ղարաբաղի և Ղարաղլաղի կովող ուժերին և հարկադրված ետ նահանջեցին Գորիս:<sup>2</sup>

Ղարաղլաղի կորուստը մեծ էր: Նրա կործանումով Ղարաբաղի և Զանգեզուրի միջև կապը կտրվեց: Շուշի քաղաքում պահեստավորված ամբողջ զինամթերքը ծախսվեց այդ մարտերում: Քաղաքը մնաց առանց զինամթերքի:

Ղարաղլաղի անձնատուր լինելուց հետո, Վարանդայի յոթ գյուղ ևս ավերվեց թուրքերի կողմից:<sup>3</sup>

Ամփոփելով նշենք, որ Ղարաղլաղի անկումով թուրք նվաճողները, մուսավաթական կանոնավոր զորքերի ամենագործուն աջակցությամբ, շրջապատեցին Լեռնային Ղարաբաղը բոլոր կողմերից: Վերջացավ դրսից օգնություն ստանալու հույսը, և Ղարաբաղը մեն—մենակ մնաց թուրք մուսավաթական հրոսակների դեմ:

Այստեղ, կարծում ենք, անհրաժեշտ է կանգ առնել նաև Ղարաղլաղի կործանման պատճառների վրա: Արխիվներում ու այլ հրապարակումներում պահպանվել են մեծ թվով փաստաթղթեր, որոնցում խօսք է գնում Ղարաղլաղի պարտության պատճառների

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.276, ց.1, գ.16, թ.18, գ.78, թթ. 274—275, «Հառաջ», 20 փետրվարի 1919 թ.

2 «Հայրենիք», ապրիլ, 1935, էջ 102—103:

3 ՀՀՊՊԿԱ, ֆ.370, ց.1, գ.38, թթ.11—12:

մասին։ Հենց սկզբից ասենք, որ այդ վավերագրերը լի են երկու մանի մեղադրանք հարոցող փաստերով ու վկայություններ։ Մարտավարության անհաջողության հիմնական մեղավոր գերամանատարությունը համարում է Հարաբաղի կառավարությանը և Ազգային խորհրդին, որ իրը նրանք ժամանակին անհամեշտ քանակությամբ սայլեր ու զինվորներ չեն ուղարկել։<sup>1</sup> Սկզբնադրյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ մեղադրանքը անհիմն է։ Ահա թե ինչ է գրում Անդրանիկը. «Համաձայն տրված հրահանդի հարկավոր քանակությամբ սայլեր զինվորներ ուղարկված էին արդեն Զարուղի և Հաքարլուի ձորեր մյուս կողմը գտնվող Դարադշլաղ գյուղը»։<sup>2</sup>

Այն, ինչ արեցին Դարաբաղի իշխանությունները գնդին օգնելու հարցում, մեր կարծիքով, եղած հնարավորությունների առավելագույնն էր։ Բանն այն է, որ այդ օրերին Արցախը ծանր դրությամեջ էր, ինչպես 1918 թ. մայիսի 19-ին նշում էր նրա Ազգայի խորհրդի նախագահ՝ Եղիշե Իշխանյանը. «Դարաբաղի հայություն ամեն կողմից շրջապատված է Աղրբեջանի բանակներով, հազարավոր զինվորներ փակել են Զարուղի ձորը և մեզ կտրել Զանգվարից։ Ամեն օր զենքեր ու զինամթերք են տեղափոխում տարբեր ուղղություններով, իսկ մենք չունենք։ Ոչ մի կողմից հնարավոր չօգնություն ստանալ, իսկ եթե հնարավորություն կար ստանալու Զանգեզուրի հայությունը թալանեց Շուշիի համար եղած մթերքները»։<sup>3</sup>

Պատմական իրողությունն այն է, որ Զանգեզուրի շրջանը բնակությունը անտարբեր վերաբերմունք ունեցավ Դարադշլաղ իրադարձություններին, իսկ դնդի ապաշնորհ հրամանատարությունը ցուցարերեց խիստ անվճականություն։ «Որոշված օրը ձորի երկու կողմերում էլ գործողություններ ձեռնարկելով փորձում են ճանապարհ բացել, սակայն Գորիսի շրջանի տեղական ժողովրդի շկամության, օգնություն ցույց շտալու և Շուշիի համար եղած մթերք»։<sup>4</sup>

1 «Հայրենիք», մարտ, 1934, էջ 126—127։

2 «Նոր Հորիզոն», 18 դեկտեմբերի 1918 թ.։

3 ՀՀՊՊԿԱ, ֆ.276, գ.1, գ.42, թթ. 68—69։

թեթև վերաբերմունքի հետևանքով զարադշլաղցիք մնում են մենակ, թուրքերը համարձակություն՝ տուանալով քանզում ու այրում են գյուղը,<sup>1</sup> — զրուժ էր այդ օրերին Գորիսում գտնվող Անդրանիկը:

Շարունակենք հարցի լուսաբանությունը: Դարադշլաղի անկումից հետո գնդի դինուրները վերադարձան Գորիս: Նրանք համարեցին Անդրանիկի Հարվածող Զորամասի շարքերը, որպեսզի նրա հետ միասին անցնեն Դարաբաղ: Սակայն, ինչպես արդեն գիտենք, ճանապարհի կեսին գեներալը դադարեցրեց զորաշարժը դեպի Շուշի: 1919 թ. դեկտեմբերի 13-ին Շուշվա գնդի և Գանձակի գումարտակի զինվորները, թվով 450 մարդ մտան Դարաբաղ: Նրանցից 200-ը ուղևորվեցին Շուշի, իսկ մնացած 250-ը, որոնք Վարանդայից ու Գիզակից էին, շրջանցելով Շուշին, Քարին Տակ գյուղի ճանապարհով իջան դիպի իրենց գյուղերը:<sup>2</sup>

Այսպիսով, արցախցիների հույսի աստղերից մեկը ևս մարեց, առանց որևէ հետազիծ թողնելու:

1 «Նոր Հորիզոն», 18 դեկտեմբերի 1918 թ.:  
2 «Հայրենիք», մայիս, 1935, էջ 129—130:

## ԳԼՈՒԽ ՀՈՐԾՈՐԴ

### ԱՆԳԼԻԱՅԻ ԴԻՐՔՈՌՈՇՈՒՄԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

#### 1. Ղարաբաղը բրիտանական քաղաքականության ոլորտում

Առաջին աշխարհամարտում գերմանական խմբավորումը, որի կազմում էր նաև Թուրքիան, պարտվեց: 1918 թ. հոկտեմբերի 30-ին վերջինս ստորագրեց Մուղրուսի զինադադարի պայմանները, ըստ որի թուրքական զորքերը պետք է հեռանային Անդրկովկասից: Մուղրուսի զինադադարից հետո Թուրքիան զորքերը հետ քաշեց ողջ Անդրկովկասից, մաքրեց նաև Ղարաբաղը: Անդրկովկասում թուրք—գերմանական նվաճողներին հաջորդեցին անգլիական գաղութարարները: 1918 թ. նոյեմբերի 17-ին անգլիական զորքերը գեներալ Թոմմսոնի գլխավորությամբ իրանից մտան Բաքու:<sup>1</sup> Նրանք Անդրկովկաս մտան դաշնակից երկրներիի զրոշի տակ: Թոմմսոնի շտարում կային Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչներ:

Ազրբեջանի մայրաքաղաք մտնելու առաջին օրը, իրեն Բաքվի գեներալ նահանգապետ Հոչակած Ռոմսոնը Անգլիայի և դաշնակից մյուս երկրների անունից զիմեց քաղաքի բնակչությանը և փորձեց հիմնավորել Անդրկովկասում իրենց հայտնիքի անհրաժեշտությունը: «Հայտնում եմ ձեզ, որպես անգլո—ֆրանս—ամերիկյան զորքերի հրամանատար, որ մանք այստեղ ենք եկել, որպեսզի համաձայն Թուրքիայի հետ կնքած պայմանների, փոխարինենք տաճկական զորքերին, որոնք պաշտպանում են այս տերիտորիան: Մենք ոչ մի մտադրություն չունենք ո՛չ այժմ, ո՛չ էլ ապագայում խառնվելու ձեր ներքին զործերին»,<sup>2</sup> — հորդորում է գեներալ Թոմմսոնը:

Անգլիացի զեներալի խոսքերի հանդեսի իր ժողովրդի մեջ հավատ ներշնչելու մտայնությամբ, Ազրբեջանի կառավարության ղեկավար Խան Խոյսկին կոչով զիմեց նրան, ասելով, որ դաշնակից

1 Անգլիացիներն առաջին անգամ մտան Բաքու 1918 թ. ամռանը, բայց չհաստավեցին այստեղ:

2 «Զանգ», 8 դեկտեմբերի 1918 թ.:

զորքերի ժամանումը թշնամական դործողություն չէ, որպիսին կարող էր խանգարել Ազրբեջանի անկախությանը և տերիտորիալ անձեռնմխելիությանը: Եվ սրան էլ հետեւում է հորդորանքը՝ «Կառավարությունը դիմում է բոլոր քաղաքացիներին՝ պահպանել հագստություն և կարգը նույնպես ու բարեկամարար դիմավորել գաշնակից զորքին»:<sup>1</sup>

Իրականում, Անդրկովկասին բրիտանական զավթիչները նայում էին միայն երկրամասն իրենց իմպերիալիստական շահերին և նթարկելու տեսանկյունից: Այդ կապակցությամբ հետաքրքրական է 1918 թ. դեկտեմբերի 8-ի համարում «Ժիջն նացիոնալնոստեյ» թերթում զետեղված մի հրապարակում: Այնտեղ ասված է, «Ինչպիսի շափերի կհասնի Կովկասի գրավումն անզիացիների կողմից, առայժմ հայտնի չէ, բայց ըստ երևույթին, անզիացիները ևս, թուրքերի նման, լայն պլաններ ունեն»:<sup>2</sup>

Անդրկովկասում անզիական զորքերի հրամանատար գեներալ Թոմասոնի 1918 թ. դեկտեմբերի 6-ին իր կառավարությանը հղած դեկուցագրից տեղեկանում ենք, որ անզիական զորքերի առջև խնդիր էր դրված ոչ միայն նվաճել ողջ Անդրկովկասը, Գաղստանի հետ միասին, այլև վերահսկողություն սահմանել երկրամասի ամբողջ տնտեսական ու քաղաքական կյանքի վրա,<sup>3</sup> քանի որ Անդրկովկասը կարեոր նշանակություն ուներ բրիտանական կայորության շահերի և, մասնավորապես Հնդկաստանի համար:<sup>4</sup>

Գաղտնիք չէ, որ Անդրկովկասում անզիական գաղութարարներն իրենց զավթողական պլանների իրականացման գործում մուսավաթական Ազրբեջանին մեծ զեր էին հատկացնում: Բրիտանական նվաճողների այդպիսի գիրքորոշումը, ինքնին հասկանալի է. նրանց նպատակն էր մուսուլմանական Ազրբեջանին, որը տարածաշրջանում աշքի էր ընկնում իր ընդդժված հակառական և հակարուշնիկյան կեցվածքով, դարձնել բոլշևիզմի դեմ պայքարի ամուր հենարան, տիրանալ Բաքվի նազիքին, ապա ձեռնամուխ

1 «Աշխատավոր», 22 նոյեմբերի 1918:.

2 «Жизнь национальностей», 8 декабря 1918 г.

3 Գ. Գալոյան, Պատմության քառորդիներում: Երև., 1982 էջ 252:

4 ЦГАОР СССР, ф. 446, оп. 2, д. 113, л. 69.

լինել ազգեցության ոլորտների տարածմանը ամբողջ Անդրկովկան հետագայում նաև՝ Մերձավոր և Միջին Արևելքի վրա:

Ինչ վերաբերում է Հայաստանի խնդրին, ապա Հարավարձանի մուսատանի և Անդրկովկասի մասին 1919 թ. նոյեմբեր—դեկտեմբեր ամիսներին կազմված մի տեսության մեջ ուղղակի գործադրություն է, որի դեմս անկախ Հայաստանի անզիփացիները անում են ուստական ֆորապոստը (առաջավոր ամրակետը), որը նապարհ է բացում գեպի Միջերկրական ծովի ափերը, և պատճառով ամեն կերպ խանդարում են նրա զարգացմանն ժաղկմանը:<sup>1</sup> Հայաստանի այդ գերը լավ են հասկացել նաև ուրիշները: Անդրադառնալով Հայաստանի աշխարհագրական դիրքի ուղղմամբարական առանձնահատուկ նշանակությանը, մոռհրա նշում էր, որ երբեք չպետք է թույլ տալ, որ այն ընկնի մուսատան ազգեցության տակ: Չի կարելի պատեհերացնել ուրիշ որևէ դիրքուն ավելի աճեղ լինի ողջ Արևմտյան Ասիայի նկատմամբ, քանի Հայաստանի, Անդրկովկասի և Հյուսիսային Պարսկաստանի մի վորումը մուսատանի ձեռքում:<sup>2</sup> Գերմանիան երբեք չի հաջա նման վիճակի հետ, քանի որ Հայաստանի վրայով թուրքական ահմանից ուստական գործերի անցումը վտանգի տակ կդնի եվ պական խաղաղությունը, գրաւմ էր մոռհրախար:<sup>3</sup>

Անզիփացիների զինված ներխուժումը Անդրկովկաս պսակի հաջողությամբ: Կարճ ժամանակամիջոցում նրանց զորքերը (թվությունը՝ 30000) նվաճեցին գրեթե ամբողջ Անդրկովկասը: Այս բոլոր բավարար հիմք են եզրակացնելու, թե ինչու անզիփացիներն ուղեկի թե շուղեին, պետք է ամեն ինչ անենին, որպեսզի Ազրբեջանի համալուծեին այն նույն խնդիրները, ինչը որ չկարողացան անրանց նախորդած թուրքերը: Ի դեպ, մուսավաթ կառավարությունն իր հերթին էր ցանկանում բրիտանական գաղութային զենք օգտագործել Արցախն ու Զանզեզուրը նվաճելու համար:

1 Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане. Баку, 1957, с. 51.

2 Տես՝ Պ. Робրաք. Война и германская политика. М., 1925, с. 63. Նաև՝ Հ. Միմոնյան. Թուրք-Հայկական հարաբերությունների պատճենները, 226:

3 Նույն տեղում:

Եռշիրից թուրքական զորքերի հեռանալուց հետո, 1918 թ. նոյեմբերին սկզբին քաղաք մտավ անգլիական մի պատվիրակություն, մայոր Դիվոնի գլխավորությամբ։ Ներկայացուցության պազմում կար 5 սպա։ Եռշվաքաղաքում Գերասիմ Մելիք Շահնազարյանի և Արցախի զորամիավորումների ընդհանուր հրամանատար Սոկրատ բեկ Մելիք Շահնազարյանի գլխավորությամբ քաղաքի հայությունը մեծ ոգևորությամբ զիմավորեց «ազատարարներին»<sup>1</sup>։ Մայորն իր հրամանատարության անունից տեղեկացրեց, որ ներկա ներկայացուցությունը ուղարկված է գեներալ Թոմսոնի կողմից, որ դաշնակից զորքերի հրամանատարն է Բաքվում, ապահովելու օրենքն ու կարգը Եռշիրի շրջանում, մինչև այն ժամանակ, երբ ամեն որ այս շրջանում գարնանը հնարավորություն կունենա վերադառնալ իր տունը և խաղաղ զբաղմունքներին։ Ապա հայտարարեց, որ քաղաքական և տարածքային խնդիրները ներկայացուցությանը չեն վերաբերում և պիտի լուծվեն խաղարարար կոնֆերանսում։<sup>2</sup>

Անգլիական ներկայացուցության Ղարաբաղ գալուց հետո ափազանց թուրքական ինքնապաշտպանության գործը՝ Արցախի գինված կազմավորումների մեծ մասը կամովին ցրվեց։ Դա բացարձրվում է նրանով, որ թուրքերի Ղարաբաղ մտնելուց հետո գավառի զորահրամանատարները կարողացել էին իրենց հետեւ տանել ժողովրդական լայն գանգվածներին, քանզի մարդիկ հոգերանական այնպիսի վիճակ էին ապրում, որ զգում էին ղեկավարի կարիք, ով էլ լիներ նաև Անգլիացիների ժամանումով այդպիսի վիճակը վերացվէ։ Ժողովրդի հռանդը մհծապես ընկավ, նա իր հույսը զրեց ներկայացուցության վրա։ «Անգլիական ներկայացուցության այստեղ ժամանելուց հետո մեր ամբողջ հույսը դնելով նրա վրա, դիմել ենք խաղաղ կյանքի, հաստատ հավատացած լինելով, որ մեր կյանքի դեմ ոչ մի դավ չի նյութվելու», — զրել է Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի նախագահը Բաքվի Հայոց Ազգային խորհրդին 1919 թ. Հցնվարի 15-ին։ Միաժամանակ, նամակի վերջում երկյուղ էր հայտնվում, որ այդպես վարվելով շարաշառ պիտի պատժվինք ու

1 ՀՀՊՊԿ, թ.200, ց.1, գ.309, թ.204։

2 «Եշակ», 2 մարտի 1919 թ.։

## Հիմնահատակ կործանվենք:<sup>1</sup>

Այս առնշությամբ հարկ է պատասխանել այն հարցին, թե կարո՞ղ էր արդյոք արցախահայությունը պայքարել և թույլ շտալ բրիտանացիներին մտնելու Շուշի: Եթե հնարավոր էր, ինչու՞ շարվեց: Ուղակի պատասխանենք՝ այս, կարող էր: Հարցին առնշվող փաստաթղթերը ցույց են տալիս, որ արցախահայությունը ուներ բավարար հնարավորություններ անզիհական գաղութարարների դեմ պայքարելու համար, սակայն չպայքարեց: Չպայքարեց, որովհետեւ թուրք ասկյարների և մուսավաթական կանոնավոր զորքերի ու թաթարական զինված բանդաների դեմ երկարատև պատերազմից արցախի հայությունը հոգնել ու արյունաբամ էր եղել: Նա փափառում էր խաղաղության: Գերմանա—թուրքական խմբավորման հանդեպ դաշնակիցների հաղթանակը մեծ ոգևորություն էր առաջ բերել Դարաբազում, մանավանդ դաշնակից երկրները (առաջին հերթին Անզիհան) պատրաստակամություն հայտնեցին Փարիզի խաղաղաբար կոնֆերանսում պաշտպան կանգնել Արցախի հարցի արդարացի լուծմանը: Այսքանից հետո «Հայ ժողովրդի բարեկամ» անզիհացիների մուտքը Դարաբազ չէր կարող դժկամությամբ ընդունվել նրա հայ ազգարնակշության կողմից:

Իհարկե, կեռնային Դարաբազի հայության ոչ բոլոր խավերն էին, որ անվերապահորեն հավատացին անզիհացիների շռայլ խոստումներին: Ցավոք, բնակչության անհնազանդ մասն էլ անզիհացիներին հավատարմության «երդում» տվեց՝ մի կողմից, դիմադրելու համար բավարար ուժ չունենալու, մյուս կողմից՝ Փարիզի. վեհաժնողովում Արցախի հարցը շվատանգելու պատճառով: Չէ որ դաշնակից երկրների Վեհաժնողովն ի լուր աշխարհի ազգարարել էր, որ «ուժով ձեռք բերված որևէ բան ամենալուրջ կերպով կվնասի այդ միջոցներին դիմողների սեփական շահերին և կմատնի իրենց ունեցած կասկածը՝ այդ պահանջի և նպատակի արդարացի ու օրինաշափ լինելու մասին, ակնհայտ դարձնելով այդ պահանջի բռնի ուժով արդարացնելու իրենց միտումը»:<sup>2</sup>

1 ՀՀՊԿ, ֆ.223, ց.1, գ.74, թ.45:

2 «Աշխատավոր», 19 մարտի 1919 թ.:

Ավելի զգուշավոր ու երկշուր գործեց նաև Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որին դաշնակիցների բարձրագույն հրամանատարությունը խաղաղության կոնֆերանսի անոնից զգուշացրել էր, որ «վիճելի տարածքին ուժի միջոցով տիրանալը լուրջ վնասներ կառաջացնի նախահարձակվողի պահանջներին». բոլորը պետք է սպասեն խաղաղության կոնֆերանսի վճռին»:<sup>1</sup>

Անդրկովկասում բրիտանացիների հաստատվելուց հետո Զարարաղի հարցը մտավ նոր փուլ: Դաշնակիցների հաղթանակի շնորհիվ Զարարաղը մի պահ ազատ շունչ քաշեց: Հաղթել էին դաշնակիցները, հաղթել էր, ուրեմն, և ինքը՝ մեծ դաշնակիցների փոքր, բայց խիզախ դաշնակիցը: Վառ երազներով ու ապագայի լավագույն հուլսերով խանդավառված այդ մի «բուռ» ժողովուրդը, երբ «հաղթանակի» տոնն էր տոնում, նրա թիկունքում սկսեցին կազմակերպվել նենդ ու խարդախ դավեր: Մուսավաթական Ազրբեջանը անզիյական ուազմական ներկայացուցչության գիտությամբ ու ակտիվ մասնակցությամբ ձգտում էր անել այն, ինչը նրան շհաջողվեց թուրքերի օգնությամբ: Այլ խոսքով՝ Ազրբեջանը Զարարաղն ու Զանգեզուրը նվաճելու իր պլանը ցանկանում էր իրագործել մուսուլման թուրքերին փոխարինած բրիտանյաց անզիյացիների միջոցով: Այդ օրերին ազրբեջանական մուսավաթների բաղաքական գործելակերպի, նրանց երկզիմի ու խորամանկ դիվանագիտական խաղերի բնութագիրը ճշմարիտ կերպով տրված է ժամանակի հրապարակումներից մեկում: «Ազրբեջանը թուրքիայի հետ էր, երբ նա հաղթանակած էր: Թուրքիայի համար նա ձգտում էր կործանել Հայությանը: Երբ պարտվեց թուրքիան՝ այդ նույն Ազրբեջանը որոնեց նոր ուժեր, որպեսզի նրանց միջոցով հարվածի ատելի դարձած հայությանը: Այս որոնումների մեջ նա մի պահ կանգ առավ Անդրիայի վրա: և հանուն մուսուլմանական աշխարհի պահանջնեց անիրազործելի թողնել Հայկական ձգտումները ...»:<sup>2</sup>

Կարծում ենք, անհետաքրքիր չէ ցույց տալ Օսմանլան թուրքիայի վերաբերմունքը անզո—ազրբեջանական հարաբերություն-

1 ՀՀՓՓԱԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.9:

2 «Հայաստանի կոռպերացիա», կոռպերատիվ երկարաթարթ, օրգան Հայկոսպի, 31 օգոստոսի 1920 թ.:

ներին, ընդհանրապես, և Հայ աղբբեջանական Հակամարտություններին, մասնավորապես: Անդրկովկասում Թուրքիային Հարկավոր էր մուսուլմանական Հզոր պետություն, իր պանթուրքիստական նպատակներն իրականացնելու համար: Այդպիսին կարող էր դառնալ Աղբբեջանը, քանի որ «մուսավաթականները, որքան ներում էին իրենց Հնարավորությունները, Հարվածում էին Հայության թիկունքին՝ թուրքերի գործը հեշտացնելու, նրանց կողմից Անդրկովկասը Հնարավորին շափ շուտ օկուպացնելու նպատակով»<sup>1</sup>: Այստեղից հետևում է, որ Թուրքերը շահագրգիռ կողմ էին անդրապիրեցանական Հարաբերությունների ամրապնդման գործում, որպեսզի վերջինս անզիւդական զինուժի Հաշվին ավելի Հզորանարի Աղբբեջանի Հզորացումը օսմանյան պետությանը թույլ կտար շարունակելու Անդրկովկասը զավթելուն ուղղված ձեռնարկումները: Բնավի սբատահական շէ, երբ Թուրքերը լքեցին Կովկասը, «Հմոռացան» Աղբբեջանին և իրենց ուազմամթերքի մեծ մասը թողեցին նրան: Ավելին, խախտելով 1918 թ. Հոկտեմբերի 30-ի զինադադարը, ըստ որի Թուրքիան պետք է իր գորքերը դուրս բերեր Անդրկովկասից և զորացրեր բանակը, նա բարձրաստիճան սպաների ու Հրամանատարների մեծ խումբ (որոնց թվում՝ Նուրի փաշան, Խալիլ փաշան, Քյազիմ բեյը և ուրիշներ) թողեց Աղբբեջանում և Անդրկովկասում, որպեսզի օգնեն իրենց արյունակից եղբայրներին ստուղծելու մարտունակ բանակ:

Ինչ վերաբերումէ Հայ—աղբբեջանական Հակամարտություններին, ապա Թուրքիայի կառավարող շրջանները լավ Հասկանում էին, որ քանի գեռ Աղբբեջանի և Անզիւդական խնդիրները շն հստակեցվել, Հայ—աղբբեջանական կոփվները կարող են տարածաշրջանում պատճառ դառնալ մուսուլմանական գործոնի թուրացմանը, որը ինչպես նշվեց, Թուրքերին ձեռնատու շէր: Ահա թե ինչու Անդրկովկասից հեռանալուց հետո Թուրքական կառավարությունը փորձում էր փոխզիջման ճանապարհով ժամանակավորապես կանխիւն, եթե ոչ, գոնե մեղմել Հայ աղբբեջանական Հակամարտությունները:

1 Shor' Б. А. Борян. Армения, международная дипломатия и СССР, часть II., с. 47—48.

Արխիվներում և ժամանակի մամուլի էջերում կան թուրքերի այդ քաղաքականությունը բացահայտող բավականաշափ նյութեր: Թերենք միայն մեկ օրինակ: 1918 թ. նոյեմբերի սկզբին Երևան ժամանեց թուրքական բարձրաստիճան սպաներից Խալիլ Փաշան և հանդիպում ունեցավ Հայաստանի ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի հետ: Վերջինիս հետ բանակցելիս թուրք գեներալը առաջարկեց, որ հայերը դատարկեն Զանգեզուրի և Մեղրիի գավառները, որպեսզի իրենք անմիջապես կապվեն Բաքվի հետ, իսկ փոխարենը «ի հաշիվ» Աղրբեջանի, ընդարձակել Հայաստանի սահմանները դեպի Զիվանշիր և Վարանդա: Անշուշտ, դա Խալիլ Փաշայի անձնական կարծիքը չէր: Նա արտահայտում էր թուրքիայի պաշտոնական տեսակետը: Ըստ երեսույթին, դա լիովին համընկեցած էր նաև Աղրբեջանի շահերին: Այդ մասին է վկայում հետևյալ փաստը: Պոլսում Աղրբեջանի պատվիրակ Ա. Թոփշիրաշերը լրագրողներից մեկի հետ ունեցած զրույցի ժամանակ ասել է, որ ինքը գաշնակից պետությունների ներկայացուցիչներին խնդրել է թույլ տալ, որ Կովկասյան ազգություններից յուրաքանչյուրն ինքը զծի իր սահմանները, այնուհետև ավելացրել է, թե ինքը հույս ունի, որ Ղարաբաղի բաժանման խնդիրը խաղաղ կերպով կլուծվի՝ այն ուղղությամբ, որ Հայարնակ շրջանները կանցնեն Հայաստանին, իսկ թուրքարնակ շրջանները կմնան Աղրբեջանին:<sup>1</sup>

Այդ առաջարկն ընդունելու գեպօտմ Հայաստանն ուղղակիորեն աշակցած կլիներ թուրքերին՝ իրազործելու պանթուրքիզմի պլանները: Ուստի Հայաստանի կառավարությունը հրաժարվեց բանակցություններ վարել Խալիլ Փաշայի հետ:<sup>2</sup>

Մեր կարծիքով, Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ Բաքվի որդեգրած քաղաքականության հանդեպ օսմանյան պետության դիրքորոշման կտրուկ փոփոխությունը թելազրված էր նաև շուտով հրավիրվելիք Փարիզի խաղաղարար կոնֆերանսով, որը քննարկելու էր նաև սահմանային վեճերը: Թուրքական կողմը մտավախու-

<sup>1</sup> «Նոր հորիզոն», 18 գեկտեմբերի 1918 թ.:

<sup>2</sup> «Արձագանք», 8 նոյեմբերի 1918 թ., Խորեն Տեր—Մինասյան, նշվ. աշխ., էջ 145:

թյում ուներ, որ կոնֆերանսը Ղարաբաղի հարցին կտա արդարացի լուծում, այն է՝ կհանձնի Հայաստանին:

Մի՞թե դա չէր պատճառը, որ Ադրբեջանն ու Վրաստանը (վերցինս, օգտվելով Հայաստանի ծանր վիճակից, ուզում էր զավթել Ախալքալաքի և Էռուս շրջանները) 1918 թ. նոյեմբերի 10-ին Թիֆլիսում հրավիրեցին «Անդրկովկասյան ժողովուրդների» խորհրդաժողով, որպեսզի մինչև Փարիզի հաշտության կոնֆերանսը վճռեն հարցերը: Խորհրդաժողովում մեծամասնությունը կազմում էին մուսավաթականներն ու վրաց մենչեփենները: Երանք ցանկանում էին սահմանային վեճերը լուծել հօգուտ իրենց ու վեհաժողովին կանգնեցնել կատարված փաստի առաջ: Կոաչելով կոնֆերանսը նախաձեռնողների հրեշտավոր նպատակները, Հայաստանի կառավարությունը հրաժարվեց մասնակցել նրա աշխատանքներին, և խորհրդաժողովը մի քանի նիստ գումարելուց հետո ցրվեց: Դրանից հետո վրացական զորքերը ապօրինաբար օկուպացրին թուրքերից մաքրված Ախալքալաքի և Բորչալուի շրջանները:<sup>1</sup>

Հայ—ադրբեջանական հակամարտությունը Ղարաբաղի հարցում նոր ուժով բորբոքվեց: Խսկ անզլիացիների դերը այդ խնդրի լուծման գործում օրեց—օր դառնում էր անորոշ ու խիստ կասկածելի: Այն օրերի Ղարաբաղի ներքին ու արտաքին կյանքը արտացույող բազմաթիվ վավերագրեր ու վկայություններ հավաստում են, որ անզլիական զինվորական ներկայացուցչության քաղաքականությունը գավառում քայլ առ քայլ բնդզգված կերպով փոխվում էր դեպի Ադրբեջանը: Քրիտանացիների անվճականությունը, շատ դեպքերում նաև թողավորությունը թևավորում էր ադրբեջանցիներին և նրանց մզում նոր բռնությունների ու արկածախնդրության:

Կարող է օրինական հարց ծագել՝ ստեղծված քաղաքական բարդ ու անորոշ իրազրության պայմաններում Ղարաբաղի հայությունն իր հայացքը ու՞ր էր ուղղում, ինչպես էր կամենում տնօրինել իր ճակատագիրը, ինչո՞վ էին զրազված նրա քաղաքական ուժերը, ի՞նչ էր արվում ու վառի ներքին կյանքը նորմալ հունի մեջ գնելու, բնակչության անվտանգությունը պաշտպանելու համար նախորդ ենթարաժնում ցույց է տրվել, որ թուրքերի տիրապետու-

1 «Արձագանք», 13 գենեմենու 1918 թ., 20 գեկտեմբերի 1918 .

թյան ժամանակ, վերջիններիս ձեռքով վերացվեց Ղարաբաղի կառավարությունը:<sup>1</sup> Գավառի կյանքը բնականոն հունի մեջ դնելու համար անհրաժեշտ էր ստեղծել ազգային ժամանակավոր կենտրոնական մարմին: 1918 թ. գեկտեմբերի 15-ին Ղարաբաղի հայոց թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոսի նախաձեռնությամբ Հրավիրվեց խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին Ղարաբաղի շրու գորահրամանատարությունների ներկայացուցիչները. Զրաբերդից՝ Բեկ Տեր-Աստվածատուրյան, Վարանդայից՝ Տեր-Միքայելյան, Գիղակից՝ Ա. Շահնազարյան, Խաչենից՝ Ե. Իշխանյան, ինչպես նաև Հ. Մուսայելյանը և Գ. Մելիք Շահնազարյանը: Նրա խնդիրը ժամանակավոր Ազգային խորհուրդ ստեղծելն էր: Խորհրդի կազմում ընտրվեցին չորս շրջանների գորահրամանատարների ներկայացուցիչները<sup>2</sup> և քաղաքագլուխը՝ Երկու շաբաթ անց խորհրդի անգամների և քաղաքագլուխ Գ. Մելիք Շահնազարյանի միջև ծագած տարածայնությունների պատճառով, վերջինս հեռացավ խորհրդի կազմից:<sup>3</sup>

Առաջ անցնելով նշենք, որ այդ մարմինը գործեց մինչև արցախայության 4-րդ համագումարը, նրա կողմից նոր Ազգային խորհրդի բնտրվելու:

Ինչ վերաբերում է Արցախի ապագայի հանդեպ նրա բնակչության կողմնորոշմանը, ապա պետք է ասել, որ Գավառի աշխատավոր բնակչության անհողողող ցանկությունն էր միանալ մայր Հայաստանի հետ: Նա կարականապես դեմ էր ճանաչել Աղրբեզանի իշխանությունը և այդ մասին բազմիցս հայտնել էր անգիտացիներին ու դաշնակից մյուս երկրների ներկայացուցիչներին (Հարցին հանգամանորեն կանգրադառնանք հետագա շարադրանքում):

Այստեղ, կարծում ենք, ավելորդ շիլինի կանգ առնել նաև անզիհացիների նկատմամբ եղած վերաբերմունքի հարցին: Փաս-

1 «Մշակ», 21 մարտի 1919 թ.:

2 Խորհուրդը կազմվելուց հետո նրանք արդեն հրամանատարների ներկայացուցիչներ չեին համարվում, այլ որպես Ղարաբաղի ժամանակավոր Ազգային խորհրդի անդամներ:

3 «Հայրենիք», հոկտեմբեր, 1933, էջ 119, ՀՀՊԿԱԱ, ֆ.199, գ.1, դ.38, թթ. 11—12:

տերը խոսում են այն մասին, որ Ղարաբաղ բրիտանական ռազմական ներկայացուցչության մուտք գործելուց հետո տեղի բաղաքական ուժերի մեջ ուրվագծվում է երկու ուղղություն:

Ծուշիի բաղաքագլուխ Գերասիմ Մելիք Շահնազարյանի գլխավորած հոսանքը բռնել էր անգլիացիներին Հլու—Հնազանդ հնիքարկվելու ուղին: Նրանք գտնում էին, որ պետք է ենթարկվել դաշնակիցների կամքին, անտեղի արյուն շթափել, համբերատար կերպով սպասել մինչև վեհաճողովի արդար վճիռը: Հակառակ դեպքում, դա կարող է վնասել Արցախի դատին:

Քաղաքագլուխը և նրա գաղափարակից ու զինակից Ղարաբաղի զորքերի ընդհանուր հրամանատար Սոկրատ թեկ Մելիք Շահնազարյանը բնակչությանը հնարավոր կոփվներին նախապատրաստելու փոխարեն, Ծուշիում անգլիական ներկայացուցչության հետ շարունակարար անիմաստ բանակցություններ էին վարում Ղարաբաղի հարցի շուրջը:

Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ վերոհիշյալ ուղղության ներկայացուցիչների քարոզվությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ բնակչությանը զինաթափ անելու կոչ, Անդրկովկասում դաշնակիցների զավթողական պլանների իրականացման համար Արցախ աշխարհը քավության նոխազ դարձնելու միտում:

Ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, հետեւելով դեպքերի զարգացման ընթացքին, Անդրկովկասում անգլիական զաղութարանների նվաճողական քաղաքականությունն անհարիր էր տվյալ հոսանքի որդեգրած պարտվողական հոգերանության հետ: Դաշնակցության Ապառաժի (Ղարաբաղ) կոմիտեն և Ղարաբաղի ժամանակավոր Հայոց Ազգային խորհուրդը անիմաստ էին համարում անգլիացիների հետ հույսեր կապելը, առավել ևս նրանցից օգնություն ու աջակցություն սպասելը: Նրանք Արցախի հարցի լուծումը իրավացիորեն կապում էին ազատագրական պայքարի հետ: Արցախի համար դժվարին այդ ժամանակներում Ապառաժի կոմիտեն և Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը կազմակերպում էին նոր ջոկատներ, զինում նրանց բնակչության զենքով, անցկացնում էին զորավարժություններ և բարձրացնում զինվորների

**Ճարտական ողին:** Պատերազմին տեսնդորեն նախապատրաստվում էր նաև մուսավաթական Աղբբեջանը: Ստանալով անգլիացիների հովանավորությունը, Աղբբեջանը մեծ թվով զինվորական ուժեր էր ուղարկում Լեռնային Ղարաբաղ և նրանց տեղավորում գավառի ուղմավարական նշանակություն ունեցող կետերում: Օրինակ, Խանքենդ ավան մտցրին «Վայրի դիվիզիայի» մի զորամաս, թվով 1500 զինվոր, թնդանոթներով ու զնդացիրներով զինված: Մինչ այդ, Աղբբեջանը զորք էր մտցրել Ասկերան:<sup>1</sup> Աղբբեջանական զինուժ կենտրոնացվեց նաև Շուշիում: Այստեղ զանվոր զինվորների թիվը հասցվեց 1000-ի:<sup>2</sup>

Տեղին է նշել, որ Լեռնային Ղարաբաղում մուսավաթական զորքերի կուտակման և նրանց զորաշարժերի կապակցությամբ հայերի մշտական բողոքներին անգլիացիները շարունակարար պատասխանում էին նույն բանը. սա Աղբբեջան է, հետևապես, թուրքերն իրավունք ունեն կատարելու զորաշարժեր, կամ՝ մենք անզոր ենք նման հարցեր վճռելու:<sup>3</sup> Իսկ իրենց զինուժն ուժեղացնելու հայերի խնդրանքին մշտակես պատասխանում էին՝ խորհուրդ շենք տա, որովհետև դա կարող է կովի պատճառ դառնալ, և մեղքը կընկնի ձեզ վրա:<sup>4</sup> Աղբբեջանական բանակի հրամանատրությունը պլանավորել էր իր զորքերը շարժել գեպի Զանգելանի ու Զարուղի շրջանները, ընկճել Անդրանիկին և զրավել Զանգեղուրը: Գորիսից Անդրանիկի հեռանալու հանգամանքը լիովին ազատ արձակեց մուսուլման զավթիչների ձեռքերը:

Աղբբեջանի զորքերը և տեղական զինված խուժանը, թուրք սպաների զեկավարությամբ նոր ավերածություններ ու մահ սփռեցին Ղարաբաղի հողում: Նրանք ավերածության մատնեցին Ասկերանի շրջանը. ոչնչացրին 16 ջրազաց, բռնագրավեցին սննդի ամրող պաշարները, քշեցին անասունները, իսկ զերի ընկած բնակչության հետ վարվեցին այնպես, ինչպես վայել է թուրքին: Մուսավաթական զորքը, զրավելով Զարուղի կիրճը, շարժվեց գեպի Զերբարյիլի (Կարյագինո) գավառի հայ զյուղերի վրա: Թաթարները

1 ՀՀՊՊԿ, ֆ.370, ց.1, գ.40, թթ.11—12, գ.38; թթ. 17—19:

2 Նույն տեղում, գ.40, թթ. 11—12:

3 Նույն արխիվ, թթ. 7—9:

4 Նույն արխիվ, թթ. 11—12:

զավառի հայ բնակչությունից պահանջեցին դինաթափ լինել: Բնակչությունը մերժեց թուրքերի պահանջը: Թշնամին որոշեց պատճել բմբոստ գյուղացիներին: Նախնիների մարդակեր բնագդը վերստին արթնացավ: Նրանց հետևից մնացին ավերված ու թալանված, անկենդան բազում գյուղեր:

Թուրք մուսավաթականները սեպտեմբերի 22-ին և 23-ին, այսինքն Շուշի անգլիական երկրորդ ներկայացուցչության մուտք գործելուց հետո, սարսափելի ավերածություններ գործեցին նաև Դիզակի Արփա—Գյաղուկ, Թեղ—Խարաբա, Սպիտակաշեն, Գետրոսաշեն, Խօճարերդ, Դուղուկշի, Խանձաձոր և Վարանդայի Ճարտար, Մաղաղիշեն, Սոս և այլ գյուղերում:<sup>2</sup>

Խաղաղ բնակչության նկատմամբ բիրտ ու դաժան վարժունքով դարձյալ աշքի էին ընկնում թուրք ասկյարներն ու նրանց հրամանատարները: Ահա թե ինչ է գրում «Ժողովրդի ձայն» թերթը. «Կովկասում ֆեսը փափախի փոխած, աղբրեշտանցու հագուստով ծագված, պետերով ու նույնիսկ գորավարով» (նուրի փաշա), կուսակցության վաղեմի շերմեռանդ գործակից ճանաչված զեկավարներով, «մուսավաթի» դրոշի տակ թաքնված շարժումներ են ստեղծում Ախալցխայում, երկաթուղային գծերի վրա, Ղարաբաղում... շեն խնայում ոչ ստահող հեռագիրներ ու ամրաստանություն, ոչ հրեշտային սպանություն ու բռնարարում, ոչ իսկ ակնհայտնի ապստամբական գործողություն՝ դաշնակիցների աշքերի դիմաց, որպեսզի հնար եղածին լափ, դաշնակիցներին հարկադրեն հաշվի առնելու համաթրոքության ուժը և աշքի առջև ունենալու, որ թրբությունը ոչ միայն զեռ չի դատապարտված, այլ որ նա վերակենդանալու մեծ հույսեր է տածում Կովկասից սկսած մինչև Կովկասյան լեռները տարածելով իր աղղեցությունը»:<sup>3</sup>

Ղարաբաղին վերաբերող փաստերի համար բավական է կարգալ Շուշիաբնակ, Շուշիի և Զանգեզուրի երեսունից ավելի թուրքա-

1 «Հառաց», 29 հունվարի 1919 թ.

2 ՀՀՊՊԿԸ, ֆ.223, ց.1, գ.74, թ.52:

3 «Ժողովրդի ձայն», 15 փետրվարի 1919 թ.

բրնակ զյուղերի լիազոր ներկայացուցիչ Սալման բեկ Ալիբեկովի (ազգությամբ տաճիկ) նամակը Բաքվի դաշնակիցների հրամանատարությանը, ուր ասվում էր, որ ժողովրդի ձայնը չի հասնում մինչև դաշնակիցներին, որովհետեւ ազգաբնակչությունը ահարեկված է կազմակերպված բանդաներից, որոնք բազկացած են թուրքական մասերից և տեղական ավագակներից ու հովանավորված հայտնի բեկերի և խաների կողմից։ Ներկայումս, շարունակում ենք կարգալ նամակնեմ, Շուշիի գավառում թաքնված թուրքական զորամասեր, սպաներ և պաշտոնյաներ զրառում են ժողովրդին, խարում թե էնվեր փաշան գալու է 60 հազար զորքով, և խիստ սադրանք են մզում Անդրանիկի ու հայերի դեմ։<sup>1</sup>

Եվ այդ ամենը կատարվում էր անգիտական ներկայացուցչության աշքի առաջ, իսկ վերջինս կույր ու խոլ գտնվեց կատարվածի հանդեպ։ Ավելին, երբ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը հայ ազգարնակշության նկատմամբ գործադրվող սպանդի կապակցությամբ բողոքեց անգիտացիներին, նրանք անամոթարար պատասխանցին, որ իրենք քաղաքական խնդիրներով չեն զրադգում, թե իրենց նպատակն է օգնել գաղթականությանը և զրադգիլ Ղարաբաղի տնտեսական հարցերով։ Տարօրինակ է, որ միայն տնտեսական հարցերով զրադվող բրիտանական ներկայացուցչությունը, նույն գրությամբ Արցախի շորս շրջանների հրամանատարներին խորհուրդ էր տալիս վերջ տալ պատերազմական դրությանը և հաշտ ու խաղաղ ապրել հարեւան թաթարների հետ։<sup>2</sup>

Բրիտանական ներկայացուցչությունը արցախահայությանը և նրա ժամանակավոր Ազգային խորհրդին հնագանգության և համերաշխության էր կոչում, իսկ գիվանագիտական ու բռնի միջոցներով փորձում էր Ղարաբաղի վրա տարածել Ազրբեջանի իշխանությունը։

Անգլիացիների թուրքամետ քաղաքականությունը հայերի համար դադանի շմնաց։ Նրանք հետզհետեւ համոզվեցին, որ անգիտացիների խոստումներին հավատալը մանկամտություն է, առավել ևս

1 Նույն տեղում, 15 փետրվարի 1919 թ.: 23 փետրվարի 1919 թ.:

2 «Հառաջ», 29 հունվարի 1919 թ.:

կործանարար ու անիմաստ՝ նրանց հետ հովսեր կապելը։ Կեղծիքի  
 «բողը» պատռած և իր համար ճշմարտությունը բացահայտած  
 ժողովրդի խոստովանություն է Շուշիի «Գոլոս նարողա» թերթի  
 հետևյալ հրապարակում։ «Մենք Ղարաբաղում խաղաղություն  
 պահպանեցինք պատերազմի ամրող բնիքքում։ Մենք առավել  
 ես ամեն ջանք գործազրեցինք խաղաղությունը պաշտպանելու և  
 այժմ։ Մենք ենթադրում եինք, որ անզլիական ներկայացուցչության  
 հրամանը մեզ կպաշտպանի Աղրբեջանի նվաճողական քաղաքա-  
 կանության գեմ», — նշում է հեղինակը, հետո էլ բացատրում, որ  
 «Զարուղի, Խանքենդի և Ասկերանի գրավումը Աղրբեջանի կայազոր-  
 ներով, Ղարաբաղում տաճկական զորախմբերի ներկայությունը՝  
 ցույց են տալիս, որ մեր հարեանները, մի կողմից, անտեսու-  
 ին դաշնակիցների հրամանները, մյուս՝ կողմից, կողմնակի աշխի  
 առաջ ուղում են ստեղծել Ղարաբաղը Աղրբեջանին ենթարկվելու  
 կերպարանը»։ Այնուհետև վստահաբար ասվում է. «Բայց դա չի  
 լինելու։ Ղարաբաղի 300000 հայության կամքն արտահայտված է  
 պարզ և ուժեղ կերպով։ Մենք հազարավոր զավակներ զոհարեց-  
 ինքնը ուղղմանակատում, կովեցինք տաճիկների գեմ, քաղցած մնա-  
 ցինք, տառապեցինք ոչ նրա համար, որ Խաչենը, Վարանդան,  
 Դիզակն ու Ջիվանշիրը տանք Աղրբեջանին։ Հոգվածագիրը,  
 արտահայտելով իր հայրենակիցների աներեր կամքը, ավարտում է  
 այսպես. «Մենք հավատում ենք, որ մեր դաշնակիցներն անար-  
 դարություն չեն դորժի։ Ժամանակավորապես մինչև կոնֆերանսի  
 (Փարիզի կոնֆերանս - Հ.Հ.) որոշումը, Ղարաբաղը պետք է կառա-  
 վարեն հայերը՝ բրիտանական ներկայացուցչության հսկողության  
 ու զեկավարության տակ»:<sup>1</sup> Մեկ այլ փաստաթղթում, որը զեկում-  
 բերի վերջին Ղարաբաղի շորս շրջանների զորահրամանատարները  
 գրել էին Շուշիում գտնվող անզլիական ներկայացուցչությանը,  
 ասվում էր, որ անզլիացիք եկան այստեղ կարծեր հայ ժողովրդին  
 զսպելու և Աղրբեջանին հպատակ դարձնելու նպատակով:<sup>2</sup>

Այսպիսով, բազում վավերագրերի ուսումնասիրությունից  
 հետեւում է, որ դաշնակից երկրները, ի դեմս Անզլիայի, փոխանակ

1 «Աշխատավոր», 19 մարտի 1919 թ.:

2 ՀՀ Պատմ., ֆ.370, գ.1, գ.38, 27:

Հաշվի առնելու Արցախի բնակչության ավելի քան 90 տոկոս  
կազմող հայության տրամադրությունն ու անհողողգ կամքը՝  
միանալ մայր Հայաստանին կամ մինչև Փարիզի կոնֆերանսում  
խնդրի վերջնական լուծումը մնալ ազատ ու անկախ Աղրբեջանի  
խնամակալությունից, բանակցություններով ու խոստումներով մի  
կողմից՝ թուլացնում էր Ղարաբաղի ինքնապաշտանական կա-  
ռույցները, տարակարծություն մտցնում նրա ղեկավար շրջան-  
ներում, մյուս կողմից՝ շտեսնելու տալիս, թե ինչպես Աղրբեջանը  
տաճիկ էրի համագործակցությամբ գրավում էր կարեորագույն  
ուղղմավարական կետեր:

Ինչո՞վ բացատրել Բարվի անգլիական Հրամանատարության,  
մասնավորապես զեներալ Թոմսոնի քար անտարբերությունը Ղա-  
րաբաղի հայության ճակատագրի հանդեպ. շէ՞որ ամեն օր վտանգ-  
վում էր վերջինիս կյանքը, անարգվում ընտանիքի պատիվը և ոտնա-  
հարվում ազգային արժանապատվությունը: Անտեղյակության մա-  
սին խոսք լինել չէր կարող: Պահպանվել են բազմաթիվ վավերա-  
գրեր, որոնք ցույց են տալիս, որ այդ բոլորի մասին Շուշիի անգ-  
լիական ներկայացուցչությունը մշտապես հեռադրերով ու նամակ-  
ներով հայտնել էր Թոմսոնին, իսկ վերջինս, մեղմ ասած, շվատահե-  
լով իր աշխատակիցներին, բացարձակապես անուշադրության էր  
մտանում արցախահայության ողբերգական վիճակը: Այդ զեպքում  
ո՞րն էր պատճառը. պատճառն ամենից առաջ շահերի զուգաղի-  
պումն էր, որի մասին հանգամանորեն խոսել ենք իր տեղում: Թա-  
թարները և անգլիացիները, յուրաքանչյուրն իր շահերից ելնելով,  
թե ու թիկունք էին զարձել Ղարաբաղի, Զանգեզուրի պրորեմը լու-  
ծելու համար: Շահերի ընդհանրությունից զատ գոյություն ուներ  
մեկ այլ կարեռը հանգամանք ևս: Խոսքը վերաբերում էր լրատվու-  
թյան միակողմանիությանը: Աղրբեջանական թերթերում տպագր-  
վում էին բազմաթիվ ու բազմապիսի ստահող հեռագրեր, թղթակ-  
ցություններ, «ականատեսների» վկայություններ արցախահա-  
յության «անարդարացի» ու «ապօրինի» գործողությունների մա-  
սին: Ցավոք, տվյալ տեսակետից Ղարաբաղը գտնվում էր լրատվա-

կան շրջափակման մեջ:<sup>1</sup> Դրությունը շարունակում էր բարդանալ: Ազրբեջանի մուսավաբական կառավարությունը արդեն մշակել էր Ղարաբաղի նվաճման ծրագիր և փորձում էր անգիտացիների միջոցով այն իրականացնել:

1919 թ. Հունվարի 15-ին Ազրբեջանի կառավարությունը դեներալ Թօմասոնի գիտությամբ հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովին նշանակեց Շուշիի, Զանգեզուրի, Ջերրաբլի, Ջիվանշիրի, այսինքն՝ նախկին Ելիզավետպոլի նահանգի հարավ—արևելյան հայկական գավառների գեներալ նահանգապետ:<sup>2</sup> Այդ նշանակումը կատարվեց արցախահայության կամքին հակառակ: Այսպես, օրինակ, երբ 1919 թ. փետրվարի 28-ին Շուշիի անզիտական ներկայացուցչությունը, հանձին Մոնկ Միկոնի,<sup>3</sup> պահանջեց Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդից ընդունել Խոսրով բեկ Սուլթանովի գեներալ նահանգապետությունը,<sup>4</sup> Ազգային խորհրդությունը կտրականապես մերժեց, ասելով, որ հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել նման փաստի հետ, որովհետեւ կախումը Ազրբեջանի կառավարությունից, ինչպիսի ձևով էլ այն արտահայտվելու լինի, Ղարաբաղի հայությունը համարում է անդրնդունելի՝ այն բռնությունների և իրավունքների ուժահարման պատճառով, որոնց սիստեմատիկարար ենթարկվել է հայությունը Ազրբեջանի կառավարության կողմէց: Նույն տեղում նշվում է նաև, որ Ղարաբաղը ամբողջ աշխարհին ցույց է տվել, որ նա փաստորեն չի ճանաչել և չի ճանաչում իր սահմաններում Ազրբեջանի կառավարության իշխանությունը:<sup>5</sup>

Ի դեպ, գեներալ նահանգապետ Սուլթանովը նույնպես համոզված չէր, որ արցախցիները հոժարկամ կընդունեն այդ բանաձևը: Ահա թե այդ մասին ինչ է ասում նա Ազրբեջանի վարչապետին ու ներքին գործոց նախարարին, 1919 թ. փետրվարի 25-ին հղած բացարձագրում: «... ես նախօրոք զիտեի, որ դաշնակները դրա հետ չեն համաձայնվի: իմ ենթագրությունը արդարացվեց, այդ

1 Նույն արխիվ, ֆ.223, ց.1, գ.74, թ.45:

2 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.244, թ.1:

3 Կան անվան այլ տարրերակներ են՝ Մար—Մողրն, Մակ—Մողոն, Մար—Մեսրն,

4 «Մշակ», 19 մարտի 1919 թ., «Աշխատավոր», 16 մարտի 1919 թ.:

5 «Մշակ», 16 մարտի 1919 թ., 19 մարտի 1919 թ., ՀՀՊԿ, ֆ.200, ց.1, գ.243, թթ. 28—30:

բանաձեր, որ անզիւցիները առաջարկեցին վերջեռս կազմավորված Հայկական Ազգային խորհրդին (խոսքը՝ 4-րդ համագումարի կողմից ընտրված Ազգային խորհրդի մասին է - ՀՀ.), կտրականապես մերժվեց, անզիւցիներին համոզելով, որ Հայերը դեմ են այն բանին, ինչ առաջարկում են անզիւցիները:<sup>1</sup> Ազգային խորհրդի պատասխանը ստանալուց անմիջապես հետո Շուշիի բրիտանական ներկայացուցչությունը հատուկ գրությամբ դիմեց Հայկական զորամասերի գորաճրամանատարներին և պահանջեց ընդունել տվյալ բանաձեր, հակառակ դեպքում առաջարկվում էր տալ հետեւյալ պատասխանագիրը.

1. Մենք տրամադրիր շենք ճանաչել Ազրբեջանի կառավարության ներկայացուցիչների իշխանությունը Դարարադի և Զանգեզուրի սահմաններում, ինչպիսին էլ լինի այդ իշխանությունը: 2. Մենք նույնպես հրաժարվում ենք մտնել շրջանը կառավարելու համար ստեղծվող խորհրդի կազմի մեջ: 3. Ներկայացուցչության պետի կողմից մենք իրազեկ ենք, որ ամեն տեսակ թշնամական գործողություն Ազրբեջանի կառավարության նկատմամբ պիտի նկատվին իրեն թշնամական գործողություններ Մեծ Բրիտանական կառավարության դեմ:<sup>2</sup>

Քննարկելով որոշումը և պատասխանագիրը, զորապետները հայտնեցին, որ իրենք լիովին պաշտպանում են Ազգային խորհրդի տեսակետը:<sup>3</sup> Անզիւցիները դիմեցին ավելի վտանգավոր քայլի, այն է՝ թշնամանք առաջ բերել Ազգային խորհրդի և զորաճրամանատարների միջև և դրանով ջլատել զարարացցիների ուժերը: Այդ նպատակի համար նրանք օգտագործեցին իրենց մոտ ծառայության մեջ գտնվող ցարական բանակի նախկին սպա, լեյտենանտ Մասսալինիկովին: Բրիտանական ներկայացուցչության ցուցումով, նա 1919 թ. փետրվարի 21-ին հատուկ նամակով դիմեց Արցախի զորաճրամանատարներին: Նամակը բաղվածարար բերվում է ստորև.

«Ազգային խորհուրդը ներկայացուցչության հարցին պատաս-

1 ՀՀՀՔԿՓԱԱ, ֆ.4033, ց.5, գ.429, թթ. 2-4.

2 նույն տեղում:

3 նույն տեղում:

խան շի տվել։ Ներկայացուցչությանը անհրաժեշտ է ունենալ ձեր  
պատասխանը, զերծ քաղաքական որևէ գունավորումից»:<sup>1</sup> Ռուս  
սպան մոռանալով վերը ասվածը, որ Ազգային խորհուրդը դեռ  
պատասխան շի տվել, անմիջապես ավելացնում է. «Ազգային խոր-  
հրդի հայտարարությունը (նույնն է՝ պատասխանը -ՀՀ.) գուտ  
քաղաքական է։ Ներկայացուցչության պետք խնդրել է ձեզանից  
կամ համաձայնություն կամ մուսուլմանների և Ազրբեջանի կա-  
ռավարության հետ գործակցելու նոր առաջարկություն, կամ  
ստորագրել հիշված արձանագրությունը, հենց ձեր ցանկությամբ  
լրացված»:<sup>2</sup> Զորահրամանատարներին ինքնուրույն կարծիք հայտ-  
նելու հնարավորություն տվող լեյտենանտը, համենայնդեպս  
դա երևում է նամակի բովանդակությունից, հանկարծ վերջում  
սպառնալի տոնով հայտնում է. «Այլ պատասխան ներկայացուցչու-  
թյունը շի ընդունում»:<sup>3</sup>

Հակառակ պատասխան, այնուհանդերձ, եղավ։ Ահա թի  
1919 թ. փետրվարի 27-ին Ղարաբաղի զորահրամանատարներն  
ինչ են գրել Մասալեննիկովին. «Մենք՝ զորապետներս, պատիվ ու-  
նենք կրկին անդամ հայտնելու ձեզ, որ Ղարաբաղի հարցերի  
քննությամբ զրադվելու իրավունք ունի միայն Ազգային խորհուրդը,  
իսկ մենք, իրեւ զինվորներ, կոչված ենք միայն մեր հայրենիքը  
պաշտպանելու։

Հետեաբար, հնարավորություն շունենք, ըստ էության, ձեր  
առաջարկին պատասխանելու»:<sup>4</sup>

Ազրբեջանական պատմագրությունը հասկանալի պատճառնե-  
րով լուսաբան է մատնում այս փաստերը, վկայակոչելով միայն  
այն, որ վերը նշված շրջանները միատեղ հողակվել են որպես  
Ազրբեջանի նահանգ, որտեղ գեներալ նահանգապետ է նշանակվել  
մուսուլման Խոսրով բեկ Սուլթանովը։ Շտապենք նշել, որ Ազրբե-  
ջանի պատմաբանները շտեսնելու են տալիս նաև Հայաստանի  
Հանրապետության կառավարության 1919 թ. հունվարի 21-ի Զան-

1 Նույն տեղում։

2 «Մշակ», 19 մարտի 1919 թ., ՀՀՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.243, թթ. 29—31.

3 Նույն տեղում։

4 «Մշակ», 19 մարտի 1919 թ.:

գեղուրի և Ղարաբաղի շրջաններում ժամանակավոր վարչություն  
ստեղծելու մասին որոշումը, ինչպես նաև Ղարաբաղի Հայոց Ազ-  
գային խորհրդի 1919 թ. փետրվարի 20-ի հայկական Ղարաբաղի  
ժամանակավոր կառավարման մասին նախագիծը (այդ մասին ա-  
վելի համակողմանիորեն հետագա էջերում): Ինչեւ, անկախ այդ  
ամենից, Աղբբեջանի կառավարությունը անգլիացիների համա-  
ձայնությամբ, գեներալ նահանգապետ նշանակեց մի մարդու, որը  
ժամանակակիցներից մեկի դիպուկ ընորոշմամբ մեղադրյալի նստա-  
րանին գամվելու փոխարքն, Ղարաբաղի նահանգապետ է կարգվել և  
դաշնակիցների օգնությամբ փորձում է իր «հայրական» խնամքի  
տակ առնել այդ երկիրը:<sup>1</sup>

Նորաթուի նահանգապետը ժամանեց Շուշի փետրվարի 10-ին  
և բնակության վայր ընտրեց քաղաքի թաթարական մասը:

Սուլթանովի նշանակման հետ Աղբբեջանի կառավարությունը  
մեծ հույսեր էր կապում: Վերջինս Սուլթանովի մեջ տեսնում էր այն  
միակ մարդուն, որն իր խորամանկության ու գաժանության շնոր-  
հիվ ի զրոյ է նվաճել անհնագանդ Արցախը:

Շուշիի անգլիական ներկայացուցչությունը եռանդուն կերպով  
պաշտպանում էր Սուլթանովին, աջակցում նրան: 1919 թ. փետր-  
վարի 20-ին բրիտանական ներկայացուցչությունը կազմեց մի նա-  
խագիծ, որով սահմանեց Սուլթանովի լիազորությունները: Այն  
բաղկացած էր մի քանի հողվածներից: Բատ այդմ, գեներալ նա-  
հանգապետին կից ստեղծվում էր խորհուրդ՝ կազմված երեք հայերից  
նույնքան էլ մուսուլմաններից և անգլիական ներկայացուցչության  
ներկայացուցչից: Նահանգապետի քաղաքացիական մասի օդ-  
նականը լինելու էր հայ: Զորքերի տեղաշարժումը կատարվելու էր  
Սուլթանովի գիտությամբ: Վերջապես, նահանգի ամբողջ բնակու-  
թյունը պարտավոր է կատարել նահանգապետի բոլոր հրաման-  
ները:<sup>2</sup>

Դժվար չէ նկատել, որ անգլիական ներկայացուցչության հիմ-  
նական մտահոգությունը Ղարաբաղի հայ ազգարնակությանը

1 ոշակաց, 29 Հունվարի 1915 թ.

2 ՀՀՊՊԿ, ֆ.252, ց.1, գ.5, թթ. 1—2, «Մշակ», 19 մարտի 1919 թ.:

Աղրբեջանի դրածոյի իշխանությանը հլու Հնագանդ և նիթարկելն էր: Բնավ էլ պատահական չէ, որ բժիշկ Խոսրով բեկ Սուլթանովը՝ այդ բանաձեռի համար երախտապարտ էր անգլիացիներին: Չէ՞ որ, ինքը՝ Խոսրով բեկ Սուլթանովն էր ասում Աղրբեջանի մինիստրների խորհրդին և ներքին գործերի մինիստրին հղած 1919 թ. փետրվարի 25 նամակում, որ «Այդ բանաձեռ ինձ բավարարում էր ...»:<sup>1</sup>

Հայկական Ղարաբաղի ժամանակավոր կառավարման նախադիր բոլորովին հակառակ սկզբունքներով էր կազմել Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը 1919 թ. փետրվարի 20-ին: Այդ նախադիր համաձայն, մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը, հայկական Ղարաբաղը ղեկավարվելու էր Հետեւյալ սկզբունքով. ա) Կառավարումը էնտրոպնանում. է մտրզային խորհրդի ձեռքում, որի նստավայրը Շուշին է: բ) Խորհուրդը կազմված է 7 հոգուց. մեկական՝ քաղաքից, Խաչենից, Դիղակից, Զբարերդից, Ելիզավետպոլի զավառից (գյուլիստանից), 2-ր՝ Վարանդայից, և երեք մուսուլմաններից (1-ր՝ քաղաքից և 2-ր՝ զավառից): գ) Հատուկ համաձայնությամբ խորհրդի կազմում մտնում են մեկական ներկայացուցիչ Հայաստանի և Աղրբեջանի հանրապետություններից: դ) Քրիտանական ներկայացուցիչը խորհրդի աշխատանքի նկատմամբ վերահսկողության իրավունք ունի: Նա կարող է փոխել կամ կարճել խորհրդի ուղած որոշում: ե) Բոլոր պաշտոնատար անձինք նշանակվում են խորհրդի կողմից: զ) Կողմերի զրամասերի տեղափոխությունները կատարվում են ներկայացուցչության գիտությամբ և համաձայնությամբ: Գլխավոր ռազմավարական կետերում տեղաբաշխվում են քրիտանական զորամասերն ու ուղեկալները:<sup>2</sup>

Այսպիսով, Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի նախադիր կազմվել էր հայ—մուսուլմանական բնակչության շահերը հավասարապես հաշվի առնելով: Նրա բոլոր դրույթները կեռնային Ղարաբաղում խաղաղ կյանքի հուսալի երաշխիքներ էին ապահովում: Մակայն անգլիական ներկայացուցչության և նրա ղեկավար գեներալ Թոմսոնի կողմից հայկական նախադիր շրնգունվեց:

Կեռնային Ղարաբաղում և Զանգեզուրում աղրբեջանական գե-

1 ՀՀ ՀՔԿՓՂԹԱ թ.4033, գ.5, գ.429, թթ. 2—4:

2 «Եշակ», 22 մարտի 1919 թ., «Ժողովուրդ», 6 ապրիլի 1919 թ.:

ներալ նահանգապետի նշանակումը կատարվեց Հայաստանի Հանրապետության կառավարության կամքին հակառակ: Վերջինս բազմիցս բողոքեց բրիտանական հրամանատարությանը և Ազրբեջանի կառավարությանը, արձանադրեց այդ տարածաշրջանների Հայաստանապատկանությունը: Այսպիս, 1919 թ. հունվարին Հայաստանի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց Ազրբեջանի կառավարությանը, որ ինքը չի կարող ընդունել, նույնիսկ ժամանակավոր, Ազրբեջանի իշխանությունը Ղարաբաղի վրա, որը կազմում է Հայաստանի անքաժան մասը:<sup>1</sup>

Պատասխան հեռազրում Ազրբեջանի կառավարությունը պնդում էր իրենը, թե այդ շրջանները կազմում են Ազրբեջանի անվիճելի տարածքները, հետևաբար իրենք պարտավոր են կտրուկ միջոցներ ձեռնարկել այնտեղ կարգ ու կանոն հաստատելու և պաշտպանելու իրենց քաղաքացիների կյանքը:<sup>2</sup>

Իսկ թե ինչպես էր Ազրբեջանը պաշտպանում «իր քաղաքացիների» կյանքը, մենք գեռ հնարավորություն կունենանք տեսնելու:

Բրիտանական հրամանատարությանը հասցեագրված բազմաթիվ բողոք-նամակներով ու հեռազրերով, Հայաստանի կառավարությունը կտրականապես հայտարարեց, որ թե՛ տեղական բնակչությունը, և թե՛ ինքը չեն կարող հաշտվել, որ Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը կառավարվեն Ազրբեջանի կողմից: Միաժամանակ հայկական կողմը բրիտանական հրամանատարությանը խնդրում էր գործադրել իր հեղինակավոր ու հաշտարար միջամտությունը և ազդեցությունը այդ շրջաններում, այն իմաստով, որ 1. Ղարաբաղից գորս բերվեն Ազրբեջանի զինվորական ուժերը, 2. Ղարաբաղում պահպանվի տեղական վարչությունը, անզիհական դեներալ նահանգապետի ղեկավարությամբ, 3. Ղարաբաղի շեղոքությունը շնափառվի ոչ ոքի կողմից, մինչև հարցը կորոշվի Փարիզի կոնֆերանսում:<sup>3</sup>

1 «Ժողովորդ», 26 մարտի 1919 թ., «Աշխատավոր». 12 մարտի 1919 թ., «Արև», 29 ապրիլի 1919 թ.:

2 «Մշակ», 7 փետրվարի 1919 թ.:

3 «Հայագ», 25 ապրիլի 1919 թ., ՀՀՊԿԱ, ֆ.199, ց.1, գ.23, մաս առաջին, թ.141, ֆ.200, ց.1, գ.22, մաս երկրորդ, թ.49, 70, գ.193, մաս առաջին, թ. 224:

Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ֆորենթիեր Ուոլքերի 1919 թ. մարտի 5-ի Հայաստանի արտգործնախարարին հասցեագրած պատասխան հեռագրում ասված էր, որ Սուլթանովին հիշյալ գավառների գեներալ նահանգապետ նշանակելը չպետք է համարել, թե բրիտանական հրամանատարությունը ընդունում է Ազրբեջանի կառավարության գերիշխանության որևէ իրավունք այդ շրջաններում։ Այնուհետեւ, գեներալը ջանք ու եռանդ չէր խնայում ապացուցելու, որ այդ նշանակումն արված է Թումսոնի կողմից, նկատի ունենալով միայն, որ մինչև հաշտության կոնֆերանսի որոշումը պահպանվի օրենքն ու կարգը, որ տվյալ նշանակումը չի կարող որևէ կերպով ազդեցություն ունենալ կոնֆերանսի որոշման վրա՝ ի վեհասար, կամ ի նպաստ Հայաստանի կամ Ազրբեջանի հանրապետությունների։<sup>1</sup> Մեկ այլ հեռագրում, որը 1919 թ. մարտի 12-ին Թումսոնը ուղարկել էր Հայաստանի կառավարությանը, ասվում էր, որ գեներալ նահանգապետ Սուլթանովը ոչ մի քայլ անելու իրավունք չունի, առանց անզիփական հրամանատարության համաձայնության և, որ նրա իրավունքները չեն տարածվում Շուշիից արևմուտք ընկած հայաբնակ վայրերի, մասնավորապես Զանգեզուրի վրա։<sup>2</sup> Նա գնում է այնտեղ միայն օրենքը և կարգը պահպանելու համար։<sup>3</sup>

Այն, որ գեներալի այս հավաստիացումները կեղծ էին ու մոլորեցնող, լիովին հաստատվում են, երբ ծանօթանում ենք Սուլթանովի նշանակման օրը Շուշիում բրիտանական ներկայացուցչության հրապարակած Հրովարտակի հետ։ Այնտեղ սաված էր, «Գեներալ նահանգապետության ու նրա մարմինների կողմից տրվող ամեն տեսակի հրամաններն ու հանձնարարությունները պետք է անհապաղ իրականացվեն նահանգի բոլոր քնակիշների կողմից»։ Հրովարտակն ավարտվում էր սպառնալիքով, թե «Յուրաքանչյուր դիմադրություն կլափանվի բրիտանական հրամանատարության կողմից ամենայն վճռականությամբ»։<sup>4</sup> Ուշագրություն դարձնենք

1 ՀՀՊԿ, թ.200, գ.1, գ.244, թ.6.

2 «Կայք», 3-ը ապրիլի 1919 թ.:

3 Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն։ Թէհրան, 1982, էջ 312.

4 «Компартия организатор победы Советской власти и социалистического строительства в Азербайджане (сборник статей), Баку, 1958. с.315.

վերցին տողերի վրա. յուրաքանչյուր դիմադրություն կիսափանվի ամենայն վճռականությամբ: Շարադրանքի նախորդ էջերից արդեն գիտենք, թե ըրիտանական գաղութարները շահախնդիր չանադրությամբ ինչ էին պահանջում արցախահայությունից, իսկ նա էլ ինչպես էր պատասխանում: Այսքանից հետո եղելությանն անտեղյակ մարդը կարող է մտածել, թե, իսկապես, ըրիտանացիները զենքերալ նահանգապետությունը ստեղծել էին գավառում օրինականությունը պահպանելու, նրա բացարձակ մեծամասնությունը կազմող հայ բնակչության արդարացի շահերը պաշտպանելու համար:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գնում էր Ղարաբաղում գեղքերի զարգացման հետեւից: Նա չկարողացավ ժամանակին գնահատել պահի նպաստավորությունը, որպեսզի Ղարաբաղ ուղարկեր իր ներկայացուցչին, անհրաժեշտ ռազմական ու ֆինանսական միջոցներով, թեև նման խնդրանքով հաճախ էին դիմել նրան Ղարաբաղի և Զանգեզուրի Հայոց Ազգային խորհուրդները: Արխիվներում պահպանվել են դա հաստատող բազում փաստաթղթեր: Բերենք դրանցից մեկը: 1918 թ. դեկտեմբերի 23-ին Զանգեզուրի Հայոց Ազգային խորհուրդը իր լիազոր ներկայացուցիլ Ա. Շիրինյանի միջոցով Հայաստանի կառավարությանը ներկայացրեց զեկուցագիր, որի մեջ նկարագրելով Զանգեզուրի ժանր կացությունը, խրնդում էր Զանգեզուրը վերջնականապես կցած համարել հանրապետությանը և անհապաղ ուղարկել կառավարիչներ: Հակառակ դեպքում ապահանագում ապահանագում պատասխանատվությունը թողնում էին հանրապետության վրա:<sup>1</sup>

Հայաստանի կառավարության կողմից դրամական միջոցներ տրամադրելը թույլ կտար արագորեն լուծել ոչ միայն զինվորական ուժի կազմակերպման ու կառավարման խնդիրները, այլ նաև կյանքի կոչել գպրոցները, կոմիսարիատները, զանձարանը, դատարանը և այլն: Մենք դեռ կտեսնենք, թե Աղրբեջանի դրածո Սուլթանովը ինչպիսի մեծ եռանգով էր ձգում փողի միջոցով, խաղաղ ու աննկատ կերպով նվաճել հայկական Ղարաբաղը: Հայաստանի կառավարու-

<sup>1</sup> ՀՀՊՊԿ, ֆ.199, ց.1, գ.43, թթ. 15-17:

թյունը Ղարաբաղը իր ենթակայության տակ վերցնելու ուղղությամբ գործնական քայլերի դիմեց այն բանից հետո միայն, երբ արդեն Սուլթանովը նշանակվել էր զեներալ նահանգապետ։ Արարատյան կառավարությունը մուսավաթական Ազրբեջանի և բրիտանական օկուպանտների գավթողական քայլերին ի պատասխան, միայն 1919 թ. հունվարի 21-ի նիստի որոշման հիման վրա Զանգեզուրի և Ղարաբաղի հայկական մասերում ժամանակավոր վարչություն հաստատելու որոշում ընդունեց, ըստ որի. ա) Զանգեզուրի և Ղարաբաղի հայաբնակ շրջանները կազմելով Հայաստանի անբաժան մասը, կառավարվում են հանրապետության կենտրոնական կառավարության կողմից հաստատված օրենքների հիման վրա, բ) հաղորդակցության դժվարությունների պատճառով ժամանակավորապես երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում է գոյություն ունեցող «Զանգեզուրի Ազգային խորհրդին», որը կոչվելու է «Զանգեզուր—Ղարաբաղի շրջանային խորհրդի», գ) խորհրդուր ժամանակավորապես կառավարում է երկիրը Հայաստանի Հանրապետության անունից և նրանից ստացված լիազորություններով, դ) խորհրդի ներկա կազմը պետք է լրացվի Ղարաբաղի հայաբնակ մասերի ներկայացուցիչներով, ինչպես նաև շրջանում ապրող թուրք ազգաբնակչության ներկայացուցիչներով, համապատասխան իրենց թվի։

Փաստաթղթում նշվում էր և այն մասին, որ Զանգեզուրի և Ղարաբաղի հայկական մասերում ժամանակավոր վարչության ղեկավար է նշանակվում պետական կոմիսար Արսեն Շահմազյանը, որ կառավարությունը այդ շրջանների ժամանակավոր վարչությանը իր բյուջեից տրամադրել է որոշակի միջոցներ և նախատեսել նրա՝ որպես կառավարությանը ենթակա վարչական մարմնի հետ համատեղ գործողություններ։<sup>1</sup>

Ղարաբաղում և Զանգեզուրում ժամանակավոր վարչության հաստատումը կատարվեց շափազանց ուշացումով և մեծապես վնասեց Արցախը մայր Հայեստանին միացնելու գործին։ Հայաստանին շհաջողվեց նախատեսված ձևով իր իշխանությունը Ղարաբաղում

1 Նույն արխիվ, ֆ.199, ց.1, գ.38, թ.5, գ.43, թթ. 15—17, ֆ.200, ա.1 գ.22, մատագին, թ.17, «Ահաւատամբը», 16 մարտի 1919 թ.,

դարձնել կայտն և հարատես: Ղարաբաղի հայ բնակչությունը հարկադրված էր վարել իր գործերը սեփական իշխանությամբ:

Սուլթանովի Շուշի գալր զուգաղիպեց Ղարաբաղի հայության 4-րդ համագումարին: Նույն օրը՝ փետրվարի 10-ին, Շուշի ժամանեց նաև անզլիական նոր ներկայացուցչությունը, որի ղեկավարն էր Մոնկ Միզոնը:<sup>1</sup> Հաջորդ օրը՝ փետրվարի 11-ին, Խոսրով քեկ Սուլթանովը հատուկ կոչով ղիմեց իր «հնդակայության տակ» գտնվող շրջանների բնակչությանը և իր «մտահոգությունն» ու «ափսոսանքը» հայտնեց այդ շրջաններում տիրող վասթարագույն վիճակի կապակցությամբ: «Ազրբեջանի շորս գեղեցիկ շրջանները մի տարուց ավելի է, ինչ գտնվում են անարխիայի մեջ, զանազան անպատճանաւոտու մարդկանց միջոցով ավագակները քանդում են գյուղերը, ոչնչացնում են ժողովրդին»: Այնուհետև «ժողովուրդների բարեկամը» «սրտաճմլիկ» ու «վշտացած» շարունակում է, որ խոռվարարները վառում են ազգերի թշնամությունը: «Ազրբեջանի կառավարությունը, — շարունակում է նա, — ինձ նշանակել է շորս գավառների գեներալ նահանգապետ և որպես ժողովրդի բարեկամ, առանց ազգի ու կրոնի խտրության, պիտի աշխատեմ կարգ հաստատել»:<sup>2</sup> Բնակչությանը կոչով ղիմելու շարժառիթը իսկապես ոչ այնքան այդ շրջաններում տիրող ժամն կացության հանդեպ գեներալ նահանգապետի պատասխանատվության ու մտահոգության զգացումն էր, այլ ի պաշտոնն այդ շրջանները ազրբեջանական տարածք հայտարարելը, ինչպես նաև իրեն գեներալ նահանգապետ նշանակելու նշանակելու մասին բնակչությանը տեղյակ պահելը:

Խոսրով քեկ Սուլթանովը, որի իշխանությունը գործնականում տարածվում էր միայն Շուշի քաղաքի թուրքական մասի և Խանքենդ ավանի վրա, զանազան միջոցների էր ղիմում, որպեսզի տեղական իշխանության մարմինները և պետական նախկին հիմնարկությունները կենտրոնացնի իր ձեռքում: Իր ղիվային ծրագրերի իրականացման խնդրում նա փորձում էր ստանալ Ղարաբաղի նշանավոր մարդկանց ու քաղաքական գործիչների աջակցությունը: Այդ

1 «Կավազսկое слово», 5 марта 1919.

2 «Արձագանք», 24 փետրվարի 1919 թ.:

նպատակով Սուլթանովը զրուցի հրավիրեց քաղաքագլուխ Դերասիմ Մելիք Շահնազարյանին, եպիսկոպոս Վահանին, Ե. Իշխանյանին և Գ. Մինասրեկյանին։ Արցախահայության 4-րդ համագումարի պահանջով այդ հանդիպումը հետաձգվեց մինչև նրա աշխատանքների ավարտը։ Դա Սուլթանովին շհուսահատեցրեց և այս անգամ հրավիրեց քաղաքի հայկական մասի կառավարիչներին և ժողովը շական ու քաղաքային դպրոցների ուսուցիչներին՝ նպաստ ստանալու, պայմանով, որ նրանք նախապես ստորագրությամբ հաստատեն, որ ճանաշում են Ազգրեզանի իշխանությունը։ Սուլթանովի այս քայլին տեղյակ լինելով, համագումարը հայերին նախազգուշացրեց հրաժարվել նպաստից։ Այս ամենից հետո Սուլթանովի կարգադրությամբ փակվեց քաղաքի հայկական մասում գտնվող կառավարությունը և արգելվեց ամեն կարգի վճարում կատարելը։ Միաժամանակ, նա բոլոր պաշտոնյաներին հայտարարեց, որ նրանք գանձարանից ոռնիկ կտանան այն դեպքում, եթե կտան ստորագրություն, որ 1919 թ. հունիսի 1-ից առ այսօր ծառայում են Ազգրեզանի կառավարությանը և այսուհետ էլ պիտի ծառայեն։<sup>1</sup>

Ղարաբաղի հայ ազգաբնակչության և նրա համագումարի պատգամավորների «անհյուրասեր» վերաբերմունքին արժանացած գեներալ Նահանգապետը փետրվարի 21-ին, այսինքն՝ դեռ համագումարի աշխատանքները շավարտված, մեկնեց Զիվանշիր,<sup>2</sup> Ղարաբաղի գեմ նոր դաշեր կազմակերպելու համար։ Ազգրեզանի կառավարությունը պատրաստվում էր զենքի ուժով արցախահայության վզին փաթաթել իր իշխանությունը ի դեմս Խոսրով բեկ Սուլթանովի։ Ազգրեզան—Անդիխ—Սուլթանով եռյակի ագրեսիվ քաղաքականությանը դիմագրավելու համար անհրաժեշտ էր մշակել պատասխան գործողությունների ծրագիր։ Այդ կարող էր անել միայն Ղարաբաղի հայության նոր համագումարը։ 1919 թ. փետրվարի 10-ին Շուշիում հրավիրվեց արցախահայության 4-րդ համագումարը, որը տեսաց մինչև փետրվարի 21-ը։ Համագումարին մասնակցում էին 50 պատգամավորներ։<sup>3</sup> Անդիխական հրամանատարու-

1 «Հառաջ», 25 ապրիլի 1919 թ.

2 Խույն տեղում։

3 «Արձագանք» 3 մարտի 1919 թ., «Մշակ», 21 մարտի 1919 թ., ՀՀՊԿ, թ. 252, գ. 1, գ. 1, թթ. 15—16։

թյան համաձայնությամբ նրա աշխատանքներին մասնակցում էին նաև Բաքվի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ և Զարդարանք և Գ. Բալայանը, վերահսկելու համար համագումարի աշխատանքները և ստեղծելու հասարակական որոշ տրամադրություն։<sup>1</sup>

Համագումարը քննության առավ Ազրբեջանին և նոր նշանակված ընդհանուր գեներալ նահանգապետին ցույց տրվելիք վերաբերմունքի հարցը:

Արտահայտելով ժողովրդի անհողողդդ կամքը, համագումարը որոշեց՝ լճանաշել Ազրբեջանի իշխանությունը Հայկական Ղարաբաղի սահմաններում և բողոքել բրիտանական ներկայացուցչությանը, Բաքվի բրիտանական զորքերի հրամանատար Թոմմսոնին, Հայաստանի Հանրապետությանը; Ազրբեջանի պառամենտի նախագահին՝ Ազրբեջանի ոտնձգությունների դեմ:

Ինչ վերաբերում է Խոսրով թեկ Սուլթանովին գեներալ նահանգապետ նշանակելու մասին, ապա համագումարը պարզ ու որոշակի հայտնեց, որ Հայկական Ղարաբաղը՝ պատմական Արցախը, իր սահմաններում Ազրբեջանի գոյությունը երբեք չի ճանաշել և չի ճանաշելու, ուստի վերջինս ոչ մի բարոյական իրավունք չունի գեներալ նահանգապետ նշանակելու Ղարաբաղում:

Տարածաշրջանում խաղաղությունը վերականգնելու, Ղարաբաղի հարցը քաղաքական ճանապարհով լուծելու կարելիությունից ելնելով, համագումարը հանդես եկավ երկու կարևոր հայտարարությամբ:

ա) Մինչև Փարիզի վեհաժողովի կողմից Հայկական Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը, երկրի կառավարելու ժամանակավորապես թողնել Ազգային խորհրդին, անզիփական ներկայացուցչության հսկողության ներքո՝ մտցնելով խորհրդի կազմի մեջ համեմատական թվով թուրք ներկայացուցիչներ:

բ) Եթե կառավարելու այդ եղանակը անընդունելի է, ապա հաստատել անմիջական անզիփական գեներալ նահանգապետություն, նրան կից ունենալով հայ-թուրքական խորհուրդ:

Այդուհանդերձ, համագումարը ընդունելի համարեց նույնիսկ

1 ՀՀՊՊԿ, ֆ.252, ց.1, գ.1, թթ. 18—19, «Մշակ», 21 մարտի 1919 թ.:

Աղրբեջանի կողմից նշանակված դեներալ նահանգապետությունը, պայմանով, որ Աղրբեջանի զորքերը ոտք չդնեն Ղարաբաղի սահմանները:<sup>1</sup>

Համագումարին հաջողվեց հարթել տարածայնությունները Ղարաբաղի զինվորական հրամանատարների հետ:

Ընտրվեց Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդ: Նրա կազմում էին Ասլան Շահնաղարյանը, Եղիշե Խշինյանը, Աշոտ Մելիք Հովսեփյանը, Խշին Միքարեկյանը, Արտաշես Տեր—Միքայելյանը և Հրանտ Բահամբիյանը:<sup>2</sup>

4-րդ համագումարը Ազգային խորհրդին հանձնարեց ստեղծել զինվորական շտար, որը պետք է զբաղվեր երկրի պաշտպանության հարցերով:<sup>3</sup> Համագումարի որոշմամբ Ազգային խորհրդին կից ստեղծվեց գործոցական բաժանմունք կրթական գործը զեկավարելու համար:<sup>4</sup>

Հետհամագումարյան ժամանակաշրջանում Ղարաբաղի հայության քաղաքական, մշակութային ու տնտեսական կապերը զգալիորեն ամրապնդվեցին մայր Հայաստանի հետ: Ղարաբաղի նորաստեղծ Հայոց Ազգային խորհուրդը, որը մինչ այդ էլ տեղական ինքնիշխանության գործադիր մարմնի դեր էր կատարում, ոգեշնչված Հայաստանի Հանրապետության կառավարության արդեն նշված 1919 թ. հունվարի 21-ի որոշմամբ, ավելի եռանգուն կերպով ձեռնամուխ եղավ կենտրոնական իշխանության լիազորած պարտականությունների կատարմանը: Ազգային խորհուրդը, զրկված լինելով Հայաստանի կառավարության հետ կապի և հաղորդակցության տարրական միջոցներից, նշանակում է իր լիազորները, նրանց տալով համապատասխան վկայաթուղթ, որը ներկայացվում է ստորև.

«Սույնը Ղարաբաղի Հայկական Ազգային խորհրդի կողմից տրվում է (25 փետրվարի 1919 թ. — Հ.Հ.) Ղարաբաղի և Զանգե-

1 «Աշխատավոր», 25 ապրիլի 1919 թ., «Հառաք», 5 մարտի 1919 թ., ՀՀՊԿ, ֆ. 252, ց.1, գ.1, թթ. 18—19:

2 ՀՀՊԿ, ֆ.200, ց.1, գ.193, մաս 1, թ. 223, «Ժողովուրդ», 26 մարտի 1919 թ., Աշխատավոր», 12 մարտի 1919 թ.:

3 «Հայրենիք», հունիս, 1919, էջ 133:

4 ՀՀՊԿ, ֆ.199, ց.1, գ.38, թ.19:

զուրի հայրենակցության վարչության անդամներ Առաքել Բաբա-  
խանյանին (Լեռ) և Միքայել Ղարաբեկյանին, առ այն, որ նրանք որ-  
պես Ազգային խորհրդի կողմից ներկայացուցիչներ լիազորված են  
այցելելու և Ղարաբաղի հայ ժողովրդի քաղաքական, ազգային և  
տնտեսական շահերին վերաբերող հարցեր բարձրացնելու ինչպես  
դաշնակիցների հրամանատարության, այնպես էլ Հայաստանի Հան-  
րապետության կառավարության առջև։<sup>1</sup>

Հատկանշական է, որ Հայաստանի իշխանությունը ընդունել և  
նրա հետ փոխազարձ կապի մեջ էին մտել Լեռնային Ղարաբաղի մի  
շարք շրջանների տեղական իշխանությունները։ Այսպես, 1919 թ.  
փետրվարի 17-ին Զրաբերդի գավառի ժամանակավոր իշխանության  
ֆինանսական կոմիսարը գրություն էր ուղարկել Հայաստանի  
Հանրապետության վարչապետին, որտեղ նկարագրելով գավառի  
ծանր վիճակը, խնդրում էր օգնություն։ «Խնդրում եմ Հատուկ  
Զրաբերդի համար մի հարյուր հազար ռուբլի օժանդակություն  
Հայաստանի կառավարության գանձարկողից, առանց որի իշխա-  
նությունը անկարող կլինի յուր գործերը կանոնավորել»։<sup>2</sup>

Այս վավերագիրն իր հերթին մի ավելորդ անգամ ևս հավաս-  
տում է, որ հայկական Ղարաբաղը փաստորեն շի ճանաշել իր սահ-  
մաններում Աղբերեջանի իշխանությունը։ Այսպիսով.

1. Արցախահայությունը սկզբունքորեն ոչ ասաց իր բնօրրան  
երկրը Աղբերեջանի կազմում ճանաշելու մասին վերջինիս եռանդուն  
շանքերին և բրիտանական հրամանատարության իրար հաջորդող  
բազմաթիվ պահանջներին, վերջնագրերին ու հարկադրանքներին։

2. Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության հետ վերա-  
միավորելու կամ համահայկական իշխանության ազդեցության  
ներք Արցախի մարզային վարչություն ստեղծելու համար մղվող  
գոյապայքարը, պատմական անհրաժեշտությունից բացի, թելագրր-  
ված էր նաև երկրին գաղութացում սպառնացող վտանգը կանխե-  
լու իրական հանգամանքներով։

Դրությունը շարունակում էր բարդանալ։ Աղբերեջանական մու-

1 ՀՀՊՊԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.19։

2 Նույն տեղում, թթ. 11—12։

սավաթները անգիտացիների հովանավորությամբ, աստիճանաբար ձգում ու նեղացնում էին Արցախ աշխարհին օղակած պարանք: Մուսավաթ պարագուխները տեսնդորեն շարունակում էին մեծ քանակությամբ զինական ուժեր կենարոնացնել Ղարաբաղի ռազմավարական նշանակության կետերում: Թաթարական խուժանը փակել էր Շուշի քերող ճանապարհները: Սովորանովը Ղարաբաղը հեշտությամբ նվաճելու հույս էր փայտայում: 1919 թ. փետրվարի 25-ին իր կառավարությանն ուղղած բացատրագրի մեջ նա շարադրում է Ղարաբաղի հայությանը ընկնելու իր հրեշտավոր պլանը, ըստ որի հայերը, հատկապես, դաշնակները «որպես անհանդիստ տարր», պետք է ձերբակալվեին և վտարվեին Ղարաբաղի սահմաններից, որ Ադրբեջանի վարչությունը պետք է հաստատվեր ամենուրեք, որպես գրա համար հնարավոր լիներ օգտագործել անզիւական ռազմական ուժը: Բարվի իր շեֆերին նա վստահեցնում էր, որ ինքը, քայլ առ քայլ, առանց ֆիզիկական ուժի գործադրման կկարողանա ստիպել հայերին, որ նրանք ընդունեն Ադրբեջանի կառավարության իշխանությունը:<sup>1</sup>

Այս զեկուցագիրը ցույց է տալիս, որ ինչպես մուսավաթական կառավարությունը, այնպես էլ Արցախում նրա դրածո Սովորանովը հենվում էին անզիւական հրամանատարության և նրա ռազմական ուժի վրա: Ահա թե այդ հրամանատարությունը, ինչպես է հաստատում Բարվի «Նաշե վրեմյա» թերթը: Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանը օգտվում է բրիտանական հրամանատարության աջակցությունից, իսկ անզիւական հրամանատարությունը՝ շարունակում է թերթը, — ձեռնարկում է բոլոր միջոցները՝ հաստատելու Ադրբեջանի իշխանությունը: Թերթի եզրակացությունն այն է, որ բրիտանական քաղաքականությունը հզի է ծանր հետևանքներով, որովհետեւ «Ղարաբաղի բնակչությունը ինքնակամ չի համաձայնի ընդունել ադրբեջանական կալվածատերերի և բեկերի իշխանությունը»:<sup>2</sup>

Ղարաբաղը կանգնած էր նոր արյունահեղությունների առջև Ասկերանում, Խանքենդում, Զարուղում և Շուշվա մուսուլմանական

1 Նույն տեղում:

2 «Наше время», 5 апреля 1919.

մասում՝ տեղակայված աղբբեցանական մի քանի հազարանոց զորամասերը և թաթարական զինված ամբոխը սպասում էին հրամանի, Զարարադում մեծամշտար մարտական գործողություններ ծավալելու համար:

Պատերազմը վարելու համար Զարարադը շուներ անհրաժեշտ Հայոց Ազգային խորհուրդը անում էր ամեն ինչ հնարավոր պատերազմից խուսափելու համար: Նա իր անդամներից մեկին՝ Լեռն Զարաֆյանին ուղարկեց Երևան, որպեսզի հանրապետության կառավարությանը տեղիկացներ երկրի անկախությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգի, դրա դեմ պայքարելու համար բավարար ուժեր շունենալու և այլնի մասին: Լ. Զարաֆյանը, Ազգային խորհրդի անումից, Հայաստանի կենտրոնական գործադիր մարմնին իրազեկ դարձրեց, որ Զարարադը կարող է զենքի կոշել 10—12 հազար մարդ, սակայն դրան խանգարում են զենքի, զինամթերքի և փողի պակասությունը, ինչպես նաև ռազմական ամուր կազմակերպության և հեղինակավոր զինվորական հրամանատարի բացակայությունը: Նա խնդրում է Հայաստանի կառավարությանը շտագ կերպով կազմակերպել Զարարադին նյութական ու ֆինանսական օգնություն, որպեսզի կարճ ժամանակամիջոցում վերականգնվեր նրա հասարակական և տնտեսական կյանքը: Իսկ պաշտպանական համակարգը ուժեղացնելու և զինվորական գործը կազմակերպելու ու դեկավարելու համար Արցախ ուղարկել հեղինակավոր և փորձված զինվորական: <sup>1</sup> Հայաստանի կառավարությունը, այս գեպքում նույնպես, ինչպես կտեսնենք, անվճռականություն հանդիս բերեց:

Զարարադի Հայոց Ազգային խորհուրդը Վահան եպիսկոպոսի և իր անդամ Բահաթրյանի միջոցով արցախահայությանը սպառնացող նոր վտանգի մասին իրազեկ դարձրեց նաև գեներալ Թոմսոնին:

Բարգում գտնվող բրիտանական զենքալին նրանք ներկայացրին Զարարադի դրության և Ազգային խորհրդի պահանջների մասին հուշագիր: Նրանում ասված է, որ Զարարադի աշխատավո-

1 ՀՀՊԳԿ, թ.200, ց.1, գ.243, թթ. 53—54:

բությունը չի ցանկանում արյուն ու ավեր, տենչում է խաղաղ աշխատանքի, իսկ ալղափիսի կյանք նրան չի կարող տալ Աղբեջանի նման արյան ծարագլ մի կառավարություն։

Ուշագրագլ է, որ Աղբեջանի ռազմամոլ պահվածքի համար Ղարաբաղի Աղղային խորհուրդը, միանգամայն իրավացի կերպով, պատասխանատու է համարում նաև բրիտանական ներկայացուցչությանը և նրա ղեկավար Թոմասոնին, որոնք վարում էին աղբեջանամետ քաղաքականություն։ Այդ կապակցությամբ Աղղային խորհուրդը հուշագրում այն արտահայտել է հետևյալ կերպ։

«Ընդառաջ զնալով դաշնակից հրամանատարության պահանջներին, հայերը ձեռնպահ մնացին ամեն տեսակի ռազմական գործողություններից, մինչդեռ անգիտական ներկայացուցչության դալուց հետո, աղբեջանական կառավարությունը, տաճիկ սպաների հրամանատարությամբ առաջ քաշեց իր զորքերը ռազմավարական կետերի ուղղությամբ՝ գեպի Ասկերան, Խանքենդ, Զարուղ, Շուշի և Կարբագինո։ Այս զործողությունները Ղարաբաղի հայ աղղաբնակչությունը համարում է իրեն աղբեջանական կողմի նախնական ազգեսիա, որը հայերի մեջ ստեղծում է բնական հուզմունք և գրգռում։ Ղարաբաղի Հայոց Աղղային խորհուրդը անկեղծորեն ցանկանում է դավառում հաստատել կարգ ու կանոն։ Քրա համար Աղղային խորհուրդը առաջարկել է. «անգիտական հրամանատարությունը պետք է հայկական մասում վերացնի Աղբեջանի գեներալ նահանգապետությունը, շուտափույթ հեռացնի Ղարաբաղի հայկական շրջաններից այն զորքերին, որոնք, հակառակ անգիտական հրամանատարության, գրավել են հայկական զիրքերը»։ Այդ ամենից հետո նոր միայն հնարավոր է զիմել զործնական քայլերի, — ասված է հուշագրում։ Ստորև բերում ենք նախատեսված զործողությունները։ 1. կամ Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը միացնել անմիջապես կամ ժամանակավորապես, մինչև Փարիզի հաշտության կոնֆերանսի վճիռը, 2. պահել այն գրությունը, որպիսին կար մինչեւ թուրքերի Ղարաբաղ գալը, այսինքն՝ վերականգնել նրա կառավարությունը, կամ 3. նշանակել անգիտական ընդհանուր նահանգապետ հայկական շրջանում, պահպանելով տեղական (հայկական) վարչությունը կամ, ասել է թե, նրա ինքնավարու-

թյունը:<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսք է զնում այնպիսի  
պահանջների մասին, որով հայկական կողմը ցանկանում էր զի-  
շումների միջոցով, իւրակե, բախտը երբեք չկապելով Աղքարեցանի  
հետ, հարցը լուծել խաղաղ կերպով։ Դրանց հավաստիու-  
թյունը որևէ կասկած չէր հարուցում թումանի մոտ, հենց միայն  
նրանով, որ նա բացատեղյակ էր, որ անգիտացիների Ղարաբաղ  
մուտք գործելուց հետո արցախահայության պայքարը ուղղված է  
եղել հենց այդ նպատակների իրականացմանը։ Անզիտի գեներա-  
լին կասկած չէր հարուցում և այն, որ Ղարաբաղի ժողովուրդը հա-  
մառորեն չէր ուզում ենթարկվել Աղքարեցանի գերիշխանությանը,  
կամ որ նույնն է՝ Սուլթանովի գեներալ նահանգապետությանը։  
Պատասխան խոսքում գեներալ թումանը եռանդուն կերպով շա-  
նում էր հավաստիացնել հայ բանագնացներին, որ Ղարաբաղում  
Աղքարեցանի գեներալ նահանգապետություն հաստատելու հանգա-  
մանքը պայմանավորված է գավառում հայ—թաթարական ազգա-  
րնակշության միջն ստեղծված վտանգավոր լարվածությամբ, որը  
հղի էր ողքերգական հետեանքներով։ Գեներալը փորձում էր հայե-  
րին համոզել, որ աղքարեցանական իշխանության հաստատումը  
արվել է ի շահ հայերի, այն իմաստով, որ Ղարաբաղի հայ բանկ-  
շությունը կազմակերպված զինվորական ուժ և զինամթերք, ամե-  
նագլխավորը՝ ֆինանսական միջոցներ շունի։ Մինչդեռ Աղքարեցանը  
նախապատրաստում էր զինված ուժեր կենտրոնացնել Աղդամում,  
Ղարաբաղի վրա հարձակվելու համար։<sup>2</sup> Բայց ոչ միայն դրանով։  
Բայց թումանի դա կապ ուներ նաև գաղթականության հետ<sup>3</sup> և  
որ ինքը հենց գաղթականության շահերը նկատի ունենալով, ստիպ-  
ված է եղել հենվել իրական ուժի վրա, և որ ազգով մուսուլման  
անձանց պաշտոն ստանձնելը երբեք չի որոշում Ղարաբաղի հարցը։  
Եարունակելով իր միտքը, գեներալը պնդում է, որ «Սուլթանովի  
նշանակումը որպես Ղարաբաղի թուրքերի մեջ մեծ ազդեցություն

1 «Մշակ», 18 մարտի 1919 թ., 21 մարտի 1919 թ., ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1 գ.243,  
թթ. 31—32։

2 Նույն տեղում։

3 1919 թ. սկզբներին Ղարաբաղում հաշվվում էր շուրջ 40000 գաղթական, որից  
10000-ը մուսուլմաններ և 30000-ը հայեր։ ՀՀՊՊԿ, ֆ.199, գ.1 գ.23, մաս 1, թթ.  
143—144։

ունեցող մարդու՝ ապահովում է կարգը, իսկ գեներալ Մեխմանդարովը պատասխանատու է Եվլախ—Շուշի ճանապարհի համար»:<sup>1</sup>

Ղարաբաղը Հայաստանի ենթակայությանը հանձնելու խնդրի կապակցությամբ, Թոմսոնը պատասխանում է, որ ինքը չի կարող հենվել Հայաստանի կառավարության վրա, քանի որ Երևանը կտրված է Շուշիից:<sup>2</sup>

Ի դեպ, այս տեսակետները Թոմսոնը պաշտպանեց նաև Երևանում: 1919 թ. մարտի 25-ին Երևանում Թոմսոնի մասնակցությամբ տեղի ունեցավ Հանրապետության կառավարության ներկայացուցիչների խորհրդակցություն, նվիրված Ղարաբաղի հարցին:

Անզիփացի գեներալը ամեն տեսակի խարեւություններով ու սպառնալիքներով աշխատում էր Հիմնավորել, որ Աղրբեջանի ժամանակավոր իշխանության հաստատումը, մինչև խաղաղության կոնֆերանսի վճիռը, անխուսափելիորեն բխում է Ղարաբաղում տիրող վատթարագույն քաղաքական ու տնտեսական պայմաններից: Արդի ծառայություններ մատուցող անզիփացին ուներ մի նպատակ՝ Հայաստանի կառավարությունից համաձայնություն ստանալ Արցախի նկատմամբ հովակնություն շռնենալու մասին: Թոմսոնի այսանքը վճռական մերժում ստացավ: Հանրապետության կառավարությունը հայտարարեց, որ Ղարաբաղի հարցը Հայաստանի համար փախստականների հարց չէ, այլ քաղաքական հարց է, որ Ղարաբաղը եղել է և կմնա որպես Հայաստանի անբաժանելի մաս:<sup>3</sup>

Ղարաբաղը Հայաստանից կտրելու և այն Սուլթանովի գեներալ նահանգակետությանը ենթարկելու միտումով տենդորեն գործող անզիփացիները խորհուրդ էին տալիս Սուլթանովին մեկուսացնել և ասպարեզից հեռացնել Հայ քաղաքական գործիչներին, ամենից առաջ նրանց պարագուիսներին, որոնք «ալեկոծում» էին ժողովրդին: Նրանք շատ անհանգստացած էին հատկապես դաշնակցական գործիչներից և հիմնական պայքարն ուղղել էին նրանց

1 «Զանգ», 2 ապրիլի 1919 թ.

2 «Ժողովուրդ», 2 ապրիլի 1919 թ., «Զանգ», 2 ապրիլի 1919 թ.

3 «Արձագանք», 18 ապրիլի 1919 թ., «Արեւ», 9 ապրիլի 1919 թ., ՀՀՊԸԿ, ֆ.199, գ.1, գ.223, մաս1, թթ. 143—144

դեմ։ Ահա թե այդ կապակցությամբ անգլիացի մայորը ինչ խոր-  
հուրդ էր տալիս Սովորանովին։ «Գրեթե բոլորն, առանց բացառու-  
թյան, պատկանում են դաշնակցությանը, և նրանց շափակոր մարդ-  
կանցով փոխարինելով, կարելի է հուսալ, որ Հայկական հասարա-  
կական կարծիքը ավելի ողջախո՞ւ ուղղություն կտտանաւ»<sup>1</sup>

Դարաբաղի զլիսավոր նահանգապետին անհանգստացնում էր  
Գերասիմ Մելիք Շահնազարյանի Շոշվա քաղաքավորուս լինելու  
հանգամանքը։ 1919 թ. մարտի 17-ին, Սովորանովը մի գրությամբ  
Գերասիմ Մելիք Շահնազարյանին հայտնեց, որ նա պաշտոնից  
հեռացված է։ Սակայն այս ցինիկ առաջարկը վճռական մերժում  
ստացավ։ Գերասիմ Մելիք Շահնազարյանը պատասխանեց, որ  
ինքը ընտրված է ժողովրդի կողմից և չի ճանաշում Ազրբեջանի  
գեներալ նահանգապետությունը<sup>2</sup>։ Ազրբեջանի իշխանությունը  
շնանաշող Արցախի հայ պետական պաշտոնյաներին ու աստի-  
ճանավորներին Սովորանովը փորձեց «դարձի բերել» սովոր սպառ-  
նալիքով։

1919 թ. մարտի 16-ին Սովորանովը Հրապարակեց Հերթական  
տիրահաշտակ հրամանը՝ ոռճիկ կստանան միայն այն աստիճանա-  
վորները, որոնք կանխակալ կստորագրեն, որ հունիսից սկսած ծա-  
ռայել են Ազրբեջանին և ամենայն եռանդով պետք է շարունակեն  
իրենց ծառայությունը<sup>3</sup>։

Հրամանը մեծ հուզումների տեղիք տվեց։ Մարտի 19-ին Շու-  
շիի ոեալական դպրոցի դաշլիճում կայացավ քաղաքի պետական  
հիմնարկների ու դպրոցների ծառայողների ընդհանուր ժողով, ուր  
քննության դրվեց սույն կարգադրությունը։ Ժողովը ընտրեց ութ  
հոգուց բաղկացած հանձնաժողով, որը պետք է այդ մասին տեղ-  
յակ պահեր Շուշիի անգլիական ներկայացուցությանը և պահան-  
ջեր միջոցներ ծեռնարկել այդ անօրինական քայլի դեմ<sup>4</sup>։ Հարկ է  
նշել, որ անգլիական ներկայացուցությունը, ինչպես միշտ, այս

1 ՀՀՊՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թթ. 11—12:

2 Նույն տեղում:

3 «Արև», 4 ապրիլի 1919 թ.:

4 Նույն տեղում։

գեպրում ևս զորակից դարձավ Սուլթանովի «Նախաձեռնությանը»:

Բրիտանական գաղութային զենքին ապավինելով, Ղարաբաղի գեներալ նահանգապետը դիմեց նոր արկածախնդրության: Նա նույն պահանջով դիմեց նաև Շուշիի հայկական ռեալական դպրոցի մանկավարժական կոլեկտիվին: Արթության ու մշակույթի արժեքը հասկացող ու գնահատող արցախցին, միանշանակ պատասխան տվեց «Մեր խիզճը դրամով շենք կարող ծախել»:<sup>1</sup>

Մարտի 25-ին քաղաքային վարչության շենքում կայացավ բազմամարդ ծնողական ժողով, որը քննության առնելով Սուլթանովի պահանջը, բնույնեց հետեւյալ բանաձեւը. ռեալական դպրոցը բացված է անգլիական ներկայացուցչության աշխատակից, կապիտան Սերայտի գրավոր կարգադրությամբ, նախկին հիմունքներով: Նրա բացմանը Ազրբեջանը շի մասնակցել, որ Ղարաբաղը, իբրև վիճելի երկրամաս, կառավարման որոշակի ձև չունի, հետեւապես նախքան տվյալ խնդրի լուծումը ոչ մի կառավարություն շի կարող այնտեղ քաղաքական նշանակություն ունեցող որևէ քայլ կատարել, որ հայկական Ղարաբաղն իր չորրորդ համագումարի միջոցով շատ պարզ և կտրուկ հայտարարել է իր վերաբերմունքը դեպի Ազրբեջանը, երբեք հիմք շի տվել ռեալական դպրոցի մանկավարժական խորհրդին հակառակ քայլեր անելու:<sup>2</sup>

Վերադառնանք Շուշիի անգլիական ներկայացուցչության գործունությանը: Պետք է ասել, որ վերջինս առանց արցախահայության տրամադրությանը լավ ծանոթանալու, իր ազրբեջանամետ քաղաքականության ձախողման ամրողջ պատասխանատվությունը բարդեց Ազգային խորհրդի վրա և միանգամայն սխալ ընթացք ընեց: Նա ենթադրում էր, որ եթե խիստ միջոցներ կիրառի Ղարաբաղի Ազգային խորհրդի ազդեցիկ անդամների նկատմամբ, ապա հնարավոր կլինի Արցախը ենթարկել Խոսրով քեկ Սուլթանովին, ասել է թե, Ազրբեջանի իշխանությանը: Նա սկսեց բռնության ու հալածանքի քաղաքականությունը: Նախ, Շուշիից հեռացրեց Գ. Բալայանին և լ. Զառաֆյանին,<sup>3</sup> որոնք ինչպես հայտնի է, բոլորովին

1 «Արև», 26 մարտի 1919 թ.:

2 «Արև», 21 մարտի 1919 թ.:

3 «Արև», 9 ապրիլի 1919 թ.:

Նոր էին եկել Բաքվից և բնական է, որ իրենց կարճատես գործունեության ընթացքում դժվար թե առիթ տված լինեին որևէ կերպ կասկածելու իրենց նկատմամբ:

Դրան հաջորդեցին նոր խաղեր: Անզիտական հրամանատարությունը Բաքու հրավիրեց վեց հայ պատգամավորների: Ազգային խորհուրդը ընտրեց Բաքու մեկնող պատվիրակություն հետեւալ կազմով՝ Շուշիի քաղաքագլուխ Դ. Մելիք Շահնազարյան, Ազգային խորհրդի անդամ Ար. Տեր—Միքայելյան, Զանախչիի գյուղական համայնքի կոմիսար Ա. Թումանյան, Ազգային խորհրդի գաղթականության բաժնի նախագահ Կ. Մինասրեկյան, իրավաբան Մ. Վարդապետյան և մանկավարժ Ան. Տեր—Միքայելյան: Բայց երևութին, պատվիրակության կազմը անզիտացիների սրտովը չէր: Այլապես ինչով բացատրել այն փաստը, որ պատվիրակության հետ ծանոթանալուց հետո, Բաքվի բրիտանական հրամանատարության թելադրանքով, Շուշիի ներկայացուցչությունը նոր պահանջով դիմեց Ղարաբաղի Ազգային խորհրդին, այն է՝ Բաքու պետք է մեկնեն Ազգային խորհրդի նախագահը և նրա օգնականը: Կարծում ենք, որ դրանով բրիտանական հրամանատարությունը կամենում էր հեռացնել վերոհիշյալ անձանց Ղարաբաղից, նրանց համարելով անհաջող ու անհնագանդ գործիչներ:

Ղարաբաղի Ազգային խորհուրդը այդ որոշումից վրդովված, զրությամբ հայտնում է անզիտական ներկայացուցչությանը, նշելով, որ գրանով նա փաստորեն դադարեցնում է Ազգային խորհրդի գործունեությունը, որը, անշուշտ, Արցախի քաղաքական կացության համար կունենա բացասական հետեւանքներ: Ազգային խորհրդը հանդիս եկավ նոր առաջարկությամբ՝ Բաքու պետք է մեկնեն խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը և երեք քաղաքացիներ: Ներկայացուցչությունը առաջարկությունը մերժեց: Երկար բանակցելուց հետո, կողմերը եկան համաձայնության, որ Բաքու մեկնեն Ասլան Շահնազարյանը և Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք Շահնազարյանը:<sup>1</sup>

1919 թ. մարտի 26-ին Բաքվում Ղարաբաղի պատվիրակները

1 «Արև», 9 ապրիլի 1919 թ., ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.293, թթ. 45—47:

Հանդիպում ունեցան գնդապես Շատելվորդի<sup>1</sup> հետ Անդրիական գնդապետը անվերջ պնդում էր իրենք՝ ընդունել Ազրբեջանի գններալ նահանգապետ Սուլթանովի իշխանությունը:

Արցախի պատվիրակները հանդաւմանորեն բացատրում են, որ մի ժողովուրդ, որն իր ազատությունը և անկախությունը պահպանելու համար տվել է հազարավոր զոհեր, անտեսապես հյուծվել է ազրբեջանական մուսավաթականների ու տաճիկների պատճառով, երբեք շի ընկճվի և զենքը ձեռքին կմարտնչի դավթիշների դեմ:

Հարկ ենք համարում ընթերցողի ուշադրությանը հանձնել Շատելվորդի հետ զրույցից մի հատված: Վերջինիս այն հարցին, թե ինչի՞ է ձգուում Զարարադի հայությունը, Ասլան Շահնազարյանը աներկյուղ պատասխանում է. «Դեպի մեծ Հայաստանը, որի հետ նրա լեզվական, մշակութային և տնտեսական կապերը ընդհանրական են»:

Անշուշտ, Շատելվորդին շէր գոհացնում նման պատասխանը: Գնդապետը խոսում էր ուժի դիրքից. զնացեր և համոզեր ձեր ժողովրդին, որ ժամանակավորապես ընդունի զեներալ նահանգապետ Սուլթանովի իշխանությունը: Հակառակ զեպքում լիովին պատասխանառու եք հետևանքների համար և ամեն մի քայլ Ազրբեջանի դեմ, կդիտվի Անդրիային դեմ: Քաղաքագլուխ Գերասիմ Մելիք Շահնազարյանը պատասխանում է, որ անկարելի է հայությանը համարել թշնամի Ազրբեջանին ենթակա, քանի որ նա ընդունակ չէ անդամ իր երկրում կարգ ու կանոն հաստատել, ուր մնաց Զարարադի ազատասեր ու կուլտուրապես բարձր հայությանը կառավարել<sup>2</sup>:

Ազրբեջանի զերիշխանությունը ճանաշել տալու Շատելվորդի շանքերը ապարդյուն անցան: Զարարադի պատվիրակները մնացին անդրդվելի: Շատելվորդը զայրացած էր հատկապես Ա. Շահնազարյանի հաստատակամությունից: «Ամենից անհաշտը հայերից, — դրում էր նա, — դաշնակցական կուսակցության հայտնի անդամ

1 1919 թ. վերջերին Թումանյան կարգեց Անդրկովկասում բրիտանական գորքերի դլամբը հրամանատար: Նրա փոխարքն Բաքու գնաց գնդապետ Շատելվորդը: Տես «Արձագանք», 21 ապրիլի 1919 թ.:

2 «Нагорный Карабах в 1918—1923», с. 135—139, ՀՀՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.5, թթ. 10—11, գ.293, թթ. 45—47, գ.252, ց.1, գ.5, թթ. 4—5:

Ասլան Շահնազարյանն է: Ես այդ պարոնին բազմիցս զգուշացրեցի վերադառնալ Շուշի և ընակչությանը համոզել ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Նա հայտարարեց, որ ինքը մտադրված չէ այդ պայմանով վերադառնալ Շուշի: Ես թույլատրեցի նրան մնալ Բաքվում»:<sup>1</sup> Հարցի հետ առնչվող տվյալները ցույց են տալիս, որ Ա. Շահնազարյանի Բաքվում մնալու վերաբերյալ Շատելվորդի բացատրությունները կեղծիք են: Իրականությունն այն է, որ Բաքվի բրիտանական հրամանատարությունը արգելեց Շահնազարյանին վերադառնալ Շուշի, որովհետև նա հրաժարվեց կատարել Շատելվորդի պահանջը և հայտարարեց, որ «հայերը երբեք չեն ենթարկվի Ադրբեջանի հրամաններին, և նրանք զենքով կդիմադրեն բոլոր նրանց, ովքեր կփորձեն մտնել իրենց երկիրը»:<sup>2</sup>

Ապրիլի 3-ին գեղապետ Շատելվորդը բրիտանական զորական ներկայացուցչության անունից հայտարարություն արեց, որով կոչ էր անում Ղարաբաղի հայ ընակչությանը, առանց դիմադրության, ենթարկվել հոսորով թեկ Սուլթանովի հրամաններին, ընդունել Ադրբեջանի գեներալ-նահանգապետությունը:<sup>3</sup> Շատելվորդի հայտարարությունը, արցախահայության համար հղի էր նոր վտանգներով: Հայաստանի կառավարությունը վճռականորեն բողոքեց Բաքվի բրիտանական հրացանատարությանը այդ հայտարարության դեմ<sup>4</sup> և կատարեց գործնական քայլեր Հայաստան—Արցախ վարչական համապետական միասնության հաստատման ուղղությամբ: 1919 թ. ապրիլի 11-ի որոշմամբ, ծննդով շուշեցի Միքայել Արզումանյանը նշանակվեց Շուշիում անգլիական ներկայացուցչությանը կից Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ:<sup>5</sup>

Ինչպես վկայում են վավերագրերը, Շատելվորդը իր ծրագրերի իրականացման հանդեպ շափականց հետևողական էր, հատկապես, երբ խոսքը վերաբերվում էր Արցախին: Շատելվորդի վերը նշանակ

1 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.309, թթ. 9—10:

2 «Հառաջ», 24 ապրիլի 1919 թ.:

3 Նույն տեղում, 25 ապրիլի 1919 թ.:

4 ՀՀՊԳԱԱ, ֆ. 200, ց.1, գ.50, մաս 1, թ.154:

5 «Արձագանք», 10 ապրիլի 1919 թ.:

Հայտարարությանը, հաջորդեց նրա այցը Արցախ։ Նա Ազգային խորհրդից, վերջնագրի ձևով պահանջեց, իր ներկայությամբ լուծել Աղրքեցանին հպատակվելու հարցը։

Բարվի զինվորական հրամանատարությունը ապրիլի 23-ին նշանակեց Ղարաբաղի հայության նոր համագումար, որը պիտի քննության առնվեր այն հարցը, թե ցանկանում է արդյոք հայ ժողովուրդը միանալ Աղրքեցանին, թե՝ ոչ<sup>1</sup>։

Համագումարի բացման նախօրյակին, անգլիական հրամանատարությունը Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդից պահանջեց, որ Ղարաբաղից հեռանան խորհրդի փոխնախագահ՝ Մելիք Հովսեփյանը, խորհրդի անդամներ Եղիշե Իշխանյանը և Հրանտ Բահաթրյանը<sup>2</sup> Ղարաբաղից Ազգային խորհրդի անդամների արտաքումը պատճառաբանվում էր նրանով, որ իր նրանք ծայրահեղ անհաջտ վերաբերմունք են ցուցաբերում գեներալ Նահանգապետ Սուլթանովի և բրիտանական ներկայացուցչության հանդեպ, հրահրում են ազգամիջյան կոիվներ և կարող են իրենց ներկայությամբ ազգեցություն գործել գումարվելիք համագումարի աշխատանքների վրա։

Արցախահայության նոր՝ 5-րդ համագումարը սկսվեց ապրիլի 23-ին և տևեց մինչև ապրիլի 29-ը։ Համագումարի առաջին նիստին մասնակցեցին զնապետ Շատելվորդը և քժիշկ Խոսրով բեկ Սուլթանովը։ Համագումարը այդ նիստում լսեց Շատելվորդի «Ղարաբաղի ժամանակավոր իշխանության վարչական ծրագիրը» զեկուցումը։ Զեկուցման մեջ Շատելվորդը եռանդուն կերպով զանում էր համագումարին խարելով, համոզելով, սպառնալով, բարոյական ճնշում գործադրելով հասնել նրան, որ պատգամավորները Ղարաբաղը ճանաշեն Աղրքեցանի կազմում։

Շատելվորդը շնորշեց անել սուտ հայտարարություն, թե իր Հայաստանի կառավարությունն արդեն տվել է իր համաձայնությունը մինչև խաղաղարար կոնֆերանսի որոշումը՝ ադրբեցանական զենքերալ Նահանգապետության իշխանության տարածմանը հայկական Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ։

1 «Հառաջ», 24 ապրիլի 1919 թ.։

2 ՀՀՀԲԿԱԿԱՎԱ, ֆ.4033, գ.1, գ.547, թ.1, «Հառաջ», 24 ապրիլի 1919 թ.։

Ապրիլի 24-ի նիստում տեղի ունեցավ զեկուցման ժամալուն քննարկումը։ Արտահայտելով կեռնային Ղարաբաղի Հայ աղքա-բնակչության միասնական ցանկությունը, 5-րդ համագումարը ըն-դունեց այսպիսի որոշում։ «Մենք համոզված ենք, որ Ազգբնականը իր մեծ եզրոր՝ Տաճկաստանի օրինակին հետեւելով, ձգտում է ընա-շինչ անել Հայերին . . . Պատմական, կուլտուր-իրավական և մանավանդ տնտեսական պայմանները չեն կարող ոչ մի գեպքում հիմք ժառայել Հայ ժողովրդի վզին փաթաթելու Ազգբնականի թեկուզ ժամանակավոր իշխանության վարչական ձևը։ Այդ ամենի հիման վրա համագումարը անհնարին և անընդունելի է համարում Ազգբն-ականի հետ առնչություն ունեցող որևէ ծրագիր և այդ ծրագրի բռնի իրականացումը կյանքի մեջ համարում է անխուսափելի պատճառ ստեղծելու ազգամիջյան լուրջ խոռվություններ»:<sup>1</sup> Եատելվորդը բնականաբար դժողով մնաց որոշումից և կրկին պահանջեց բնդունել Ազգբնականի հպատակությունը։ Պատգամավորները գտան, որ իրենց որոշումը ճիշտ է, քանի որ լիովին արտահայտում է Ղարաբաղի Հայության միասնական կամքը, որի համար անզիփական հրա-մանատարությունը, եթե կամենա, կարող է համոզվել նաև համա-ժողովրդական հանրաբվեի միջոցով։<sup>2</sup>

Քոշվորների խնդրի առնչությամբ համագումարը որոշեց թույ-լատրել նրանց սար բարձրանալը պայմանով, որ անզիփական զին-վորները ուղեկցեն, որպեսզի Հայ-թաթարական ընդհարումներ շառադրանան։

Սա է պատմական ճշմարտությունը։ Մինչդեռ որոշ հեղինակ-ներ այդ ամենը շրջում են զիփիվայր։ Այսպես, Զ. Գուլիկը հենվելով 1919 թ. մայիսի 22-ին Ռել (թ) Կ Կենտկոմին հասցեագրված Ա. Միկոյանի զեկուցագրի սխալ տեղեկության վրա, թե իր Ղարա-բաղի «Հայ զյուղացիությունն իր հինգերորդ համագումարում որո-շել է ճանաչել Խորհրդային Ազգբնականը (1919 թ. Ազգբնականը չը խորհրդայնացվել—Հ.Հ.) և նույնպես միանալ նրան», եզրակացնում է, թե կեռնային Ղարաբաղի աշխատավորները հանդես են եկել

1 «Ժողովուրդ», 14 մայիսի 1919 թ., «Արև», 30 ապրիլի 1919 թ., 18 մայիսի 1919 թ., «Աշխատավոր», 16 մայիսի 1919 թ.։

2 «Ժողովուրդ», 14 մայիսի 1919 թ., «Աշխատավոր», 16 մայիսի 1919 թ., «Արև», 1 մայիսի 1919 թ.։

«իրենց երկրամասը Ադրբեջանին միացնելու օգտին»:<sup>1</sup> Նույնն է կրկնում Դ. Գուլիելը:<sup>2</sup>

Սկսվեցին Շատելվորդի նոր կեղծիքներն ու սպառնալիքները: Նա Հայաստանի կառավարության ներկայացուցիչներ Միք. Արզումանյանին, Հովհ. Արզությանին և Ղարաբաղի ու Զանգեզուրի Հայոց Ազգային խորհուրդներին բազմիցս հայտարարեց, թե իբր Հայաստանի կառավարությունը պաշտոնապես ճանաչել է Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի վրա:<sup>3</sup>

Երեանի կառավարությունը ժամանակին պաշտոնապես շնչերքեց վտանգավոր այս հայտարարությունը, թեև նա մի շարք անգամներ իր բանավոր պարզաբանումների ժամանակ և իր ներկայացուցիչների միջոցով բրիտանական հրամանատարությանը և Ադրբեջանի կառավարությանը հայտնել էր, որ ինքը ոչ ոքի այդպիսի համաձայնություն չի տվել և չի տալու:<sup>4</sup>

Հայաստանի կառավարության կողմից պաշտոնական հերքում շտալու հանգանանքը սաստիկ հուզեց արցախահայությանը: Այդ կապակցությամբ Ղարաբաղի և Զանգեզուրի հայրենակցական միության վարչության անունից Ա. Բարախանյանը (Լեռ) մայիսի 24-ին դիմեց Հանրապետության կառավարությանը՝ խնդրանքով, որ առանց հետաձգելու պաշտոնական հայտագրով դիմի բրիտանական հրամանատարությանը և հերքի Շատելվորդի հայտարարությունը:<sup>5</sup>

Հանրապետության կառավարությանը նույն պահանջով դիմեց նաև Միք. Արզումանյանը, և մայիսի 5-ին ստացավ պատասխան, որ կառավարությունը ոչ ոքի համաձայնություն չի տվել Ղարաբաղը և Զանգեզուրը զեկավարելու:<sup>6</sup> Միաժամանակ Շուշիում ստացվեց Հայաստանի կառավարության գրությունը, այն մասին, որ «Հայաստանի կառավարությունը շարունակում է մնալ իր

1 «Известия Академии наук Азербайджанской ССР, серия истории, философии и права». 1973, № 23, с. 11—19, «Бакинский рабочий», 14 июня 1988.

2 Մանրամասն տես՝ Հ. Արրանամյան, նշվ. աշխ., էջ 23:

3 Տես՝ «Нагорный Карабах в 1918—1923 гг.», с. 215—220.

4 ՀՀՊՊԿԱ, ֆ. 200, գ.1, գ.271, թ.57, գ.309, թ.108:

5 Նույն տեղում, գ.309, թ.80:

6 Նույն արխիվ, ֆ.199, գ.1, գ.43, թ.84:

Հայեցակետի վրա, որ հայկական Ղարաբաղը Հայաստանի անքածան մասն է և պիտի ենթարկվի Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ Ղարաբաղի Ազգային խորհրդին և իսպառազատ լինի Աղրբեջանի իշխանությանը ենթարկվելուց»:<sup>1</sup>

Արցախի համահայկական 5-րդ համագումարից որոշ ժամանակ անց Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդույց հայտարարեց Շատելվորդին, որ արցախահայությունը մինչև արյան վերջին կաթիլը կապայթարի իր անկախության համար և ընավ չի ընդունի պանխուամական Աղրբեջանի ռազմատենչ իշխանությունը:<sup>2</sup>

Շատելվորդը շարունակում էր շուտափույթ ավարտել Արցախի և ոչ միայն նրա, այլև Զանգեզուրի հանձնումը Աղրբեջանի կենտրոնական իշխանությանը: Շատելվորդը հանձն առավ կատարելու մուսավաթականների մյուս կարեոր ցանկությունը ևս. համոզելու, ստիպելու զանգեզուրցիններին, որպեսզի ընդունեն աղրբեջանական վարչակարգը: Ստանձնելով «այդ գործի» միջնորդի դերը, նա 1919 թ. մայիսին ժամանեց Գորիս և հրավիրելով խորհրդի անդամներին, համոզում էր ընդունել Աղրբեջանի տիրապետությունը, սակարեւում Հայաստանի Հանրապետության նկատմամբ առավելությունների մասին: Զանգեզուրցինների պատասխանը համարձակ էր ու վճռական: «Մեր երկրի վճռոն է, գեներալ, շկանգնել ոչ մի միջոցի առաջ և թույլ շտալ Աղրբեջանին ոտք դնելու մեր երկիրը, մենք միայն մի ցանկություն ունենք՝ հավիտյանս լինենք մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության կաղմում, որի համար ոչ մի միջոցի առաջ կանգ չենք առնի»:<sup>3</sup>

Արխիվներում պահպանվել են անգլիական իմպերիալիստների հակահայկական քաղաքականությունը մերկացնող շատ փաստաթղթեր, Դրանք վկայում են, որ Զանգեզուրը նվաճելու համար բրիտանական զորական ներկայացուցչությունը ամեն կերպ օգնում էր Աղրբեջանին: 1919 թ. հունիսի 2-ին Գորիս եկավ Շուշիի անդիմական ներկայացուցչության պետ Մոնկ—Միգոնը և նույն օրը իր

1 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.309, թ.108.

2 Նույն տեղում, թ.127.

3 «Բանքեր Հայաստանի արխիվների», 1989, թիվ 2, էջ 225.

մոտ հրավիրեց Զանգեղուրի և Ղարաբաղի շրջանային խորհրդի անդամներին և պահանջեց ճանաշել Աղրբեջանի իշխանությունը:

Շրջանային (Ազգային) խորհրդի պատասխանը միանշանակ էր, որ Զանգեղուրի առաջին գյուղացիական համագումարի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության երկրամաս Զանգեղուրի ղեմ կատարված ամեն մի ազգեսիվ գործողություն հայժողովրդի կողմից կհանդիպի ամենահամառ և կատաղի դիմադրության:<sup>1</sup>

Այսպիսով, Ղարաբաղը Աղրբեջանին բռնակցելու գործում անգլիացիները խաղացել են զգալի դեր: Ներկայիս աղրբեջանական պատմաբանները համառորեն շեն ուզում որևէ խոսք ասել այդ մասին: Մինչդեռ ինքը՝ բրիտանական բանակի գնդապետ Շատելվորդն է ասել, որ հայերը մինչև խաղաղության կոնֆերանսի ավարտը «պետք է ենթարկվեն զենքերալ-նահանգապետին, որը նշանակված է բրիտանական հրամանատարության գիտությամբ և համաձայնությամբ»:<sup>2</sup>

Մեկ այլ փաստաթղթում կարդում ենք, բրիտանական հրամանատարությունը պաշտպանում է Սուլթանովին՝ նրա կիրառած բոլոր միջոցներով հանդերձ: Հայերը պետք է հասկանան, որ քանի դեռ Սուլթանովը կշարունակի ճշտորեն կառավարել, մենք նրա կողմը կլինենք, և որ անթույլատրելի է հետագա որևէ դիմադրություն, — այս խոսքերը պատկանում են անգլիական ուազմական ներկայացուցության մայոր Մոնկ Միզոնին:<sup>3</sup>

1 Նույն տեղում, էջ 226:

2 ՀՀՊՊԿ, ֆ.252, ց.1, գ.5, լի. 4—5:

3 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.309, լի. 11—12:

## 2. Սովորականում և բնությունները

Ղարաբաղի նվաճումը մնում էր նրա անկատար երազանքը, որին չկարողացավ հասնել խարդախության ու սպառնալիքների միջոցով, որից հետո անցավ բացահայտ պատերազմի: Հարկավոր էր դիմել կտրուկ միջոցների Ղարաբաղի հայության գևմ ուղղված վտանգը կանխելու համար: 1919 թ. ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Ա. Տիգրանյանը Փարիզ ուղարկված հեռագրում, հասցեագրված հայկական պատվիրակությանը, հայտնում էր Ղարաբաղի ու Զանգեզուրի նկատմամբ մռավաթականների ռանձգությունների ու դաշերի մասին և պահանջում էր դիմել դաշնակից երկրների կառավարություններին, որպեսզի նրանք անհապաղ ձեռնարկեն վճռական միջոցներ՝ կասեցնելու թաթարներին, կանխելու արյունահղությունը:<sup>1</sup> Սակայն դա չարվեց: Զարվեց, որովհետև գաշնակից երկրների պատվիրակները, մասնավորապես բրիտանականը, մտահոգված էին իրենց երկրների բարձր շահերով: Իսկ Ա. Ահարոնյանը (Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայաստանի պատվիրակության նախագահ) համոզվելով, որ մեծ տերությունների ներկայացուցիչները զոհում են հայոց շահերը, 1919 թ. հունիսի 30-ին Փարիզից Ա. Տիգրանյանին ուղղված պատասխան նամակում հայտնում էր, որ «Անգլիան, ինչպես ամեն տեղ, այնպես էլ մեզ մոտ, վարում է քողարկված, բայց սիստեմատիկ մուսուլմանական քաղաքականություն»:<sup>2</sup>

Մղձավանջային այդ օրերին Սովորականով վճռեց արցախահայությանը խեղղել սովի միջոցով: Գեներալ - նահանգապետի կարգադրությամբ մայիսի 20-ից հայերի առջե փակվեցին Թաշտային Ղարաբաղի հետ կապող բոլոր ճանապարհները: Դա շափազանց ծանր կացության առաջ կանգնեցրեց արցախահայությանը: Ամենուր ժողովուրդը հեծում էր սովի ճիրաններում: Բարվում լույս տեսնող «Արև» թերթի հունիսի 27-ի համարում կարդում ենք. «Վարանդան և Խաչենը կանգնած են սովի դռանը, իսկ մի շարք զյուղերում

<sup>1</sup> «Արև», 19 ապրիլի 1919 թ.:

<sup>2</sup> ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.317, թ.38:

արդեն սովէ էր: <sup>1</sup> Սարսափելի էր հայ գաղթականության՝ Գանձակում և գավառում ապաստանած 1915 թ. վերապրողների դրությունը: Զկար կառավարական օգնություն: «Հայ բնակչությունն ի վիճակի շէ օգնելու հինգ հազար գաղթանականների: Գաղթականները ճանանձի նման կոտորվում են սովից, ուժասպառությունից և ամեն տեսակ համաճարակներից»,<sup>2</sup> — այդ օրերին գրում էր «Արևիթերթը»:

Մայրահեղ ծանր դրության մեջ էր նաև գավառի հոգևոր կյանքը: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով փակվել էին բոլոր դպրոցները և աղքային ու հասարակական մյուս հաստատությունները:<sup>3</sup>

Ամենասուկալին երկրամասում տիրող անիշխանությունն էր ժողովուրդը հավատը կորցրել էր իշխանությունների հանդեպ: Անիշխանության ու թողարկության հետեւանքով Ղարաբաղում օրօրի վրա ծաղկում էր ավագակությունը, թալանը և մարդասպանությունը: Այդ կապակցությամբ մեջ ենք բերում Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի նախագահի, 1919 թ. ապրիլին կազմված զեկուցագիրը, որը ամբողջությամբ իրավիճակի նկարագրությունն է ներկայացնում: Հայկական զյուղերը մշտագես ենթակա էին ազրբեջանցիների հարձակումներին: Բացի սպանություններից կատարվում էին և երեխաների առևանգումներ՝ փրկագնի ակնկալիքով:<sup>4</sup>

Սա դեռ բոլորը շէ: Ղարաբաղում իր սկ «գործն» էր անում համաճարակը, որը խլում էր հազարավոր մարդկային կյանք:<sup>5</sup>

Ղարաբաղի ծանր վիճակից «Հմտորեն» օգտվեց Ազրբեջանի կառավարությունը, ի գեմս Սուլթանովի: Վերջինս անցավ վճռական գործողությունների: Նա ծրագրել էր զանգվածային կոտորած կաղմակերպել Ղարաբաղում: Ղարաբաղում ԱՄՆ-ի զինվորական հրամանատարության ներկայացուցչի վկայությամբ, մայիս ամսից Սուլթանովի գործունեությունը Ղարաբաղի հակատմամբ կրտ-

1 «Արև», 27 Հուլիսի 1919 թ.:

2 «Արև», 24 մայիսի 1919 թ.:

3 ՀՀՊՊԿ, ֆ.207, ց.1, գ.252, թ.33:

4 Խոյին արխիվ, ֆ.252, ց.1, գ.1, թթ.48—50:

5 «Արցախ», 28 մայիսի 1919 թ., «Արև», 9 ապրիլի 1919 թ.:

բուկ ազրեսիվ բնույթ ստացավ:<sup>1</sup>

Քրդական ծագում ունեցող նահանգապետի գիտությամբ ու գրդմամբ թաթարական զինված բանդաները և կանոնավոր զորքերը սկսեցին սիստեմատիկարար հարձակվել հայկական բնակավայրերի վրա: Միայն ապրիլ—մայիս ամիսներին ազրեցանական զինուժերը ավելի քան 40 հարձակում կատարեցին հայկական բնակավայրերի վրա:<sup>2</sup>

Հարց է առաջանում, իսկ ի՞նչ էին անում Ղարաբաղի տեղական իշխանությունները, ամենից առաջ Ազգային խորհուրդը հայ բնակչության ինքնապաշտպանության համար: Արդարությունը պահանջում է ասել՝ գրեթե ոչինչ: Անզիհացիների գալուց հետո արցախցին հույս ուներ, որ Թուրքիայի թշնամի Անզիհան նույն քաղաքականությունը չի վարի Ղարաբաղի և նրա հայ ազգաբնակչության նկատմամբ: Դա մի տեսակ լիցքաթափեց, հանգստացրեց արցախցուն, թուրքացրեց նրա զգոնությունը և վճռականությունը: Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահի խոստովանությամբ զարարազցիները, ճշտությամբ կատարելով անզիհական ներկայացուցության առաջարկությունը, Սուլթանովի գործողություններին հակակշռ ոչինչ չձեռնարկեցին:<sup>3</sup>

Ղարաբաղի հայության ծրագրավորված կոտորածի սկիզբը գրվեց 1919 թ. մայիսի 20-ից: Թուրքերն այդ օրը բոլցիոտ հայտարարեցին հայերին և թույլ շտվեցին սննդամթերք անցկացնել հայկական շրջանները: Հայ բնակչությունը հարկադրված եղավ զանազան զարտուղի ճանապարհներով թուրքական շրջաններից առաջին անհրաժեշտության կենսամթերք անցկացնել դեպի հայկական շրջանները: Ճանապարհին թուրքերի կողմից նրանք ենթարկվում էին թալանի ու սպանության:<sup>4</sup>

Ղարաբաղում դրությունը շափականց լարվեց մայիսի վերջին՝ քոչի սար բարձրանալու ժամանակ: Մայիսի 27-ին զինված բանդաների ուղեկցությամբ քոշվորները բռնեցին սար տանող ճանապարհը: Նրանք, խախտելով ավանդույթները, միտումնավոր կերպով

1 ՀՀՊՊԿ, ֆ.252, ց.1, գ.1, թ.64:

2 Նույն տեղում, թ.1:

3 Նույն արխիվ, ֆ.223, ց.1, գ.74, թ.45:

4 «Հայոց Կարախ և 1918—1923», ը. 264—265.

փշացնում էին հայ զյուղացիների ցանքսերն ու բերքը: Շարունակվող անտեսական բոլցոտը ստիպեց դարաբազցիներին դիմել համապատասխան քայլերի: Ազգային խորհրդից նրանք պահանջեցին քոչվորների ճանապարհը փակելու թույլտվություն: Սակայն Ազգային խորհրդուրդը, որը շարունակարար ուղիներ էր որոնում երկու հարեւան ժողովուրդների միջև ավանդական հարաբերությունները վերականգնելու համար, կտրականապես մերժեց այդ պահանջը:<sup>1</sup>

Բոլորովին հակառակ գործելակերպ ուներ Սուլթանովը: Նա ամեն միջոց գործադրում էր, որպեսզի արցախահայությանը ներքաշեր ծավալուն պատերազմի մեջ: Հունիսի սկզբներին գեներալ նահանգապետը կարգադրեց Շուշիի հայկական մասից զանձարանը և հեռագրատունը տեղափոխել քաղաքի թուրքական մաս: Դա լրջորնեն հուզեց քաղաքի հայ ազգարնակշությանը: Բանն այն է, որ այդ հիմնարկություններում աշխատողների մեծ մասը կանայք էին և նրանց համար զժվար էր թուրքական մասում աշխատելը: Հայերը դիմեցին անզիթական ներկայացուցչությանը՝ այդ տեղափոխությունը արգելելու խնդրանքով: Ներկայացուցչությունը հավաստիացրեց, որ տեղափոխությունը չի կատարվի: Սակայն, հունիսի 2-ին Սուլթանովը, սուանց որևէ նախազգուշացման, զանձատունը և հեռագրատունը քաղաքի հայկական թաղամասից վորխազրեց թուրքական թաղամաս: Դևներալ նահանգապետի այս հերթական սադրանքը նույնպես հայերը սառնասրտորնն ուկու են տալիս: Զոր ջանքեր: Հայության արյան ծարավ բժիշկ Սուլթանովը խելացնոր կերպով պատրաստվում էր հարձակվել Շուշիի հայկական թաղամասի վրա: Հունիսի 2-ին նա Շուշվա թուրքական թաղամաս մտցրեց քրդական մի բանդա, թվով 3 հազար մարդ, ինչպես նաև 1500 զինված թաթարական քոչվորներ: Հունիսի 2-ին և 3-ին Շուշիի հայկական թաղամասից բոլոր թաթարները ծածուկ հեռացան թաթարական թաղամաս: <sup>2</sup> Հունիսի 3-ին թուրքական զորամասերը փակեցին Շուշիից դեպի Գորիս տանող խճուղին:<sup>3</sup> Համակարգմանի նախապատրաստությունից հետո հունիսի 4-ին, առավոտյան ժամը 10-ին, Սուլթանովի հրամանով սկսվեց Շուշվա հայկական թաղամասի

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.309, թթ. 171—172:

2 Նույն արիթմ, ֆ.252, գ.1, գ.1, թ.64:

3 Նույն տեղում:

գնդակոծումը։ Այդ օրը քաղաքի թուրքական թաղամաս աշխատանքի մեկնած 50 հայերից վերապանում էն 7-ը, իսկ մնացածներին քրդերը գաղանաբար հոշոտում են։<sup>1</sup> Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը տևեց շուրջ 16 ժամ։ Մուսավաթ զինվորները և քրդական բանդան մտան քաղաքի հայկական թաղամաս և սոսկալի ավերածություններ կատարեցին։<sup>2</sup> Երկու կողմերից զո՞վեց 20 մարդ։ Այդ օրերին քաղաքի թուրքական մասում մորթվեց 40 հայ։<sup>3</sup> Սուլթանովի հրոսակախմբերն իրենց «բարձրության» վրա գտնվեցին Դայրալիշեն գյուղը կործանելիս։ Դայրալիշենը գտնվում էր Շուշվահարևանությամբ։ Գյուղի վրա հարձակումը սկսվեց հունիսի 5-ին, գիշերվա ժամը 10-ին։ Թուրքերը երեք կողմից աքցանի մեջ առան գյուղը և փակեցին այնտեղից դուրս գալու բոլոր ճանապարհները։ Գաղաղած հրոսակները, մտնելով գյուղ, սոսկալի ոճրագործություն կատարեցին։ 70 տուն ունեցող գյուղը մեկ օրվա ընթացքում վերածվեց մոխրակույտի, իսկ հարյուրավոր մարդիկ սրի քաշվեցին, որոնց մեծ մասը երեխաններ էին, կանայք ու ծերեր։ Բայց Դարադի գեպբերը քննող պառամենտական հանձնաժողովի արձանագրության Դայրալիշենի կործանման ժամանակ մորթվել է 500 մարդ։ Եկեղեցին քարուքանդ է արվել։ Տների ավերակներում կիսախնձ զիակներ են։ Գետինը ծածկված է երեխանների զիակներով։ Դայրալիշենի մոտ գտնվող մատուռում մորթվել էր 50 հայ։<sup>4</sup> Բայց այլ աղբյուրների, գյուղի 700 բնակչից մինչև էին 100-180 մարդ։<sup>5</sup> Փաստերը վկայում են, որ Սուլթանովը Դայրալիշենի ավերումը կազմակերպել էր բրիտանական զինվորական սպայակույտի համաձայնությամբ։ Բայտ ականատեսների, այն պահին, երբ թուրք-քրդական զորքը հոշոտում էր իսաղաղ բնակչությանը, բրիտանական ներկայացուցության անդամները Սուլթանովի տան պատուհանից հրճվանքով դիմում էին այդ «տեսարանը»։<sup>6</sup>

Մուսավաթական ու քրդական բանդաները, նրանց հետ թաթարական խուժանը, նոր արյունահեղություններ կազմակերպեցին

1 «Ժողովուրդ», 22 հունիսի 1919 թ.։

2 ՀՀՊՊԿ, ֆ252, գ.1, գ.1, թ.64։

3 «Պահակ», 14 հունիսի 1919 թ.։

4 ՀՀՀՔՊԿՊԱ, ֆ.4033, գ.5, գ.461, թթ. 168-172։

5 ՀՀՊՊԿ, ֆ. 199, գ.1, գ.23, թ.387, գ.76, թ.12։

6 Նույն արխիվ, ֆ.314, գ.1, գ.34, թ.92։

նաև քաղաքամերձ Կրկժան, Փահլուր, Ջամիլու գյուղերում, կոտորելով հարյուրավոր մարդկանց։ Հունիսյան կոտորածների ժամանակ Ղարաբաղում զոհվեց 600—620 մարդ։<sup>1</sup>

Հունիսի 7-ին թշնամին հարձակվեց Քարինտակ ու Գաղուշեն գյուղերի վրա և հանդիպելով բնակչության լուրջ դիմադրությանը, նահանջեց։<sup>2</sup> Թժվար է հավատալ, թայց նույնիսկ մուսավաթական Աղրբեջանի կառավարող շրջաններում ու բրիտանական հրամանատարության սպայակույտում հունիսյան զեպքերը մեծ իրանցում առաջ բերեցին։

Ֆեներալ նահանգապետ Սուլթանովը պաշտոնանկ արվեց, իսկ անգիւական հրամանատարությունը ևս հետ կանչեց իր ներկայացուցիչ Մոնկ Միզոնին։<sup>3</sup> Արցախյան եղենագործությունը խորապես ցնցեց Կովկասի ողջ հայությանը։ Ամենուր տեղի ունեցան բողոքի միտինգներ։ Այսպես, հունիսի 22-ին Թիֆլիսում կայացավ 30 հազարանոց միտինգ։ Մասնակիցների թվում էին նաև թիֆլիսացի մտավորականության աշքի ընկնող ներկայացուցիչներ։ Հով. Թումանյանը, Ալ. Սպենդիարյանը, Մելիք Հովսեփյանը և ուրիշներ։ Միտինգի մասնակիցների անունից ընդունվեց բողոքի դիմում՝ ուղղված դաշնակից Երևանի կառավարությաններին, որտեղ մասնավորապես պահանջվում էր դատի տալ կոտորածի հեղինակներին, Ղարաբաղից անհապաղ հեռացնել Աղրբեջանի իշխանությանը, որին չի ճանաչել և չի ճանաչում հայկական Ղարաբաղը, և այն կցել մայր երկրին՝ Հայաստանին։<sup>4</sup>

Հունիսի 16-ին Երևանում կայացած միտինգի դիմումում, հասցեագրված Հայաստանի Հանրապետության կառավարությանը, մասնավորապես ասված է, որ Աղրբեջանի զորքերը, Սուլթանովի գլխավորությամբ, ավերել են 6 հայկական գյուղ, սպանել են 600 մարդ և սպառնում են շարունակել կոտորածը, արյան մեջ խեղդել Ղարաբաղը։ Մենք համոզված ենք, որ սա շարունակությունն է

1 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.1, թ.64, թ.309, թթ.139, 152.

2 Նույն արխիվ, ֆ.57, ց.2, գ.557, թ.26.

3 «Արձագանք», 16 հունիսի 1919 թ.։

4 «Ժողովուրդ», 27 հունիսի 1919 թ., «Հայաստանի աշխատավոր», 26 հունիսի 1919 թ.։

էնվերների և թալեաթների արյունոտ քաղաքականության։ Աղբբեցանը դաշնակից պետությունների ներկայացուցիչների աշքի առջև փորձում է կոտորել Ղարաբաղի Հայ բնակչությանը, իր արյունոտ կարգերը հաստատել այդ երկրում։<sup>1</sup> Բազմամարդ միտինգներ տեղի ունեցան նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Եկատերինոպարում և Անդրկովկասի Հայաշատ վայրերում։<sup>2</sup>

Հունիսյան կոտորածների առիթով իր ձայնը Հնչեցրեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը։ Թիֆլիսում գտնվող անգլիական գեներալ Կորիխն ուղղված հեռագրում վեճափառ հայրապետը խնդրում էր պաշտպան կանգնել Ղարաբաղի Հայությանը, որը գտնվում է նոր ջարդերի վտանգի առաջ։<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության կառավարությունը Աղբբեցանի կառավարությանն ուղղված հեռագրով ամենավճռական կերպով բողոքեց Ղարաբաղի նկատմամբ գործադրված բոնի և արյունալի գործողությունների գեմ և վերստին Հայտարարեց, որ ինքը չի ճանաչում Սուլթանովի գեներալ նահանգապետությունը հայկական Ղարաբաղի սահմաններում։<sup>4</sup>

Արխիվային փաստաթղթերի ու նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ղարաբաղի ջարդերը նախապես ծրագրվել ու կազմակերպվել էր Աղբբեցանի մուսավաթական կառավարության և նրա գրածո Սուլթանովի կողմից։ Այդ ոճարագործությունները համատեղ իրականացրել են թուրք բաշիբողություններն ու թաթարների ավագակախմբերը։ Թուրքական զինված ուժերից բացի, թաթարական ավագակախմբերը ստացել են բրիտանական հրամանատարության և անձամբ նրա ղեկավար գեներալ Թոմսոնի աջակցությունը։

Անգլիական հրամանատարության կողմից Շուշի մեկնած գնդապետ Գլատերբերգը, ծանոթանալով կատարված արյունալի անցքերին, Շատելվորդին ներկայացրած զեկուցագրում համար-

1 ՀՀՊԿԱ, ֆ.199, գ.1, գ.23, թ.387։

2 Տես՝ Նույն արխիվ, ֆ.252, գ.1, գ.1, թ.45, ՀՀՀԿՓԿՊԱ, ֆ.4033, գ.5, գ.469, թթ. 1—2։

3 «Ժողովուրդ», 22 հունիսի 1919., «Աղդ», Բոստոն, 2 սեպտեմբերի 1919 թ.։

4 «Արձագանք», 16 հունիսի 1919 թ.։

ձակություն ունեցավ խոստովանել ճշմարտությունը: Նրա  
ունեցած ստույգ տեղեկությունների համաձայն քրդերը  
Սուլթանովի պահանջով բնակեցվել են քաղաքից մոտ երկու օրվա  
ճանապարհի վրա: Անժխտելի փաստ է, որ քրդերը, իրոք, Պայրա-  
լիշենի սպանդին ակտիվ մասնակցություն են ունեցել, հետևաբար,  
սիստի ընդունել, որ կոտորածը նախապես ծրագրավորված է եղել  
Սուլթանովի կողմից, որի կարգադրությամբ էլ երկու օր առաջ  
քրդերը տեղափոխվել են Պայրալիշենի շրջան: Գլատերերեզգը բաղ-  
մաթիվ փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ Սուլթանովը ցան-  
կության դեպքում կարող էր կանխել այդ ողբերգությունը: Վերջում  
նա պահանջում է կատարած հանցավոր քայլերի համար դատի տալ  
գեներալ նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովին:<sup>1</sup> Այդ կապակ-  
ցությամբ Սուլթանովին դիմավոր հանցագործ է ճանաշում նաև  
տեղում հարցը ճշտելու նպատակով Պարաբաղ մեկնած Աղրբեզանի  
պալամենտականներից (Չուրարյան, Խոչայան, Պարաբեկով, Ռուս-  
տամբեկով) կազմված հանձնաժողովը: Պառլամենտին ներկայաց-  
ված հանձնաժողովի եղբակացության մեջ պարզ ու որոշակի աս-  
ված է, որ Շուշիում և զյուղերում կոտորածի նախաձեռնողն ու կազ-  
մակերպիչը եղել է Սուլթանովը:<sup>2</sup> Խորհրդարանը, սակայն, գտավ,  
որ Պարաբաղի «տեղական իշխանության և հատկապես ընդհանուր  
նահանգապետի գործողությունների մեջ չկա ապօրինության և ոչ մի  
փաստ»:<sup>3</sup>

Պարաբաղի դեպքերի կապակցությամբ Բաքվի Հայոց Ազգային  
խորհրդի նախագահության անդամները տեսակցություն ունեցան  
Ռւսուբեկովի հետ, որը 1919 թ. ապրիլի վերջերից զլիսավորում էր  
Աղրբեզանի նոր մինիստրական կարինետը: Հանդիպման ընթաց-  
քում նախագահության անդամները համոզվեցին, որ մուսավաթ  
կառավարությունը, ըստ ամենայնի հավանություն է տալիս իր ընդ-  
հանուր նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի գործած գաղա-  
նություններին: Այդ կապակցությամբ արտահայտելով իր տեսա-

1 «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ., ՀՀՀՔԿՓԿՂԱ, ֆ.40.3. ս.5, գ.461,  
թթ. 168-171:

2 «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ.:

3 «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ.:

կետը, Ուսուբրեկովը ցինիկորեն ասել է. «Որքան էլ ցավալի լինեն Ղարաբաղի վերջին անցքերը, իմացած եղեք, որ զրանք վերջինը շեն լինելու, քանի դեռ Ղարաբաղի հայկական գավառները կշարունակեն իրենց դիմադրությունը Աղբեջանի դեմ»: Այնուհետև, Աղբեջանի առաջին դեմքը հայ զրուցակիցներին հասկացնել է տալիս, որ Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը պետք է իր ներկայացուցիչների միջոցով հորդորի ղարաբաղցիներին ընդունելու իրենց իշխանությունը և միաժամանակ միջնորդի Հայաստանի Հանրապետության կառավարության առաջ, Ղարաբաղի հարցում շխանդարի իրենց ձգտումներին»:<sup>1</sup>

1919 թ. Հունիսի 10-ին Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, քննության առնելով Աղբեջանի մինիստր—նախագահի հետ խորհրդի նախագահության անդամների հանդիպման արդյունքները, հանգեց այն եղբակացության, որ Ղարաբաղի նվաճումը մնում է մուսավաթականների անկատար երազանքը, որ նա այդ մտադրությունը ուղում է իրականացնել ամենաճեշավոր ձևերով, անզիական օկուպացիոն ուժերի օգնությամբ: Ուստի, Ազգային խորհուրդը որոշեց պահի ամբողջ լրջությունը պարզել երևանի կառավարության առաջ և խնդրել նրան, որ նա Ղարաբաղի հարցում գործի դնի իրենից կախված բոլոր միջոցները՝ ապագա հնարավոր բարդությունները կանխելու համար:<sup>2</sup> Յավոք, Հայաստանի կառավարությունը հնարավորություն չուներ զորակից կանգնել Արցախի իր արյունակից եղբայրների գոյապայցքարին, որովհետև շրջափակված էին Զանգեզուրից դեպի Ղարաբաղ տանող բոլոր ճանապարհները, որոնց վրա հսկում էր նահանգապետի եղբայրը՝ Սովորան բեկ Սովորանովը:

Հունիսյան ողբերգական իրադարձություններից հետո, Խոսրով բեկ Սովորանովը Բաքվի իր շեֆերին վստահեցնում էր, որ Ղարաբաղի հարցը վերջնականապես վճռված է: Նա չարաշար սխալվում էր, Հունիսյան եղեռնագործությունը ըընկրկեց Ղարաբաղի հայ աղքաբնակչությանը: Ավելին, այդ իրադարձությունները արցախա-

1 ՀՀՀՔԿՊԱ, ֆ.4033, ց.5, դ.461, թթ.168—170:

2 Նույն տեղում:

Հայությանը մեկընդիշտ համոզեցին, որ պետք չէ հավատալ անգիտացիներին ու դաշնակից մյուս երկրներին և նրանց հետ հոյս սեր կապել: Նա լիովին հասկացավ, որ իր հայրենիքին ու իր օջախի պաշտպանը միայն ինքն է ու իր թիկունքին կանգնած մայր Հայաստանը: Դրա փայլուն ապացույցը հունիսյան դեպքերին անմիջապես հաջորդող օրերին Ղարաբաղի գավառներում տեղի ունեցող զյուղացիական համագումարներն էին և նրանց ընդունած որոշումները՝ երբեք շենթարկվել Աղրբեջանին:

Արցախ աշխարհի երկնակամարում շարունակվում էին մութ ամպեր կուտակվել: Մուսավաթական Աղրբեջանի կառավարությունը անգիտացիների գորակցությամբ պլաններ էր մշակում հարձակվել Հայաստանի Հանրապետության վրա, գրավել Զանգեզուրը, Նախիջևանը, ապա լուծել Ղարաբաղի հարցը: Անդրկովկասում գտնվող դաշնակից ուժերի հրամանատարությունը մեծ ճնշում էր գործադրում Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության վրա: Անդրկովկասում բրիտանական հրամանատարության պետ, գեներալ Կորին Հայաստանի վարչապետ Խատիսյանին հասցեազրկած նամակում հայտնում էր, որ ամենամեծ զիջումը, որ ինքն արել է Ղարաբաղի խնդրում, այն է, որ հարկադրել է Աղրբեջանի կառավարությանը համաձայնել շմտցնել իր իշխանությունը նաև Զանգեզուրի գավառում: Իսկ Ղարաբաղի մյուս գավառները (Գյուլիստան, Զրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիղակ) Շուշի քաղաքի հետ միասին պետք է ենթարկվեն Աղրբեջանի իշխանությանը:<sup>2</sup>

Այդ օրերին Հայաստանի կառավարությունը հնարավորություն շուներ ուղարկան ուժով իրական օգնություն ցույց տալ Արցախին, ստիպված բավարարվեց նրան վերաբերող մի շարք որոշումներ ընդունելով: Այսպիս, օրինակ, Հայաստանի Հանրապետության մինիստրների խորհուրդը 1919 թ. հունիսի 14-ի նիստում լսեց զինվորական մինիստրի պաշտոնակատար Դրաստամատ Կանայանի (Դրո) զեկուցումը Ղարաբաղի զորամաս (բաղկացած 1 հետևակ գումար-

1 «Աշխատավոր», 19 հունիսի 1919 թ., «Արձականը», 24 հունիսի 1919 թ.:

2 ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.309, թթ.233—234:

տակից, երկու լեռնային թնդանոթից և 54 ձիավոր հետախուզներից) կազմակերպելու համար 1500000 ռուբլի հատկացնելու մասին։<sup>1</sup> Մինչ այդ, մինիստրների խորհուրդը հունիսի 6-ի նիստով՝ Ղարաբաղի կարիքների համար հատկացրել էր ևս 1 մլն ռուբլի՝ Յավոր, այս և նման այլ որոշումները, մի շաբթ խանգարիչ հանգամանքների պատճառով, կյանքի շկուլեցին, որը և, անշուշտ, բացասարար անդրադարձավ Արցախի ինքնապաշտպանական համակարգի վրա։ Այդ առնշությամբ կամենում ենք փաստել Հետևյալ իրողությունը՝ Ղարաբաղը ի վիճակի շեր բացահայտ կռվի բռնվել թշնամու հետ։ Ինչո՞ւ։ Առաջին, հունիսյան դեպքերի հետևանքով նրա պաշտպանական հնարավորություններն ու միջոցները բավականին թուլացել են, իսկ ինքնապաշտպանության մարտիկների շարքերը նկատելիորեն նոսրացել։ Երկրորդ, անդիհական գաղութային զենքը ամուր պատվար էր մուսավաթական կառավարության թիկունքին՝ ընդդեմ Ղարաբաղի ազատագրության արդարացի նպատակների։ Երրորդ, Հայաստանի վիճակն այնպիսին էր (քայլքայված ու ավերված տնտեսություն, բազմահազար գաղթականության ըրտծված խնդիրներ, և ներքին անկայուն դրություն), որ նա շեր կարող քիչ թե շատ գործնական օգնություն ցույց տար Արցախին։

Այդ ամենին բաշատեղյակ էր նաև Ադրբեջանը և ձգտում էր ստեղծված նպաստավոր պայմաններն օգտագործել իր նվաճողական ծրագրերի իրականացման համար։

Աւագնացող վտանգը ստիպում էր Արցախին ամեն կերպ խույս տալ Ադրբեջանի հետ առնակատումից և հարցը լուծել փոխպիշման ճանապարհով։ Հունիսյան դեպքերից հետո Վահան եալիսկոպոսի դեկավարությամբ ստեղծվել էր գործող մի խորհուրդ, որը միջնորդի դեր էր կատարում նահանգապետ Սուլթանովի և Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի միջև։<sup>2</sup>

Երկար բանակցություններից, ինչպիս նաև Վահան եպիսկոպոսի ու նահանգապետ Սուլթանովի անձնական հանդիպումներից

1 Նույն տեղում, գ.27, մաս առաջին, թ.134։

2 Նույն արխիվ, ֆ.57, ց.2, գ.549, թթ.162—163։

Հետո որոշվեց Հրավիրել Ղարաբաղի Համահայկական նոր համագումար, ոլխավոր նպատակ ունենալով բանակցությունների միջոցով մշակել Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման պայմաններ, մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական վճիռը:<sup>1</sup> Դեներալ նահանդապետ Սուլթանովի առաջարկությամբ Շունիսի 28-ին պետք է հրավիրվեր Ղարաբաղի հայության Ե-րդ Համագումարը, որին մասնակցելու էին Հրավիրվել նաև Աղրբեջանի կառավարության ներկայացուցիչները: Համագումարը կայացավ նախատեսված օրը, վարանդայի Շոշ գյուղում: Համագումարին վճռական ձայնի իրավունքով մասնակցեցին նաև Բաքվում Ղարաբաղի հայրենակցական միության երկու անդամներ, ինչպես նաև Թիֆլիսում Ղարաբաղի հայրենակցական միության անդամներ լեռն և Վ. Նավասարդյանը:<sup>2</sup>

Աղրբեջանի կառավարության ներկայացուցիչների ներկայութեանվելու պատճառով համագումարը, երեք օր սպասելուց հետո, դադարեցրեց իր աշխատանքները: Յրվելուց առաջ Համագումարը ընտրեց նախագահություն, որին և լիազորեց Աղրբեջանից կառավարության ներկայացուցիչներ ժամանելու դեպքում բանակցել և հաշտության որոշ պայմաններ մշակել:

Մնում է ավելացնել, որ Համագումարն իր բողոքը հայտնեց Աղրբեջանի կառավարությանը Շուշիում և զավառի մի շաբթ գյուղերում Սուլթանովի կաղմակերպած հայկական ջարգերի առիթով և պահանջեց քննել բոլոր դեպքերը և պատժել հանցավորներին:

Շունիսի 30-ին Ղարաբաղ են հասնում Աղրբեջանի կառավարության ներկայացուցիչներ Շաֆիկ բեկ Ռուստամբեկովը և Շահսուկարովը: Նրանց և Համագումարի կողմից ընտրված նախագահության անդամների միջև սկսվեցին բանակցությունները:<sup>3</sup> Հայկական կողմը մշակեց Համաձայնադրի նախագիծ, որը պետք է ներկայացվեր Աղրբեջանի կառավարությանը: Վերջինիս հետ բանակ-

1 «Արձագանք», 14 Շունիսի 1919 թ.:

2 «Кавказское слово», 4 июля 1919.

3 ՀՀՊՊԿ, ֆ.57, ց.5, գ.202, թթ 7—8:

ցություններ վարելու համար Ղարաբաղից Բաքու մեկնեց պատվիրակություն, որի կազմում էին համագումարի պատգամավոր Արամայիս Տեր—Դանիելյանը, Շուշիի հայոց կոմիտեի կողմից և ուրեն Մելիք Շահնազարյանը: Ղարաբաղի ներկայացուցիչների կազմը համարվեց Բաքվում դարարաղիների հայրենակցական միության երկու անդամներով՝ ի ղետա Ս. Ա. Մելիք Եռլյանի և Ն. Դ. Փիրումովի:<sup>1</sup>

Հանձնաժողովի անդամները և Բաքվի Հայոց Ազգային խորհրդի ու Ղարաբաղի հայրենակցական միության աշխատանքից հետո նախագիծը ներկայացնում էն Ազրբեջանի կառավարությանը: Նրանում շեշտվում էր, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության միակ ցանկությունն է միանալ Հայաստանի Հանրապետությանը: Նկատի ունենալով, որ Անդրկովկասի հանրապետություններում տարածքային վեճերը պետք է լուծվեն Փարիզի վեհաժողովի կողմից, և երկյուղ կրելով, որ Լեռնային Ղարաբաղի վեճը կարող է պատճառ դառնալ երկու հարևան ծովովորդների միջև անցանկալի զինված ընդարրումների, Ազրբեջանի կառավարությանն առաջարկվում էին ժամանակավոր համաձայնության պայմաններ: Ժամանակավոր համաձայնագիրն ընդունվելու էր մինչև խաղաղության կոնֆերանսի կողմից հարցի վերջնական վճիռը: Շուշիի, Զիվանշիրի և Զերրայիլի գավառների վիճելի մասերը, որպես առանձին վարչական միավոր, ժամանակավորապես իրենց համարելու էին Ազրբեջանի հանրապետության սահմաններում: Ղարաբաղի գեներալ նահանգապետությանը կից ստեղծվելու էր վեց մարդուց կազմված (երեք հայ, երեք մուսուլման) խորհուրդ, որը պետք է վարչական հսկողություն սահմաններ նահանգապետի գործունեության վրա և այլն:<sup>2</sup>

Ազրբեջանի պալամենտը համաձայնագիրը, աննշան փոփոխությամբ ուղարկեց Ղարաբաղ՝ համագումարի հաստատմանը ներկայացնելու համար, որից հետո միայն պայմանները կարող էին ընդունված համարվել: Ղարաբաղի հարցում ազրբեջանական կողմի

1 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.309, թթ.210—212:

2 Նույն անդամ, թ.214:

և Ղարաբաղի պատվիրակների միջև նախնական համաձայնություն թեև կայացել էր, այնուհանդեռձ, Ազրբեջանը ամեն չանք գործադրում էր արցախահայության վրա ճնշումը ավելի մեծացնելու հանապարհով նրանից ավելի շատ զիջումներ կորպել: Խոսրով բեկ Սուլթանովը Ղարաբաղում գտնվող զորամասերը համալրեց նոր ուժերով, ուժեղացրեց քրդական զինված բանդաներին: Մուսավաթական զորամասերը և քրդական զինված բանդաները կազմ ու պատրաստ սպասում էին Սուլթանովի հրամանին, Արցախին վերջնականացնես ծնկի բերելու համար: Վերստին դրված էր հայկական Ղարաբաղի լինել լինելու հարցը: Մտեղծված իրավիճակում զարարադցիների հետազա անելիքները որոշելու, ինչպես նաև թաքվի դեկավարության հետ համաձայնագրի շուրջը երկխոսությունը շարունակելու հրամայականը հրատապ էր դարձնում նոր համագումարի հրավիրումը: Սուլթանովը Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդից հրամայարար պահանջեց համագումարը հրավիրել Շուշի քաղաքում: Դա պատահական չէր: Շուշին լավ ամրացված էր, այնտեղ տեղակայված էին ազրբեջանական զորամասեր և քրդական զինված խմբեր: Օգտագործելով այդ հնարավորությունները, Սուլթանովը կարող էր խիստ վերահսկողություն սահմանել համագումարի աշխատանքների վրա և պատղամավորների նկատմամբ ֆիզիկական ու բարոյական ճնշում գործադրելով, կայացնել Ազրբեջանի համար առավել ընդունելի որոշումներ: Պատգամավորները մերժեցին այդ առաջարկը և Ղարաբաղի համահայկական 7-րդ համագումարը բացվեց 1919 թ. օգոստոսի 12-ին Վարանդայի Շոշ գյուղում: Հայկական Ղարաբաղի զյուղացիությունը համագումար ուղարկեց շուրջ 200 պատղամավոր:<sup>1</sup> Նրա աշխատանքներին մասնակցում էին քաղաքական բոլոր կուսակցությունների, այդ թվում և բոլշևիկների ներկայացուցիչները:<sup>2</sup> 7-րդ համագումարն առաջին

1 «Կավեճակու լուսական», 28 օգոստա 1919.

2 Հ. Արքահամբան, Եղվ. աշխ. էջ 27:

երկու օրերին զբաղված էր գեներալ նահանգապետ Սուլթանովի գործունեության մերկացումով: Կրթերը ավելի բորբոքվեցին, երբ հայտնի դարձավ, որ Վարանդայի կողմից Բարգի պառամենտին ներկայանալու համար պատգամավոր ընտրված Գերասիմ Խաչատրյանը անհետ կորել է Եվլախի ճանապարհին, իսկ Փիրջամալից ընտրված համագումարի պատգամավորներ Գրիգոր Գրիգորյանը և Սամսոն Բաղասյանը Շոշի ճանապարհին գնդակահարվել են Ղուշշիլարի թուրքերի կողմից: Այդ օրերին Խանքենդում և Շուշի քաղաքում կազմակերպվեց Հայերի կոտորած: Համագումարը այս ամենի կապակցությամբ բռոգը ներկայացրեց Սուլթանովին և պահանջեց պատժել մեղավորներին, հակառակ դեպքում սպառնում էր դադարեցնել իր աշխատանքները:<sup>1</sup>

Սուլթանովը 1919 թ. օգոստոսի 14-ին կարգադրեց Հրանոթ-ներ տեղադրել Շոշ գյուղի ու Շուշի քաղաքի Հայկական թաղամասի ուղղությամբ և փակել տվեց Եվլախ—Շուշի ճանապարհը: Նույն օրը նա վերջնագիր ներկայացրեց Համագումարին և պահանջեց 48 ժամ-վա ընթացքում ընդունել Բարգում մշակված համաձայնագիրը: Ղարաբաղի դաշինք զգուշացնում էր նաև, որ զենքի կդիմի, եթե Հայերը լրնդունեն Համաձայնագիրը:<sup>2</sup> Պատգամավորների մի մասը պնդում էր, որ պետք է ընդունել Սուլթանովի մարտահրավերը և Համագումարի անունից արցախահայությանը նոր պայքարի կոչել: Մակայն, Վահան եպիսկոպոսին և Խախագահության անդամներին մեծ ջանքերի գնով հաջողվում է Համոզել պատգամավորների ճնշող մեծամասնությանը, որ Ադրբեջանի դեմ պայքարելու համար Հայկական Ղարաբաղի ներքին և արտաքին պայմանները նպաստավոր չեն: Բացի դա, քանի որ վիճելի տարածքների խնդիրը կապված էր վեհաժողովի որոշումից, հետեւապես, խուսափելով ավելորդ արյունահեղությունից և ելնելով հարևան ժողովուրդների հետ խաղաղ գոյակցելու անհրաժեշտությունից, օգոստոսի 15-ի առավոտյան 4-րդ նիստում պատգամավորները որոշեցին ժամանակա-

1 ՀՀՊԳԿ, ֆ.57, ց.5, գ.202, թթ.7—8:

2 Նույն տեղում, «Կավказское слово», 28 августа 1919.

վորապես ընդունել Համաձայնագիրը:<sup>1</sup> Համագումարի կողմից  
ընտրվեց 16 հոգուց կազմված պատվիրակություն<sup>2</sup> (առանձին  
ազրյուրներում 20)<sup>3</sup>, որն այցելեց Շուշի, Սուլթանովի մոտ և  
նրան հանձնեց Համագումարի ընդունած բանաձեռ, որտեղ նշվում  
էր, որ Համագումարը ընդունում և հաստատում է Բաքվում ձեռք  
բերված Համաձայնագիրը:<sup>4</sup>

Օգոստոսի 22-ին պատգամավորությունը Սուլթանովի հետ  
քննարկեց և ստորագրեց 26 կետից բազկացած Համաձայնագիրը:<sup>5</sup>  
Քննարկվեցին նաև Համաձայնագրի կենսագործման պայմանները:

Համաձայնագրի հիմնական բովանդակությունը ընդհանուր  
գծերով հանգում էր նրան, որ արցախահայությունը Ղարաբաղը  
ժամանակավորապես ճանաչում էր Աղրբեջանի կազմում մինչև  
Հարցի վերջնական լուծումը Փարիզի խաղաղաբար կոնֆերանսի  
կողմից:

Համաձայնագրի գլխավոր կետերն են. Ղարաբաղի լեռնային  
մասը՝ Շուշիի, Ջիվանշիրի, Ջերբայլիի գավառները (Դիղակ, Վա-  
րանդա, Խաչեն, Ջրաբերդ) իրենց ժամանակավորապես Համարում  
են Աղրբեջանի Հանրապետության սահմաններում։ Հայկական  
շրջանների ղեկավարությունը նշանակվում է Հայերից։ Փոքրա-  
մասնություն կազմող մահմեդականների իրավունքները հարգվում  
են։ Գեներալ Նահանգապետության առքնթեր հիմնվում է խոր-  
հուրդ՝ բազկացած երեք հայերից և երեք մուսուլմաններից։ Խոր-  
հուրդի անդամ Հայերն ընտրվում են լեռնային Ղարաբաղի Հայու-  
թյան Համագումարում (7-րդ Համագումարը խորհրդի անդամներ  
առաջադրեց նախկին քաղաքագլուխ Լ. Վարդապետյանին, երդվյալ

1 Նույն տեղում։

2 ՀՀՊԿ, ֆ.199, գ.1, գ.9, թ.67.

3 «Կավազսկое слово», 28 августа 1919.

4 «Կավազսкое слово», 28 августа 1919.

5 ՀՀՊԿ, ֆ.199, գ.1, գ.99, թթ. 67—68, ՀՀՊԿՊԿ, ֆ.4033, գ.1, գ.74,  
թթ. 1—2.

հավատարմատար նիկ. Յարամիշյանին, զյուղացի Հ. Բալասանյանին):<sup>1</sup> Խորհուրդը նախաձեռնության իրավունք ունի գեներալ նահանգապետություն կազմելու և վարելու խնդրում: Խորհուրդն իրավունք ունի հսկելու գեներալ - նահանգապետության վարչության գործունեության վրա: Նահանգապետի օգնականի պաշտոնը վարելու է հայ (Համագումարը զեներալ նահանգապետի օգնական առաջադրեց Արսեն Հովհաննիսյանին (Արսո):<sup>2</sup> Ղարաբաղի հայերն ստանում են մշակութային ինքնավարություն: Ղարաբաղի հայության համագումարի կողմից պարբերաբար ընտրվող Ազգային խորհուրդը պետք է լինի մշակութային հաստատությունների կննությունը: Ազրբեջանի զորքերը մնալու են Խանքենդում և Շուշիում, խաղաղ ժամանակի համար սահմանված շափով: Զորքերի տեղափոխությունը տեղի է ունենալու խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնությամբ: Մինչև հաշտության կոնֆերանսի վճիռը հայ և թուրք ազգաբնակչության զինաթափումը դադարեցվում է: Բնակչությանը տրվում է «միությունների», խոսրի և մամուլի լրիվ ազատություն» ազգամիջյան թշնամությունները կանխելու համար: Խորհուրդը պարբերաբար հրավիրում է համագումար և ալին:<sup>3</sup>

Այսպիսով, արցախահայության 7-րդ համագումարը որոշեց արյունահեղությանը վերջ տալու նպատակով ժամանակավորապես (մինչև հարցի վերջնական լուծումը Փարիզի վեհաժողովում) ընդունել մուսավաթական Ազրբեջանի գերիշխանությունը՝ պայմանով, սակայն, որ վերջինս չի միջամտի երկրի ներքին գործերին: Ղարաբաղի համահայկական 7-րդ համագումարը ընդունեց այդ համաձայնագիրը ոչ իր կամքով, այլ հարկադրաբար: Այլ խոսրով՝ Ազրբեջանի հետ ժամանակավոր համաձայնություն կնքելը եղել է այնպիսի միջոց, որով իր արյունը շխնայող, բայց արյունահեղությունից խուսափող զարարացցին աշխատել է ստեղծված ժանր գրությունից խաղաղ ելք գտնել, մինչև Ղարաբաղը կկցվեր Հայաստանին: Ղարաբաղի խնդրի լուծմանը նոյն կերպ է մոտեցել նաև Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը՝ համագումարի կող-

1 «Կավկազское слово», 28 августа 1919.

2 ՀՀՀՔԿՓԿԱ, ֆ.4033, գ.1, գ.74, թ.4:

3 ՀՀՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, գ.1, գ.74, թթ.1-4, ՀՀՊՊԿԱ, ֆ.199, գ.1, գ.9, թթ.67-68:

մից ընտրված քարձրագույն գործադիր մարմինը:

Ինչ վերաբերում է Աղրբեջանի կառավարությանը, ապա պետք է նշել, որ նա ևս ստիպված էր նման համաձայնագիր ստորագրել, որովհետև Աղրբեջանը դեռ իրեն ապահով չէր զգում Ղարաբաղում: Բացի դա, Աղրբեջանի ղեկավար շրջանները ենթադրում էին, որ «այսօրվա ժամանակավորը» վաղը կդառնա մշտական:

Ամեն դեպքում համաձայնագիրը Աղրբեջանի օգտին էր: Պատահական չէ, որ 1989 թ. Բաքվում լույս տեսած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատմությանը նվիրված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուում,<sup>1</sup> Ղարաբաղի հայության 9 համագումարներից, որոնցից 8-ը դեմ է արտահայտվել Աղրբեջանի հետ ամեն մի կապի, միայն 7-րդն է, որ տեղ է գտել ժողովածուում: Պետք է ասել և այն մասին, որ օգոստոսյան համաձայնագիրը նախապատրաստող հարվածային ուժը անզիհական գաղութաբարներն էին: 1918—1919 թվականներին Ղարաբաղը Աղրբեջանին բռնակցելու գործում թաթարներին ամեն կերպ օգնում էր անզիհական զորական ներկայացուցչությունը: Առաջ անցնելով նշենք, որ ներկայիս աղրբեջանական պատմաբանները խնամքով թաքցնում են բրիտանական գաղութաբարների որոշակի դերը տվյալ խնդրում: Եվ այդ այն դեպքում, երբ ինքը՝ Սուլթանովն էր խոստովանում, որ «անզիհացիների վստահությունը շահելու և հայերի նկատմամբ նրանց անվտանությունն սերմանելու իմ առաջին խնդիրը կարծում եմ ևս հաջողությամբ իրականացրի: Հետագայում, եթե մայորի դեկուցագիրը գեներալ Թումանյանին և նրա առաջարկությունը հավանության արժանանա, ապա իմ նպատակը գրեթե կատարված կլինի, և ես քայլ առ քայլ, առանց ֆիզիկական ուժի գործադրման կկարողանամ ստիպել հայերին, որ նրանք ընդունեն Աղրբեջանի կառավարության իշխանությունը»:<sup>2</sup>

Այսպիսով, օգոստոսյան համաձայնագիրը Աղրբեջանի և Անզիհայի կառավարությունների համատեղ ջանքերի արդյունք է:

1 «К истории образования Нагорно-Карабахской ССР. 1918—1925 гг., документы и материалы», Б., 1989.

2 ՀՀՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.429, լի.2—4:

Բրիտանական գաղութաբարեները, կատարելով իրենց «պատմական առաքելությունը» Դարարազի հարցում, այն է՝ վերջինս հանձնել Ազգային ժանին, 1919 թ. օգոստոսի 24-ին հեռացան Արցախից: Իսկ մինչ այդ, օգոստոսի 12-ին Շուշուց հեռացել էին ԱՄՆ-ի ներկայացուցիչները<sup>1</sup>

1 «Кавказское слово», 28 августа 1919.

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

#### 1. Հերոսական պայքար Զանգեզորում՝ հանուն գոյատևման

Դաշնակից երկրների միջև Անդրկովկասի հարցում գոյություն ունեցող տարածայնություններն ու հակասությունները, ազգային—ազատագրական շարժումները Մերձավոր և Միջին արևելքի երկրներում, օկուպացիոն գործերում առաջ եկած ներքին խլրտումները և մի շարք այլ պատճառներ անգլիական գաղութաբարներին հարկադրեցին իրենց զորքերը զուրս բերել Աֆրիկովկասից: Այնուհետև, Ղարաբաղի պատմության մեջ սկսվում է ողբերգություններով ու հերոսամարտերով լեցուն նոր ժամանակաշրջան: Օգոստոսյան համաձայնագիրը, ինչպես ասում են, մի անգորր էր փոթորիկից առաջ: Համաձայնագիրը կայուն չէր և չէր էլ կարող լինել, քանի որ այն վերջնականապես լուծեց Ղարաբաղի հարցը: Այն երկու կողմերին էլ չէր բավարարում: Արցախահայության ձգտումը, ինչպես զիւռնշ, վերամիտվորդէն էր մայր Հայաստանի հետ: Աղբբեջանը, որը բովանդակ ուժով տենչում էր սահմանակից դառնալ թուրքացին, ջանում էր արագործն վերացնել օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրով Ղարաբաղին տրված որոշ ինքնուրույնությունը և վերջնականապես բռնությամբ տիրել նրան, այնուհետեւ Հայուստանից պոկել Զանգեզուրը, Նախիչևնը և Շարուրը:

Մուսավաթական զավթիչները շորս կողմից շրջապատել էին Ղարաբաղը, կտրել զրսի աշխարհի հետ կապող բոլոր ճանապարհները: Ոչ մի կապող օղակ չկար Ղարաբաղի և Զանգեզուրի միջև: Հայկական այդ երկու գավառների միջև ընկած Զարուղի շրջանը կամ Քուրդիստանը դարձել էր մի որջ, ուր ծվարել էին թուրք—թաթարական զինված զոկատները՝ հիմնականում տաճիկ հրամանատարների զինավորությամբ, պատրաստ մտնելու Զանգեզուրը:

Վերը ասվածից հետեւում է, որ աղբբեջանական մուսավաթականների զավթողական պլանների իրականացման ճանապարհին

ժայռի նման կանգնած էր լեռնային Ղարաբաղը։ Հետևաբար, ամենից առաջ պիտք էր վերացնել այդ պատնեշը։ Բնավ պատահական չէ, որ Ազրբեջանի բանակի շտաբի պետ գեներալ Սուլեկիլը 1919 թ. սեպտեմբերի 7-ի գաղտնի դրությամբ Սուլթանովին բացատրում էր, որ Զանգեզուրը նվաճելու համար ամենից առաջ պիտք է վրջնականապես գրավել Ղարաբաղը։<sup>1</sup> Այս և նման շատ հարցեր օգոստոսի 22-ի համաձայնագիրը դարձրել էին շափազանց անկայուն, իսկ Հայ—թաթարական հարաբերությունները խիստ հիվանդութ ու անհաշտ։

Օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրը շափազանց անհանգստացրեց նաև Հայաստանի կառավարությանը։ Նա լավ էր հասկանում, որ Եթե Ազրբեջանին հաջողվե իր տիրապետությունը ժամանակավորապես տարածել Ղարաբաղի վրա, ապա նա անպայման կձգտի հավերժացնել այդ տիրապետությունը։ Այդ համաձայնագրի կապակցությամբ Հայաստանի վարչապետ և արտաքին գործոց նախարար Ալ. Խատիսյանը 1919 թ. օգոստոսի 28-ին բողոք ներկայացրեց Փարիզի խաղաղության կոնֆերանսին։ Հայոց կառավարության դեկավարը կոնֆերանսին դրում էր, որ 1918 թ. գերմանա—թուրքական ուժերի Անդրկովկաս արշավելու ժամանակ Ղարաբաղը գրավելու տաճկա—ադրբեջանական գորքերի բոլոր շանքերը փշրվեցին նրա հայ բնակչության հերոսական դիմադրության հանգեց։ Այնուհետև, նշել է Խատիսյանը, Ղարաբաղի բնակչությունն իր երկրի բացարձակ տերն էր, երբ դաշնակից պետությունները Անդրկովկասն առան իրենց հսկողության տակ։ Հավատալով գեներալ Թոմսոնի կեղծ խոստումներին և ենթարկվելով վեհաժողովի վիճելի հարցերը խաղաղ կերպով լուծելու պահանջներին, Ղարաբաղի բանակի զիխավոր հրամանատար Անդրանիկը դադարեցրեց իր հաղթական առաջնազացումը զեպի Ղարաբաղի մայրաքաղաք Շուշի, իսկ արցախահայությունը վերջ տվեց տեղական պատերազմական գործողություններին։

Ծարունակելով իր միտքը, վարչապետը ընդունեց մինչդեռ մուսավաթական ազգայնականները՝ խրախուսված Ազրբեջանում հիմնավորված անզինացիների բացահայտությունը պաշտպանությու-

1 ՀՀՊՊԿ, գ.200, ց.1, գ.427, թ.240,

նից, թուրքերի անմիջական օգնությամբ նորանոր դավեր նյութեցին Ղարաբաղի դեմ՝ հանկարծակի զորամասեր մտցրեցին Ղարաբաղի տարրեր շրջաններ, զրավեցին ռազմավարական կարևոր կետեր և Ղարաբաղում հողակեցին գեներալ նահանգապետություն:

1918—19 թթ. Ղարաբաղի պատմության ողբերգական էջերը համառոտակի նկարագրելուց հետո, Խատիսյանը կոնֆերանսի առաջ «բացում է» Ադրբեջանի խաղաքարտերը՝ ասելով, որ վերջինիս կողմից Ղարաբաղի նվաճման ծրագիրը համաթուրքական ձգումների իրականացման նպատակ ունի, որով շանում է Ղարաբաղի և Նախիջևանի վրայով Ադրբեջանը միացնել Թուրքիային և Պարսկաստանին, ստեղծելով մուսուլմանական ժողովուրդների սիրտընդհանրություն։<sup>1</sup>

Աչա թե ինչու Ադրբեջանը ամեն ինչ անում էր, որպեսզի շեղյալ հայտարարեր օգոստոսյան համաձայնագիրը՝ Մուսավաթական Ադրբեջանն իր նպատակին հասնելու համար զիմում էր նենդ ու խարդախ քաղաքականության: Նա ամենալայն քարոզություն էր մզում ամենուրեք՝ թե մամուլում և թե պաշտոնական ու ոչ պաշտոնական հանդելումներում, գործենով ամեն կերպ ապացուցել, որ հայկական Ղարաբաղը պատմական և տնտեսական անհրաժեշտությամբ պետք է կցվի Ադրբեջանին, կազմի նրա անքածանելի մասը: Ղարաբաղի տեղական թուրքերի մեջ կազմակերպում էր հայրենակցական միություններ և իրավուսում նրանց, իշխանություններից անկախ դիմումներ ներկայացնում մեծ պետությունների ներկայացուցիչներին, նրանց զեկավարներին և Փարիզի կոնֆերանսին՝ Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու նկրտումով: Թուրքացնում ու շեղորացնում էր Ղարաբաղի զինական ուժը, մշտապես ամրացնում էր երկրամասի ռազմավարական կետերը: Խաչենի, Զիվանշիրի և Զանգեզուրի թիկունքում կազմակերպվում էին քրդական հետեւակ ու հեծելազոր զոկատներ՝ համիդիեական գնդերի օրինակով: Թուրքիայից և Բաքվից Արցախ էին ժամանում տա-

1. «Нагорный Карабах в 1918—1923», с. 332—334,  
ՀՀԳԿԱ, թ.200, ց.1, գ.427, թթ. 240—241.

Եիկ սպաներ: Այդ դեռ բոլորը չէ: Սուլթանովը և Բարվի նրա տերերը միաժամանակ աշխատում էին նաև ներքին մեղմ քաղաքականությամբ և մթերքների անխափան ներմուծումով կոտրել արցախահայության հաստատակամությունը, շրջել նրան իրենց կողմը:

«Մեկ ամիս պահանջվեց՝ պարզ գառնալու համար, որ «Համաձայնությունը» Աղրբեջանի համար թղթի կտորի արժեք ունի, նրան միայն պետք էր ապահովել թիկոնքը Զանգեզուրի վրա հարձակվելու համար»,<sup>1</sup> — զրում էր Հ. Թումյանը: Մուսավաթական բանակի կանոնավոր գորամասերը և անկանոն հրոսակախմբերը զանազան ուղղություններով մշտապես հարձակվում էին Զանգեզուրի վրա: Միայն 1919 թ. ապրիլի 12-ից մինչև օգոստոսի 16-ը թաթարները, բայց պաշտոնական տվյալների, բուն Զանգեզուրի, Կապանի, Մեղրու և Սիսիանի շրջանների վրա կատարել են ՅՀ հարձակում և ամեն անգամ հանդիպելով հայ բնակչության հերոսական դիմադրությանը, հետ էին շարությում:<sup>2</sup> Աղրբեջանը ձեռնամուխ եղավ Զանգեզուրի թիկոնքում սպառնացող ուժի ստեղծմանը: Այդ նպատակով, անգիտացիների զինակցությամբ, նա մուսուլմանական տարրերի խռովություն կազմակերպեց Նախիջևանում: Հայկական ոչ մեծաթիվ զորքը, պաշտպանողական մարտեր մղելով, հարկադրաբար նահանջեց Վայոց Զոր: Արագորեն Թուրքիայից մեծ թվով սպաներ թափանցեցին Նախիջևան և համալրեցին աղրբեջանական բանակի շարքերը:

Թուրքիային միանալու ձգտումը հանգիստ չէր տալիս Աղրբեջանի կառավարողներին: Հայկական Դարարազը «Ժամանակավորապես իրեն ենթարկելուց» և Շարուր—Նախիջևանի դավառը Հայաստանի դեմ ապստամբեցնելուց հետո Աղրբեջանը ցանկանում էր զենքի ուժով իրեն կցել նաև Զանգեզուրը: Մուսավաթականները և նրանց զինակից թուրքերը սեպտեմբերի կեսերից տեսնդորեն ուղամական պատրաստություն էին տեսնում Զանգեզուրի դեմ լայնամասշտաբ պատերազմական գործողություններ սկսելու համար: Նախքան Դարարազում նոր զինուժ կհնորոնացնելը և Զանգեզուրի

1 Հ. Թումյան, Գեղարքունիք լեռնային Դարարազում 1917—1920թթ. «Խորհրդային Դարարազ», 10 նոյեմբերի 1989 թ.:

2 «Հայաց», 4 հոկտեմբերի 1919 թ.:

գավառի դեմ պատերազմ՝ սկսելը, Աղրբեջանի կառավարությունը ձեռնարկեց թիկունքի ամրապնդման գործը: Այդ նպատակով նա որոշեց Գանձակի գավառի լեռնային շրջանները մաքրել հայերից և այնտեղ բնակեցնել մուսուլմանները: Թուրք—թաթարական զինված կազմավորումները հրի ու սրի ենթարկեցին Գանձակի լեռնային շրջանի հայկական Ղարաշինար, Խարիսափուտ, Ներքինշեն, Վերիշեն, Գյուլիստան, Էրքեչ, Մանաշեն, Բուղուխ, Արմավիր, Ղարաբուղաղ, Մանասքենդ, Գախրութ գյուղերը, որոնց բնակչության մեծ մասը կոտորվեց, իսկ մնացածը թաքնվեց անտառներում:<sup>1</sup>

Աղրբեջանի կառավարությունը վիթխարի ֆինանսական և այլ կարգի հատկացումներ կատարեց մարտունակ բանակ ստեղծելու համար: Հատկանշական է, որ Թուրքիան ևս ֆինանսական մեծ օգնություն ցույց տվեց: Աղրբեջանում նոր զորակոչ հայտարարվեց: Զենքի կոչվեցին զինակոչիկային տարիքից մինչև 35 տարեկան տղամարդիկ: Նոր զորքի ստեղծման ու նրա մարտական պատրաստության ամրող պարտականությունը դրվեց Աղրբեջանի ռազմական նախարար, նախկին ցարական բանակի գեներալ Սամեղբեկ Մեհմանղարովի: Կարծյալ ցարական բանակի գեներալ մուսավաթական բանակի գլխավոր հրամանատար Ալի Աղա Շիխլինսկու վրա: Թուրք զինվորական հրամանգիշները այդ գործում հանդիս բերեցին արտակարգ եռանդ: Մուսավաթական բանակի հրամանատարական կազմը ավելի քան մեկ ամիս նորակոչելիներին հետեւ գողականորեն մարզում էր Աղրբեջանի և Ղարաբաղի զորանոցներում:

Զանգեղուրի դեմ պլանավորվող ռազմական արշավի համար առանձնացվեց հատուկ զորք, որի հրամանատարությունը հանձնարարվեց գեներալ Շիխլինսկուն:<sup>2</sup>

Հարձակման նախօրյակին Աղրբեջանի բանակի շտարի պետ, գեներալ Սուլեյմանի խորհրդով գեներալ Նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը Թրդաստանի քրգերից կազմակերպեց հեծյալ դիվիզիա,

1. «Нагорный Карабах 1918—1923», с. 431, 436,  
ՀՀՊՊԿ, թ.200, ց.1, գ.563, թ.180:  
2. ՀՀՊՊԿ, թ.200, ց.1, գ.563, թ.179:

իր եղբայր Սուլթան բեկ Սուլթանովի հրամանատարությամբ:<sup>1</sup> Մուսավաթական Ազգային կառավագանության իր առաջին արշավանքը դեպի Զանգեզուր կազմակերպեց 1919 թ. սեպտեմբերի 20-ին, Զերբայլիի գավառից:

Ազրբեջանում և Ղարաբաղում ծավալված իրադարձություններն աննկատ ու անպատճախան չմնացին Հայաստանի կառավարության կողմից: Զանգեզուրի վրա մուսավաթական Ազրբեջանի հարձակումից յոթ օր անց՝ սեպտեմբերի 27-ին Երևանում բացվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովը: Բնականաբար, ժողովը չէր կարող շանդրագառնալ Հայ—ազրբեջանական հարաբերություններին, ընդանրապիս, և Ղարաբաղի ու Զանգեզուրի խնդրին, մասնավորապես: Ազրբեջանի հարցում կայացվեց հետեւյալ բանաձեռ: «Հրահանգել կառավարությանը, պահպանելով Հայաստանի ու Հայ աշխատավորության շահերը Ազրբեջանի սահմաններում, աշխատել բարիզրացիական հարաբերություններ պահպանել նրա հետո»:<sup>2</sup> Ընդհանուր ժողովը հատուկ որոշում կայացրեց նաև Ղարաբաղի ու Զանգեզուրի վերաբերյալ, զրանք համարելով անբաժանելի մաս Անկախ և Միացյալ Հայաստանի Հանրապետության:<sup>3</sup> Այդ նշանակում է, որ ՀՀԴ-ն, ձգտելով հանգերձ Ազրբեջանի հետ բարիզրացիական հարաբերությունների հաստատմանը, համաձայն չէր նրան զիցել Ղարաբաղն ու Զանգեզուրը: Ի կատարումն այդ որոշման՝ հանձնարարվեց նորքնատիր Բյուրոյին «բոլոր քայլերն անել Զանգեզուրն ու Ղարաբաղը միացնելու Հանրապետությանը»:<sup>4</sup> Այս որոշման տրամաբանական շարունակությունն է Հայաստանի արտգործնախարարի 1919 թ. սեպտեմբերի 28-ին Ազրբեջանի իր գործընկերոջը հղած հեռագիրը, որում ասվում էր, որ մատնանշված գործողությունները սպառնում են վերածվել վիթխարի արյունահղողության: Հայաստանի կառավարությունը չի կարող անուշադրության թողնել դա: Խոյն օրը Հայաստանի կառավարությունը դիմեց Բաքվում բրիտանական զիխավոր կոմիսարին և ֆրանսիական զին-

1 Խոյն տեղում, գ.563, թ.179, գ.427, ժամ առաջին, թ.57:

2 Բուրենն, նշվ. աշխ., էջ 184:

3 Խոյն տեղում, էջ 205:

4 «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

վորական ներկայացուցչության դեկազարին, որպեսպի նրանք ստիպեն մուսավաթական կառավարությանը դադարեցնելու իր զորքերի ռազմաարշավը դեպի Զանգեզուր:

Մակայն ազրբեջանական կողմը, անտեսելով Հայաստանի կառավարության օրինական բողոքները, շարունակում էր լայնամասշտաբ պատերազմական զործողությունները Զանգեզուրի դեմ: Ազրբեջանական կանոնավոր զորամասերի և թաթարական Հրոսակախմբերի հարձակումը նրանց համար անհաջող վերջաբան ունեցավ: Զանգեզուրի գավառի հայ բնակչությունը և տեղի փոքրաթիվ դինվորական ջոկատները մեկօրյա կատաղի մարտերում արժանի հակահարված հասցրեցին թվով բազմակի գերազանց ու լավ դինված հակառակորդին և նրան հետ շպրտեցին ելման դիրքերը: Թշնամին կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ ունեցավ Խոզնավար, Բայանդուր, Տեղ և Զարուղ գյուղերի մոտ: Միաժամանակ, մուսավաթական բանակի մի մասը և տեղական մուսուլմանական խաժամուժը, դուրս գալով Զիվանշիրի գավառից, Արաքսի հովտով շարժվեց դեպի Կարաբարու, Եղվարդ և Ռւզանիս հայկական գյուղերը: Ամենուր գնում էին անողոք մարտեր: Մարտական զործողությունների ընթացքում ազրբեջանական բանակը ծանր կորուստներ կրեց: Մասնավորապես, Խանքենդի ազրբեջանական գունդը կորցրեց իր կազմի համարյա կեսը:<sup>2</sup> Առաջին լուրջ պարտությունը շամբափեցրեց Ազրբեջանի բանակի ընշաքաղց Հրամանատարությանը և նրա տաճիկ խորհրդականներին: Զանգեզուրին տիրելու մոլուցքը նրանց հանգիստ չէր տալիս: Ազրբեջանը սկսեց լրջորեն նախապատրաստվել նոր մարտական զործողությունների: Այդ նպատակով նա հոկտեմբերի սկզբներին Շուշիի և Խանքենդի շրջաններում կենտրոնացրեց նոր զորամասեր, ինչպիսիք են Զիվանշիրի առաջին հետեւակային, զարարադյան 2-րդ հեծլալ, շեկինսկի 3-րդ

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.563, թ.179, գ.427, մաս առաջին, թ.57:

2 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.50, մաս առաջին, թ.164, ֆ.276, ց.1, գ.131, թ.72:

հեծյալ գնդերը, 2-րդ լեռնա—Հրաձգային ղիվիզիան, 2-րդ Համա-  
հավաք գումարտակը, առաջին սակրավոր վաշտը և շորս Հառիքց  
տեսակի Հրանոթ:<sup>1</sup>

Մինչև թշնամու նոր Հարձակում սկսելը, Հոկտեմբերի 2-ին Հայաս-  
տանի արտգործնախարարությունը Աղրբեջանի արտգործնախարա-  
րությունից ստացավ սեպտեմբերի 28-ի նոտայի Հետևյալ պատաս-  
խանը. «Զանգեզուրի գավառը գտնվում է Աղրբեջանի տարածքում,  
հետեւար ձեր նոտան Հանգիսանում է ուղղակի միջամտություն  
Աղրբեջանի Հանրապետության ներքին դրդերին»<sup>2</sup>

Աղրբեջանի ղեկավարները ցանկանում էին դաշնակից երկրնե-  
րի ներկայացուցիչներին ապակողմնորոշել Զանգեզուրի Հակամար-  
տության բուն խնդրից և հնարավոր պատերազմի ամբողջ պատաս-  
խանատվությունը բարդել Հայաստանի Հանրապետության վրա:  
Հայաստանի կառավարությունը պատասխան նոտայում խստիվ  
դատապարտեց աղրբեջանական կողմի կեղծ մեղադրանքները և  
անհիմն փաստարկները: Միաժամանակ Հայաստանի կառավարու-  
թյունը Աղրբեջանի կառավարությանը հայտնում էր երկու Հանրա-  
պետությունների միջև գոյություն ունեցող վեճերը խաղաղ  
ճանապարհով լուծելու իր պատրաստակամության մասին»<sup>3</sup>

Հոկտեմբերի 24-ին Հայաստանի արտգործնախարարություն  
ուղարկած զրագարտանքներով լի պատասխանում Աղրբեջանի արտ-  
գործնախարար Զաֆարովը Զանգեզուրի ղեմ իր կառավարության  
նվաճողական ծրագրերը փորձում էր քողարկել զանազան կեղծիք-  
ներով. պատերազմական գործողությունների նախապատճառը նա  
համարում էր Հայաստանի կառավարության «ոտնձգությունները»  
Զանգեզուրի գավառի և նրա մուսուլման բնակչության ղեմ:<sup>4</sup>

Հոկտեմբերի երկրորդ կեսին աղրբեջանական բանակի հրամա-  
նատարությունն իր կառավարությանը ղեկուցեց, որ բանակը ամ-  
բողջովին պատրաստ է մարտական գործողությունների համար:  
Տեղին է նշել, որ Զանգեզուրի ղեմ ծրագրվող պատերազմում մու-

1 ՀՀՊԳԱԱ, թ.200, ց.1, գ.50, մաս առաջին, թ.164, թ.276, ց.1, գ.131, թ.72:

2 Նույն արխիվ, թ.200, ց.1, գ.50, մաս երկրորդ, թ.307:

3 Նույն առջևում, գ.427, մաս առաջին, թ.58:

4 Նույն առջևում:

սավաթականներին թևավորում էր նաև 1919 թ. հոկտեմբերի 29-ին  
կնքված թուրք—աղբարեջանական դաշինքը, որով կողմերը փոխա-  
դարձաբար երաշխավորում էին երկու երկրների տարածքային ան-  
ձեռնմիելիությունը, ինչպես նաև պարտավորվում էին Համատեղ  
գործել իրենց երկրների վրա սպառնալիք լինելու գեպքում: «Հա-  
ռազ» թերթը ճիշտ էր մեկնարանում այդ գրությը. եթե Աղբարեջանը  
ցանկանա Հայաստանից պոկել Ղարաբաղն ու Զանգեզուրը կամ  
Նախիջևանն ու Շարուրը, ապա տաճիկները պետք է աջակցեին  
աղբարեջանական գորքերին:<sup>1</sup>

Զանգեզուր արշավող աղբարեջանական բանակի ընդհանուր հրա-  
մանատարությունը հանձնարարվեց գեներալ Ալի Աղա Շիխինսկովն,  
որին օգնելու էին գնդապետ Եղիգարովը և նահանգապետ Սուլթա-  
նովի եղբայրը՝ Սուլթանովը:<sup>2</sup>

Զանգեզուրի ուղղությամբ գործող բանակի հրամանատարու-  
թյան առջև խնդիր էր դրված դաժանորեն ճնշել գավառի հայ բնակ-  
չության դիմադրությունը, զավթել Զանգեզուրը, ապա Շարուր—Դա-  
րալազյազը՝ Նախիջևանի հետ միասին, և Հասնել թուրքական սահ-  
մանին:<sup>3</sup> Այդ խնդիրը լուծելու համար Աղբարեջանի բանակի շտարը  
մշակել էր պատերազմական գործողությունների պլան, ըստ որի  
Աղբարեջանի զանգեզուրյան խմբավորումը գրոհ սկսելու էր Գորիսի  
շրջանի արևելյան և Հյուսիսային կողմերից: Աղբարեջանական բանա-  
կի հրամանատարությունը, առանձնահատուկ նշանակություն տալով  
հատկապես ուղղմանակատի կենտրոնական հատվածին, իր բանա-  
կի զլիսավոր ուժերը կենտրոնացրել էր Խոզնավար—Բայանդուր գծի  
վրա: 1919 թ. հոկտեմբերի 22-ին Զանգեզուրի դավառի Զարախ  
նբրաբնակ գյուղ ժամանեց աղբարեջանական մի սպա 30 ձիավորով,  
և իր մոտ հրավիրեց Տեղ Հայարնակ գյուղի ներկայացուցիչներին  
ու նրանց հանձնեց Զանգեզուրը Աղբարեջանին անձնատուր լի-  
նելու մասին գրավոր պահանջը: Զանգեզուրի Հայոց Ազգային խոր-

1 «Հառազ», 3 ապրիլի 1920. թ.

2 «Արձագանք», 24 նոյեմբերի 1919 թ.

3 ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.563, թ.166, 181:

Հուրդը, քննութելով այդ պահանջագիրը, մերժողական պատասխան տվեց: Դրան հետևեց Սուլթանովի գավաղիր քայլու: Զանգեզուրի գավառում «անարխիային վերջ տալու» նպատակով նա Աղբքեչանի կառավարության անունից հայերին սպառնում էր, որ անիշխանություն սարքողները, կամովին շհեռանալու դեպքում, կարտաքսվեն զենքի-ուժով:<sup>1</sup>

Հոկտեմբերի վերջին Շուշիից Զանգեզուրի գլխավոր կոմիսարին հազորդեցին, որ դեպի Զանգեզուր են շարժվում. Աղբքեչանի ղորբերը: Նոյեմբերի 1-ին գեներալ Շիխլինսկին հարձակման հրաման տվեց: Թուրք-թաթարական զորքերը սկսեցին ընդհանուր հարձակում գործել Շուշիից, Զերրայիլի գավառից և Նախիջևանից: Շուշից առաջ էր շարժվում երեք հետևակային զունդ,<sup>2</sup> թվով 6000 հոգի, երկու հեծելազորային զունդ՝ կազմված 800 սուսերակիրներից<sup>3</sup> (այլ աղբյուրներում՝ 1000-ական հոգուց կազմված)<sup>4</sup>, ութ թեթև (ուրիշ աղբյուրներում 12)<sup>5</sup> և չորս հաուրից (պաշարողական) տիպի հրանոթ և 400 հեծյալ քրդեր: Զանգեզուրի գավառում զործող մուսուլման պարտիզանների հետ այդ թիվը հասնում էր 20 հազար մարդու:<sup>6</sup>

Նոյեմբերի 1-ին մուսավաթական զորքերը և բրդական հեծյալ շոկատը ուղղություն վերցրեցին Գորիսից դեպի Հյուսիս ընկած Խոզնավար գյուղը: Նոյեմբերի 5-ին թուրք-թաթարական ուժերը տիրեցին Խոզնավար և Բայանդուր գյուղերին: Միաժամանակ նըրբանք Տեղ գյուղի վրայով հարձակում սկսեցին Գորիսի վրա: Նոյեմբերի 4—6-ը տեղի ունեցան թիժ մարտեր: Հայերը ամուր փակեցին թշնամու հարձակման ճանապարհը և նոյեմբերի 6-ին անցնելով ուժեղ հակագրոհի, հակառակորդին հետ շպրտեցին իրենց գրաված բարձունքներից դեպի Խոզնավար և Բայանդուր: Կատաղի մարտեր ծավալվեցին մեծ խճուղու ուղղությամբ՝ Տեղ և Կոռնիձոր գյուղերի

1 «Ժողովուրդ», 11 նոյեմբերի 1919 թ.

2 «Արձագանք», 17 նոյեմբերի 1919 թ.

3 ՀՀՊԿ, ֆ.200, ց.1, գ.50, ժամ երկրորդ, թ.307:

4 «Արձագանք», 24 նոյեմբերի 1919 թ.

5 «Արձագանք», 24 նոյեմբերի 1919 թ., ՀՀՊԿ, 276, ց.1, գ.131, թ.93:

6 «Нагорный Карабах в 1918—1923», ը. 429.

դիմաց: Զանգեղուրցիների սրբնթաց հարձակումը ստիպում է հակառակորդին խոճապահար փախուստի դիմել:<sup>1</sup>

Հնդօրյա մարտական գործողությունները ավարտվեցին նրանով, որ թշնամին Զանգեղուրի գավառից հետ շպրտվեց 15—20 վերստ հեռու: Թուրք—թաթարական զորքը նահանջելիս մարտադաշտում թողեց մեծ քանակությամբ ավար՝ 22 զնդացիր<sup>2</sup> (այլ աղբյուրներում՝ 15)<sup>3</sup>, 100 հազար փամփուշտ, 500—600 սպանված, բազմաթիվ զիրավորներ<sup>4</sup> և 150 զերիներ<sup>5</sup>:

Զանգեղուրի դեմ սկսված մարտական գործողությունների հետ միաժամանակ, Եարուրի և Նախիջևանի թաթարները (թվով 3000 մարդ)<sup>6</sup> հարձակում սկսեցին Դարալազյաղի շրջանի վրա, նպատակ ունենալով շրջապատել Զանգեղուրը և կտրել նրա կապը Դարալազյաղի հետ: Մեկօրյա մարտերից հետո թշնամին ջախջախվեց և մեծ կորուստներ տվեց, իսկ կենդանի մնացածները նահանջեցին Պարաբարդ:<sup>7</sup>

Այսպիսով, Աղրբեջանի զանքերը՝ բռնությամբ հպատակեցնել Զանգեղուրը, ձախողման ևնթարկվեցին:

Զանգեղուրում կրած խայտառակ պարտությունից հետո Աղրբեջանի արտգործնախարարի օգնական Խան Թերինսկին ծրագրում էր աննկատ կերպով Զանգեղուրի շրջան ուղարկել թուրքական սպաներ, ասկյարներ, որոնք պետք է տեղական թաթարական բնակչությանը կաղմակերպեին Զանգեղուրի գավառում խոռվություն բարձրացնելու համար:

Մարտական գործողությունների եռուն օրերին, ինչպես նաև դրանք դադարելուց հետո, Հայաստանի կառավարությունը մի քանի անգամ դիմեց Աղրբեջանի կառավարությանը՝ պահանջելով վերջ

1 «Արձագանք», 17 նոյեմբերի 1919 թ.:

2 «Արձագանք», 17 նոյեմբերի 1919 թ., «Հառաջ», 18 նոյեմբերի 1919 թ.:

3 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.563, թ.180:

4 «Արձագանք», 17 նոյեմբերի 1919 թ., «Հառաջ», 18 նոյեմբերի 1919 թ.:

5 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.563, թ.180:

6 «Արձագանք», 24 նոյեմբերի 1919 թ.:

7 ՀՀՊՊԿԱ, ֆ.276, գ.1, գ.131, թ.72:

տալ ամեն տեսակի ուժային մեթոդներ զործադրելուն և վիճելի հարցերը լուծել նոյնմբերի 20-ին Բարգում հրավիրվելիք հայ—ադրբեջանական կոնֆերանսում:<sup>1</sup>

Տաղով իր համաձայնությունը՝ Ադրբեջանը միաժամանակ պատրաստվում էր արշավել Զանգեզուրի վրա, հուսալով կոնֆերանսին դնել կատարված փաստի առջև:

Հայաստանի կառավարությունը Ադրբեջանի նենդ ու ստոր քաղաքականության մասին տեղյակ պահեց Անդրկովկասում դաշնակիցների գերագույն կողմիսար Վորոգրովին, հայտնելով, որ հայկական կողմի նախաձեռնությամբ նոյնմբերի 20-ին Բարգում նշանակված էր հայ—ադրբեջանական կոնֆերանս վիճելի հարցերը կարգավորելու համար: Մեր պատվիրակությունը, — նշվում է զրության մեջ, — պատրաստ էր Բաքու մեկնելու, երբ ստացանք պաշտոնական տեղեկություն, որ Ադրբեջանը ընդհանուր հարձակում է սկսել Զանգեզուրի ղեմ: Հաղորդագրության վերջում ասվում է, որ այդպիսի գործելակերպը լիովին հակասում է Փարիզի կոնֆերանսի պահանջներին, ինչպես նաև վտանգի տակ է զնում Բաքում նախատեսվելիք հայ—ադրբեջանական կոնֆերանսի հրավիրումը: Հայաստանի կառավարությունը Ադրբեջանի հետագա զավթողական ծրագրերին վերջ տալու համար գաշնակից երկրների ներկայացուցիչներին առաջարկում է ստիպել Ադրբեջանին անմիջապես դադարեցնել թշնամությունը, Զանգեզուրից հանել Ադրբեջանի զրությանը և գերահաստատել նախապատերազմյան դրությունը, ինչպես նաև ժամանակավորապես դաշնակից զորքեր դնել երկու պետությունների սահմանների վրա:<sup>2</sup>

Նույն բովանդակությամբ հեռագրեր ուղարկվեցին նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչների անուններով:<sup>3</sup>

1 «Արձագանք», 24 նոյնմբերի 1919 թ.: Հայաստանի կառավարությունը հոկտեմբերին սկզբներին ադրբեջանական կողմին առաջարկեց նոյնմբերի 20-ին Բարգում հրավիրել հայ—ադրբեջանական կոնֆերանս և լուծել վիճելի հարցերը: Հոկտեմբերի 27-ին Ադրբեջանի կառավարությունը պաշտոնական ընդունեց այդ առաջարկը: Տե՛ս՝ «Արձագանք», 24 նոյնմբերի 1919 թ.:

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.50, մաս երկրորդ, թթ.300—302, թ.276, գ.1, գ.131, թ.26:

3 Նոյն արխիվ, ֆ.200, գ.1, գ.50, մաս առաջին, թ.232:

Այս անգամ Հայաստանի Հանրապետության դիմումը — բողոք-ները անհետանք շանցան։ Ի պատասխան հայկական կողմի բողոքի, դաշնակից Երկրների ներկայացուցիչները առաջարկեցին Հայաստանի և Աղրքեցանի վարչապետներին մեկնել Թիֆլիս և այնտեղ զերազույն կոմիսարի տեղապահ գնդապետ Ռեայի մասնակցությամբ հրավիրել խորհրդակցություն՝ Զանգեզուրի հարցի կապակցությամբ։<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1919 թ. նոյեմբերի 18-ի նիստում քննարկեց այդ հարցը և որոշեց, որ վարչապետ Ալ. Խատիսյանը պետք է մասնակցի խորհրդակցությանը։ Հաջորդ օրը՝ նոյեմբերի 19-ին, Ալ. Խատիսյանը ուղևորվեց Թիֆլիս։<sup>2</sup>

1919 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Հայաստանի և Աղրքեցանի վարչապետներ Ալ. Խատիսյանը և Ն. Ռասուրբեկովը կնքեցին համաձայնագիր, որով պաշտոնապես վերջ տրվեցին պատերազմական գործողություններին և պայմանավորվածություն ձեռք բերվեց տարածքային հարցերի վերաբերյալ վեճերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով։<sup>3</sup> Համաձայնագրում հատուկ կետ մտցվեց այն մասին, որ եթե հնարավոր լինի համաձայնության գալ, ապա երկու կողմերն էլ պարտավորվում են ընտրել շեղոք անձ, իրեն միջնորդ գատավոր։ Այդպիսի անձ ճանաչվեց ԱՄՆ-ի բանակի գրնդապետ Ջեյմս Ռիեն։<sup>4</sup> Երկու հանրապետությունների զեկավարները պայմանավորվեցին անհապաղ նշանակել հավասար թվով ներկայացուցիչներ, որոնք պետք է նոյեմբերի 26-ին Բաքվում հավաքվեն կոնֆերանսի։ Աղրքեցանական կողմի պատճառով, կոնֆերանսը բացվեց միայն դեկտեմբերի 14-ին և տևեց մինչև դեկտեմբերի 21-ը։ Հայ—աղրքեցանական կոնֆերանսի բացմանը ներկա էին Աղրքեցանի արտգործնախարար Զաֆարովը, Աղրքեցանի պատվիրակության ներկայացուցիչներ Խան Խոյովին, Վերիլը և Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչներ Մ. Հարությունյանը, Տ. Բեկզադյանը և Վ. Փափազյանը։<sup>5</sup>

1 Նույն արխիվ, ֆ. 200, գ. 1, գ. 15, թթ. 115—116։

2 «Ժողովուրդ», 20 նոյեմբերի 1919թ.։

3 ՀՀՊՊԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 427, մաս առաջին, թ. 62։

4 «Արձագանք», 28 նոյեմբերի 1919 թ.։

5 «Հայագ», 24 գեկտեմբերի 1919 թ., «Արձագանք», 29 գեկտեմբերի 1919 թ.։

Ղոնֆերանսը քննարկեց երկու հանրապետությունների սահմանադրին, երկաթուղային, առեւտրական պայմանագրերի և գաղթականների վիճակի կարգավորման հարցերը, Սուրբ վիճարանություններ առաջացան սահմանների հարցը քննարկելիս։ Հայկական պատվիրակությունը կանգնած էր այն տեսակետի վրա, որ տվյալ պահին հարկավոր է որոշել միայն ժամանակավոր սահմանորոշ գիծը՝ թողնելով վերջնական լուծումը Փարիզի հաշտարար կոնֆերանսին, իսկ ադրբեջանական կողմը առաջարկում էր սահմանների հարցը լուծել վերջնականապես։ Հայ պատվիրակները շառարկեցին խնդրի այսկերպ լուծմանը և:

Թե ինչ կարգով պիտի քննվեին ու լուծվեին օրակարգի հարցերը, պատվիրակությունների միջև դարձալ լուրջ տարածալություններ կային։ Հայաստանի պատվիրակությունը առաջարկում էր ամենից առաջ լուծել ու կիրառել կյանքի մեջ գործնական նշանակություն ունեցող խնդիրներ, այն է՝ հաստատել առևտրական և երկաթուղային հարաբերություն երկու հանրապետությունների միջև, կարգավորել գաղթականների վիճակը և այդպիսով հայ և թուրք ժողովուրդների մեջ ստեղծել հոգեբանական հաշտ միջնորդութ, որը նպաստեր ավելի դժվար հարցերի լուծմանը, ինչպիսին էր սահմանայինը։ Ազրբեջանի ներկայացուցիչները առաջարկում էին ամենից առաջ լուծել սահմանների հարցը, որից հետո՝ նոր միայն մյուսները։ Հայաստանի պատվիրակությունը շառարկեց։ Սակայն, երբ գեկտեմբերի 14-ին արդեն պիտի քննարկվեր սահմանագիծի հարցը, Ազրբեջանի պատվիրակությունը հայտարարեց, թե երկար մտածելով այդ խնդրի վրա՝ եկել է այն եղբակացության, որ ներկա պայմաններում անկարելի է երկու հանրապետությունների միջև այնպիսի սահմանագիծ անցկացնել, որ բավարարի երկու կողմերին էլ, քանի որ հայ և ադրբեջանական ժողովուրդները շահները այնքան խճճված են իրար հետ անտեսական, բնակության և այլ տեսակետից, որ անհընարին կլինի որոշակի գծով զատել նրանց։ Ազրբեջանցիների կարծիքով առժամանակ սլիտի բավարարվել մի սահմանորոշ գծով։<sup>1</sup>

Այստեղից դժվար չէ կռահել, որ Ազրբեջանը ամեն կերպ փոր-

ձում էր իուսափել Հարցի խաղաղ կարգավորումից:

Նոյեմբերի 23-ի հայ—ազրբեջանական համաձայնագրի ստորագրումից հետո թվում էր, թե կդադարեն արյունալի կոիվները Զանգեզուրի գավառում: Մինչդեռ, ինչպես վկայում են Ազրբեջանի և Հայաստանի արտգործնախարարների փոխադարձ մեջադրանք ներկայացնող նոյեմբերի 29-ի և 30-ի հեռագրերը, պատերազմական գործողությունները ընդհատումներով շարունակվել են Զանգեզուրի և Գարալազյաղի շրջաններում:<sup>1</sup> Դա նշանակում է, որ Ազրբեջանի դեկավարությունը չէր համարվում Զանգեզուրի գավառի նկատմամբ ազրեսիվ քաղաքականությունից: Այդ է վկայում նաև 1919 թ. նոյեմբերի 30-ին «Ազրբեջան» թերթում հրապարակված Ազրբեջանի ներքին գործերի մինիստրի որոշումը, որով Զանգեզուրի գավառի ամրող բնակիչները հայտարարվում էին Ազրբեջանի հանրապետության քաղաքացիներ: Այս հայտարարությունը ուղղակիորեն հակասում էր նոյեմբերի 23-ի թիֆլոսլան համաձայնագրին: Այդ կապակցությամբ Հայաստանի կառավարությունը բողոքեց Անդրկովկասում բրիտանական բարձր հրամանատարությանը և գաշնակիցների գերազույն կոմիսարին:<sup>2</sup> Մուսավաթական պարագլուխները, գործելով քեմալական Թուրքիայի թելազրանքով, կրկին դիմեցին հերթական նենդ քայլերի: Ազրբեջանի գործակալները սկսեցին կեղծ լուրերով ու խլամի քարոզությունով պղտորել Զանգեզրասարի և Ղարսի մուսուլման բնակչության մտքերը, որպեսզի հայկական ուժերը ներսում զրադեցնելով՝ կարողանան ընկճել Զանգեզուրը և շարժվել դեպի Արարատյան Հանրապետության սիրտը՝ Երևան: Ազրբեջանի գործակալները ժողովներ էին գումարում, գենք բաժանում մուսուլման բնակչությանն ու զրգոխ ճառեր արտասանում հայերի գեմ: Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրագործվող կեղծութ քաղաքականությունը ունեցավ որոշ արդյունք: Զարիշատում և Զըլլըրում գլուխ բարձրացրին Սելիմի և ուրիշ ավագա-

1 «Արձագանք», 12 դեկտեմբերի 1919 թ.,

«Արձագանք», 19 դեկտեմբերի 1919 թ.,

«Հառաջ», 4 դեկտեմբերի 1919 թ.:

2 ՀՀՊՊԿԱ, գ.200, ց.1, գ.50, մաս երկրորդ, թ.360:

կախմբեր, որոնք սկսեցին Հարձակումներ գործել Հայկական պորամասերի ու ոստիկանների վրա: Սիստեմատիկ դարձան Հայերի սպանությունները: Որոշ գյուղեր մերժեցին ընդունել Հայկական վարչությանը:<sup>1</sup> Զանգեզուրում Ազրբեջանի կրած ծանր պարտությունը Սուլթանովին հանգիստ շէր տալիս: Նա իր մոտ կանչեց Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի անդամներին և պահանջեց ներկայացուցիչներ ուղարկել Զանգեզուր, որպեսզի զանգեզուրցիներին համոզեն ընդունել Ազրբեջանի իշխանությունը: Ազգային խորհրդի անդամները Հրաժարվեցին նման «առաքելություն» կատերելու պարտականությունից, պատճառաբանելով, որ դա Ազգային խորհրդի իրավասությունից միանգամայն դուրս է:<sup>2</sup> Հետեւ Հերթական քայլը. իրեւ Հարցի խաղաղ լուծման միջոց՝ Սուլթանովը այս անգամ Ազգային խորհրդին առաջարկեց միջնորդի դեր կատերել Զանգեզուրի և իր միջև: Սուլթանովի սույն առաջարկին պատասխանելու համար 1919 թ. նոյեմբերի 30-ին Շուշիի Մարիամ Դուկասյան օրիորդաց դպրոցի դահլիճում հրավիրվեց Ղարաբաղի Հայության 7-րդ համագումարի ընտրած հանձնաժողովի և Ազգային խորհրդի համատեղ խորհրդակցությունը: Խորհրդակցությունը բուռն վիճարանությունից հետո որոշեց Ազգային խորհրդի Սուլթանովին տված պատասխանը համարել միանգամայն ճիշտ և կանգնած մնալ նույն տեսակետի վրա, մինչև նոր համագումար հրավիրելը, որը կտավերջնական պատասխան:<sup>3</sup> Այս խորհրդակցությունից հետո Արցախում քաղաքական մթնոլորտը էլ ավելի շիկացավ:

1 «Հառաց», 7 մարտի 1920 թ.:

2 ՀՀՊԿ, ֆ.314, գ.1, գ.34, թթ. 155—156:

3 Նոյեմբեր 1919 թթ. 157—158:

## 2. Համաժողովրդական ապատամբությունը Առնային Ղարաբաղում

Աղբքեջանի կառավարությունը շէր հաշտվում Զանգեզուրում իր բանակի կրած ծանր պարտոթյան հետ: Իր զորքերի պարտվելու ամենազիստը պատճառներից մեկը նա համարում էր Լեռնային Ղարաբաղը:<sup>1</sup> Այդ իսկ պատճառով մուսավաթական պարագուխները որոշել էին շտկել թույլ տված «սխալը», այն է՝ վերջնականապես նվաճել Արցախը, ապահովել թիկունքը, ապա միայն պատերազմել Զանգեզուրի դեմ: Արցախահայությունը կրկին կանգնեց նոր փորձությունների առջև: Լեռնային Ղարաբաղում սկսվեցին «արևելլան» քաղաքականության խաղերը: Շուշին և գավասի գյուղերը պատված էին լրտեսական մեծ ցանցով. ուսուցչի, մանրավաճառի, վարսավիրի, վաճառականի և այլոց անվան տակ նրանք վրխում էին ամենուր և տեղական թաթարական բնակչությանը հրահրում ազգամիջան կոիվների: Բարքի քաղաքականության հետեանքով թուրքերի վերաբերմունքը դեպի հայերը օրեցօր վատանում էր: Զկարուց գույքի, ոչ կյանքի ապահովություն: Աղբքեջանը, ահազին գումարներ հատկացնելով անզական մուսուլման բնակչությանը, գնում էր հայերի զննքը:<sup>2</sup> Ամեն օր տեղի էին ունենում հայերի սպանություններ ու թալան: Խանքենդում թուրքերը սպանեցին 50 մարդ և բոլորին թալանեցին: Բազմաթիվ սպանություններ կատարվեցին նաև Ասկերանում:<sup>3</sup> Բավական է նշել, որ մի քանի օրվա բնթացքում Խանքենդում, Ասկերանում և Շուշի—Եվլախ խճուղու վրա Աղբքեջանի զորքերը և կազմակերպված բանդաները կոտորեցին 400-ից ավելի անմեղ հայերի:<sup>4</sup>

Հայ բնակչության նկատմամբ զործադրվող բռնություններն ու սպանություններն ունեին քաղաքական հեռահար նպատակ՝ հայերից մաքրել Շուշի—Աղդամ խճուղու վրա բնկած զյուղերը:

1 ՀՀՊԹԵԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.163.

2 «Հառաջ», 12 սեպտեմբերի 1920 թ.:

3 «Հառաջ», 19 մարտի 1919 թ.:

4 Հ. Արքահամբան, նշվ. աշխ., էջ 33:

Աղքարեցանի կառավարությունը պարբերաբար խախտում էր օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի ամենասկզբունքալին կետերից մեկը, որը վերաբերում էր զորքի տեղաշարժերին: Սկսած 1919 թ. Հոկտեմբերից մինչև 1920 թ. փետրվարը, Աղքարեցանը Զանգեզուրի դեմ պատերազմելու ընթացքում, առանց Ղարաբարդի Ազգային խորհրդի կարծիքը հարցնելու (Հայտնի է, որ այդպիսի հարցը պետք է բնության առնվեր խորհրդում և որոշվեր ձայների 2/3-ի համաձայնությամբ) մոտ 19 հազար զինվոր անցկացրեց Խանքենից ու Շուշիից (դրանք բերվել էին Բաքվից, Գանձակից և Զաքաթալայից):<sup>1</sup> Այդ օքերին Աղքարեցանի կառավարությունը հայերի կոտորած կազմակերպեց նաև Շարուրի և Նախիջևանի գաղթականությունը, որ հայվարդել էր Խունախլարում, զիխովին բնագնջվեց: Հայ գաղթականությանը հիվանդություններից ու սովից «փրկելու» պատրվակով թուրքերը նրանց բաժանեցին թուրքական գյուղերի վրա և հունվարի 28-ին բոլորին կոտորեցին:<sup>2</sup>

Արցախահայության դեմ զործադրվող ցեղասպանության հրեշտականը իրականացնելու հրահանգները Աղքարեցանը ստանում էր մուսավաթականների թիկունքում գործող «Իթթիհատ» կուսակցությունից: Այսպես, 1920 թ. հունվարի կեսերին Բաքվում հրավիրվեց այդ կուսակցության կոնֆերանսը, որին մասնակցեցին նաև Հայ ժողովրդի դահճներ Խալիլ և Նուրի Փաշաները: Կուսակցության նախագահ, բժիշկ Կարա բեյ Կարարեկովը Բաքվի կառավարությունից պահանջեց անհապաղ մեկ միլիարդ ռուբլի տրամադրել Նուրի և Խալիլ Փաշաներին զորեղ բանակ (200000) ստեղծելու համար, ինչպես նաև Բաքու հրավիրել թուրքական ազգային շարժման զիխավոր Մուստաֆա Քեմալ Փաշային, ևնթասպայական կադրերի և «լավ պանխալամիստների» մեծ խմբի հետ՝ «բազմաշարշար հավատակիցների տառապանքին» վերջ տալու համար: Կոնֆերանսը մուսուլմաններին գենքի կոչեց ընդդեմ «անհավատ» հայերի:<sup>3</sup>

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, դ.563, թթ. 29—32:

2 «Հառաջ», 30 հունվարի 1920 թ.:

3 «Нагорный Карабах в 1918—1923», с. 430.

Ինչպես վկայում են փաստերը, Աղբքեջանը և Թուրքիան հայ ժողովրդի դեմ ուղղված պայքարում փորձել են ներգրավել նաև Դաղստանի մահմեդական ժողովրդին: Այս թե ինչ է զրում այդ մասին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը իր կառավարությանը. «Փետրրվարի 9-ին ինձ այցելեցին Դաղստանի Լեռնական Հանրապետության ներկայացուցիչներ Ալիխան Կանտիմիրը և Բամատովն ու Հայտնեցին, որ Աղբքեջանի գործակալները նուրի և էնվեր փաշաների գլխավորությամբ մշտապես աշխատել են թշնամություն սերմանել Հայերի դեմ: Նրանք փորձում են Դաղստանի ժողովրդին համոզել, թե իրը Հայաստանը և Աղբքեջանը բանակցություններ են վարում Զանգեզուրի խնդրի լուծման համար, այն պայմանով, որ Հայաստանը աշակցի Աղբքեջանին գրավելու Դաղստանը: «Ես նրանց հայտնեցի, — զրում է Տ. Բեկզադյանը, — որ Զանգեզուրի խնդրը մեզ համար այնքան անվիճելի է և այդ շրջանի վրա Հայաստանի կառավարության իրավունքները կասկածից դուրս, որ բանակցություններ վարել Աղբքեջանի հետ և Զանգեզուրը վաճառքի առարկա դարձնել մեզ համար անթույլատրելի ենք համարում»:<sup>1</sup>

Դարձանա՞ր ներկայացնեցիները հավաստում են Տ. Բեկզադյանին, որ Կովկասի լեռնականները չեն մասնակցի Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ Աղբքեջանի արշավանքին: Առաջ անցնելով նշենք, որ դաղսաանցի զինվորները գնաճքալ Սալիմովի բանակում ակտիվորեն մասնակցեցին Ասկերանի գրավմանը:<sup>2</sup> Մաւսավաթական կառավարողները և նրանց զորակից տաճիկներն իրենց հրեշավոր պլանները Ղարաբաղում իրականացնում էին գեներալ և նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի ձեռքով: Վերջինս 1920 թ. փետրվարի 19-ին իր կառավարության անունից Ղարաբաղի Հայոց Աղգային խորհրդին հայտարարեց, որ այլևս խաղաղության վեհաժողով գություն չունի և որ Ղարաբաղի Հարցը պետք է լուծվի սեփական նախաձեռնությամբ, և Աղգային խորհրդից պահանջեց առաջիկա

1 ՀՀՊՊԿ, թ.278, գ.1, դ.21, թթ. 6—7:

2 Խոյն արխիվ, թ.200, գ.1, դ.563, թթ. 157—158:

համագումարում վերջնականապես վճռել Ադրբեջանին ենթարկվելու հարցը:<sup>1</sup>

Այս Հայտարարությունը կասկած չի հարուցում, որ Սուլթանովը քացեիրաց հրաժարվում էր օգոստոսյան ժամանակավոր համաձայնազրից և ցանկանում էր Ղարաբաղի հարցը լուծել արյունով ու կոտորածով: Ադրբեջանը տենդորեն պատրաստվում է զրան: Կարյագինոյի ուղղությամբ Զանգեզուրի սահմանակից շրջաններում շարունակվում էր թուրքական զորքերի կենտրոնացումը: Անընդհատ զորք էին տեղափոխում նաև Զարուղի շրջան: Զինուժի կենտրոնացում կատարվեց Զիվանշիրի սահմանակից շրջաններում: Կարյագինոյի կողմից հայկական Խճարերդ գյուղի դիմաց տեղադրվեցին հրանոթներ և գնդացիրներ, հավանաբար այդ ուղղությամբ Ղարաբաղի և Զանգեզուրի միջև բոլոր տեսակի կազն ու հաղորդակցությունը կտրելու նպատակով:<sup>2</sup> Փետրվարի 20-ին Հայաստանի կառավարությունը Գորիսից պաշտոնական հազորդադրություն է ստանում, որ ադրբեջանական բանակը պատրաստվում է մտնել Զանգեզուր: Հաղորդագրության մեջ ասվում էր նաև, որ Շուշի են ժամանել նուրի և Խալիլ փաշաները, մի խումբ տաճիկ սպաների հետ, ինչպես նաև զեներալ Նովրուզով՝ զինված խմբերով:<sup>3</sup>

Երեանի կառավարությունը այդ կապակցությամբ բողոք է ներկայացնում Անդրկովկասում գտնվող գաշնակից պետությունների հրամանատարությանը և պահանջում ամենակտրուկ միջոցներ ձեռնարկել՝ կասեցնելու Ադրբեջանի ծրագրավորված հարձակումը, որը նոր արյունահեղությունների առիթ էր տալիս:<sup>4</sup> 1920 թ. գարնան շեմին բաղաբական իրադրությունը ավելի է սրվում Լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ կատարվեց այն, ինչի մասին դեռևս 1919 թ. դեկտեմբերի 10-ին Հայ Հեղափոխական Դաշնակցության Բյուրոյի անդամները զգուշացնում էին վարչապետ Ալ. Խատիսյանին: Նրանք նշում էին, որ Ադրբեջանի բաղաբականությունը Զանգեզուրում, Ղա-

1 «Հառաջ», 19 մարտի 1920 թ., «Հառաջ», 4 ապրիլի 1920<sup>o</sup> թ.:

2 «Հառաջ», 26 փետրվարի 1920 թ.:

3 «Հառաջ», 24 փետրվարի 1920 թ.:

4 «Հառաջ», 24 փետրվարի 1920 թ.:

բարադում և Գանձակի գավառում առաջիկա զարնանը անխուսափելիորեն պիտի հասնի զինված բնդհարումների այդ գավառների հայ աղքարնակշության, թերեւ նաև Հայաստանի Հանրապետության հետ: Դրա համար էլ նրանք պահանջում էին, որ կառավարությունը իր վրա վերցնի նշված գավառների զինական պաշտպանության գործը և անհրաժեշտ քայլեր կատարի ժողովրդին և հանրապետությանը աղետալի անակընկալների շենթարկելու համար:<sup>1</sup> Տեղին է նշել, որ 1920 թ. ձմռան ընթացքում Արցախի հայությունը հարցի խաղաղ լուծման ակնկալիքով, ինչպես նաև նոր արյունահեղությունների տեղիք շտալու միտումով, ամեն կերպ աշխատում էր խուսափել Աղրբեջանի հետ ընդհարվելուց: Մինչդեռ ժամանակները անցնում էին, ոչ միայն կոնֆերանսն էր ձգձգում, այլև Աղրբեջանի կառավարությունն էր շտապում ավարտել Լեռնային Ղարաբաղի և, ոչ միայն Ղարաբաղի, այլև Զանգեզուրի նվաճումը որին ամեն գնով աջակցում էր Թուրքիան: Այնպես որ 1920 թ. զարնանը արցախահայության քաղաքականության կտրուկ փոփոխությունը Աղրբեջանի կենտրոնական իշխանության նկատմամբ ընական անհրաժեշտություն էր և թելադրված էր կոնկրետ հանգամանքներով:

Նոր իրադրության պայմաններում, Ղարաբաղի հետագա ճակատագրի հետ առնշվող խնդիրներին լուծում տալու համար, Աղքային խորհուրդը որոշեց հրավիրել նոր՝ 8-րդ համագումարը: Այն բացվեց 1920 թ. փետրվարի 28-ին Վարանդայի Շոշ գյուղում և տեսց մինչև մարտի 4-ը (այլ աղբյուրներում՝ մինչև 5-ը):<sup>2</sup> Մի քանի խոսք համագումարի հրավիրման նախապատմության մասին: Աղրբեջանի պահանջով համագումարը պետք է կայանար Շուշի քաղաքում: Սակայն, երբ հայտնի դարձավ Աղքային խորհրդին, որ գեներալ նահանգապետ Սուլթանովը որոշել է համագումարը գումարել Շուշի քաղաքում, որպեսզի պատգամավորության վրա ճնշում դորժադրելով Աղրբեջանի համար ցանկալի վճիռներ կայացնի, տե-

1 ՀՀՀԹԿՓԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.155, թ.1:

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.187:

զեկացնում է Համագումարի պատգամավորներին քաղաք շգալ, այլ հսկաբվել Շոշ գյուղում։ Դժբախտաբար, Ազգային խորհրդին շի հաջողվում այդ մասին տեղյակ պահել բոլոր պատգամավորներին։ Դա էր պատճառը, որ Համագումարի հրավիրված 127<sup>1</sup> պատգամավորներից 50-ը հավաքվեցին Շուշիում, իսկ 77-ը՝ Շոշ գյուղում։<sup>2</sup> Փաստորին Արցախի Համահայկական Համագումարի ներկայացուցիչներն, իրենց կամքից անկախ, Համագումարի հավաքվեցին երկու տարրեր վայրերում։

Համակողմանիորեն քննարկելով օգոստոսյան ժամանակավոր Համաձայնագրից մինչև Համագումարն ընկած ժամանակաշրջանում Ղարաբաղում տիրող քաղաքական կացությունը, Շոշի Համագումարը փաստեց, որ Աղրբեջանի կենտրոնական իշխանությունը ոչ մի կարգ ու կանոն չի կարողացել հաստատել Ղարաբաղում, այլև ընդհակառակը, պատճառ է դարձել անիշխանության։ Համագումարը խստորեն դատապարտեց Լեռնային Ղարաբաղի դեմ մուսավաթական Աղրբեջանի ոտնձգությունները և նրանից պահանջեց ճշտորեն կատարել օգոստոսյան ժամանակավոր Համաձայնագրի կետերը, այլապես նման գեպքերի կրկնությունը արցախահայությանը կստիպի դիմադրել նրա ոտնձգություններին և անգամ դուրս դալ բացահայտ կռվի։<sup>3</sup>

Համագումարը լիովին արտահայտվեց Արարատյան Հանրապետության հետ վերամիավորվելու օգտին։

Ինչ վերաբերում է Շուշվա Համագումարին, ապա այն Սուլթանովի հսկողությամբ ընդունեց Աղրբեջանի շահերին ծառայող որոշումներ։ Առաջին, Ղարաբաղը Աղրբեջանի տնտեսական մասն է։ Երկրորդ, Հայաստանը շպետք է խառնվի Ղարաբաղի ներքին գործերին։<sup>4</sup> Շուշիի Համագումարի 52 պատգամավորները, որոնք իրենց Համարեցին ժողովրդի ներկայացուցիչներ և նրա անունից որոշումներ կայացրին, ներկայացնում էին բոլշեիկյան և էսէռական կու-

1 Նշում են նաև այլ թիվ՝ 168 պատվիրակ։ Տես՝ Բ. Ռուբարյան, Խշվ. աշխ., էջ 75։

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.278, գ.1, գ.21, թթ.34—35, ֆ.200, գ.1, գ.466, թ. 142։

3 Նույն արխիվ, ֆ.278, գ.1, գ.21, թթ. 34—35, ֆ.200, գ.1, գ.563, թթ. 29—35, «Հառաջ», 4 ապրիլի 1920 թ.։

4 ՀՀՊՊԿԱ, ֆ.278, գ.1, գ.21, թթ. 34—35։

սակցություններին: Նրանք Ղարաբաղի ժողովրդի անունից պատգամավորություն ուղարկեցին Բաքու Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի մոտ և նրանից պահանջեցին վավերացնել «Համագումարի» որոշումները: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն իր կառավարության անունից պաշտոնապես հայտարարեց, որ Շուշվա «Համագումարը» իրավասու չէ նման որոշում կայացնելու, քանի որ ժողովրդի իսկական ներկայացուցչությունը Շոշ գյուղում այլ որոշում է կայացրել:<sup>1</sup> Հասկանալի է, որ Շուշիի Համագումարը ամբողջ արցախահայությանը չէր ներկայացնում և, բնականաբար, նրա անունից հանդես գալ չէր կարող, թեկուզ այն պատճառով, որ ներկայացնում էր պատգամավորների փոքրամասնությունը: Բացի դա, որնէ կասկած չէր հարուցում, որ այդ որոշումները ընդունվել էին Սուլթանովի: Ճնշման տակ: Բայց ոչ միայն գրանով: Համագումարի որոշումները չէին արտահայտում արցախահայության միասնական կամքը, չէին բխում ազատ ու անկախ ապրելու նրա ձգտումներից: Աղրբեջանի կառավարող շրջանները շափականց զայրացած էին 8-րդ Համագումարի որոշումներից: Աղրբեջանը և նրա թիկունքին կանգնած Թուրքիան լիովին հասկացան, որ Արցախի հարցը լուծելու ճանապարհը մեկն է՝ արցախահայության բնաջնջումը: Գարնան նախաշեմին Աղրբեջանը ձեռնամուխ եղավ ուժային մեթոդով Ղարաբաղի հարցի լուծմանը:

Այդ նպատակի համար Աղրբեջանը ոչ միայն իր զինվորական հիմնական ուժերը, այլև ահազին թվով զինված հրոսակախմբեր, «կամավորների» անվան տակ, կենտրոնացրեց Ղարաբաղի գավառում: Ստույգ տվյալներով 1920 թ. գարնանը Ղարաբաղում և Զերբրայիլում կենտրոնացված էր ավելի քան 10 հազար զինվոր: Շուապ կերպով կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Շուշի ժամանեց նուրի փաշան 10 թուրք սպաների ուղեկցությամբ:<sup>2</sup> Մարտի 11-ին և 12-ին Բաքվից Զերբրայիլի վրայով Ղարաբաղ և Զանգեզուր ուղարկվեց 90 զագոն՝ բեռնված զենքով ու զինամթերքով:<sup>3</sup> Մեկ ամ աղր-

1 ՀՀՊՊ:Ա, ֆ.198, ց.1, գ.52, թթ.51—52:

2 «Ժողովուրդ», 26 մարտի 1920 թ.:

3 «Հայոց Կարախ և 1918—1923», ս. 431.

յուրի տվյալներով Եվլախ կայարանը լցված էր բեռնատար ավտոմեքենաներով, զենքի տարրեր տեսակներով ու ուղղմաժթերքով:<sup>1</sup>

Նախ ամրացվեցին Շուշին և Խանքենդ ավանը: Մուսավաթական զորամասերը գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով ապահովեցին Աղրեջանի կապը Շուշիի հետ:<sup>2</sup>

Ամրանալով Ղարաբաղի ռազմավարական նշանակություն ունեցող կետերում՝ Աղրեջանը փորձեց զինաթափել ժողովրդին: Այդպիսի փորձեր արվեցին նաև Զանգեզուրի սահմաններում և Զերբայլիի շրջանում Լեռնային Ղարաբաղում վիստացող Աղրեջանի գործակալները ժողովներ էին դումարում, դենք բաժանում մուսուլման բնակչությանն ու գրգորի ճառեր արտասանում հայերի դեմ: Այդ ամենը խոսում են այն մասին, որ Ղարաբաղի դեմ ուղղված Աղրեջանի գավերը մասնակի բնույթ չունեին: Այս անգամ Ղարաբաղը և Զանգեզուրը գործ ունեին ոչ թե մասնակի հարձակումների, այլ լայնամասշտաբ պատերազմական գործողությունների հետ: Բոլոր տեսակետներից կարելի էր ենթադրել, որ այդ կոիվը ճակատագրական էր լինելու կողմերի համար: Ավելին, Ղարաբաղի հայության պարտությունը այս կովում համազոր էր տնտեսական և ֆիզիկական կորստի: Եթե աննպաստ հանգամանքների բերումով արցախսահայության գոյամարտը անհաջող վերջաբան ունենար, ապա Աղրեջանի կողմից որևէ զիջում չէր լինի: Այդ չէին թաքցնում նաև իրենք՝ Աղրեջանի ղեկավար շրջանները, և խոստովանում էին հրապարակավ: Օրինակ, երբ Աղրեջանի ներքին գործերի նախարար Վերիլովը պարզամենտի նիստում զեկուցեց Ղարաբաղի հայերի «ըմբոսացման» մասին, բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչները կրքոտ կերպով արտահայտվեցին հայերի դեմ և պահանջեցին կառավարությունից ամենակտրուկ միջոցներ ձեռնարկել նրանց հանդեպ:<sup>3</sup>

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը իր բնօրրան երկիրը թշնամուց պաշտպանելու, և նախնյաց երկրում ապրելու իր օրինական իրավունքը վերահաստատելու համար հարկադրված էր անհա-

1 ՀՀՊՊԿԱ, թ.198, ց.1, գ.52, թթ. 51—52:

2 Հ. Արրաջամաշ, Եզգ. աշխ., էջ 34:

3 ՀՀՊՊԿԱ, թ.200, ց.1, գ.563, թթ. 101—102:

վասար կովի ելնել թուրք—թաթարական կանոնավոր բանակների և  
բազմահազար հրոսակների գեմ, երբ սրանք Ազրբեջանի կենտրո-  
նական իշխանության հրամանով «Ղարաբաղ—Զանգեզուրի հարցը  
մեջտեղից վերացնելու» նպատակով ուղղում էին զինաթափ անել և  
արյան բաղնիք սարքել այդ գավառներում։ Այլ խոսքով՝ ստեղծված  
կացությունը թելադրեց արցախահայությանը դիմելու ինքնապաշտ-  
պանության։ Ինքնապաշտպանության գործի կազմակերպումը զե-  
կավարում էին Հայաստանից այստեղ եկած արցախցի գործիչները։  
1920 թ. Հունվարին Երևանից Զանգեզուրի վրայով Ղարաբաղ թա-  
փանցեցին Արտեն Միքայելյանը, Ասատրուր Ավետիսյանը, Արտեն  
Հովհաննիսյանը (Արտո), Դալի Ղազարը, կապիտան Մարտիրոս-  
յանցը, գնդապետ Մեսյանը և մի քանի այլ սպաներ՝ արևմտահայե-  
րի հեծյալ զինվորների մի փոքր ջոկատի ուղեկցությամբ։ Նրանք  
վարանդայի Սարուշեն գյուղում հիմնեցին զինվորական շտաբ, որի  
պետ հաստատվեց Արտեն Միքայելյանը։ Նրա մերձավոր զինակից-  
ները դարձան տեղի գաշնակցականներ Արտեն Թումանյանը, Անու-  
շավան Ավետիսյանը, Խաչատրուր Մելքոնյանը և ուրիշներ։ Դավա-  
ռում նոր կազմավորված զորամասերի համար նշանակվեցին ուղ-  
մական պետեր։ Կապիտան Մարտիրոսյանցը նշանակվեց Զիվանշի-  
րի զորամասի հրամանատար, գնդապետ Մեսյանը՝ Խաչենի, Դալի  
Ղազարը՝ Վարանդայի, Հովհակիմ Ստեփանյանը՝ Դիզակի։<sup>1</sup> Զինվո-  
րական հրամանատարները վերոհիշյալ հրաններում կազմակերպե-  
ցին նոր զորամասեր, ծառայության վերցրեցին նախկին սպաներին  
և սկսեցին լրջորեն նախապատրաստվել ինքնապաշտպանության։

Արցախում կատարվող անցուդարձից անհանգստացած Խոսրով  
քեկ Սովորանովը իր մոտ է կանչում գավառապետ Բագրատ Շահ-  
նազարյանին և հանգիմանում, որ վերջինս շրջաններում տեղի ունե-  
ցող դեպքերի վերաբերյալ իրեն ճշգրիտ տեղեկություններ չի հաղոր-  
դում, որ թաքցնում է Աղրբեջանի դեմ «դավադրության» կազմակեր-  
պիչներին։

Ինչպես երևում է սկզբնաղբյուրների տեղեկություններից, Ղա-

բարադի Հայոց Ազգային խորհրդի անդամները սկզբնական շրջանում ոչ մի առնվազաւթյուն չունեին Դարաբաղի «նորարևակների» հետ և նույնիսկ շգիտեին նրանց գալու նպատակը: Հարկավոր էր գործնական կապեր հաստատել տեղական իշխանությունների և զինվորական շտարի միջև: 1920 թ. հունվարի սկզբին Շուշի քաղաքում հրավիրվեց Դարաբաղի Հայոց Ազգային խորհրդի բնողայնված նիստ՝ Շուշի մտավորականության և կուսակցությունների ղեկավարների մասնակցությամբ: Երկար վիճաբանությունից հետո նիստը որոշեց կազմել չորս հանձնաժողով (յուրաքանչյուրը բաղկացած երեք հոգուց) և ուղարկել Վարանդայի, Դիզակի, Խաչենի և Ջրաբերդի շրջանները, որպեսզի հանդիպեն «նորեկների» հետ, ժանոթան նրանց ծրագրերին, բացատրեն, որ նրանց ներկայությունը վատ է անդրադառնում Դարաբաղի աշխատավորության և Ազրեցանի կառավարության փոխհարաբերության վրա, որը կարող է աղետալի հետևանքների հանգեցնել: Հանձնաժողովները մեկնեցին շրջանները և մի քանի օրից հետո վերադարձան: Հունվարի երկրորդ կեսին Ազգային խորհրդի բնողայնված նիստը լսեց հանձնաժողովների ղեկուցումները: Ղեկուցողները հայտնեցին, որ Հայաստանից եկած գործիչները հրաժարվում են հեռանալ Դարաբաղից: Երկար թեր ու զեմ արտահայտվելուց հետո որոշվում է Ազգային խորհրդի բոլոր կուսակցությունների (բացառությամբ գաշնակցության) և Շուշիի մտավորականության անունից պահանջել, որ նրանք հեռանան Դարաբաղից:<sup>1</sup>

«Նորեկների» հետ բանակցելու համար ստեղծվեց նոր հանձնաժողով: Երբ նորակազմ հանձնաժողովը հանդիպեց զինվորական շտարի պետ Արտեն Միքայելյանին և նրան ներկայացրեց Ազգային խորհրդի բնողայնված նիստի որոշման պահանջները, ստացավ հետևյալ պատասխանը. «Շուշիում գտնվող ներկայիս Ազգային խորհուրդն իր ամբողջ կազմով իրավունք չունի իրեն համարել կեռնացին Դարաբաղի աշխատավորության ներկայացուցիչ: Նրա բոլոր անդամները չեն, որ ընտրված են Դարաբաղի աշխատավորության կողմից: Մայրահեղ զեպքում նա կարող է իրեն համարել

1 ՀՀՊԳԿ, ֆ.314, գ.1, գ.34, թթ. 174—175:

Շուշվա և ոչ թե ամբողջ կեռնային՝ Ղարաբաղի Ազգային խորհուրդը՝ ինչ վերաբերում է Շուշիի մտավորականությանը և քաղաքական կուսակցություններին, — ավելացնում է Արսեն Միքայելյանը, — ապա նրանք լավագույն դեպքում կարող են իրենց խոսքը տարածել միայն Շուշվա հասարակության վրա, իսկ Շուշին ամբողջ Ղարաբաղը չէ, հետեւապիս, նրանք իրենց իրավունքը չպիտի վերապահեն խոսելու ամբողջ Ղարաբաղի գյուղացիության անունից»:<sup>1</sup>

Ազրբիջանի կենտրոնական իշխանության հրահանգով՝ Սուլթանովը 1920 թ. մարտի 20-ին վերջնազիր ներկայացրեց Ղարաբաղի Հայ ազգարնակությանը, բայտ որի հատուկ նշանակված տեղերում, երեք օրվա ընթացքում, նրանք պիտի կամավոր հանձնեն իրենց գեներերը, հակառակ գեպքում, սպառնում էր բռնի մեթոդների գործադրում:<sup>2</sup> Ղարաբաղի ընակշությունը համարելով այդ վերջնազիրը օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի ակնհայտ խախտում և պատերազմի նախանշան, որին պիտի անփուսափելիորեն հաջորդեին ճնշումները և բռնությունները, վճռականորեն մերժեց այն։ Սուլթանովը և Բաբվիր նրա տերերը վճռեցին բռնությամբ զինաթափել ընակշությանը։ Մարտի 20-ին Սուլթանովի կարգադրությամբ Ղարաբաղում կենտրոնացած թուրք—թաթարական մեծաթիվ դորբերը սկսեցին բռնությամբ զինաթափել ընակշությանը։ Ղարաբաղի գեներալ Նահանգապետը Շուշի քաղաքի մահմեդական ընակիներին հրահանգում է պատրաստ լինել և սպասել իր ազգանքանին՝ քաղաքի հայկական մասը հիմնահատակ կործանելու համար։ Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ Ազրբիջանի հարձակումը սկսվեց 1920 թ. մարտի 22-ին։

Հատկանշական է, որ հարձակմանը հաջորդող օրերին Ազրբիջանի կառավարությունը թ' և Հայաստանի կառավարությանը և թ' դաշնակից երկրներին ուղղված հեռագրերում քանում էր ապացուցել, որ Ղարաբաղի հայ ժողովուրդը ապստամբել է և հարձակում գործել ազրբիջանական զորքերի վրա։ Իրականում դա ոչ թե ապստամբություն էր, այլ պատասխան Ազրբիջանի կանոնավոր

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.314, ց.1, գ.34, թթ. 183—186։

2 «Հայագ», 20 ապրիլի 1920 թ.։

զորքերի հարձակմանը: Մարտի 22-ին Աղբեջանի սահմանի ամբողջ երկայնքով՝ Գանձակից մինչև Մուսուլմանլար—Զանգեզուր, ծավալվեցին մարտական գործողություններ: Այդ օրը մուսավաթական զորքերը հարձակման անցան Զանգեզուրի վրա: Թշնամին գրոհում էր երեք ուղղություններով՝ Մինքենդի կողմից զեպի Գորիս, Քերլյարից (Քերլեստ) զեպի Ալի-Կուլի—Ռոշազի, նպատակ ունենալով Կապանը կտրել Զանգեզուրից և Զերրայիլից:<sup>1</sup> Եթե Աղբեջանին հաջողվեր այս պլանը իրագործել, ապա Գորիս քաղաքը երեք կողմից կվերցվեր շրջափակման մեջ: Սյունիքի քաջարի ժողովուրդը ստրի կանգնեց կենաց ու մահու պայքարի: Առաջին երկու ուղղություններում հակառակորդի բոլոր հարձակումները հետ մղվեցին: Կապանի ուղղությամբ գործող հայկական ինքնապաշտպանական ուժերը, որոնք բաղկացած էին տեղական բնակիչներից, նահանջեցին՝ թշնամուն հանձննելով Այնթափի բարձունքները: Վերագասավորելով ուժերը և օգնություն ստանալով Գորիսից՝ Կապանի աշխարհազորայինները մարտի 26-ին անցան հակահարձակման և թշնամուն հետ շարտեցին նվաճած դիրքերից, վճռական գրոհով ճեղքեցին ճակատը, սկսած Բաղրբեկլիվից մինչև Մասսուլի և վերականգնեցին կապը Ղարաբաղի հետ:<sup>2</sup> Աղբեջանի բանակը մեծ ուժերով թարթառի ուղղությամբ հարձակվեց Զրարերդի վրա: Սակայն Զրարերդի անառիկ աշխարհազրական դիրքի ու նրա ժողովրդի հերոսական դիմադրության շնորհիվ թշնամուն շահողվեց մտնել Զրարերդ:

Մուսավաթական բանակի հարվածային ուժերը թուրք սպաների հրամանատարությամբ կենտրոնացել էին Աղգամ—Ասկերան—Խանքենդ—Շուշի խճուղու, իսկ արևմտյան կողմից՝ Քիրս—Տումի—Խծարերդ ուղղություններով:<sup>3</sup>

Վերստին բոցերի մեջ էր Արցախ աշխարհը: Հայկական զինված կազմավորումները նախ հարձակում սկսեցին ուղղմավարական նշանակություն ունեցող Ասկերանի, Շուշիի և Խանքենդի վրա: Մար-

1 «Հայոց Կարախ 1918—1923», ս. 431,  
ՀՀՊԿԱ, ֆ.278, ց.1, գ.14, թ.95.

2 «Հայոց», 4 ապրիլ 1920 թ.:

3 ՀՀՊԿԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.220:

աի 22-ի զիշերը՝ Ղարաբաղի զինուժերի մի մասը գնդապետ Զ. Մեհյանի և Ալեքսանի (Ալեքսան դայի) հրամանատարությամբ հարձակվեց Խանքենդ ավանի և Խոջալուի վրա։ Միաժամանակ 350 զինվորներից բազկացած մի զորաջոկատ գանձակցի Դալի Ղազարի զեկավարությամբ շարժվեց գեպի Ասկերան։ Խանքենդի ուղղությամբ զործող Հայկական ուժերը թշնամուն մեծ կորուստներ պատճառելով, զրավում են Խոջալուն և Խանքենդը։ Խանքենդ ավանում Հայերը վերցնում են Թուրքական զորանոցները և զինաթափ անում թշնամու 1500 զինվորների։<sup>1</sup> 1920 թ մարտի 23-ի առավոտյան սկսվեց Ասկերանի հերոսամարտը։ Արցախի քաջարի մարտիկները Դալի Ղազարի հրամանատարությամբ զրավեցին Ասկերանի բերդը և Հաւածելով Հակառակորդին՝ քշեցին մինչև Ղարադաշ։<sup>2</sup>

Ասկերանը կարեոր ուազմավարական նշանակություն ուներ երկու կողմերի համար էլ։ Ասկերանին տիրելով, թուրքերը կարող էին իրենց ձեռքում պահել Ղարաբաղը։ Այն Հայերի համար Ղարաբաղի բոլոր շրջանների միջն կապ հաստատելու գիտավոր հանգույցին էր։ Երկու կողմերն էլ լավ գիտակցելով դա՝ լրջորեն նախապատրաստվում էին նոր մարտերի։ Թշնամին բոլոր ճակատներում, մասնավորապես Ասկերանի ուղղությամբ, շարունակաբար համալրումներ էր ստանում։ Այդ օրերին Աղրբեջանի բոլոր շրջաններից ու մայրաքաղաք Բաքվից լավ սպառապինված կամավորական խմբեր էին գալիս Ղարաբաղ։<sup>3</sup> Ասկերանի ուղղությամբ զործող Հայկական զորքերի շտարի պետ Հարություն Թումյանի վկայությամբ, Ասկերանի դեմ թշնամին նետել էր 30 հազարից ոչ պական կանոնավոր ու անկանոն ուժեր։<sup>4</sup> Մինչդեռ նրանց զիմ կանգնած էր 450—500 զինվորից կազմված Հայկական մի ջոկատ՝ զինված միայն հրացաններով, այն էլ փամփուշտի խիստ սակավ պաշարով։ Պետք է ասել և այն մասին, որ Ասկերանի ճակատում կանգնած Արցախի զորամասը նոր էր համալրվել։ Մարտի 31-ին Սարուշեն եկած Զան-

1 ՀՀՊՊԿ, ֆ.314, ց.1, գ.34, թթ. 222—223։

2 Նույն տեղում, թ.223։

3 Նույն արխիվ, ֆ.278, ց.1, գ.14, թ.95։

4 Հ. Արքահամբակ, Եզզ, աշխ., էջ 35։

զեզուրի հայկական դորամասի զնդացրալին խումբը անմիջապես տեղափոխվեց Ասկերան։ Ապրիլի 3-ին 100 հեծյալ զինվորների ուղեկցությամբ Սարուշենից Ասկերան եկավ նաև հայկական դորամասի պետ Ա. Թարվերդյանը<sup>1</sup>։

Թագմակողմանի նախապատրաստությունից հետո, մարտի վերջին թուրքերը միաժամանակ երեք՝ Ասկերան—Շուշի խճուղու, Աղդամ—Վանք և Կարսալինար—Էրքեչ ուղղություններով սկսեցին հարձակումը<sup>2</sup>։

Թուրքերը կատաղի մարտեր ծավալեցին Ասկերանի ուղղությամբ։ Օրեցօր Ասկերանի ճակատում իրենց թափով և ուժգնությամբ կոփվները գերազանցում էին միմյանց։ Բազմաթիվ անհաջող հարձակումներից հետո հակառակորդը ապրիլի 3-ին ամբողջ ուժերով նետվեց գործի։ Հայ մարտիկները խրամատներում ու բարիկադների վրա շտեսնված սիրանքներ էին գործում։ Սակայն, կովկանամուլավ դիմումում անընդհատ անող գերազանց ուժերի դեմ, այն էլ միայն հրացաններով, և շունենալով բավարար քանակությամբ զենքնամթերք, պարզ է, երկար շեր կարող շարունակվել։ Ասկերանի պաշտպանության կազմակերպիչ Գալի Ղազարը անհուսալի ու անիմաստ համարելով քաղաքի հետագա պաշտպանությունը, որը կարող էր անտեղի բազմաթիվ զոհերի պատճառ դառնալ, հրամայում է Ասկերանը պաշտպանող զինվորներին թողնել բերդն ու խճուղին, իսկ ինքը մնում է կովի դաշտում մինչև վերջին զնդակը, որով և կտրվում է նրա հերոսական կյանքի թելը<sup>3</sup>։

Տիրելով Ասկերանին՝ ազրեցանցիները վերականգնեցին Շուշիի և Խանքենդի միջև երկար ժամանակ ընդհատված հաղորդակցությունը։ 1920 թ. ապրիլի 4-ին, այսինքն՝ Ասկերանի անկումից հետո, Ղարաբաղի զորամիավորումների ներկայացուցիչները Տոնավարդ զյուղում հրավիրեցին խորհրդակցություն, որին մասնակցում էին Ա. Թարվերդյանը, Կ. Աթայանը, Հ. Թումյանը, Ա. Ավետիսյանը,

1 ՀՀՊՊԿ, ֆ.314, ց.1, գ.34, թթ. 234—235, «Հայրենիք», 1923, Հոկտեմբեր, էջ 118—120։

2 «Нагорный Карабах в 1918—1923», с. 435.

3 ՀՀՊՊԿ, ֆ.314, ց.1, գ.34, թթ. 234—235, «Հայրենիք», 1923, Հոկտեմբեր, էջ 118—120։

Ա. Միքայելյանը և ուրիշներ: Խորհրդակցությունը ընդունեց կարևոր որոշումներ՝ գնդապետ Ա. Թարվերդյանին ճանաչել Ղարաբաղի բոլոր զինված ուժերի հրամանատար, շարունակել ինքնապաշտպանական կոփվները: Խորհրդակցությունից հետո լիազոր ներկայացուցիչները վերադառնում են իրենց տեղերը և զրադպում ճակատները ամրացնելու գործով: Ապրիլի 4-ին և 5-ին տիրում էր գաղար: Մի կողմը պատրաստվում էր նոր հարձակման, մյուսը՝ ինքնապաշտպանության:

Ապրիլի 6-ին թուրքերը Շուշի քաղաքից սկսում են գնդակոծել Շոշ և Քարին Տակ՝ գյուղերը:<sup>1</sup>

Ապրիլի 7-ին թշնամին շարժվեց դեպի Խանքենդ: Այստեղ հակառակորդը հանդիպեց զնդապետ Զ. Մեսյանի 400 զինվորից կազմը ված գորամասի հերոսական դիմադրությանը: Սակայն թուրքերի գերազանց ուժերը գրավեցին Խանքենդը և ուղղություն վեցցրին դեպի Հարավ՝ Կարյազինո: Ապրիլի 12-ին մուսավաթական բանակին հաջողվեց զրավել մի շարք հայկական զյուղեր և ընդհուպ մոտենալ Քեշիշյանդ և Սղնախ գյուղերին: Այստեղ նրանց առաջխաղացումը կասեցվեց:<sup>2</sup>

Դիզակի ուղմանակատում գործող հայկական ուժերը (մոտ 450 զինվոր), Հովակ Ստեփանյանի և նրա օգնական Սասունցի Մանուկի<sup>3</sup> հրամանատարությամբ պետք է լուծեին կարևոր խնդիր: Այդ զորքը պիտի առաջանար դեպի Զանգեզուր, զրավեր մուսուլմանների կարևոր ուղմակարական կետերը, կապ պահպաներ Զանգեզուրից արշավող հայկական զորամասերի հետ և զյուրացներ նրանց առաջընթացը: Զորամասը լուրջ հաջողությունների է հասնում: Հակառակորդին մի շարք մարտերում ծանր պարտության մատնելուց հետո, զորամասը մոտենում է Ղարաղլաղ զյուղին: Թշնամին որոշել էր

1 «Հայրենիք», 1923, Հոկտեմբեր, էջ 123:

2 «Հառաջ», 12 սեպտեմբերի 1920 թ.:

3 Սասունցի Մանուկը Զանգեզուրից ստրով, թաթարական զյուղերի միջով անցնում է Եղնային Ղարաբաղ և լծվում ժողովրդի ինքնապաշտպանության գործին: Ղարաբաղի ապատամբության ժամանակ նա Դիզակի հրամանատարի օգնականն էր, վերջում՝ Քիբար շրջանի հրամանատարը:

ամեն զնով պահել զյուղը, քանի որ այն գտնվում էր կարևոր նշանակություն ունեցող դիրքում՝ ընկած էր Խծարերդից Զանգեզուր տանող խճուղու վրա։ Աղբեկանը այստեղ կենտրոնացրել էր Բաքվից բերված ընտիր զորամասերը՝ տաճիկ սպաների զեկավարությամբ։ Երկու օր շարունակ զյուղի համար ծավալվեցին կատաղի կոփիներ։ Հայերը կովում էին աներեակայելի քաջությամբ, իսկ աղբեկանցիները պաշտպանվում էին համառորեն։ Զդիմանալով հայ զինվորների սրարշավ գրոհն՝ հակառակորդը մեծ զոհեր տալով, դիմեց փախուստի։ Տիրելով Ղարազջաղ զյուղին՝ հայկական ուժերը մեկը մյուսի հետեւ գրավեցին նաև մի շարք բնակավայրեր և ճանապարհ բացեցին դեպի Զանգեզուր։<sup>1</sup>

Այն բանից հետո, երբ բանկվեցին զարարադյան իրադարձությունները, հայերի վիճակը Ղարաբաղում, Գանձակում և աղբեկանարնակ վայրերում օրեցօր գառնում էր ավելի ծանր։ Գյուլիստանի և Նուխու գավառներում ավերվեցին 13 զյուղեր։ Գանձակի գավառում նույնպես ոչնչացվեցին մեծ թվով հայկական զյուղեր։ Բարձում հայերի զրությունը գարձավ ավելի ողքերգական։<sup>2</sup> Արխիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Ամեն օր ռազմաճակատից վիրավորներ են բերում Բաքու, որը ամբոխի տրամադրությունն ավելի է լարում հայերի դեմ։ Թե՛ քաղաքում և թե՛ գործարանային շրջաններում օրը ցերեկով հայերի սպանությունը սովորական երևութների շարքն է անցել»։<sup>3</sup> Այդ օրերին Բաքվում Հայաստանի դիվանագիտական մշտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը իր արտգործնախարարարությանը հայտնում էր, որ Աղբեկանի կառավարության հավաստումներին վստահել շի կարելի։ Եթե կառավարությունը անկեղծ ցանկություն էլ ունենա կասեցնելու հակահայկական շարժումը քաղաքում, հաղիվ թե կարողանա, որովհետև արյունարրու թուրք ամբոխը շափազանց սանձարձակ է դարձել։<sup>4</sup> Ամբոխի այս բացարձակ թշնամական վերաբերմունքին կարծես

1 ՀՀՊՊԿ, ֆ.314, ց.1, գ.34, թթ. 262—265։

2 Նույն արխիվ, ֆ.200, ց.1, գ.427, թթ.253—254։

3 Նույն տեղում, գ.563, թ.119։

4 Նույն տեղում։

ավելի ուժեղացնելու մի գործոն էլ ավելացավ: Բարու հասավ կամավորական բանակի Պետրովսկի զորամասը, գեներալ Դրոշենկոյի դեկավարությամբ, իր հետ բերելով մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք: Աղբբեջանի ձեռքն ընկավ 100 հրանոթ, ավելի քան 200 գնդացիր, մոտ 40000 հրացան, միլիոնավոր փամփուշտ, ավտոմեքենաներ, 32 տարրեր տեսակի ռազմանավ և ուրիշ ռազմա—ինժեներական սարքավորումներ: Հավաստի աղբյուրների վկայությամբ, այդ զենքի ու հանդերձանքի մեծ մասը Աղբբեջանի կառավարությունը նետեց Ղարաբաղի զեմ:<sup>1</sup>

Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կիզակետը դարձավ Շուշվա հայ ազգաբնակչության սպանդը: Այդ օրերին արցախահայության դահիճ Սուլթանովի զեկավարությամբ մուսավաթական բանակը և մահմեդական խուժանը Շուշիում կատարեցին սոսկալի ոճրագործություն՝ կրակի ու թնդանոթի բերան տալով Շուշվա հայ բնակչության մեծ մասին: Թաթարները պատրաստվում էին մեծ հանդիսավորությամբ նշել 1920 թ. նովրուգ բայրամը՝ ամանորք: Տանակատարությանը մասնակցելու անվան տակ (իրականում հայերին կոտորելու) Խանքենդից զորքը, հրամանատարական կազմով, բերվելու Շուշի, զորահանդեսի: Շուշի եկան նաև Աղդամի թուրք բեկերը,<sup>2</sup> ինչպես նաև Ղարաբաղի տարբեր շրջաններից տասնյակ հարյուրավոր մուսուլմաններ:

Խոսրով բեկ Սուլթանովը վագորոք խնամքով ամեն ինչ պատրաստել էր քաղաքի խաղաղ բնակչությանը բարբարոսաբար հոշոտելու համար: Նա սպասում էր հարմար պահի իր «քորենիներին» պատ արձակելու, որը և շուշացավ: Ի թիվս Ղարաբաղի մյուս շրջանների, Շուշվա հայությանը ևս կարդադրված էր մինչև մարտի 22-ը հոժարակամ զենքերը հանձնել: Ժամկետը լրանալուց հետո, մարտի 22-ի առավոտյան, Սուլթանովի հրամանով զինվորական պահակախմբերը սկսում են շրջել քաղաքի հայկական թաղամասը և խուզարկել բնակաբանները: Այդպիսի մի պահակախումբ, սպայի զինավորությամբ, ներս է խուժում մի հայ ընտանիք և պահանջում

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.427, ձաւ երկրորդ, թթ. 253—256:

2 Նոյն արխիվ, ֆ.278, ց.1, գ.14, թթ. 84—85.

Հանձնել զենքերը: Տաքարյուն հայ երիտասարդի ներկայությամբ թուրք սպան քստմնելի առաջարկություն է անում երիտասարդի գեղցիկ հարսին: Երիտասարդը հրազենով սպանում է թուրք սպային: Ասկյարները նույն բախտին են արժանացնում երիտասարդին, նրա հարսին, մորը, քրոջը և գոռում—գոշունով դուրս են թափվում, թաթար զինվորներին օգնության կանչում, թե հայերը կոտորում են թուրքերին: Այս դեպքը Սուլթանովը միտումնավոր վերագրում է նրան, թե իրը քաղաք է թափանցել հայկական մի ջոկատ և փորձել է զինաթափել ասկյարներին: Գաղաղած նահանգապետը կարգադրում է հիմնահատակ՝ կործանել Շուշիի հայկական թաղամասը: Մկանքց Շուշիա հայության նոր սպանդը: Արյան ծարավ թաթար զինվորը, թուրք ասկյարը և մահմեդական մոլեռանդ խուժանը խուժում են քաղաքի հայկական թաղամաս, հրդեհում քաղմաթիվ քնակելի տներ ու հասարակական շինություններ, կոտորում անզեն քնակլությանը: «Ամենուրեք կրակի բոցեր էին քարձրանում: Երեկոյան դեմ քաղաքի տեսարանը սոսկալի էր: Ամեն կողմից լսվում էին լացի ու աղմուկի ձայներ»,<sup>1</sup> — գրել է ականատեսներից մեկը:

Մուսուլմանական զորքը և բնակչությունը մի ամբողջ օր՝ մարտի 23-ին, արյան խրախճանք են կատարում քաղաքում: Հայ բնակչության մեծ մասը սրի է քաշվում՝ սպանվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, ծերեր և երեխաներ: Ոչ ստույգ տվյալներով, Շուշիում զոհվածների թիվը հասնում էր մոտ 8 հազարի:<sup>2</sup> Այդ օրերին Շուշիում զոհվեցին Ալեքսանդր Սատուրյանը (Բուրեն), Արցախի թեմի առաջնորդ Վահան Խափսկոպոսը, քժիշկ Յարամիջյանը, բանաստեղծներ Մ. Զանումյանը, Փիրզանյանը, ուսուցիչներ Թավրիզյանը, Տեր—Գարբիելյանը, զիտության ու մշակույթի այլ ներկայացուցիչներ:<sup>3</sup>

Մահից փրկված Շուշիա հայության բեկորները, թվով 5—6 հազար մարդ, մազապուրծ փախան Վարանդա՝ և Թիգակ:<sup>4</sup>

1 ՀՀՊՓԿԱ, ֆ.200, դ.1, գ.563, թ.67:

2 Նույն աեղում, գ.427, առաջին մաս, թ.179, երկրորդ մաս, թ.245, ՀՀՀԲԿՓԿԿԱ, ֆ.4033, ց.5, գ.461, թ.145:

3 Հ. Արքահամբյան, Երևան, աշխ., էջ 37:

4 ՀՀՀԲԿՓԿԿԱ, ֆ.4033, ց.5, գ.461, թ.145, «Հայոց», 20 ապրիլի 1920 թ.:

Քաղաքում մնացած հայերին թուրքերը քշում են թաթարական թաղամասը, զոկում երեխաներին, կանանց ու ծերունիներին, ոմանց էլ լցնում են բանտ:

Կոտորածին մասնակցած զինվորների ու կամավորների նամակները լրացուցիչ լուս են սփռում Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերի ու մահմեդականների ձեռքով կատարված ոճիրների վրա: Հայրը Բաքվում գտնվող որդուն (գրողն ըստ երևույթին Շուշնցի թուրք է) գրում է. «Տեսածդ էրմանիստանը այրված է, հինգ կամ տասը տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչև անգամ ավետարանը, խալիֆին: (եպիսկոպոսին. խոսքը Վահան Խալիսկոպոսի մասին է — Հ. Հ.), բոլոր մեծամեծ մարդկանց: Նշանավոր հայերին սպանելուց հետո գլուխները կտրած բազարներում պատմեցնել էին տալիս»<sup>1</sup> Քաղաքի հայկական թաղամասում թուրքերի կատարած թալանի ու կողոպուտի մասին նույն նամակագիրը նշում է, որ «այս կողմերում այլևս ոչ մի հայ չեք գտնի, և ոչ էլ այնպիսի թուրքի կարող եք հանդիպել, որ հարյուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպիսի մարդ կա, որ մեկ միլիոնից ավելի ապրանք է բերել ...: 10—15 տուն է մնացել, կառավարությունը շուգեց այրել, որպեսզի ասկյարները բնակվեն: Վաղաքը ավերակ դարձավ»<sup>2</sup> Ենի այլ նամակագիր վշտացած էր, որ հայերի կոտորածով և տների ու խանութների թալանով իրենք մի միլիոնի շափ կորուստ ունեն, որովհետև նրանց տված ապարիկները շեն կարող համարել»<sup>3</sup>

Այսպիսով, մարտ—ապրիլ ամիսներին մուսավաթական բանակը և մուսուլմանական մոլեռանդ խուժանը, թուրք սպաների հրամանատարությամբ, անհամար կոտորածներ ու ավերածություններ պատճառեցին Արցախ աշխարհին: Ավերվեցին ավելի քան երեք տասնյակ զյուղեր ու շեներ: Սպանվեցին հազարավոր խաղաղ բնակիչներ: Ըստ Ղարաբաղի Հայոց Աղքային խորհրդի կազմած վիճակագրության, կործանված զյուղերից ու շեներից մոտ 20 հազար

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.563, թթ. 163—164:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

Հափահաս և ավելի քան 4 հազար անշափահաս մարդ ապաստան գտան Վարանդայի, Դիզակի և մասամբ Զանգեզուրի գյուղերում:<sup>1</sup>

Ղարաբաղում տեղի ունեցող ամեն մի դեպք խորապես ցնցում և հուզում էր Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս ապրող հայությանը: Այսպես, 1920 թ. ապրիլի 4-ին Հայ Հեղափոխական Դաշնակցության Երևանի ներկայացուցչական խորհուրդը, լսելով Ս. Վրացյանի զեկուցումը Ղարաբաղի և Զանգեզուրի վերջին գեղքերի մասին, որոշեց բոլոր միջոցներով աջակցել կառավարությանը՝ ապահովելու համար Զանգեզուրի և Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը:<sup>2</sup> Ապրիլի 7-ին Երևանում ապրող դարձրացիների հայրենակցական միության նախաձեռնությամբ Հրավիրվեց ընդհանուր ժողով: Միության վարչության նախագահ Դավիթ Անանունը ժողովականներին տեղեկացրեց Ղարաբաղի արյունալի անցքերի մասին: Արտահայտվեցին շատերը: Ժողովականները կոչով դիմեցին հարևան ժողովուրդների դեմոկրատական կազմակերպություններին՝ խնդրանքով, որ նրանք գործի դնեն բոլոր միջոցները՝ սանձելու Ազրբեջանի կառավարությանը, վերջ տալու արցախահայության դեմ ուղղված վերջինիս բարբարոսություններին:<sup>3</sup>

Հայ ժողովրդի արցախյան հատվածի նկատմամբ Ազրբեջանի կազմակերպած վանդալիզմի դեմ բողոքի ձայն բարձրացրեց Հայաստանի կառավարությունը և վճռեց անհապաղ օգնության հասնել նրան: Նա դաշնակից պետությունների ներկայացուցիչներին հիմնավոր փաստերով ներկայացրեց Ղարաբաղում տիրող ընդհանուր վիճակը և խնդրեց գործնական քայլերի դիմել մուսուլմանների «մարդակեր երախը» փակելու համար: Միաժամանակ՝ Զանգեզուրում գտնվող հայկական զորամասերին կարգադրեց պատրաստվել արշավելու Ղարաբաղ:

Հատկանշական է, որ այդ օրերին Ազրբեջանի կառավարությունը, տաճիկների թելազրանքով, բազում կեղծ հեռագրեր ու գրություններ էր ուղարկում դաշնակից երկրների ներկայացուցիչներին և փորձում ապացուցել, որ Հայաստանի նախաձեռնությամբ ու ան-

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.69, «Հառաջ», 12 մայիսի 1920 թ.:

2 «Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:

3 «Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:

միջական դեկավարությամբ զարարաղիները ապստամբել են: <sup>1</sup>

Հուսարաններ այն հարցը, թե արդյո՞ք Զարարաղի ապստամբությունը կազմակերպվել էր Հայաստանի կողմից: Նախ նշենք, որ դա իսկապես ապստամբություն էր, սակայն բնավ ոչ Հայաստանի կողմից կազմակերպված: Իրականությունն այն է, որ Զարարաղում ապստամբության համար բոլոր պայմանները հասունացել էին: Աղրբեջանի կառավարության և նրա դրածո Սուլթանովի բիրտ ու դաժան քաղաքականության առավել խստացումը արցախահայությանը ոտքի հանեց պայքարի: Բարգում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը ապրիլի 15-ին, այսինքն՝ Զարարաղի հայունի դեպքերից մի քանի օր անց, երբ Աղրբեջանի արտգործնախարար Խան Խոյսկու հետ վերլուծում էին կատարված դեպքերը, խստորեն դատապարտում է Աղրբեջանին՝ Զարարաղի նկատմամբ ցուցաբերած ազրեսիվ քաղաքականության և հավակնությունների համար: «Եթե Զարարաղում ազրեսիվ քաղաքականություն չվարեիք, — ասում է Մ. Հարությունյանը, — այնտեղի հայ ժողովուրդը լոյալ կմնար և դուք հարկադրված չեիք լինի այժմ այնտեղ մեծ թվով զորքեր պահել»: <sup>2</sup> Մեկ այլ հանդիպման ժամանակ (ապրիլի 20), երբ խոսք է բացվում Զարարաղի ապստամբության մասին, նա Խան Խոյսկու երեսին է շպրտում ճշշմարտությունը, ասելով, որ Աղրբեջանի դեկավարների և Սուլթանովի վարած քաղաքականությունը մի նպատակ ունի՝ բնիկ ժողովրդին արմատախիլ անել իր պատմական բնօրրանից: Այդպիսի քաղաքականությունը ուրիշ հետևանքներ չեր կարող ունենալու: <sup>3</sup>

Զարարաղում ստեղծված հակաազրբեջանական մթնոլորտի և ժողովրդական ապստամբության մանրամասներն ավելի որոշակի արտահայտված են այն զեկուցման մեջ, որ վարչապետ Ալ. Խատիսյանը ընթերցել է պառամենուի նիստում: «1918 թ. նոյեմբերին Զանգեզուրում պարտություն կրելուց հետո Աղրբեջանի կառավարությունը նորից փորձ արեց զրավել Զարարաղը՝ նպատակ ունենալով

1 Տես՝ ՀՀՊԿԱ, ֆ.200, գ.2, գ.79, թթ. 14—15, գ.1, գ.427, մաս երկրորդ, թ.253:

2 Նույն տեղում, գ.1, գ.563, թթ.155—156:

3 Նույն արխիվ, ֆ.278, գ.1, գ.14, թթ.72—73:

կատարված փաստի առաջ դնել թէ Հայաստանի կառավարությանը, և թէ Փարիզի կոնֆերանսին, — ընդգծել է Հայոց վարչապետն ու ավելացրել, որ մարտի 22-ը, որ համարվում է Ղարաբաղի ապրա-տամբության օր, ես հերքում եմ Հայերի կողմից ապստամբություն չի եղել, այլ դա պատասխան է եղել Աղբեջանի կանոնավոր զորքե-րի հարձակման: Ժողովուրդը զգալով մոտալուս վտանգը, կանգնել է և եթե դա ապստամբություն չէ նրանց կողմից, ուրեմն, ավելի ճիշտ, նորմալ վերաբերմունք է կոտորածի դիմա:<sup>1</sup>

Ինչ վերաբերում է ապստամբությունը Հայաստանի կողմից կազմակերպված լինելու աղբեջանական կողմի վայրահաշոցներին, ապա դա բոլորովին հիմքից զուրկ է և հեռու ճշմարիտ լինելուց: Անդրադառնալով Ղարաբաղում աղբեջանցիների բռնարարքներին և վերլուծելով ազգային երկպառակությունների, զանգվածային հու-զումների, ազգամիջյան ընդհարումների պատճառները, Ալ. Խատիս-յանը բացատրել, թէ ինչպես Երևանում բնակվող դարաբաղցիները, շտանելով աղբեջանցիների բռնությունները Ղարաբաղի մեջ, Երե-վանից կամ ավորներ ուղարկեցին այնտեղ:

Հայաստանի կառավարությունը հավանություն չէր տա զինված ապստամբությանը Ղարաբաղի մեջ: Իմ կառավարությունը, — այ-նուհետև նշել է վարչապետը, — զգալով, որ ժողովրդական հուզում-ներ կարող են բռնկվել և լայփազանց ծանր հետևանքներ առաջ բե-րել՝ Զանգեզուրի իշխանություններին ուղղած առանձին հեռազրով կզգուշացներ ապստամբության վտանգի մասին:<sup>2</sup>

Մի քանի խոսք Ղարաբաղի նկատմամբ Հայաստանի կառա-վարության գիրքորոշման մասին, ընդհանրապես: Ինչպես արդեն նշել ենք, Հայ Հեղափոխական Դաշնակցության 9-րդ Քնդհանուր ժողովը (1919 թ. սեպտեմբեր—նոյեմբեր) ընդունեց մի շարք պատ-մական որոշումներ, այդ թվում և Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայ-աստանի հետ վերամիավորելու մասին:<sup>3</sup> Ընդհանուր ժողովը հանձ-նարարեց Բլուրոյին վճռական քայլեր կատարել վերոհիշյալ Հայ-

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.198, ց.1, դ.52, թթ. 49—52:

2 «Հայրենիք», մայիս, 1926, է, 51—52:

3 Թուրքն, Հայ յեղափոխականի մը լիշտակերը, Հ.7, էջ 245:

հական դավառները Հայաստանին միացնելու համար։ Սակայն, դաշնակցության Բյուրոն, սթափ ու սառնասրտորեն գնահատելով հակառակորդի ուժերը, որոշեց ավելի զգուշավոր քաղաքականություն վարել, այն է՝ Համբերել, նախապատրաստվել, այսինքն ժամանակավորապես ձեռնպահ մնալ Աղբբեջանի դեմ ուժային մեթոդներ գործադրելուց։ Բյուրոյի այս դիրքորոշումն էր պաշտպանում նաև կառավարությունը։<sup>1</sup>

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի կառավարությունը Ղարաբաղի հարցում վարում էր շափազանց զգուշավոր քաղաքականություն, խուսափում ուժային մեթոդների կիրառումից, հետևաբար, նրան մեղադրել Ղարաբաղի ապստամբության կազմակերպման և մասնակցության մեջ, մեղմ ասած, կեղծիք է և պատասխանատվությունից խույս տալու միջոց։

Թե ինչքան է եղել զինվորների թիվը, որոնք մասնակցել են պատերազմական գործողություններին Ղարաբաղի կողմից, դժվար է ասել Հավաստի աղբյուրների բացակայության պատճառով։ Ընդհանրապես, մոտավոր տվյալներով կարելի է ասել, որ Ղարաբաղը ուներ մինչև 30000 զինված տղամարդ, ինչպես նաև մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, որը ձեռք էր բերել 1918 թ. ճակատից նահանջող ռուս զինվորներից։ Դրսից եկել էին ևս ընդամենը 500 նախկին զարարադցիներ։<sup>2</sup>

Ապրիլի սկզբներին, ազրբեջանական զորքերի կողմից Շուշիի և արևելյան Զիվանշիրի մի քանի գյուղերի բնակչությանը կոտորելուց հետո միայն ապստամբները առանձին խմբերով մտան Շուշվաշրջան։<sup>3</sup> Ինչպես տեսնում ենք, զարարադյան իրադարձությունների նոռն շրջանում հայկական կանոնավոր զորք չի մասնակցել մարտական գործողություններին։ Մինչդեռ ազրբեջանական թերթերում կեզծ տեղեկություններ էին հրապարակվում, թե իրը Զանգեզուր—Ղարաբաղի զորքերի հրամանատար Դրոն Շուշիում հայերի կոտորածից հետո մտել է քաղաք և թուրքերի կոտորած սարքել, իր կա-

1 Թուրքեն, Հայ յեղափախականի մը իիշատակները, հ.7, էջ 245։

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.198, ց.1, գ.52, թիվ 51—52։

3 Նույն տեղում, թ.53։

նոնավոր զերքով ակտիվորեն մասնակցել Ղարաբաղի ապստամբությանը: Սա բացարձակապես իրականությանը չի համապատասխանում, քանի որ, երբ ապրիլի 3-ին Աղրբեջանի բանակը գրավեց Ասկերանը, Դրոն դժոնվում էր Երևանում:<sup>1</sup>

Արցախի հարցի բննարկում տեղի ունեցավ Թիֆլիսում Հրավիրված Անդրկովկասյան երեք հանրապետությունների կոնֆերանսում, որը բացվեց 1920 թ. ապրիլի 9-ին: Աղրբեջանի կողմից ներկա էին Գ. Բ. Աղանը, Օ. Վ. Կրիչինսկին, Ֆ. Բ. Վեքիլովը: Արտգործնախարար Խան Խոյսկին «Հիվանդության» պատճառով շժամանեց Թիֆլիս: Կոնֆերանսում Հայաստանը ներկայացնում էին Հ.Հ. Օհանջանյանը, Տ. Ա. Բեկպաղյանը, Մ. Ա. Խաչատրյանը: Վրաստանից մասնակցում էին Ե. Պ. Գեգեշկորին, Գ. Ս. Լորդիկավանիձեն և Գ. Օ. Մախարաձեն:<sup>2</sup>

Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչները պահանջեցին, որ նախքան մյուս հարցերի քննության առնելը, անդրադառնալ Ղարաբաղում և Զանգեզուրում պատերազմական գործողությունների դադարեցման հարցին: Աղրբեջանի պատվիրակությունը, օգարվելով կոնֆերանսին Խան Խոյսկու շմասնակցելու հանգամանքից, հայտարարեց, որ ինքը սկզբունքորեն գեմ չէ այդ առաջարկին, սակայն այդպիսի խնդիր գնելու և քննարկելու լիազորություն չի ստացել իր կառավարությունից: Իրականում Աղրբեջանի ներկայացուցիչները ցանկանում էին խուսափել հարցի քննարկումից, որպեսզի Ղարաբաղում և Զանգեզուրում իրենց գորքերը կարողանային անկաշշանդ գործել: Կոնֆերանսը Աղրբեջանի պատվիրակությունից խնդրեց շտապ կերպով դիմել իր կառավարությանը՝ այդպիսի լիազորություն ստանալու համար: Հաջորդ օրը՝ ապրիլի 10-ի նիստում աղրբեջանական կողմը հայտարարեց, որ արդեն ստացել է կառավարության պատասխանը, որով վերջինս համաձայնությունը է հայտնել կոնֆերանսում լսել պատերազմական գործողությունները դադարեցնելու միջոցների հարցը: Կոնֆերանսը ձեռնամուխ եղավ Ղարաբաղում և Զանգեզուրում հայ—մուսուլմանական արյունալի

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 436,

ՀՀՊԿ, ֆ.278, ց.1, գ.14, թթ.84—85:

2 ՀՀՊԿ, ֆ.200, ց.1, գ.411, թթ.56—57:

ընդհարումները դադարեցնելու հարցի քննարկմանը։ Արտահայտվելով այդ մասին, կորդկիպանիձեն արեց այսպիսի առաջարկներ։ 1) կոնֆերանսի անունից կոչ անել՝ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները, 2) կոնֆերանսի որոշման մասին տեղեկացնել Հայաստանի և Աղրբեջանի կառավարություններին, 3) ընտրել հանձնաժողով քննելու տեղի ունեցած անցքերը։ Հայկական կողմը պաշտպանում է այդ առաջարկները։ Աղրբեջանի ներկայացուցիչները սկզբունքորեն դեմ լինելով, միաժամանակ պահանջում են որոշման բանաձեռում նշել, որ պատերազմը մղվում է ոչ միայն Աղրբեջանում, այլև նրանից դուրս, օրինակ Հենց Հայաստանում։ Ուստի, պատվիրակության անունից Աղանդը պնդում է ավելացնել՝ դադարեցնել «ուսազմական գործողությունները այն տեղերում, ուր նրանք տեղի են ունենում»։ Աղանդի առաջարկությունը հիմնավորում է հետեւյալ կերպ։ Նկատի ունենալով, որ տեղի ունեցող ընդհարումներն առաջանում են ոչ թե աղրբեջանական ու Հայկական Հանրապետությունների հպատակների միջև, այլ հենց Հայերի ու մահմեդականների միջև, հետեւարար առաջարկում է բանաձեռում մատնանշել, որ խոսքը վերաբերում է Հայերի և «Անդրկովկասի սահմաններում մահմեդականների» միջև ընդհարումներին։ Այստեղից դժվար չէ կուհել, որ Աղրբեջանի ներկայացուցիչները փորձում էին հարցը տեղափոխել այլ հարթության վրա։ Իրականությունն այսպես դիմումայր շուր տալու նպատակը Հայաստանի Հանրապետությանը և ամրող հայ ժողովրդին պատերազմի մեջ մեղավոր ճանաչելու տեսնչն էր։ Ահա թե ինչու Հայաստանի պատվիրակությունը վճռականորեն առարկեց դրան և պահանջեց բանաձեռում կատարել այնպիսի ձևակերպում։ դադարեցնել ընդհարումները Ղարաբաղում, Ղաղախում, Նախիջևանում, Նուխիում, Օրդուրագում և առհասարակ այն վայրերում, ուր դրանք տեղի են ունենում։<sup>1</sup>

Երկար քննարկումից հետո կոնֆերանսը որոշեց. Առաջին, անմիջապես դադարեցնել բոլոր արյունալի ընդհարումները, որ տեղի էին ունենում Ղաղախում, Նախիջևանում, Օրդուրագում ու Ղարաբաղում։ Երկրորդ, կոնֆերանսը պնդում էր, որ Հայաստանի և

1 «Ժողովուրդ», 28 ապրիլի 1920 թ.։

Աղբեջանի կառավարությունները անմիջապես ամենավճռական միջոցառումները ձեռնարկեն, որպեսզի բացառվի այդ հանրապետությունների սահմաններում հայ ու մահմեդական աղքարնակշության ընդհարումների ամեն մի հնարավորություն։ Երրորդ, տրվալ որոշման մասին շտամպ կերպով տեղեկացնել Աղբեջանի և Հայաստանի կառավարություններին, որպեսզի ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ։<sup>1</sup>

Անդրկովկասի երեք հանրապետությունների կոնֆերանսը ապրիլի 12-ի նիստում կազմեց վեց հոգուց բաղկացած (յուրաքանչյուր հտնրապետությունից երկու ներկայացուցիչ) քննիչ հանձնաժողով, որը պետք է մեկներ Ղարաբաղ և տեղում իրականացներ կոնֆերանսի որոշումը՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ, ինչպես նաև բացահայտեր զինված բախումների պատճառները։<sup>2</sup>

Քննիչ հանձնաժողովը մեկնեց Ղարաբաղ, սակայն իր առարկելությունը չկատարած, հունիսի 2-ին վերադարձավ Բաքու։ Բաքվում հանձնաժողովի հայ անդամները հանդիպեցին Աղբեջանի կառավարության բարձրաստիճան ղեկավարության հետ և նրանց մի ավելորդ անգամ ևս հայտնեցին, որ Ղարաբաղի արյունոտ իրադարձությունների հիմնական պատճառը, նրա հայ աղքարնակշության նկատմամբ Աղբեջանի կենտրոնական իշխանության և նրա դրածո Խոսրով բնեկ Սուլթանովի բռնություններն են։ Հայաստանի ներկայացուցիչների համար միանգամայն պարզ էր, որ Բաքվի կառավարությունը լիովին հավանություն է տալիս Սուլթանովի գաղանություններին և խրախուսում ու աջակցում է նրան։ Բաքվում հայ պատվիրակներին հասկացնել տվեցին, որ Աղբեջանը ցանկանում է զինաթափ անել Ղարաբաղի հայությանը և շի կարող թույլ տալ ջարդերից աղատված հայերին վերադառնալ իրենց գյուղերը։ Այդ վայրերը պետք է տրամադրվեին թուրքերին։<sup>3</sup> Ուշագրավ է, որ

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.427, երկրորդ մաս, թթ.253—256, «Ժողովուրդ», 28 ապրիլի 1920 թ.։

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.427, երկրորդ մաս, թթ. 253—254

3 «Մշակ», 13 հունիսի 1920 թ.։

Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի ներկայացուցչությունները ևս  
ցանկացան Ղարաբաղ ուղարկել Հատուկ հանձնաժողով, որը պետք  
է հետաքններ արյունալի դեպքերի պատճառները և անհամեշտ  
միջոցներ ձեռնարկեր, սակայն դրանից ևս որևէ բան շատացվեց:  
Հանձնաժողովի կազմում էին Ֆրանսիայի ներկայացուցիչ Դյու-  
ռուլը, Անգլիայի ներկայացուցիչ՝ Դրեսսը և Իտալիայի ներկայացու-  
ցիչ՝ Ալբիցին: Ազրբեջանի արտգործնախարար Խան Խոյսկին հայ-  
տարարեց, որ հանձնաժողովին թույլ չի տա մեկնել Ղարաբաղ, մին-  
չև նաապես շրանակցի Ռուբարոպի հետ: Պարզ է, որ բանակ-  
ցությունները տեղի չէին ունենա, որովհետեւ ինչպես հայտնի է,  
«հիվանդության» պատճառով Խան Խոյսկին Թիֆլիս չէր ժամանել:  
Բոլոր հիմքերը կար կարծելու, որ հանձնաժողովը չէր գնա Ղարա-  
բաղ: Այդ հանգամանքը նկատի ունենալով, Ֆրանսիայի կոմիսարը  
Թիֆլիսից հեռագրեց Փարիզ և խնդրեց, որպեսզի Ղարաբաղի հարցի  
վերաբերյալ գերազույն խորհրդի կողմից անմիջականորեն ընդուն-  
վեն ամենավճռական միջոցներ: <sup>1</sup>

Հայաստանի կառավարությունը սպառել էր Ղարաբաղի հարցի  
խաղաղ կարգավորման բոլոր հնարավորությունները: Այլևս հապա-  
ղելը կլիներ դավաճանություն Ղարաբաղի հայության հանդեպ:

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.427, երկրորդ մաս, թթ. 253—256:

### Յ. Հայկական գորամասերի մուտքը Ղարաբաղ

Հայաստանի կառավարությունը վճռեց զինված օդնության համեմ Արցախի արյունաքամ եղած ժողովրդին։ Հայոց կառավարության կարգադրությամբ 1920 թ. ապրիլի 14-ին<sup>1</sup> Զանգեզուրի կողմից Արցախի Վարանդա գավառ մտան Դրոյի գորամասերը<sup>2</sup> Դրոյի գորակայանը հաստատվեց Սարուշեն գյուղում<sup>3</sup> Ապրիլի 16-ին նա կոչով դիմեց Ղարաբաղի հայ աղգարնակշությանը. «Ես մտա Ղարաբաղ ապրիլի 14-ին, այն ժամանակ, երբ արդեն Հրդեհը սկսված էր, և երբ բավական հայ գյուղեր ավեր մատնված էին թշնամու կողմից, և երբ Ղարաբաղի գյուղացիությունը հերոսարար դիմագրելուց հետո, նորից մնացել էր իր դիրքերում, կուրծքը դեմ տված թշնամու զնդակներին։ Դու պիտի ըմբռնես, Ղարաբաղի հայ ժողովուրդ, որ Ազգեցանի ծրագիրն է վերացնել հայ բնակչությանը, շարունակել տաճկական փաշաների որոշումը՝ տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Զանգեզուրը և ունչացնել Հայաստանի Հանրապետությունն ու այսպիսով վերացնել մահմեդական աշխարհի միջև ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը։

Ես եկել եմ ձեր մեջ այն խոր համոզումով և հաստատ որոշումով, որ հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորների հետ, պետք է հաղթանակենք թշնամուն։ Ես վճռել եմ մնալ ձեր մեջ, կովել ձեզ հետ միասին և ազատություն ու հաղթանակ տոնել այստեղ։ Հիշեցեք, որ պետք է միայն մի քանի հարյուր զո՞յ վճռականապես փրկելու Ղարաբաղը։

Այսօր մենք բոլորս, — ասում է դաշնակցության երեկի այրը, — ձեզ հետ միասին ձեռք—ձեռքի տված, պիտի շարունակենք կոհիվը մինչև վերջնական հաղթանակ։

Ամուր կաց, Ղարաբաղի հայ գյուղացիություն, և միշտ դիրքերի մեջ ու պատրաստ՝ թշնամուն հետ շպրտելու և մեր ազատությունը

1 Ազրյուրներում տարրեր օրեր են նշված Դրոյի Ղարաբաղ մտնելու անթիվ ապրիլի 13 և 17։ Տես՝ Մ. Վրացյան, նշվ. աշխ., էջ 373։

2 Քեւան 1919 թ. Հայաստանի կառավարությունը Դրոյին նշանակել էր Զանգեզուրի և Արցախի ընդհանուր հրամանատար։

3 Կա այլ տարբերակ՝ Դրոյն նոտագայր է դարձել Վարանդայի Ղարաբուլախ գյուղը։ Տես՝ Բլուրարյան, նշվ. աշխ., էջ 88։

ձեռք բերելու։<sup>1</sup> Այս երկարաշունչ և ոգեշնչող մեջը երուժամությունը է, որ հայկական զորամասերը Ղարաբաղ են մտել իսկապես այն բանից հետո, երբ ապստամբության հրդեհը տարածվել էր ողջ Արցախ աշխարհում, որ հայկական զորամասերի Արցախ մրտնելը, բնական անհրաժեշտությունից բացի, թելադրված էր նաև Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյությանը սպառնացող վրանգը կանխելու անհրաժեշտությամբ։

Դրոյի Ղարաբաղ մտնելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց գավառի բոլոր շրջաններում։ Սարուշեն, Դրոյի մոտ պատգամավորություններ էին գալիս նոյնիսկ ամենաճեռավոր շրջաններից և բոլորն էլ մի բան էին խնդրում։ «մենք պատրաստ ենք լսելու ձեզ, հրամայեցեք ինչ կամենում եք, մենք ուրախությամբ կկատարենք, մենք պատրաստ ենք կովելու մինչև վերջին շունչը»։<sup>2</sup> Հայկական զորամասը, լեզենդար Դրոյի զիխավորությամբ, 3—4 օրվա ընթացքում Արցախի հողը ազատագրեց թշնամուց։ Արցախը վերամիավորվեց մայր Հայաստանի հետ։ Սովորանովը շամարձակվեց դիմադրություն ցույց տալ Հայաստանի Հանրապետության զորամասերին և իր զինված կազմավորումներով պատսպարվեց շրջափակման մեջ գտնվող Շուշիում։ Ի դեպ, Շուշին և Խանքենդը շրջապատվել էին այնպես, որ ոչ մի կապ չունեին դրսի աշխարհի հետ։ Շուշիում պաշարված թուրքերը Աղդամի հետ իրենց կապը պահպանում էին գիշերները, գույնզգույն լապտերների ու զանազան ազգանշանների միջոցով։<sup>3</sup> Արցախում Դրոյին սպասվում էին լարված օրեր։ Այլևս անկարելի էր երկիրը կառավարել անիշխանության պայմաններում։ Այնպես որ, Արցախը Հայաստանի Հանրապետության անրաժան մաս հռչակելը և համահայկական կառավարության ենթակայության ներքո Արցախի տեղական մարմինների ստեղծումը դարձավ ընական անհրաժեշտություն։ Կազմվեց Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն, որի կազմի մեջ մտան տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ։ Ղարաբաղի ընդհանուր հրամանատար Դրոյի հրամանով նշանակվեցին կոմիսար-

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.252, գ.1, գ.6, թ.4:

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.314, գ.1, գ.34, թթ. 267—268:

3 Նույն տեղում, թթ. 270—274։

ներ, որոնք կոչված էին կազմակերպելու Ղարաբաղի աշխատավորության արդար պայքարը՝ մուսավաթական ոճրագործ կառավարության ստրկացնող լժի գեմ: 1920 թ. ապրիլի 18-ին Ներքին Քաղաքարդ գյուղում բացվեց Դիզակի և Վարանդայի հայ աղքարնակշության ներկայացուցիչների ժողովը՝ Արշավիր Քամալյանի նախագահությամբ: Ղարաբաղում տիրող ընդհանուր իրավիճակի մասին զեկուցումով հանդես եկավ Արսեն Հովհաննիսյանը: Այնուհետև լսվեցին ներքին գործերի կոմիսար Ասատուր Ավետիսյանի, պարենի մատակարարման ընդհանուր կառավարիչ Խաչատուր Մելքոնյանի, աշխատանքի և երկրագործության հարցերի կառավարիչ Արշավիր Քամալյանի, Վարանդայի և Դիզակի բժշկասանիտարական գործերի կառավարիչ Լյուդվիգ Տեր—Գրիգորյանի զեկուցումները:

Ժողովի եղրափակիչ նիստին մասնակցեց և ընդարձակ ճառով հանդես եկավ Դրոն: Նա կոչ արեց նեցուկ կանգնել նորաստեղծ կառավարությանը և անել հնարավոր ամեն ինչ, թիկունքը կարգի բերելու ու ամրապնդելու համար:

Ժողովից հետո ընտրվեցին երկու նոր կոմիսարներ՝ մեկը պարենավորման, մյուսը՝ փախստականների գործերի գծով:

Զանգեզուր—Ղարաբաղի զինված ուժերի հրամանատար Դրոյի հրավերով կայացած Վարանդայի և Դիզակի հայ աղքարնակշության ներկայացուցիչների ժողովը, լսելով կառավարիչների զեկուցումները որոշեց՝

1. Ընդունել հրամանատարի կողմից նշանակված կառավարիչների գաղըքը և կազմակերպական տվյալ ձեզ,
2. Բոլոր միջոցներով համագործակցել հրամանատարի և նրա նշանակած կառավարիչների հետ, ճակատում հաղթանակ տանելու և Սիկունքում կարգ ու կանոն հաստատելու համար:<sup>1</sup>

Ղարաբաղի ժամանակավոր կառավարության ստեղծումով, նրա աշխատավորության պայքարը ձեռք բերեց ավելի լուրջ ու կազմակերպված բնույթ: Ստեղծվեց բանակի ընդհանուր հրամանատարություն՝ Դրոյի զինավորությամբ: Ղարաբաղի և Զանգեզուրի միջև սկսվեց ազատ հաղորդակցություն: Կազմակերպվեց սայլերի գու-

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 425—427.

մակ, որի միջոցով Զանգեզուրից և այլ վայրերից շարունակարար գննք, զինամթերք ու պարեն էր հասցվում Ղարաբաղ:

Ազրբեջանին սահմանակից Հայկական գյուղերում տեղակայվեցին զորագնդեր՝ ապահովելու ժողովրդի անվտանգությունը թշնամու հարձակումից: Բոլոր ճակատներն ու ռազմավարական նշանակության բնակավայրերը միացվեցին Հեռախոսային գծերով:<sup>1</sup>

1920 թ. ապրիլի 23-ին Ներքին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ ժամանակավոր կառավարության անդրանիկ նիստը, որը վարում էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիական մասի ներկայացուցիչ Արտեն Միքայելյանը: Նիստի օրակարգում դրված էր երկու հարց: Առաջին: Հայաստանի կառավարությունից Գրոյի անոնք ստացված հեռագիրն էր, որով առաջարկվում էր ընտրել ներկայացուցիչներ Թիֆլիսում կայանալիք Անդրկովկասյան հանրապետությունների կողմից բանական մասնակցելու համար: Մյուսը՝ Ղարաբաղի կողմնորոշման հարցը: Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ, նիստը ընտրեց երեք հոգուց բաղկացած պատվիրակություն: Արցախահայության կողմնորոշման հարցի կապակցությամբ բոլոր ելույթ ունեցողները՝ բժիշկ Տեր—Գրիգորյանը, Կիրակոսյանը, Արշ. Քամալյանը, Նիկ. Խաչիանյանը, Աս. Շահնազարյանը, Աստ. Ավետիսյանը և ուրիշներ, արտահայտելով ժողովրդի միասնական կամքը, պաշտպանեցին ինոնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորվելու գաղափարը,<sup>2</sup> որի արտահայտությունը հանդիսացավ նիստի մասնակիցների կողմից միաձայն ընդունված բանաձիր: «Ղարաբաղի հայ ժողովուրդը 7-րդ համազումարում կայացված համաձայնությունը Ազրբեջանի կողմից խախտրված համարելով, երբեք ոչ մի պայմանով հնարավոր չի համարում գտնվել Ազրբեջանի սահմաններում, նա պետք է միանա ընդհանուր հայությանը՝ կազմելով Հայաստանի Հանրապետության անրաժան մասը: Իսկ եթե քաղաքական հանգամանքները կստիպեն առայժմ հայտարարությունը շանել, այն ժամանակ Ղարաբաղը և Զանգեզուրն իրենց միանգամայն անջատ համարելով Ազրբեջանից, հայկական կառավարության համաձայնությամբ կմշակի կա-

1 Տե՛ս ՀՀՊԿԱ, ֆ.314, գ.1, պ.34, թթ. 270—273:

2 ՀՀՀՔԿՊԿԱ, ֆ.4033, գ.5, պ.498, թթ. 2—6:

ուավարության այլ ձևում՝<sup>1</sup>

Նիստում ընթերցվեց Դրոյի հրամանը զինակոչ Հայտարարելու մասին, որին կառավարությունը տվեց իր համաձայնությունը: Վարանդայում, և Դիզակում 21—25 տարեկան երիտասարդության զորահավաք անցկացվեց: Շնորհիվ զորահավաքի Դրոյի բանակի անձնակազմի թիվը կտրուկ ավելացավ: Նրա զրոշի տակ արդեն կռվում էին 3000 զինվորներ ու կամավորներ:

Ղարաբաղի Հասնում նաև նժդեհու (Գարեգին Տեր—Հարությունյան), Կապանի իր զորամասով և տեղավորվում Դիզակի շրջանում:

Ղարաբաղի նորաստեղծ ժամանակավոր կառավարությունը շարունակում էր հաստատվել Արցախի բոլոր շրջաններում: Ապրիլի 24-ին Խաչեն—Ջիվանշիր ուղարկվեցին գնդապետ Զ. Մեսյանը և Գ. Ղարաբյանը՝ կազմակերպելու համար զինվորական և քաղաքացիական իշխանություններ:<sup>2</sup>

Արցախահայության քաղաքական կյանքում վճռորոշ նշանակություն ունեցավ 9-րդ համագումարը: Այն հրավիրվեց 1920 թ. ապրիլի 25-ին<sup>3</sup> Վարանդայի Թաղավարդ գյուղում և տևեց մինչև ապրիլի 29-ը: Համագումարը միաձայն ընդունեց և հոչակեց հետևյալ որոշումը.

1. Զեղյալ հայտարարել արցախահայության 7-րդ համագումարի անունից Աղրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը, ենելով այն բանից, որ այն խախտվել է Աղրբեջանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպված հարձակմամբ:

2. Հոշակել կեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս:

3. Խոդրել Հայաստանի Հանրապետության Մոսկվայում գտնվող պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը:<sup>4</sup>

1 Նույն տեղում:

2 «Հայրենիք», Հակոեմը երբ, 1923, էջ 124:

3 Հ. Արքահամբանը համագումարի բացման օր է համարում ապրիլի 25-ը: Տես՝ Հ. Արքահամբան, նշվ. աշխ., էջ 39:

4 Հ. Արքահամբան, նշվ. աշխ., էջ 98:

Կովկասյան Հանրապետությունների Թիֆլիսում կայանալիք կոնֆերանսին մասնակցելու և Ղարաբաղի խնդիրը պաշտպանելու համար, 9-րդ Համագումարը ընտրեց պատվիրակություն, որի կազմում էին Ասլան Շահնազարյանը, Ներսես Նասիբյանը և Դավիթ Տեր—Դանիելյանը:<sup>1</sup> Ղարաբաղի ժամանակավոր կառավարության նախագահը պաշտոնապես դիմեց Հայաստանի կառավարությանը՝ պատգամավորությանը ցույց տալ 50 հազար ռուբլու օգնություն:<sup>2</sup>

Այդ օրերին Ղարաբաղի ժամանակավոր կառավարության կողման համագումարներ և ժողովներ էին տեղի ունենում Արցախի գավառներում, գավառակներում և գյուղերում։ Ժողովրդի ներկայացուցիչները միաձայն որոշումներ էին կայացնում՝ ընդունել Հայաստանի Հանրապետության կողմնորոշումը և ո՞չ մի դեպքում, և ո՞չ մի պայմանով Աղրբեջանի կառավարությունը։<sup>3</sup> Ժամանակավոր կառավարությունը որոշում է Արցախը ենթարկել Զանգեզությանը, այնպես, որ Արցախն ու Զանգեզուրը միասին կազմեն Հայաստանի Հանրապետության մի մասը։<sup>4</sup>

Այսպիսով, ամբողջ շարադրանքից բխում է, որ.

ա) Ղարաբաղը և Զանգեզուրը Աղրբեջանին բռնությամբ միակցելը եղել է Օսմանյան Թուրքիայի, Անտանտի և մուսավաթական Աղրբեջանի քաղաքաբեկանությունը։

բ) Ղարաբաղի և Զանգեզուրի աշխատավոր պյուղացիությունն իր ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար անհավասար գոյամարտ է մղել ինչպես թուրք—թաթարական դալթիշների, այնպես էլ նրանց զինակցած բրիտանական դալութարարների դեմ։

գ) 1918—1920 թվականներին կեռնային Ղարաբաղի Հայությունը գոյատեսում էր ազատ, անկախ ու ինքնուրույն կյանքով, գլուխ շխոնարհնելով Կովկասի թուրքերի առջև, որոնք մերթ տաճիկ շարդարների, մերթ անդիտական զավթիչների հետ ձգտել են բռնազավթել Արցախը։

1 ՀՀՀՔԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.461, թ.144։

2 Նույն տեղում։

3 Հ. Արքահամբակ, նշվ. աշխ., էջ 39—40։

4 Նույն տեղում, էջ 40։

## ԳԼՈՒԽ ՎԵՅՏԵՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵԶԱՆԻ  
ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍՍԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՈՒՄ

### 1. Խորհրդային կարգերի մուտքը Ղարաբաղ

1920 թ. ապրիլի 28-ին Ազրբեջանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Բարձրի բոլշևիկյան հեղաշրջումից հետո ռուսական կարմիր բանակի գորամասերը մոտեցան Արցախի սահմաններին: Նախկին մուսավաթական գործիչներից շատերը, այդ թվում և արցախահայության գահին Սուլթանովը շատ արագ մաշկափոխվեցին, հայտարարեցին իրենց բոլշևիկներ.և կրկին հայտնվեցին ալիքի կատարին:

Ազրբեջանի խորհրդայնացումը և խորհրդային իշխանության հետ Արցախի հայ և ազրբեջանցի բոլշևիկների համագործակցությունը փոխեցին իրադարձությունների ընթացքը՝ գավառը ընկնելու էր Ազրբեջանի ազգեցության տակ:

Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացումը դարձել էր օրերի հարց: Ղարաբաղում վիճակը ապակայունացնելու, Հայաստանի կառավարությանը և գաշնակցական կուսակցությանը վարկարեկելու ու հեղինակազրկելու միտումով, Ռուսաստանի կոմոնիստական (բոլշևիկների) կուսակցության կովկասի երկրային կոմիտեն սագրիչ կողով դիմեց Լեռնային Ղարաբաղի բնակչությանը: «Դաշնակցականները ուղարկել են Ղարաբաղ ահազին գումարներ կամավորական խմբեր կազմելու համար, որոնց զիսին կանգնած են տեղական դաշնակցականները: Ընկեր բանվորներ և գյուղացիներ, հզոր Խորհրդային Ռուսաստանի անունից ... զգուշացնում ենք ձեզ. մի թույլ տվեք, որ դավաճան դաշնակցականները զցեն ձեզ այդ արյունուտ գարշելի գործի մեջ»:<sup>1</sup> Բարձրի բոլշևիկյան հեղաշրջման հաջորդօրը, այսինքն՝ ապրիլի 30-ին «կարմիր դիմակ» հագած Սուլթանովը Արցախի բոլոր դավառապետներին հղեց ժանուցագիր այն

1 ՀՀՀՔԿՓԿՊԱ, ֆ.1, ց.1, գ.3, լ.3:

մասին, որ ապրիլի 28-ին Աղբբեջանը հոշակվել է անկախ խորհրդագիրին հանրապետություն։ Այդ կապակցությամբ նա պահանջեց գավառապետերից բնակչությանը տեղյակ պահել այդ մասին և դրա առիթով կազմակերպել հանդիսավոր միտինգներ։ Դեներալ նահանգապետը խստորեն պատվիրեց գավառապետերին, ձեռք առնել բոլոր միջոցները տեղերում կարգ ու կանոն պահպանելու համար։ Այսուհետեւ, խոսելով բնակչության շրջանում անախորժելույթների (ինքնագործունեություն, անարխիա, անկարգություն և այլն) հետաքրքր ծագման մասին, Սուլթանովը խստորեն զգուշացրեց, որ դա կդիտվի որպես մարտահրավեր Աղբբեջանի խորհրդային իշխանության դեմ և կպատճվի ուղմահեղափոխական օրենքների ամբողջ խստությամբ<sup>1</sup>.

Այս անգամ արդեն բոլշևիկների «կառքին լծված» Սուլթանովը սկսում է «կոմունիստական սերմեր» շաղ տալ Արցախ աշխարհում։ Ապրիլի 29-ին և 30-ին նրա նախաձեռնությամբ հեղկումներ ստեղծվեցին Ղարաբաղի մի շարք վայրերում՝ Շուշիում, Կարյագինոյում, Ասկերանում և այլուր։ Ապրիլի 29-ին ստեղծվեց Ղարաբաղի միացյալ հեղկոմ, որի նախագահ հոշակվեց Խոսրովի քեկ Սուլթանովը,<sup>2</sup> ինչ վերաբերմունք ունեին Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը Արցախում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների նկատմամբ։

Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը Գրաստամետ Կանայանի ղեկավարությամբ հետևողական ու անզիջում պայքար էր մղում երկրի առջև կանգնած խնդիրները բնակչության կամքին համապատասխան լուծելու համար։ Այդ նպատակով առաջ էին քաշվում հարցի լուծման գանազան տարրերակներ, որոնց վերջնական պատասխանը մեկն էր՝ արցախահայությունը պետք է միանա բնդհանուր հայությանը՝ կազմելով Հայաստանի Հանրապետության անդաման մասը<sup>3</sup>.

1920 թ. մայիսի 3-ին Ղարաբաղի ժամանակավոր կառավարու-

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 445—446.

2 ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.581, թ.57.

3 ՀՀՀԿՓԿՊԱ, ֆ.4033, գ.5, գ.498, թթ. 9—10.

թլունը քննարկեց Ղարաբաղի և Զանգեզուրի փոխարքերության հարցը, որը երկուստեք մեղադրանքի առարկա էր դարձել: Ղարաբաղցիները զանգեզուրցիներին անհիմն կերպով մեղադրում էին պասիվության մեջ, իսկ զանգեզուրցիները՝ զարարադցիներին՝ դավաճանության մեջ: Հարցի համակողմանի քննարկումից հետո, նիստը որոշեց Ղարաբաղը հնթարկել Զանգեզուրի նահանգապետությանը և այդպիսով՝ Արցախն ու Զանգեզուրը միասին կազմեն Հայստանի Հանրապետության անրաժան մասը:<sup>1</sup> Սակայն, ինչպես կտեսնենք, Խորհրդային Ադրբեջանը, ուստական դենքի օգնությամբ, ձախողեց այդ ծրագրի իրականացումը:

Ինչ վերաբերում է Հայստանի Հանրապետության կառավարության գիրքին, ապա նա հնարավորություն շուներ զինուժով օգնություն ցույց տալ, քանի որ հայկական բանակը ներքաշվել էր քեմալական թուրքիայի պարտադրած պատերազմի մեջ: Այս ժանր իրողությունը փաստեց նաև Հայստանի Հանրապետության ներկայացուցիչ Հակոբ Տեր—Հակոբյանը մայսի 2-ին Սարուշենում կայացած Ղարաբաղի ժամանակավոր կառավարության նիստում, ասելով, որ «Երկու ճակատի վրա մենք շենք կարող կռվել, որովհետեւ մեր ամբողջ ուժերը պետք է կենտրոնացնենք տաճիկների դեմ: Ղարաբաղին մենք կօգնենք ոչ թե կենդանի ուժերով, այլ ուսումնամթերքով և դրամով»:<sup>2</sup> 1920 թ. մայիսի 5-ին Սովորականությանու կողմանը, «կոմունիստարար» դիմեց կեռնալին Ղարաբաղի գյուղացիությանը: Նախկին մուսավաթականը հայ և մուսուլման քնակչությանը կոչ է անում հաշտ ու խաղաղ ապրել: Հետաքրքիր են նրա գատողությունները Արցախ աշխարհում և Ադրբեջանի հայաշատ վայրերում, ազգամիջյան հողի վրա հայկական ջարդերի մասին: Ըստ Սովորականության՝ դրա մեղավորը եղել են դաշնակները և մուսավաթականները (կարծես ինքը նախկին մուսավաթիստը, 1919 թ. հունվարից սկսած Ղարաբաղի հայ ազգարնակշության ջարդերի հրահրիշն ու կազմակերպիչը շէր. այդ մասին ընթերցողը լավ դիտի):

1 ՀՀՀԹԿՓԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.498, թթ. 14—16:

2 նույն անդում, թթ. 9—10:

Մենք նորից հայտնվել ենք Հին տաշտակի առջև: Նորից զոհեր, նորից տանջանք ու հառաջանք: Այն պահին, երբ թուսաստանում բռնկված հրդեհը լույս սփռեց ամբողջ աշխարհի վրա, Արարատյան և մուսուլմանական կառավարությունները թատերաբեմ հանեցին Ղարաբաղի հարցը, որը բազում տառապանքներ պատճառեց ժողովուրդներին, — զրում էր Սուլթանովը: Խիզեր կորցրած և հոգին բուռն առած, նա շարունակում է իր քարոզությունը: «Հիմա, երբ Աղրբեջանում հաստատվել են խորհրդային կարգեր, դիմում եմ ձեզ համատեղ պայքարել դաշնակցության և Անտանտի դեմ: Բավական է կրեք դաշնակցության լուծը, ժամն է սթափեցնել ձեզ, միթե դուք անձամբ չեք տեսել, որ բոլոր արյունալի պատերազմները կազմակերպել են դաշնակները»:<sup>1</sup>

Սուլթանովի հեղկոմի նախագահ դառնալը, ինչպես նաև նրա կոչերը ժանր տպավորություն գործեցին Արցախի հայության վրա: Նախկին մուսավաթականի ու Օսմանյան Թուրքիայի հավատարիմ ծառայի մաշկափոխությունը բոլորին ի տես դարձնելու նպատակով, 1920 թ. մայիսի 6-7-ին Լեռնային Ղարաբաղի գյուղացիության պաշտպանության կոմիտեն, մարզի աշխատավորության անունից հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին, պատճենը՝ Աղրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովին: Հեռագրում ասված էր, որ Հայ աշխատավոր գյուղացիությունը լիովին ողջունում է արյունահեղությանը վերջ տալու և խաղաղ կյանքին անցնելու վերաբերյալ Ղարաբաղի հեղկոմի կոչը, որը սակայն վստահություն չի ներշնչում: «Վստահություն չկա, քանի որ Ղարաբաղի 360 հազար գյուղացիությունը ներկայում է Հարկագրված էլինել մարտադիրքերում, որովհետև Շուշիի հեղկոմից ժանուցագիրը նա ստացել է այն պահին, երբ զնդացիրների ու հրանոթների որոտը շարունակում է ոչնչացնել խաղաղ Հայ բնակչությանը և ընդհանուր աղետի մեղավորները շեն ենթարկվել պատասխանատվության, երբ խանական—քեկական կառավարության ներկայացուցիչ Սուլթանովը Շուշիում ծագրում է զերության մեջ գտնվող կանանց ու երեխաներին, իսկ թուրքական իմակերիալիզմի գլխավորությամբ նորի փաշան Զեբրայիլում պատ-

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1. գ.561, թ.54:

րաստում է նոր աղետ հայ աշխատավորության նկատմամբ։ Շուշիի հեղկոմի առաջարկությանը մենք շենք հավատում»։<sup>1</sup> Հեռադրի վերջում համառոտ շարադրված է Ազրբեջանի գևմ արցախահայության պայքարի պատմությունը և Խորհրդային Ազրբեջանի նկատմամբ նրա շեշտված դիրքորոշումը։ «Ղարաբաղի 360 հազար հայ գյուղացիությունը երեք տարի շարունակ պայքարել է թուրքական ռեակցիայի և խան—բեկական Ազրբեջանի հանրապետության դեմ։ Կրկնապատկված եռանդով նա կշարունակի պայքարը ռեակցիայի դեմ, քանի դեռ Խորհրդային Ռուսաստանի հեղափոխության հավատարիմ զավակները շեն մտել Լեռնային Ղարաբաղի սահմանները»։<sup>2</sup>

Հեռագիրը նոր «Հիասթափություն» պատճառեց Ազրբեջանի կառավարող շրջաններին։ Նրանք մի ավելորդ անգամ համոզվեցին, որ երբեք և ոչ մի պայմանով հնարավոր չէ բնկճել արցախցությունը ոգին ու նրա անկոտրում կամքը։ Նարիմանովի կառավարությունը ցանկացավ ճնշում գործադրել Հայաստանի Հանրապետության վրա։

Մայիսի 8-ին Բաքվից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի անունով ստացվեց ուղղիութեազիր։ Ազրբեջանի կառավարությունը կտրուկ պահանջում էր հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղի սահմաններից։<sup>3</sup>

Մինչև Հայաստանի կառավարությունը ուղիներ էր որոնում վիճահարույց հարցերի խաղաղ կարգավորման համար, Շուշիի և Զանգեզուրի շրջաններում հայ—մուսավաթական կոտորածները կանխելու պատրվակի տակ 1920 թ. մայիսի 11-ին, Կովկասյան ճակատի հրամանատարության հրամանով, 11-րդ կարմիր բանակի ձախաթիւյան զորամասերը շարժվեցին Նախիջևան—Օրդուրադ—Շուշիի շրջաններ, մինչև խառը հանձնաժողովի կողմից Հայաստանի և Ազրբեջանի միջև սահմանային հարցերի լուծվելը։<sup>4</sup>

Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակի 32-րդ

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 457.

2 Նոյեմ տեղում։

3 ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.581, թթ.44—46։

4 «Нагорный Карабах в 1918—1923», с. 464—465.

դիվիդեայի 281-րդ գունդը՝ Հրամանատար Աբովարովի և զինկոմ Գայդալովի ղեկավարությամբ:<sup>1</sup> Ղարաբաղ եկան կարմիր բանակի մի շարք բարձրաստիճան սպաններ: Մայիսի 12-ին Շուշի եկավ Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի նախագահ Գ. Օրջոնիկիձեն: Նրա կարգադրությամբ Շուշիում ձերբակալվեցին Խոսրով բեկ Սուլթանովը և նրա մի քանի զինակիցները:<sup>2</sup> Մի քանի օրից Հետո վերադառնալով Բաբու, Գ. Օրջոնիկիձեն Հեռագրեց Վ. Ի. Լենինին, ի. Ստալինին, Գ. Զիլերինին և նրանց հաղորդեց, որ Ղարաբաղի բազմաթիվ հայկական զյուղեր մուսուլմանների կողմից հիմնովին կործանվել են: Նույն կերպ վարվել են հայերը Զանգեզուրի գավառում՝ մուսուլմանական գյուղերի հետ: Միաժամանակ նա Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը տեղեկացրեց, որ Նուրի փաշան թաքնվել է Շուշիում և ծավալել է հակախորհրդային բարող-շություն, որի հետևանքով որոշ վայրերում մուսուլման բնակչությունը հարձակվել է կարմիր բանակի զորամասերի վրա:<sup>3</sup>

Օդտվելով Ղարաբաղի ժանր կացությունից, Խորհրդային Ազգա-բեշանի կառավարությունը նրան ներկայացրեց վերջնագիր, որով պահանջեց երեք օրվա ընթացքում ենթարկվել Ազգային իշխանությանը:<sup>4</sup>

Այսպիսով, երբ Լեռնային Ղարաբաղում իշխանությունը աստիճանաբար անցնում էր Հեղկոմների ձեռքը, իսկ կարմիր բանակի գորամասերը հսկում էին Արցախի ռազմավարական կարևորագույն կետերի վրա, և Ազգային կառավարությունն էլ վերջնագրային լեզվով պահանջում էր երեք օրվա ընթացքում ենթարկվել իրեն, երկրամասի ժամանակավոր կառավարությունն անհրաժեշտ համարեց հրավիրել գավառական համագումարներ և քննարկել ստեղծված պայմաններում արցախահայության անելիքները:

Մայիսի 14-ին Ղարաբաղի ժամանակավոր կառավարության հրահանգով Դիզակի գավառի բոլոր զյուղերի ներկայացուցիչները

1 Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 43.

2 «Ժողովուրդ», 15 հունիսի 1920 թ.:

3 «Нагорный Карабах в 1918—1923», с. 464—465.

4 Նույն տեղում, էջ 465.

Հավաքվեցին Տող գյուղում, ուր տեղի ունեցավ շրջանային համագումար: Կառավարության ներկայացուցիչներ Արսեն Միքայելյանը (Տեր—Հովհաննիսյան) և Նիկոլայ Իսահիսանյանը հանդես եկան գեկուցումով Ազրբեջանի հիշյալ վերջնազրի մասին: Համագումարը պարզելու էր, թե տվյալ քաղաքական իրադրության մեջ ինչպիսին է Ղարաբաղի ժողովրդի վերաբերմունքը դեպի Ազրբեջանի վերջնագիրը, և դեպի Արարատյան կառավարությունը: Սավալվեց մտքերի լայն փոխանակում, և համագումարը միաձայն որոշեց. 1) Ազրբեջանի վերջնագիրը ամենից առաջ համարել հայերի գլխին նոր աղետներ բերելու առիթ, 2) Արարատյան կառավարությունը համարել որպես հարազատ և Զանգեզուրի հետ համատեղ մտնել Արարատյան Հանրապետության մեջ:<sup>1</sup>

Նույն օրը Հազորախի գյուղում տեղի ունեցած Վարանդայի շրջանային համագումարը զայրությով դատապարտեց Խորհրդային Ազրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի «խաղերը» Լեռնային Ղարաբաղում և կտրականապես հրաժարվեց Արցախը Ազրբեջանի՝ տարածք ճանաչելու մուսուլման ու քրիստոնյա բոլշևիկների պահանջը:<sup>2</sup> 1920 թ. մայիսի 18-ին Կովկասյան ճակատի ոտզմական խորհրդի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր—Գարրիելյանի գլխավորած պատվիրակությունը (անդամներ՝ 281-րդ գնդի հրամանատարի օգնական Պարնան և նույն գնդի հրամանդիլ—կազմակերպիլ Կայդալով) Շուշի քաղաքից մեկնեց Վարանդայի շրջանի Ղարաբուզադ գյուղ և հանդիպում ունեցավ Դրո Կանայանի հետ: Պատվիրակության գեկավար Սահակ Տեր—Գարրիելյանը Օրջոնիկիձեի անունից վճռականապես պահանջեց Դրո Կանայանից, որ հայկական զորամասերը գուրս բերվեն Լեռնային Ղարաբաղից, քանի որ Ռուսաստանը մտազիր է Ղարաբաղ մտցնել կարմիր զորքեր: Ղարաբաղ—Զանգեզուրի հայկական զորքերի գլխավոր հրամանատար Դրոն պատասխանեց, որ այդ քայլը հակասում է Խորհրդային Ռուսաստանի հայտարարած ազգերի ինքնորոշման սկզբունքին: Արցախահայությունը արտահայտել է իր կամքը և վերամիավորվել է

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 465—466.

2 ՀՀՓԿ, ֆ.200, գ.1, գ.561, թթ.44—46,

մայր Հայաստանի հետ, իսկ հիմա պահանջ է դրվում նրան անջատել ու միացնել Աղբքեջանին։ Դրոն ավելացնում է նաև, որ այդպիսի լուրջ հարցի վերաբերյալ բանակցելու և զնիո կայացնելու լիազորություն ինքը չունի, հետեւարար այդ մասին պետք է տեղյակ պահի իր կառավարությանը։<sup>1</sup>

Հանդիպման արդյունքների մասին մայիսի 21-ին Դրոն հեռագրեց Հայաստանի կառավարությանը, որը Երևանում ստացվեց մայիսի 29-ին։ Այդ օրերին «կարմիր» Աղբքեջանի հին ու նոր զեկավարները, ապավինելով Խորհրդային Ռուսաստանի գենքին, նորանոր զորամասներ ու ռազմական տեխնիկա էին տեղափոխում Ղարաբաղ, նրա հայ բնակչությանը ծնկի բերելու համար։ Հենց այդ մասին է խոսում Դրոյի 1920 թ. մայիսի 21-ի հեռագրում, հասցեազրված Հայաստանի բանակի հրամանատարության շտարին։ Հեռագրում ասված է, որ թշնամին շարունակում է նոր ուժերով ամրապնդել իր դիրքերը Դիզակի, Կարյազինոյի, Հաղործի, Զիվանցիրի ուղղությամբ։<sup>2</sup> Այդ օրերին Ղարաբաղում ուստական գենքին համահավասար իր ավերիչ դերն էր կատարում նաև հակահայկական ու հակադաշնակցական քարոզությունը, որը ծավալել էին մահմեղական ու քրիստոնյա բոլցեկիները։ Օգտագործելով քարոզչության բոլոր միջոցները՝ նրանք ջանում էին բնակչության մեջ այն համոզումը ստեղծել, թե իբր Լեռնային Ղարաբաղը տնտեսապես սերտորեն կապված է Դաշտային Ղարաբաղի և Խորհրդային Աղբքեջանի մյուս շրջանների, մանավանդ Բաքվի հետ, հետեւարար, կործանարար է Ղարաբաղի համար տնտեսապես թույլ զարգացած Հայաստանի հետ միավորվելը, քանի որ վերջինս ի վիճակի շի լինի օգնել ոտքի կանգնելու տնտեսապես ծանր կացության առջև կանգնած Ղարաբաղին։ Կեղծիրի և բնակչությանը մոլորության մեջ զցելու, նրա նկատմամբ ուժ ու բռնություն գործադրելու քաղաքականությունը տվեց իր արդյունքը՝ վերջնականապես բարոյալքեց արցախահայությանը։ Ահա թե այդ մասին 1920 թ. մայիսի 21-ին Դրոն ինչ է հեռագրում Հայաստանի բանակի շտա-

1 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.427, երկրորդ մաս, թ.336։

2 Նույն տեղում, գ.563, թ.198։

թին: «Ըստսական բանակների մոտենալը Զիվանշիրին, Թարթառ գյուղի զրավումը և հարյուրավոր կարմիրների մուտք գործելը Մերկուրդիպոր և Քասապիտ գյուղերը, վերջնականապես բարոյալքեցին մեր գյուղացիությանը: Զիվանշիրում հոշակվեցին խորհրդային կարգեր: Խաչենը վարակվել է բոլշևիզմով: Այսօր գիշեր այնտեղ եմ ուղարկել մի հարյուրյակ, հուսով ենք, որ գեռ Խաչենը կպահպանենք և կփրկենք փոխզնդապիտ Մեսյանին և հրամանատարական կազմին, որոնց վտանգ է սպառնում: Վարանդայում և Դիզակում առայժմ հանգիստ է: Անհնարին է, որ հայ գյուղացին դիմադրություն ցույց տա ուս բոլշևիկներին»:<sup>1</sup>

Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը որոշեց Հրավիրել նիստ և քննարկել ստեղծված իրադրության մեջ Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը: 1920 թ. մայիսի 22-ին տեղի ունեցավ Ղարաբաղի ժամանակավոր կառավարության վերջին նիստը, որը քննության առավ հիշյալ հարցը: Արշավիր Քամալյանը հայտարարեց, որ Ղարաբաղում ստեղծված իրավիճակում զրությունը թերևս կարողանան փրկել տեղական բոլշևիկները՝ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով և Ղարաբաղը հայտարարելով Խորհրդային Ռուսաստանի մասը, այլ ոչ թե Աղրբեջանի: Աստվածատուր Ավետիսյանը նշեց. «Քանի որ այլևայլ պայմաններ կապել են մեզ Հայաստանի հետ, մենք կարող ենք նրա հետ լինել: Այդ մասին պետք է հայտնել Խորհրդային Ռուսաստանին: Արցախի հայությունը, — այնուհետև ասել է Ա. Ավետիսյանը, — որոշել է երբեք և ոչ մի պայմանով իր բախտը շկապել նույնիսկ Խորհրդային Աղրբեջանի հետ՝ պատրաստ լինելով իրագործել քաղաքական այն հասարակարգը, որ ստեղծել է հեղափոխական Ռուսաստանը, շարունակելով իր ինքնապաշտպանությունն ավելի ուժեղացնել, մինչև կստեղծվի քաղաքական կայուն վիճակ»:<sup>2</sup> Մակայն, Ղարաբաղում այդպիսին քնավ շատեղծվեց: Մայիսի 23-ին Արցախից Հայաստանի կառավարությունը տեղեկություն ստացավ այն մասին, որ Խաչենը, Զիվանշիրը և Գյուլիստանը, ուր

<sup>1</sup> ՀՀՊՊԿԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.193:

<sup>2</sup>Տե՛ս Հ. Արքահամբան, Եղվ. աշխ., էջ 44:

մտել են ոռւսական զորքեր, իրենց հոշակել են խորհրդային։<sup>1</sup> Համաձայն նույն լուրերի, Վարանդան և Աֆիպակը նույնպես տրամադրված շեն զիմագրություն ցույց տալու ոռւսական զորքերին։<sup>2</sup> Այս, իրավացի էր Դրոն։ Արցախցին բարեհամբույր գտնվեց ոռւս զինվորի նկատմամբ։ Նա հույս էր տածում, թե Ղարաբաղի խորհրդայնացումը հնարավորություն կտա վերամիավորվել մայր հայրենիքի հետ։ Արցախահայությունը այդպես մտածելու հիմքեր ուներ։ Վերհիշենք պատմությունը։ Դեռ 1919 թ. հունիսի 3-ին 11-րդ կարմիր բանակի ռազմական խորհրդի անդամ Ս. Կիրովը, ընդգծելով մուսավաթականների պահանջների անհիմն լինելը, Վ. Լենինին հաղորդեց, որ հայկական մարզեր աջանգենակուրը և Ղարաբաղը շեն ճանաշում ադրբեջանական կառավարությանը։<sup>3</sup>

Ղարաբաղը ոռւսական հեղափոխության սկզբից գտնվում էր բոլորովին բացառիկ դրության մեջ։ Հայկական Շուշին կոտորվեց ու այրվեց։ Բայց ոչ ոք չկար, որ կազմուրիչ սպեղանի դներ ժողովրդի այրված ու տոշորած սրտի վրա։ Բորենիները հաղթանակ էին տոնում, Սուլթանովի նման ազգատյացը շարունակում էր իշխանության ու փառքի մեջ մնալ։ Այսպիսի պայմաններում կարմիր բանակը մտավ Արցախ աշխարհ։ Սուլթանովը ձերբակալվեց,<sup>4</sup> հայ ժողովրդի մյուս զահիճները ճողովրեցին կամ ընդհատակ անցան։ Կարծում ենք անբնական չէր, որ երեք տարի մենակ ու անօգնական թշնամու դեմ կռիվ տվող զարարացցին համակրանքով լցվեր դեպի ոռուս զինվորը, զնար նրան ընդառաջ։

Այսպիսով, քաղաքական հանգամանքները զասավորվեցին այնպես, որ Դրաստամատ Կանայանը ստիպված էր բավարարել կարմիր բանակի հրամանատարության պահանջը՝ հնուանալ Ղարաբաղի սահմաններից։ Նա շնորանալ չէր կարող։ Կրկնում ենք՝ Ղարաբաղի սերբին վիճակը անկայուն էր։ Գյուղացիությունը բարոյալքվել էր, չէր պայքարում օտարի սպառնացող վտանգի դեմ։ Այդ

1 ՀՀՊՊԿ, թ.200, ց.1, գ.427, եթեռքը մաս, թ.336։

2 Նույն տեղում, գ.563, թ.198։

3 Ս. Մ. Կիրով, Հողգածեներ, ճառեր, փաստաթյանը, չ.1։ Մ., 1963, էջ 144։

4 Այլիսի 14-ին լուծարվեց Սուլթանովի հիմնած հեղկումը և նրա փոխարին ստեղծվեց նոր հեղկում, իսկ Սուլթանովը ձերբակալվեց և տարվեց Բաքվու նարիմանովի միջնորդությամբ նա ազառութեա բանտից և ապահով տեսաւանեմին։ Պարսկաստան

իրողությունը փաստեց նաև մայիսի 24-ին Զանախչի գլուղում Դրոյի, Նժդեհի, Միքիմանյանի և Ա. Միքայելյանի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունը։ Խորհրդակցությունը հանգեց այն եղրակացությանը, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների երևալը, Հայաստանում բոլշեվիկյան հեղաշրջման մասին լուրերը մեծապես փոխել են Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունը, որը աստիճանաբար կարող է վերածվել թշնամության հայկական զորամասերի դեմ։

Բացի այդ, ռուսական բանակի որոշ զորամասեր Շուշի—Զանգեզուր խճուղու վրա զրավել էին կարևոր դիրքեր և սպառնում էին փակել Ղարաբաղի հայկական զորամասի նաշանջի ճանապարհը։ Եվ ոչ միայն այդ պատճառով։ Դրոյի շհեռանալու դեպքում Հայաստանի և ռուսական բանակի միջև կոիվը դառնում էր անխուսափելի։ Իսկ դժվար չէ պատկերացնել, թե Ռուսաստանի հետ զինված առնակատումը ինչ աղետալի հետեւանքներ կարող էր ունենալ Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության համար։

Այս բոլորը նկատի ունենալով Զանախչի խորհրդակցությունը որոշում է Ղարաբաղի իշխանությունը՝ հանձնել Հայ բոլշևիկներին։<sup>1</sup>

Մայիսի 26-ին Դրոն իշխանությունը հանձնեց բժիշկ Սարո Համբարձումյանին և հաջորդ օրը՝ մայիսի 27-ին<sup>2</sup> իր զորամասերով ստիպված թողեց Արցախը և վերադարձավ Գորիս՝ ամրող զինանոցը և պարենի պահստաները թողնելով ղարաբաղցիներին։ Նա մայիսի 28-ին հասավ Գորիս։<sup>3</sup>

Մայիսի 28-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ արցախահայության 10-րդ համագումարը, որը կեռնալին Ղարաբաղը հոշա-

1 «Հայրենիք», Հոկտեմբեր, 1923, էջ 126—127։

2 Արա Միքայելյան այս գործողության օր է համարում մայիսի 26-ր («Ղարաբաղի վերջին դապրերը», «Հայրենիք», Հոկտեմբեր, 1923, էջ 127, նժդեհը՝ հունիսի առաջին օրերին, «Հայրենիք», Հոկտեմբեր, 1923, էջ 136, 2. Արբահամանը՝ մայիսի 25-ր (նշվ. աշխ., էջ 44))։

3 ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.427, երկրորդ մաս, թ.336։

կեց խորհրդային և ստեղծեց Հեղկոմ՝ Սաբո Համբարձումյանի նախագահությամբ։ Մինչև հունիսի վերջը Հեղկոմներ ստեղծվեցին Լեռնային Ղարաբաղի բոլոր զավառներում ու գյուղերում։

Միաժամանակ ստեղծվեց նաև Դաշտային Ղարաբաղի Հեղկոմ՝ թ. Վելիիրեկովի նախագահությամբ, որի կենտրոնը՝ Շուշին էր։ Առաջ անցնելով նշենք, որ հունիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի և Դաշտային Ղարաբաղի Հեղկոմները միավորվեցին, կենտրոնը դարձավ Շուշի քաղաքը։ Միացյալ Հեղկոմի նախագահ՝ նշանակվեց թ. Վելիիրեկովը, իսկ Ս. Համբարձումյանը՝ կուսակցության Շուշիի գավառային կոմիտեի առաջին քարտուղար։ 1920 թ. հոկտեմբերի 1-ին Ս. Համբարձումյանին փոխարինեց Ս. Աղիզյոզալովը:<sup>1</sup>

Ղարաբաղի և Աղրբեջանի խորհրդայնացումը հարթ ու խաղաղ չեղել։ Այստեղ կային հզոր ուժեր, որոնք կատաղի պայքարում էին նորաստեղծ խորհրդային իշխանության դեմ։ Մայիս—հունիս ամիսներին Աղրբեջանի մի շարք վայրերում ծագեցին Հակախորհրդային ծավալուն բողոքներ ու խռովություններ։ Աղրբեջանում տիրող այս ընդհանուր վիճակն ամբողջապես հատկանշական էր նաև Ղարաբաղի համար։ Գավառում հակախորհրդային ուժերի կենտրոնը Շուշին էր։ 1920 թ. հունիսի 3-ին սկսվեց ապստամբություն Շուշիի Հեղափոխական կոմիտեի դեմ։ Ապստամբությունը գլխավորում էին նախկին ղարաբաղյան ջոկատի հրամանատար Զեյնալովը և Դաղըստանից Շուշի եկած (հունիսի 3-ին) Նուրի փաշան։ Շուշիում կատարվեց Հեղաշրջում և այնտեղ հաստատվեց Հակահեղափոխական դիկտատուրա։<sup>2</sup> Հեղաշրջման պարագլուխներին, սակայն, իրենց իշխանությունը պահպանել չհաջողվեց։ Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի գորամասերը արցախահայության եռանդուն մասնակցությամբ Շուշիում վերականգնեցին խորհրդային իշխանությունը։

Այսպիսով, ուստական զենքի օգնությամբ և բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավար գործիչների հովանավորությամբ Աղրբեջանն իր ներկայացուցիչներին դրեց Ղարաբաղի կուսակցական և խորհրդա-

1 Լ. Խորշուցյան, «Պատմապիտության միակ շափանիշը ճշմարտությունն է», «Խորհրդային Ղարաբաղ», 19 սեպտեմբերի 1989 թ.

2 ՀՀՊՊԿԱ, ֆ.195, գ.3, գ.913, թթ.1—4։

յին ղեկավար սկաշտուններում ու սկսեց այդ կազմակերպությունների միջոցով խաղաղ կերպով աստիճանաբար նվաճել Ղարաբաղը: Այլ կերպ ասած, այն ինչին չկարողացավ հասնել մուսավաթական Աղրբեջանը թուրքերի օգնությամբ, այդ բանին անհամեմատ հեշտությամբ տիրացավ «կարմիր» Աղրբեջանը խորհրդային կարգերի բողի տակ:

Մուսավաթականների կողմից սկիզբ առած բռնությունները, կամայականությունները, անարդարությունները, կոտորածներն ու ավերածությունները նույն դաժանությամբ շարունակեցին գավառի աղրբեջանցի կոմունիստ ղեկավարները, միայն ավելի քաղաքակիրթ եղանակով: Միաժամանակ աղրբեջանցի ժողովրդի մեջ ներարկելով ամենակատաղի շովինիզմ ու մարդատյացություն, աղրբեջանցի բոլշևիկները նրան «եղրայրության», «բարեկամության», «համերաշխության» ստալատիր կոչեր էին անում, ասելով, թե երկու բազմադարյան հարկան «եղրայր» ժողովուրդների պատմության մեջ նոր դարագլուխ է բացվել: Արցախի ճակատագիրը տնօրինողների հայահալած քաղաքականությունը գավառում առաջ բերեց բողոքի ու դժգոհության հուժկու ալիք: Դժգոհությունները խորացան հատկապես Դիզակ գավառում: Առաջինը զինված պայքարի դուրս եկավ Տում գյուղի բնակչությունը՝ համագյուղացի թեանի (Թեան Ստեփանյան) գլխավորությամբ: Ազստամբներն իրենց առասպելական հերոս ղեկավարի գլխավորությամբ կարճ ժամանակամիջոցում տպավորի հաղթանակներ տարան Արցախի խորհրդային իշխանությունների դեմ՝ Դիզակի լեռնային գյուղերում, Տոյի և Տումու ենթաշրջանում՝ վերացնելով խորհրդային իշխանությունը և վերականգնելով անկախության շրջանի կարգն ու կանոնը:<sup>1</sup> Նոյնմերերի վերջերին բոլշևիկյան զինված կազմավորումների հետո ունեցած անհավասար կոփվներից հետո Թեանն իր մի քանի զինակիցների հետ անցավ Զանգեզուր: Այստեղ Նժդեհից անհրաժեշտ օգնություն ստանալով, վերադարձավ Ղարաբաղ՝ շարունակելու կոիվը: Դիզակի և Վարանդայի ողջ հայությունը ոտքի վրա էր:

1 Բ. Ռեզուրարյան, Եշվ. աշխ., էջ 104:

Նրանց մեջ աստիճանաբար տիրապետող էր դառնում այն տեսակետը, որ եթե ժամանակին իրենք պայքարած լինեին խորհրդային կարգերի հաստատման գեմ, ապա իրենց երկրամասը ոչ թե ուրիշի ձեռքով Աղրբեջանի հնթակայությանը կհանձնվեր, այլ կդանվեր մայր Հայաստանի կազմում։ Հայաստանի հետ վերամիավորման համար մինչև վերջ ազգովին պայքարելու պատրաստակամության և վճռականության վկան եղավ ապստամբության շարունակաբար ուժեղացող թափր։ Դեկտեմբերի կեսերին Թևանի զինյալները Դիգակում ու Վարանդայում կրկին վերացրել էին խորհրդային իշխանության տեղական մարմինները։<sup>1</sup> Ապստամբների իշխանությունը Դիգակում և Վարանդայի մի մասում դիմացավ ավելի քան վեց ամիս։<sup>2</sup>

Աղրբեջանի կենտրոնական կառավարությունը և նրա տեղական կուսակցական ու պետական մարմինները կտրուկ միջոցների դիմեցին ճնշելու համաժողովրդական շարումը։ 1921 թ. գարնանը Աղրբեջանի կառավարությունն ապստամբների գեմ հանեց մեծաթիվ զորքեր։ Ոչ մի տեղից շտանալով օգնություն, մայիսի սկզբներին ապստամբների ծանր ու անհավասար պայքարը մարեց։ Թևանն ու մի քանի յուրաքիններ անցան Պարսկաստան։<sup>3</sup>

1 Բ. Ռւզուբարդան, Եզմ. աշխ., էջ 105։

2 Նույն տեղում, էջ 107։

3 Նույն տեղում։

## 2. Խորհրդային Աղբբեջան—Խորհրդային Ռուսաստան Երկակը ընդդեմ Լեռնային Ղարաբաղի

Աղբբեջանի խորհրդայնացումից հետո Արցախ աշխարհը մի պահ հանգիստ շունչ քաշեց: Ղարաբաղի բազմաշարչար ժողովրդին թվաց, թե Աղբբեջանի բոլշևիկացումով անդառնալիորեն պատմության գիրկը կանցնեն մուսավաթականների նվաճողական նկրտումները և Ղարաբաղի վիրավոր հողում մեկրնդմիշտ կլոեն շարունակ որոտացող հրանոթների համազարկերը, պատերազմից տնքացող նրա հողը լիւալուր կշեցի, և ինքը հնարավորություն կստանա ինքնուրույն կերպով տնօրինել իր ճակատագիրը, ինքնորոշվել իր բնօրբանում՝ վաղնջական հայկական տարածքում:

Ավագ, արցախցու սպասումները շարդարացան: Նա հուսախար եղավ: Նույն քաղաքական զիժը հայկական Ղարաբաղի նկատմամբ շարունակեցին Աղբբեջանի բոլշևիկ զեկավարները: Այլ խոսքով՝ իրենց նախորդ մուսավաթականների նման, Աղբբեջանի բոլշևիկներին խորթ շէին պանթուրքիզմի պլանները, որի իրականացման ճանապարհին առաջնահերթ պայմանը Թուրքիայի և Աղբբեջանի միջև կապի ստեղծումն էր, այն է՝ տիրանալ Աղբբեջանը Թուրքիայից անջատող Արցախին, Զանգեզուրին, Նախիջևանին և կապվել արյունակից թուրքերին: Ինչպես տեսնում ենք, նպատակները շէին փոխվել, փոխվել էին միայն կատարողները: Եթե մուսավաթական կառավարությունը մերթ թուրք զավթիչների հետ է ձգտել աշուշ ինչիքը իրականացնել, մերթ նույն նպատակի համար բրիտանական գաղութաբարներն են եղել նրա զիխավոր աջակիցները, ապա կոմունիստական Աղբբեջանի զեպքում՝ ցինակցել են Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան: Հետեւարար, եթե նախկինում արցախահայությունը հանուն իր անկախության գոյամարտում էր մուսավաթական Աղբբեջանի գեմ, այսուհետ նրա զիմ կանգնած էր Խորհրդային Աղբբեջանը:

Ինչու էր Խորհրդային Ռուսաստանը աջակցում կոմունիստական Աղբբեջանին: Բանն այն է, որ վերջինն զարձել էր Խորհրդային առաջին հանրապետությունը Անդրկովկասում: Բոլշևիկյան Ռուսաստանը քեմալական Թուրքիային և Խորհրդային Աղբբեջանին դարձրել

էր իր դաշնակիցները Արևելքում համաշխարհային հեղափոխության տարածման և հակախմապերի հալիստական ազգային—ազատագրական պայքարը բորբոքելու գործում։ Ընդհանուր թշնամու՝ Անդիայի գեմ պայքարելու, ինչպես նաև «համաշխարհային հեղափոխության հրդեհը» Ասիայում վառելու մզումը Մոսկվային հարկադրեց ձեռք մեկնել Թուրքիային, որտեղ ծավալվել էր քեմալականների ազատագրական և հակախմապերի ալիստական պայքարը։ Հայաստանի Հանրապետությունը արգելք էր այդ դաշինքի հաստատման ճանապարհին։ Այդ լավ էին գիտակցում նաև Հայաստանի կառավարող շրջանները։ Այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավոր ամեն ինչ անում էր հարեան երկրի հետ հաստատելու նորմալ հարաբերություններ։ Հայկական կողմի ձգումները ապարդյուն անցան։ Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջների հարցում Ազրբեջանի կոմունիստ ղեկավարներն իրենց նախորդներին ոչնչով չեն զիջում։ Դրա վկայությունը Հայաստանի գեմ Ազրբեջանի նոր իշխանության առաջին քայլերն էին։ 1920 թ. ապրիլի 29-ին Ազրբեջանի զինվորական—հեղափոխական կոմիտեի ներկայացուցիչներց մեկը՝ Համիդ Սուլթանովը իր բարեկամին հաղորդում էր, որ կարմիր զորքերը, որոնք արդեն զրավել են Եվլախիք, շարժվում են գեպի Շուշի, նպատակ ունեն Ղարաբաղի վրայով միանալ Անատոլիայի զորքերին։<sup>1</sup>

Հայաստանի Հանրապետության կառավարությունը բննելով ստեղծված իրավիճակը, 1920 թ. ապրիլի 29-ին բողոքի նոտա հղեց Խորհրդային Ազրբեջանի կառավարության ղեկավար Ն. Նարիմանովին, համոզմունք հայտնելով, որ Ազրբեջանի կառավարությունը չի հապաղի շտապ միջոցներ ձեռք առնելու հարաբեղում և Զանգեզուրությում տեղի ունեցող կռիվները դադարեցնելու և հիշյալ շրջաններից Ազրբեջանի զորքերը հետ կանչելու համար։<sup>2</sup> Ազրբեջանական կողմի պատասխան քայլը եղավ այն, որ նախկին մուսավաթական բանկից վերակազմված Խորհրդային Ազրբեջանի կարմիր բանակը, մուսավաթական բանակի նախկին հրամանատարների ղեկավարու-

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.427, երկրորդ մաս, թ.336։

2 «Нагорный Карабах в 1918—1923», с. 441,

ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.581, թ.19։

թյամբ և Խորհրդային Ծուսաստանի գինակցությամբ, ձեռնաժողովն եղան Ղարաբաղի և Զանգեզուրի «ազատագրմանը»:

Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ Խորհրդային Ազրբեջանի և Ծուսաստանի ղինական ուժերի ժավալած պատերազմական գործողությունների կապակցությամբ, ապրիլի 30-ին Հայաստանի կառավարությունը բողոքի նոտա հղեց Ծուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Զիշերինին և Ազրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ՝ Նարիմանովին:

Գ. Զիշերինի անունով հասցեագրված նոտայում մասնավորապես ասվում էր, որ Ազրբեջանի նոր ղեկավարությունը շարունակում է մուսավաթականների քաղաքականությունը Հայաստանի և Հայ ժողովրդի նկատմամբ: Խորհրդային Ազրբեջանի զորքերը շարունակում են Ղարաբաղում զանգվածաբար ոչնչացնել Հայկական զյուղերն ու Հայ ազգաբնակչությանը: Հայկական կողմը ցավով էր նշում այն հանգամանքը, որ, ըստ լուրերի, այդ բարբարոսություններին մասնակից են դառնում նաև ոռոսական բանակի զինվորները, և դա այն դեպքում, երբ Խորհրդային Ծուսաստանը պաշտոնապես ճանաչել է Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը:<sup>1</sup>

Նարիմանովին ուղարկված նոտայում Հայաստանի արտգործնախարար Հ. Օհանջանյանը գատապարտում է Ազրբեջանի զինական ուժի բարբարոսություններն ու բնորությունները Ղարաբաղ—Զանգեզուրի Հայ ազգաբնակչության նկատմամբ և կոչ է անում Ազրբեջանի կառավարությանը վերը նշված մարզերից հետ կանչել իր զորքերը և բնակչությանը հնարավորություն տալ ինքնուրույն կերպով վճռելու իր ճակատագիրը:<sup>2</sup>

Բողոքագիրը ստանալու նույն օրը՝ ապրիլի 30-ին, Ազրբեջանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Մ. Հովեյնովը Հայաստանի կառավարությանն է հղում պատասխան հեռագիր, որը Երևանում ստացվեց մայիսի 1-ին:

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 443—444,  
ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.581, թ.20.

2 «Нагорный Карабах в 1918—1923», с. 444—445.

Աղբբեջանի խորհրդային Հանրապետության բանվորագյուղացիական կառավարությունը պահանջում էր նախ մաքրել Հայկական զորքերից Դարաբաղի ու Զանգեզուրի տարածքները, երկրորդ՝ քաղաքեցնել ազգամիջյան կոտորածները։ Հակառակ դեպքում՝ Աղբբեջանի սոցիալիստական խորհրդային Հանրապետության Հեղափոխական կոմիտեն իրեն Համարում էր Հայաստանի Հանրապետության հետ պատերազմական դրության մեջ։ Պատասխանի համար տրվում է երեք օր ժամանակ։<sup>1</sup> Տեղին է նշել, որ Խորհրդային Խուսաստանը, որը քանիցս ճանաշել էր Հայաստանի Հանրապետության անկախությունը, Հուսեյնովի հեռագրից բառացիորեն մի քանի ժամ անց, կարմիր բանակի հրամանատարության բերանով, իրեն Աղբբեջանի դաշնակից, անհրաժեշտ համարեց վերջնադիր ուղարկել Հայաստանի կառավարությանը, պաշտպանելով Աղբբեջանի պահանջը՝ դատարկել Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը։ Վերջնագրով պահանջում էր 24 ժամվա ընթացքում դադարեցնել պատերազմական գործողությունները Խորհրդային Աղբբեջանի տարածքում և զորքերը դուրս հանել նրա սահմաններից, որի շկատարումը կնկատվեր մարտահրավեր Խորհրդային Խուսաստանի դեմ, ուստի կարմիր բանակը անմիջապես կանցնի հարձակման՝ պատասխանատվությունը թողնելով Հայաստանի կառավարության վրա։<sup>2</sup> Մայիսի 1-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից Բաքու, Աղբբեջանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Մ. Հուսեյնովին (պատճենը՝ Լենինին, Չիչերինին, պատճենը՝ Բաքվում Հայաստանի գիվանազիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանին, պատճենը՝ Կովկասյան ռազմաճակատի Հեղափոխական ռազմական խորհրդի նախագահ Օրջոնիկիձեին) ուղարկված պատասխանում ասված է, որ Աղբբեջանի տարածքի վրա հայկական զորքերը շկան։ Բնդշակառակը, աղբբեջանական կանոնավոր զորքերն ու բանդաներն են գտնվում Հայկական Ղարաբաղում և ավերածություններ ու կոտորածներ անում այնտեղ։

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 445,

ՀՀՊԿ, ֆ.200, ց.1, գ.82, թ.5:

2 «Нагорный Карабах в 1918—1923», с. 446—447.

Վերջում հույս էր Հայտնվում, որ Հայաստանի անկախությունը ձանաշած Ծուսաստանը կպահանջի Աղբեջանի նոր կառավարությունից դադարեցնել ուղղմական գործողությունները և սահմանների վերջնական որոշման համար Հայկական կառավարության հետ սկսել բանակցություններ։<sup>1</sup> Հարգելով ժողովուրդների ազատ ինքնորոշման սուրբ իրավունքը, Հայոց կենտրոնական կառավարությունը միաժամանակ իր պարտքն էր համարում Հայտարարել, որ նա, Հայ բովանդակ ժողովրդի վճռական կամքի համաձայն, պատրաստ է ամեն գնով պաշտպանել Հայաստանի սահմաններն ու անկախությունը՝ ում կողմից էլ, որ վտանգ սպառնա նրան։

Հայաստանի Հանրապետության գեմ վերջնագրային սպառնալիքներից հետո Աղբեջանի բոլշևիկյան կառավարությունն անցավ վճռական գործողությունների Դարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը նվաճելու համար։

1920 թ. մայիսի 3-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը բողոք է ներկայացնում Ծուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին ու ժողկոմինորմի նախագահ Վ. Լենինին և պահանջում միջոցներ ձեռք առնել ու կանխել Խորհրդային Աղբեջանի զավթողական բաղաքականությունը Հայկական Դարաբաղի նկատմամբ։<sup>2</sup>

Մեկ օր անց, Աղբեջանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Հուսեյնովի, անունով Բաքվում ստացվում է Հայկական կողմից ուղարկված նոր բողոք, որի տակ ստորագրել էր Հայաստանի արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը։<sup>3</sup> Վերջինս իր կառավարության անունից Աղբեջանի զեկավարությանը մի ավելորդ անգամ հայտնում է, որ Աղբեջանի տարածքում Հայկական զորքեր շկան։ Ընդհակառակը, աղբեջանական բանակներն ու բանդաներն են գտնվում Լեռնային Ղարաբաղում և կոտորում աշխատավոր հայ գյուղացիությանը, այրում Հայկական գյուղերն ու ավանները։ Վերջում Հ. Օհանջանյանը Աղբեջանի կառավարությունից պահանջում է վերջ տալ բոլոր տեսակի ուազմական գործողություններին և

1 ՀՀՓՊԱ, ֆ.200, ց.1, գ.581, թթ. 30—31։

2 «Нагорный Карабах в 1918—1923», с. 452—453.

3 Նույն տեղում, թթ.454—455։

առաջարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ սկսել բանակցություններ, վերջնականապես լուծել սահման-ների հարցն ու երկու հարևան հանրապետությունների միջև հաս-տատել նորմալ հարաբերություններ։<sup>1</sup>

Ազգային արտափոխ գործերի ժողկոմի տեղակալ Հովսեյ-նովը մայիսի 9-ի պատասխան հայտարարության մեջ հայ—մու-սուլմանական ընդհարումների ամրող մեղքը բարդելով Հայաստա-նի Հանրապետության կառավարության վրա, անհիմն կերպով վեր-ջինիս հետ է կապում Օրդուրադում, Նախիջևանում, Զանգիրասա-րում, Սուրմալուում և այլուր մուսուլմանարնեակ իրր 60 զյուղերի ոչնչացումը։ Հայտարարության վերջում Հովսեյնովը «մեծահոգա-րար» ասում է. «Չնայած այն բանին, որ Հայաստանի բանվոր—գյու-ղացիները դեռ շեն թոթափել դաշնակցական կառավարության լուծը, այդուհանդերձ, արյունահեղությունից խուսափելու համար Ազգբե-շանի Խորհրդային հանրապետության կառավարությունը ձեռնար-կում է բոլոր միջոցները՝ անհապաղ կանխելու արյունալի ընդհա-րումները և առաջարկում է հայկական կառավարությանը բոլոր վի-ճելի հարցերը լուծելու համար նստել բանակցությունների սեղանի շուրջ ...»։<sup>2</sup> Հայաստանի կառավարության այն օրերից պահպան-ված մի շարք փաստաթղթերում մերկացված է Խորհրդային Ազգբե-շանի դեկավարության մեղքով ձախողված այդ հանգիպումը։

Հայաստանի կառավարությունն անհրաժեշտ համարեց բա-նակցել Խորհրդային Բնասաստանի հետ։ Այդ նպատակով Հայաս-տանի կառավարական պատվիրակությունը (Հ. Տերտերյան և լ. Զա-րաֆյան) կեռն Շանթի գլխավորությամբ 1920 թ. մայիսի վերջին մեկնեց Մուգկվա։ Պատվիրակությունը կառավարությունից հրահանգ էր ստացել՝ ի թիվս մի շարք կետերի, Մուկվային ընդունելի դարձ-նել նաև Հայաստանի Հանրապետության ճանաշումը՝ կեռնային Ղարաբաղի հետ միասին։<sup>3</sup>

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 454—455.

2 Նույն տեղում, էջ 461—462։

3 «Հայրենիք», 1922, դեկտեմբեր, էջ 47—48։

Որոշ շեղում կատարելով, ընթերցողին տեղյակ դարձնենք Հայկական «խոշընդոտը» վերացնելու քեմալական թուրքիային նենդ քաղաքականության մասին։ Մինչև Էսոն Շանթի պատվիրակության Մոսկվա մեկնելը, Բաքվից Մոսկվա էր եկել քեմալական զինվորական ու դիվանագիտական գործիչների մի խումբ։ Խմբի մեջ էին թուրք զորավար Խալիլ Փաշան, Թուրքիայի արտաքին գործերի գծով ժողովրդական կոմիսար Բեքիր Սամի բեյը և ուրիշներ։ Պատվիրակությունը ժամանել էր Մոսկվա՝ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև դիվանագիտական Հարաբերություններ հաստատելու և բարեկամական պայմանագիր կնքելու Նշենք, որ թուրքական պատվիրակությունը Բաքու էր ժամանել մինչև նրա հեղաշրջումը։ Մոսկվա գնալուց առաջ նրանք բազում հանդիպումներ ունեցան ոչ միայն մուսավաթական կառավարության պարագաների, այլև Խորհրդային Ազգային ապահանություններ և Հուսեյնովի հետ, պարզեցին Մոսկվայում իրենց անելիքները։ Եվ այսպես, 1920 թ. ամռանը Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունը (Գ. Զիշերին, Լ. Կարախան) բանակցություններ էր վարում երկու ճակատում, մի կողմից Հայաստանի Հանրապետության, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի ներկայացուցիչների հետ։ Ռուս-թուրքական բանակցությունները հարթ չեին ընթանում։ Թուրքական պատվիրակության հետ բանակցություններում ուստական կողմը առաջ քաշեց թուրքական հին սահմանների վավերացման այնպիսի սկզբունքներ, որոնց դեպքում մի կողմից մուսուլմանական բնակչության գերակշռությամբ տարածքները անցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թ. մեծամասնություն էին կազմում Հայերը, անցնեին Հայաստանին։ Այդ հիման վրա Զիշերինը առաջարկեց Հայաստանին հանձնել Վանը և Բիթլիսը։<sup>1</sup>

Սակայն թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյը, ունենալով իր կառավարության հրահանգները, կտրականապես մերժեց այս առաջարկը և պահանջեց առաջնորդվել Բրեստի Հաշտության պայմանագրով։ Ինչպես տեսնում ենք, քեմալական-

<sup>1</sup> «Ավանդարդ», 7 փետրվարի 1990 թ.:

Ները Հայաստանի հարցում ոչ մի փոխզիջման շէին ուղում գնալ: Թուրքական պատվիրակությունը Հայաստանի վրա արշավելու իրենց ծրագիրը փորձում էր հիմնավորել Հայկական «խոշրնդուր» վերացնելու հանգամանքով: Բներիր Սամին Զիշերինին, այնուհետեւ նաև Լենինին համառորեն համոզում էր, որ «Թուրքական Հեղափոխական շարժման համար նախիջևանի շրջանում և Անատոլիայում ամուր թիկունքի ստեղծման» կենսական շահը պահանջում է սերտ կապ հաստատել Խորհրդային Ազրբեջանի և կարմիր բանակի հետ: Սակայն, դրան խանգարում է Հայաստանը, որը վտանգավոր հակառակորդ է Թուրքիայի թիկունքում: Այդ նպատակով թուրքական կողմը պահանջում էր թուլատրել Հայաստանից գրավել Սարիգամիշը և Շահթաղթին, որով նախիջևանի վրայով կապ կստեղծվեր Ազրբեջանի և կարմիր բանակի հետ: Ընդուած գնալով թուրքական պատվիրակության ցանկությանը, որը միտում ուներ ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունը և իրազործել Ազրբեջանին միանալու քեմալականների ձգումը, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը տվեց իր համաձայնությունը: Արարատյան աշխարհի վրա նորից կախվեց Հայոց պետականությունը կորցնելու վտանգը: Հայաստանի գլխին վերցին ամսների բնթացքում թափված ծանր դեպքերը հետեւանք էին այն դաշնակցության, որ կնքվեց Խորհրդային Ռուսաստանի և Մուստաֆա Քեմալի միջև:<sup>1</sup>

Ուշագրավ է, որ Լ. Շանթի պատվիրակության Մոսկվա մեկնելու միջոցին Թիֆլիսի զարարացիների Հայրենակցական միությունը որոշեց ոչ պաշտոնական պատվիրակություն ուղարկել Մոսկվա, որը Խորհրդային Ռուսաստանի կառավարության առաջ պետք է պաշտպաներ Ղարաբաղի շահերը: Պատվիրակության կազմում էին մենշենիկյան գործիչներ Սիմոնիկ Փիրումյանը և Արամայիս Երզնկյանը: Նրանք Մոսկվա ճանապարհվեցին Լ. Շանթի պատվիրակության հետ: Հասնելով Վլադիկավկազ, (նախկինում՝ Օբչոնիկիձե) Երզնկյանը և Փիրումյանը անմիջապես գործի անցան Ղարաբաղի Հարցի առիթով: Նրանք Բաքվում գտնվող Օբչոնիկիձեի հետ սկսում են բանակցություններ՝ ուղիղ հեռագրաթելով: Ղարաբաղի

պատվիրակները հայտնում են Օրջոնիկիձեին, որ Ղարաբաղի և Զանգեզուրի բնակչությունը, որը բացառապես հայկական է, կտրականապես հրաժարվում է Ադրբեջանին ենթարկվել: Ներկայումս անհրաժեշտ է, որ Ադրբեջանի խորհրդային կառավարությունը ձեռնպահ մնա Լեռնային Ղարաբաղի սահմանները զորք մտցնելուց և այնտեղ ուղարկի շեղոր հանձնաժողով՝ զյուղացիության կամքին ծանոթանալու համար և դրա համեմատ լուծի Ղարաբաղի հարցը: Օրջոնիկիձեին պատասխանի մեջ հայտնում է, որ ինքը գնում է Ղարաբաղ՝ անձամբ տեղեկանալու դեպքերին և խոստանում, որ Ղարաբաղից հանվեն ադրբեջանական զորքերը և կփոխարինվեն ուղարկան զորամասերով:<sup>1</sup>

Բավարար համարելով այսքանը՝ Ղարաբաղում ստեղծված սուր զրությունը կարգավորելու համար Փիրումյանը և Երզնկյանը Հայաստանի կառավարական պատվիրակության հետ ուղղորվում են Մոսկվա: Ղարաբաղի Ներկայացուցիչները Մոսկվայում իրենց զործունեության մասին տեղյակ էին պահում Շանթի պաշտոնական պատվիրակությանը: Մոսկվա հասնելու առաջին օրը Երզնկյանին և Փիրումյանին ընդունում են Զիշերինը և Կարախանը: Նրանք տեսակցություն են ունենում նաև Ռուսաստանի կուսակցական ու պետական այլ գործիչների հետ ևս:

1920 թ. հունիսի 9-ին Թիֆլիսի ղարաբաղցիների հայրենակցական միության անունից Փիրումյանը և Երզնկյանը ծավալուն զեկուցագիր ուղարկեցին Լենինին: Նկարագրելով զավառի ժանր զրությունը և նրա երեքամյա պայքարի պատմությունը, նրանք այնուհետեւ հանգամանորեն ներկայացնում են Խորհրդային Ադրբեջանի արյունալի շարագործությունները Լեռնային Ղարաբաղում: Հաղորդելով այս ամենի մանրամասները, աղերսով են Լեռնային Ղարաբաղի զյուղացիությանը իրավունք և իսկական հնարավորություն տալ իր կյանքը կազմակերպելու սեփական հայեցողությամբ, կարծես զգուշացնելով, որ այդ զյուղացիությունից անկախ ընդունված ամեն մի որոշում կդիտվի որպես բռնություն և կզբկի նրան ինքնու-

1 «Մշակ», 3 հունիսի 1920 թ., «Մշակ», 4 օգոստոսի 1920 թ.:

բոշման այն իրավունքից, որն ինքը երեք տարի ծանր պայմաններում պաշտպանել է իր բոլոր թշնամիներից:<sup>1</sup>

1920 թ. ամռանը Հիմնականում Ղարաբաղի և Զանգեզուրի հայկամիսաներից բաղկացած մի պատգամավորություն այցելեց Մոսկվա, իր հետ տանելով խնդրագիր՝ Ղարաբաղը և Զանգեզուրը պաշտոնապես Հայաստանի Հանրապետության անրաժան մասը ճանաշելու մասին։ Հայ պատվիրակները Մոսկվայում տեսակցություն ունեցան բոլշևիկներ Ռուրեն Քաթանյանի և Դուրգեն Հայկունու հետ։ Հունիսի սկզբներին Գ. Հայկունին և Ռ. Քաթանյանը Ռուսաստանի ժողովում խորհի նախագահ՝ Լենինին գրում են նամակ, որտեղ շարադրում են Հիշյալ խնդրագրի բովանդակությունը, ինչպես նաև անում իրենց առաջարկությունը Ղարաբաղի հարցի լուծման կապակցությամբ։ Նրանք առաջարկում էին Ղարաբաղի հարցի լուծման հնարավոր երկու տարրերակ. ա) Ղարաբաղը պետք է վերամիավորել Հայաստանի հետ, բ) հակառակ դեպքում Զանգեզուրի և Ղարաբաղի գավառները պետք էր միավորել և կազմել հայկական խորհրդային մի հանրապետություն, որը դաշնակցային հիմունքներով մտնելու էր ՌԽՖՍՀ կազմի մեջ։<sup>2</sup> Ինչպես երևում է նամակի բովանդակությունից, դա լինելու էր ինքնուրույն, սուվերեն վարչարադարձական միավոր, որն ուղղակի ենթարկվելու էր կենտրոնին՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը։

Սա տվյալ պահի համար միանգամայն տրամարանական որոշում էր. Հայաստանը ամբողջությամբ դեռ չէր խորհրդայնացել, հետեւրար Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի Հանրապետության ենթակայության տակ վերադարձնելը բոլշևիկների համար անընդունելի էր։ Մի կարևոր հանգամանը ևս, Անդրկովկասում ազգային—տարածքային խնդիրների լուծմանն ուղղված Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության գործելակերպում տիրապետող էր այն, միտումը, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո վիճելի տարածքները պետք է կազմեին նրա անրաժան մասը։ Գրեթե նույն ժամանակ՝ հունիսի 6-ին Ղարաբաղի 9-րդ համագումարի լիազոր

1 «Нагорный Карабах 1918—1923», с. 487—489.

2 նույն տեղում, էջ 497—498.

ներկայացուցիչներ՝ դաշնակցական գործիչներ Ասլան Շահնազարյանը և ներսես Նասիբյանը Ասքանաղ Մուալլանի միջոցով Մոսկվա կեսն Շանթին հաղորդեցին, որ նա համագումարի որոշման մասին (այն է՝ Ղարաբաղի հայությունը շեղյալ է համարել 7-րդ համագումարի ժամանակավոր համաձայնագիրը և իրեն հռչակել է Հայաստանի Հանրապետության մաս) տեղյակ րդանի Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը։ Հատկանշական է, որ Ղարաբաղի ներկայացուցիչները Արցախի հարցի կապակցությամբ բանակցություններ վարելու լիազորություն են ունին Շանթի գլխավորած պատվիրակությանը։<sup>1</sup>

Երբ Մոսկվայում Հայաստանի և Ղարաբաղի ներկայացուցիչները բանակցություններ էին վարում Ռուսաստանի պետական ու կուսակցական ղեկավար գործիչների հետ, այդ ընթացքում թաթարները ձեռքբերը ծալած շէին նստել։ Աղրբեջանի շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար Բաքվից Մոսկվա գործուղվեց պաշտոնական պատվիրակություն՝ Համիդ Հասան Հաջինսկու գլխավորությամբ։ Մոսկվա ժամանած աղրբեջանական պատվիրակությունը պետք է ՌԽՖՍՀ ամենավերին մակարդակներին համոզեր, որ նրանք մուսուլմանական Աղրբեջանին գերադասեին հավատակից Հայաստանից այն պատճառաբանությամբ, որ Աղրբեջանի մուսուլմանության համակրանքը գրավելու միակ միջոցն այն է, որ Աղրբեջանին միացնեն ոչ միայն Ղարաբաղը և Զանգեզուրը, այլև Նախիջենինը, Շարուրը և Սուրմալուն։<sup>2</sup>

Ահա այսպիսին էր մթնոլորտը Հայաստանի շուրջը 1920 թ. ամռանը։ Անկարայի և Բաքվի ներկայացուցիչները փորձում էին ամեն կիրապ ձախողել Հայ—ռուսական բանակցությունները, սահմանափակել Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական օգնությունը Հայաստանին։

Խոսելով Մոսկվայի ռուս—հայկական բանակցությունները ձախողելու Աղրբեջանի բաղարականության մասին, պետք է ասել, որ դրան մեծապես օժանդակեց այն օրերին Աղրբեջանի գանազան կողմերից կեղծ ու շինծու բաղում նամակների ու հեռագրերի հոսքը

1 ՀՀՊՊԿ, ֆ.200, գ.1, գ.581, թթ.78—86.

2 Նույն տեղում, գ.4, թթ.2—3։

դեպի Մոսկվա: Ազրբեջանի ղեկավարությունը Մոսկվայի համար լրատվություններում միտումնավոր գուշագարդում էր տեղական իրադարձությունները և տնտեսապես ու ռազմական տեսակետից շլատված Հայաստանը ներկայացնում որպես հակախորհրդային ազրեսիվ ուժ: Քիչ չեն այդ ամենը հավաստող փաստաթղթերը: Վկայակոչենք զրանցից մեկը: Այսպես, 1920 թ. հուլիսին Լ. Շանթի պատվիրակության հետ Գ. Զիշերինի բանակցությունների ժամանակ Բարվից Մոսկվա կենտրի և Զիշերինի հասցեով (պատճենը՝ Վլադիկավազ, Օքզոնիկիձեկին) ուղարկվեց հեռագիր: Այնտեղ նշվում է, որ Հայաստանում հազարավոր կոմունիստներ ձերբակալվել և հարցուրները գնդականարվել են, տասնյակ ապստամբած հայկական գյուղեր ոչնչացվել են դաշնակների կողմից: Բազմաթիվ մուսուլմանական գյուղեր կոտրվել են: Հայերը փաստորեն պատերազմական դրության մեջ են Ազրբեջանի հետ: Հեռագրի հեղինակները, օգտվելով ստեղծված իրադրությունից, մանավանդ Հայաստանի կառավարության նկատմամբ բոլշևիկյան Ռուսաստանի անբարեհաճ վերաբերմունքից, պահանջում են նրա ղեկավարությունից հրաժարվել դաշնակցական կառավարության հետ բանակցելուց:<sup>1</sup>

Հեռագրի հեղինակներ Նարիմանովը, Մդիվանին, Միկոյանը եռորդային Ռուսաստանի ղեկավարությանը խնդրում են ազգային—տարածքային հարցերի լուծման ժամանակ առաջնորդվել բացառապես տեղական կազմակերպություններից և պատախանատու գործիչներից ստացած լրատվությունով:<sup>2</sup>

Իսկապես, որ Մոսկվա ուղարկված կեղծ լրատվությունը կենտրոնի համար կողմնորոշչի նշանակություն ունեցավ, որը և բացառաբար ազդեց մոսկովյան բանակցությունների ընթացքի վրա: Այդ մասին վկայություն կա նաև Լ. Շանթի մոտ: 1920 թ. հուլիսին Մոսկվայից Հայաստանի կառավարությանը նա գրում էր. «Խորհրդային կառավարությունը ընդունում է մեր պահանջների արդար լինելը և շի փափագում դոհացում տալ Խորհրդային Ազրբեջանի և Հայ բոլշևիկների բոլոր բազմանքներին, այնուամենայնիվ, վերջին-

1 ՄԸՒ ԿԿ, ֆ.64, ց.1, կ.38, թթ.22—23:

2 Նույն տեղում, թ.23:

Ներիս համառ պնդումների և սուտ տեղեկությունների ազդեցության հետևանքով պայմանագրի կնքումը դանդաղում է: Աղբբեջանի կառավարությունը ցանկանում է օգտվել ուստական հեղինակությունից և ուս գորքերի ներկայությունից, գրավել Ղարաբաղն ու Զանգեզուրը և անվիճելի հայկական հողերը»:<sup>1</sup>

Խորհրդային Ռուսաստանի ղեկավար գործիչների մեջ Գ. Զիշերինը միակն էր, որ խստորեն դատապարտում էր Նարիմանովի կառավարության զավթողական ներտումները և կոնկրետ քայլերի դիմում դրանք կանխելու համար: Անդրկովկասում ազգային—տարածքային խնդիրները արդարացի սկզբունքով լուծելու ամենակրթություն պաշտպան Զիշերինը, կրեմլյան գործընկերների շրջանում հուսալի համախոհ շգտնելով, ճարահատյալ դիմում է Օրջոնիկիձեին՝ խնդրելով, որ նա իր հեղինակությամբ ազդի Բաքվի ղեկավարների վրա և սանձի նրանց ազրեսիվ գործելակերպը: 1920 թ. հունիսի 7-ին նա Օրջոնիկիձեին այդ կապակցությամբ դրիլ է: «Մեզ անհրաժեշտ է փոխպեղման հասնել դաշնակցական կառավարության հետ: Մինչդեռ աղբբեջանական կառավարությունը վիճելի է հայտարարում ոչ միայն Ղարաբաղը և Զանգեզուրը, այլև Շարուր—Դարալագյաղի գավառը: Վերջինս երբեք ոչ մեկի կողմից վիճելի չի հայտարարվել, նույնիսկ մուսավաթական կառավարությունն այն համարել է Հայաստանինը»: Զիշերինը Օրջոնիկիձեին խնդրում էր ներգործել Աղբբեջանի կառավարության վրա, հասնելու նրա համաձայնությանը, որ վիճելի հայտարարվեն միայն Ղարաբաղը և Զանգեզուրը, բայց ոչ Շարուր—Դարալագյաղի գավառը: Այնուհետև Զիշերինը հայտնում էր, որ տվյալ պահին հնարավորություն շկագրավել նախիջևանը և Զուգֆան, ուստի հարկադրված ենք սահմանափակվել ստատուս քվոյով»:<sup>2</sup>

Ինչպես երևում է դեպքերի դարձացման հետագա ընթացքից, Օրջոնիկիձեի միջամտությունն էլ գործին չօգնեց: Երևի ճիշտ կլինիանել, որ Օրջոնիկիձեն ոչ միայն շմիջամտեց, այլ ինչ—որ շափով ընդառաջնեց Աղբբեջանի ղեկավարներին:

1 «Հասաք», 13 Հունիսի 1920 թ.:

2 «Нагорный Карабах в 1918—1923», с.476—477.

Գոտեպնդված Ստալինի և բոլշևիկյան կուսակցության ու խորհրդային պետության մի շարք զործիչների բացահայտ աջակցությունից, Աղրբեջանի ղեկավարությունը Հայաստանի հարցում ոչ մի փոխգիշման շեր ուղում գնալ:

Այս նույն առնշությամբ 1920 թ. հունիսի 19-ին Զիշերինն Օրջո-նիկիձեին հղեց այսպիսի հեռագիր. «Ղարաբաղը, Զանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Ջուֆան շպետք է միացվեն ոչ Հայաստանին ոչ էլ Աղրբեջանին, այլ պետք է գտնվեն ուստական օկուպացիոն զորքերի տրամադրության ներքո, տեղական խորհուրդների ստեղծման (պայմաններում), քանի որ ուրիշ որևէ վճիռ կխախտի մեր խաղաղության քաղաքականությունը»:<sup>1</sup> Հաջորդ օրը պարզվեց, որ Նարիմանովը գեմ է Զիշերինի տեսակետին: Խորհրդային Աղրբեջանի ղեկավարության ուսղմամուլ քաղաքականությունը դատապարտելու միտումով 1920 թ. հունիսի 22-ին Զիշերինը քաղրյուրոյի անդամներին պաշտոնական գրությամբ հայտնում է, որ Բարզի ընկերներն իրենց գործողություններով ձախողում են կոմպրոմիսը, ժխտում են Հայաստանի հետ կենտկոմի պահնջած համաձայնագրի կնքումը: Զիշերինը այնուհետև հայտնում է, որ աղրբեջանական կողմը պահնջում է իրեն միացնել այն վիճելի տարածքները, որոնք որոշված էին, որ ժամանակավորապես զրադիցնեն կարմիր զորամասեր՝ մինչև հարցի վերջնական լուծումը բանակցությունների միջոցով:<sup>2</sup> Նույն օրը ՌԴ/Բ/Կ քաղրյուրոն ընդունեց որոշում «Կովկասում (վարելիք) քաղաքականության մասին» և Արտօրծողկոմատին հանձնարարեց այդ որոշման հիմքի վրա ստեղծել հրահանգներ կուսակցության Կովկասյան բյուրոյի և Անդրկովկասում գործող մյուս պատասխանատու աշխատողների համար: Զիշերինի գլխավորությամբ շուտով կաղմվեցին այդ հրահանգները, որոնք և քաղրյուրոյի կողմէց հուլիսի 7-ին հաստատվեցին և ուղարկվեցին Անդրկովկաս:<sup>3</sup>

1 Մին ԿԱԱ, գ.2, գ.5, թ.19:

2 ЦПА ИМЛ, ф.ЦК КПСС, общий отдел, У1 сектор, д.44, 3/3—а.л. 18.

3 В. Микаелян, Л. Хуршудян. Некоторые вопросы истории Нагорного Карабаха. «Вестник ОН АН Арм. ССР», 1988, № 4, с. 49—50; С. Харманян. Ленин и становление закавказской федерации, с. 43.

Այդ միջոցները, սակայն, չէին բավարարում Աղրբեջանի ղեկավարությանը։ Հարցին միջամտում է կենինը և 1920 թ. հունիսի 24-ին Զիշերինին անում է հետեւյալ հարցագրումը. «Մի՞թե հնարավոր չէ համերաշխության գալ նարիմանովի հետ»։ Զիշերինը դրան պատասխանում է. «Ղարաբաղը հինավորց հայկական տարածք է»<sup>1</sup>. Ստեղծված կացությունից դուրս գալու համար հունիսի 25-ին Ռուսաստանի Արտգործողկոմը հանձնարարում է Կիրովին հրավիրել և որոշ գործադրությունների Աղրբեջանի և Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչներին և բանակցությունների միջոցով լուծել վիճելի տարածքների հարցը։ Հովհանի 2-ին Կիրովն իր մոտ է կանչում Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Տ. Բեկազարյանին և պրոցում վիճելի տարածքների հարցի շուրջ, բայց էական արդյունքի շի համարում։<sup>2</sup> Հունիսի 29-ին Զիշերինը հարկադրված կենինին վերստին տեղեկացնում է աղրբեջանական կողմի հակահայկական պահանջների մասին։ «Դործերի նոր վիճակն իր արտահայտությունը պետք է գտնի նաև Անդրկովկասի մեր պլաններում, — գրում է Զիշերինը Վ. Լենինին, — և մեզ ստիպի ավելի զգույշ վերաբերվել Օբյոնիկիձեի, Մդիվանու, Նարիմանովի և այլոց հարձակողական պլաններին։ Այդ ընկերները սկզբում ձգտում էին զենքի ուժով խորհրդայնացնել Վրաստանն ու Հայաստանը և խիստ հիասթափվեցին, երբ մեր կենտրոմը այդ մերժեց։ Ռուսաստանի արտգործողկոմը ափելացնում է, որ «Աղրբեջանի կառավարությունը պահանջ է ներկայացրել Ղարաբաղի, Զանգեզուրի և Շարուր — Դարալազյաղի գնավառների նկատմամբ՝ Նախիջևանի, Օրդուրազի և Հովհայի հետ միասին։ Այդ տարածքների մեծ մասը փաստորեն գտնվում է Հայաստանի Հանրապետության ձեռքում։ Ըստ որում, նշում է Գ. Զիշերինը, Նարիմանովը ցանկանում է, որ վերը նշված տարածքները գրավեր ենորհրդային Ռուսաստանը և «որպես ընծա» մատուցեր Աղրբեջանին։ Գ. Զիշերինը դա համարում էր բոլորովին անթույլատրելի։ Հայաստանի տարածքի մի մասի բռնագրավումը և այն Աղրբեջանին հանձնելը, նշում էր արտգործողկոմը

<sup>1</sup> ՄԱԿ ԿԿԸ, ֆ.64, ց.62, գ.14516, թ.2:

<sup>2</sup> «Լենինյան ուղիղով», 14 հունիսի 1967, թ.7, էջ 69—70:

կոմը, կեղծ բնույթ կտար Արևելքում Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականությանը:

Դրանից մի քանի օր հետո՝ Հուլիսի 8-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանին ուղարկած հեռագրում Զիշերինը բացատրել է, որ խորհրդային զորքերի կողմից այն հողամասերի գրավումը, որոնք հարևան ժողովուրդների կովի ընթացքում Հայաստանի և Աղրքեցանի միջև վիճելի բնույթ են ստացել նպատակ ունի դադարեցնել արյունալի կոնֆլիկտները, որոնք կարող են անթիվ աղետալի հետեանքներ ունենալ բոլոր մասնակիցների համար: Նշվում էր նաև, որ այդ քայլը նպատակ ունի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեին Հողային վիճելի հարցերի խաղաղ ու անկողմնակալ քննարկումը:<sup>2</sup>

Տարածքային վիճելի խնդիրները լուծելու հարցում Զիշերինի դիրքորոշումը պաշտպանություն գտավ՝ նաև Կենտկոմի քաղրյուրոյում: 1920 թ. Հուլիսի 7-ին քաղրյուրոն, Լենինի մասնակցությամբ, քննարկելով Կովկասի նկատմամբ վարչելիք քաղաքականությունը, որոշեց՝ Հունիսի 22-ի քաղրյուրոյի ընդունած Հրահանգները հաստատել և ուղարկել Անդրկովկաս: Հրահանգի 8-րդ կետով Կովկասում գործող կոմունիստների պարտականությունն էր համարվում վիճելի տարածքների բնակչությանը բացատրել, որ իրենց մարզերում ուստական զորքը տեղակայվում է ժամանակավոր, ազգամիջյան արյունահղությունները կանխելու համար, և այդ մարզերի պատկանելիության հարցը պիտի լուծի Ռուսաստանի ներկայացուցմի գլխավորությամբ գործող խառը հանձնաժողովը, որն էլ անպայման առաջնորդվելու է մարզերի բնակչության ինքնորոշման կամքով:<sup>3</sup> Քաղրյուրոյի նիստին հաջորդած իրադարձություններին վերաբերող փաստաթղթերից պարզվում է, որ Ռուսաստանի զեկավարության աղդեցիկ շրջաններում չկար միասնական կարծիք քաղրյուրոյի այս տեսակետի վերաբերյալ: Կուսակցական և պետական զեկավար մարմիններում կային շատերը, որոնք հետևողականորեն շարունակում էին աղդեցիվ քաղաքականությունը Հայաստա-

1 ЦПА ИМЛ. ф.ЦК КПСС, общий отдел, VI сектор, д. 44—3/3а, л.36.

2 «Հառաջ», 28 Հուլիսի 1920 թ.:

3 Վ. Միքայելյան, Լ. Խորշույշյան, Աշվ. Հոգված, էջ 49—50:

նի նկատմամբ: Այդպիսիների շարքում թուրք — աղբբեջանամետ իր գործելակերպով ամենից հետևողականը Ստալինն էր: Քաղցրուրոյի նիստից մեկ օր անց՝ Հովհանի 8-ին Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում Ստալինը պարզ ու հստակ ասում էր: «Իմ կարծիքն այն է, որ պետք է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, ավալ դեպքում, իշարկե, Աղբբեջանին՝ Թուրքիայի հետ միասին»:<sup>1</sup> Երևի թե դա էր, որ Զիշերինին ստիպեց Հովհանի 9-ին Օրջոնիկիձեին հեռագրով հաղորդել հետևյալը: «Մեզ բազմիցս հայտարարում էին, որ իր Ղարաբաղն ու Զանգեզուրը մեր ժամանակավոր օկուպացիոն իշխանության տակ թողնելը, դրանք Աղբբեջանին տալու փոխարեն, կխորտակի խորհրդադային իշխանությունը Բաքվում: Հաղորդեցեք պարզ ու կոնկրետ, թե բանն ինչում է: Եթե բանը մահմեդական ազգայնամոլների զավթողական ճգնաժամերը հովանավորելն է, ապա դա զուտ բաղաքանություն է, դրանով մենք կնպաստենք սոսկ ազգայնական բնազգների զարգացմանը, կհավասարվենք մուսավաթականներին և դրանով իսկ կօգնենք նրանց ...»:<sup>2</sup>

Քաղցրուրոյի նիստից շատ շանցած՝ Հովհանի 12-ին Ս. Կիրովը Տ. Բեկադյանին և Աղբբեջանի արտաքին գործերի կոմիսար Հովհայ-Նովին նորից հրավիրում է խորհրդակցության և առաջարկում վիճելի տարածքների հարցը լուծելու համար հրավիրել հայ—աղբբեջանական կոնֆերանս: Միաժամանակ Կիրովը հասկացնել է տալիս, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը դեմ չէ կեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանին միացնելուն, սակայն պայմանով, որ միառժամանակ այդ տարածքներից գուրս բերվեն հայկական ու աղբբեջանական զորքերը և մտցվեն կարմիր բանակի զորամասերը:<sup>3</sup> Բանակցությունները որոշակի արդյունքի շենցանում: 1920 թ. օգոստոսի սկզբներին Ս. Կիրովը հեռագրում է Գ. Զիշերինին, որ բանակցությունների արդյունքները ողբալի են, գործը ոչ մի բայլ առաջ չի շարժվում:<sup>4</sup> Պատճառն այն է, նշում է Կիրովը, որ Ղարաբաղի, Նախիջևանի, Օրդուրագի, Զուլֆայի և Զանգեզուրի գավառների հարցում Աղբբեջանը ոչ մի զիջում չէր անում,

1 ЦГАОРС СССР, ф.130, оп. 4, л.496, л.142.

2 «Нагорный Карабах в 1918—1923», с.528.

3 ՀՀՊՊԿ, ֆ. 65/200, գ.1, գ.769ա, թ.129:

4 С. М. Киров, Статьи, рецензии, документы, м., 1963, с. 231.

այդ տարածքները համարելով իրենը: Այդպիսին է նաև հայերի պահանջը:<sup>1</sup> Ստեղծված բարդ դրությունից գուրս գալու միակ ելքը կիրովը համարում էր Մոսկվայում այդ հարցի վերջնական լուծումը:<sup>2</sup>

Վիճելի տարածքների հարցում այլ կարծիք ունեին Գ. Օրջոնիկիձեն և Բ. Լեզրանը: 1920 թ. հուլիսի 14-ին նրանք Բաքվից Գ. Զիշերինին ուղարկած հեռագրով նպատակահարմար էին համարում հարցի այնպիսի լուծում, որը մասամբ կրավարարեր Ազրբեջանին: Դրան էլ հետևում էր Հայաստանի մի մասի (առանց նրա տիրոջ համաձայնության) նվիրարերությունների ու զոհաբերությունների թվարկումը: Ղարաբաղը ամբողջովին և անվերապահորեն միացվում է Ազրբեջանին, Զանգեզուրը հայտարարվում է վիճելի, մյուսները՝ Նախիջևանը, Շարուր—Դարալազյաղը և Օրդուրաղը մնում են Հայաստանին:<sup>3</sup> Եվ սա այն դեպքում, երբ այդ օրերին Անդրկովկասում բոլշևիկյան կուսակցության և խորհրդային պետության քաղաքականությունը կենսագործող Օրջոնիկիձեի և Լեզրանի կողմից վիճելի համարված Զանգեզուրում 11-րդ կարմիր բանակի զորամասերը, Ազրբեջանի բանակի հետ, պատերազմական զործողություններ էին ծավալել այդ տարածքը զավթելու և Ազրբեջանին միացնելու համար:

Զանգեզուրում առաջ շարժվելու կարմիր բանակի նորանոր փորձերի ձախողումը արագացրեց Հայաստանի կառավարության և Խորհրդային Ռուսաստանի 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրումը: Ինչպես արդեն նշել ենք, Թիկ/թ/կ կենտկոմի քաղըյուրովի հուլիսի 7-ի հայտնի որոշման հիման վրա օգոստոսի 7-ին Թիֆլիսում Բ. Լեզրանը բանակցություններ սկսեց Հայաստանի պատվիրակության հետ (Արշակ Զամալյան և Արտաշես Բարալյան) և կրկին պարզաբանեց Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ուստական զորքերի կողմից ժամանակավորապես գրավելու անհրաժեշտությունն ու նպատակները: Երեք օրվա ըստուն քննարկումներից հետո, օգոստոսի 10-ին Հայաստանի ներկայացուցիչները ստորագրեցին զինագաղաքարի համաձայնագիրը, ըստ որի խոր-

1 С. М. Киров, նշ. աշխ., էջ 231.

2 նույն տեղում:

3 «Нагорный Карабах в 1918—К1923», с. 537.

Հըրդային զորքերը գրավում էին վիճելի տարածքներ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիչևնանը՝ մինչև նրանց պատկանելության հարցի վճռումը։ Համաձայնագրում պարզ ու որոշակի ասված էր, որ խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների գրավումը չի կանխորոշում այդ տարածքների նկատմամբ հայկական կամ ազրեցանական հանրապետության իրավունքի հարցը։ ՌԽՖՍՀ-ը այդ ժամանակավոր գրավումով նկատի ուներ ստեղծել բարենպաստ պայմաններ՝ Հայաստանի և Աղրբեջանի տարածքային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու այն հիմունքներով, որ կմշակվեին առաջիկայում Ռուսաստանի և Հայաստանի միջև նախատեսվող հաշտության պայմանագրում։<sup>1</sup>

Ընդ որում Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիչևնանը խորհրդային զորքերի կողմից գրավելուն անհաջող դիմադրություն էր ցույց տալիս Աղրբեջանի ղեկավարությունը, ամենից առաջ Ն. Նարիմանովը։ Տվյալ համաձայնագրի նկատմամբ Խորհրդային Աղրբեջանի բացահայտ թշնամական վերաբերմունքը լրջորեն անհանգստացնում էր Ռուսաստանի ղեկավարությանը։ Այդ անհանգստությունից դրդված, 1920 թ. օգոստոսի 7-ին Բ. Լեզրանը Գ. Զիշերինին տեղեկացնում էր, որ Նարիմանովը և Աղրբեջանի հրամանատարությունը ձախողում են իր աշխատանքները Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիչևնանը խորհրդային զորքերի կողմից գրավելու ուղղությամբ։ «Որպեսզի մենք այստեղ աշխատենք՝ հույս ունենալով, որ հաջողության կհասնենք, պետք է հավատ լինի, — նշում էր Բ. Լեզրանը, — որ Մոսկվան երկաթե ձեռքերով վերջ կտա Աղրբեջանի պարտիզանականությանը և պայմաններ կստեղծի, որ ռազմական գործողությունների դադարեցման մասին Հայաստանի Հանրապետության հետ կնքվելիք համաձայնագիրը պարտադիր դառնա նաև Աղրբեջանի մեր հրամանատարության համար, որը ներկայումս բոլոր միջոցներով վիճեցնում է մեր աշխատանքները»։<sup>2</sup>

Նկատելի է, որ տվյալ հարցում Նարիմանովին պաշտպանողների թվում էին նաև կարմիր բանակի հրամանատարական կազմի

1 ՀՀՊՊԱ, ֆ.68/200, գ.1, գ.360, թ.46, «Մշակ», 11 օգոստոսի 1920 թ.:

2 «Нагорный Карабах в 1918—1923», с. 571.

## բարձրաստիճան սպաներ:

Պետք է ասել, որ այս համաձայնագիրը, որն իրականում պարտադրվեց Հայաստանի կառավարությանը միայն վավերացրեց արդեն կատարված փաստը: Ինչպես արդեն ցույց ենք տվել, կեռնային Դարաբաղը և Զանգեզուրի գավառը մինչև համաձայնագիր ստորագրելն արդեն օկուպացվել էին խորհրդային զորքերի կողմից: Ինչ վերաբերում է Նախիջևանի շրջանին, ապա նա ևս նույն բախտին էր արժանացել ավելի վաղ՝ 1920 թ. հուլիսի 28-ին: Դեռևս օգոստոսի 1-ին Բարվից 11-րդ կարմիր բանակի հրամանատարը հեռագրում է Հայաստանի կառավարությանը, թե Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում, աղքամիջյան կոիվները կանխելու նպատակով, խորհրդային զորքեր են մտցվել: Բարձրաստիճան սպան առաջարկել է. «Եթե դուք անմիջապես միջոցներ չձեռնարկեք ձեր զորքերի ակտիվ գործողություններին վերջ տալու համար, մենք ստիպված կլինենք ընդունել մեզ վրա ուղղված հարվածը, որին մենք էլ կպատասխանենք կործանող հարվածով»:<sup>1</sup> Խոսելով օգոստոսի 10-ի համաձայնագրի մասին, Հ. Օհանջանյանը նշել է. «Օգոստոսի սկզբներին Խորհրդային նույնատանի և Աղրեջանի միացյալ զորքերը սկսեցին հարձակումներ կատարել մեր հյուսիսային և արևելյան սահմանների վրա: Մի շաբաթ կոիվներից հետո հարկադրված եղանք օգոստոսի 10-ին կնքել զինադադար»:<sup>2</sup>

Այսպիսով, Չիշերինին չհաջողվեց դապել Աղրեջանի զեկավարությանը: Ի վերջո, նրանք տեր դարձան նաև Նախիջևանին ու Շարուր—Դարալաղյաղի մի մասին՝ այս անգամ արդեն Թուրքիայի օգնությամբ: Այդ կապակցությամբ դիպուկ կերպով նշել է Չիշերինը. «Հայաստանից գրեթե ոչինչ շմնաց»:<sup>3</sup>

Բոլոր կողմերից սեղմված ու ճնշված Հայաստանը այդպես էլ չի կարողանում հանել իր նույնիսկ ամենանվազագույն ու համեստ պահանջների իրականացմանը: Իսկ այդ պահանջները ամփոփված են Ա. Սուավյանի 1920 թ. հոկտեմբերի 19-ի գրության մեջ, որ կազմել են «մի խումբ հին կուսակցական ընկերներ» և որը ուղղար-

1 Մի ԿԱ, ֆ.64, ց.2, գ.8, թ.63:

2 «Հառաք», 4 նոյեմբերի 1920 թ.:

3 Р. Казанчян, РСФСР и так называемые «спорные территории», «Коммунист», 23 декабря 1989.

կվել է Լենինին: «Արլուծելով հայ ժողովրդի ծանր կացությունը, հայկական հարցի լուծված շինելու կապակցությամբ Մոռավյանը գրում է. «Խորհրդային Ռուսաստանը պետք է կոտրի Հայաստանը խեղող այդ շղթան: Արևելյան վիլայեթներում իր շափերով գոնե ամենահամեստ տարածքի հատկացումը Հայաստանին՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած կես միլիոնանոց փախրստական զանգվածի տեղաբնակեցման համար: Նրանք արդեն վեց տարի է սպասում են, որ կրացվեն իրենց տանջա՞ր հայրենիքի դռները ...»:<sup>1</sup>

1920 թ. օգոստոսի համաձայնագրի ստորագրումից հետո էլ կարմիրները շարունակում են իրենց մարտական գործողությունները Զանգեզուրում, Ղարաբաղում և Նախիչևնում: Ղարաբաղին վերջնականապես տիրելու համար Աղրբեշանի ղեկավար գործիշները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում՝ խարդախություն, կաշառակերություն, բռնություն, աճարեկում, պրովոկացիա և այլն: Հեղկոմի նախագահ Նարիմանովն իր պաշտոնակիցներին շարունակարար հորդորում էր, թե «Աշխարհում ոչ—որ ի վիճակի չէ խանգարելու, որ մենք նշված մարզերի բնակչության վրա ազդենք, որպեսզի նա արտահայտվի Աղրբեշանին միանալու օգտին»:<sup>2</sup> Այսուհեցից հետևում է, որ Աղրբեշանի ղեկավարն իր ծրագրերի իրականացման ճանապարհին կանգ շահտի առներ ոչ մի միջոցի առաջ: Աղրբեշանի բարձրաստիճան ղեկավարության հանցավոր գործելակերպի մասին վկայող նյութերը շատ են արխիվներում: Ահա դրանցից մի քանիսը: Ղարաբաղում բոլշևիկները զինաթափել են ամբողջ Հայությանը, — կարգում ենք փաստաթղթերից մեկում, — և նրանցից խլված գենքով զինել են տեղական երիտասարդներից կազմված կոմունիստական խմբերին: Գործում են աճարեկման բռնոր միջոցները: Բռնի կերպով զորահավաքի են ենթարկում Հայերին և պարտադրում նրանց մտնել Աղրբեշանի բանակ: Ուժով ստիպում են բնակչությանը ճանաշել Աղրբեշանի իշխանությունը:<sup>3</sup>

1 ՀՀՊՊԿ, ֆ.40/113, ց.1, գ.22, թթ.1—3: Նաև Հ. Ինձիկյան, Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը: Եր., 1995, էջ 91:

2 ՄԼԻ ԿԿԱ, ֆ.64, ց.2, գ.5, թ.80:

3 ՀՀՊՊԿ, ֆ.200, ց.1, գ.427, մաս առաջին, թ.393:

Խիստ պատժամիջոցներ կիրառվեցին հայ զինվորական պաշտոնյաների ու սպաների նկատմամբ։ Այսպես, Ադրբեջանի զինվորական կոմիսար Կարաևի կարգադրությամբ հայ զինվորական պաշտոնյաներին, առանց բացառության, նահանգական կոմիսարիատից անմիջապես տեղափոխեցին զորամասեր։ Ծատ շանցած նրանցից շատերին զանազան ճանապարհներով ձերքակալեցին և տեղափոխեցին Բաքվի բանտերը։<sup>1</sup>

Ադրբեջանի կառավարությունը, ի դեմս Նարիմանովի, կատաղի պայքար ծավալեց Ղարաբաղի շրջանի պետական բոլոր հիմնարկություններում ղեկավար պաշտոններ զբաղեցրած հայերի դեմ։ Ադրբեջանի կրթական գործերի կոմիսար Բունիաթ Զադեն Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին խոստովանել է, որ Ղարաբաղի հեղկոմներում հայկական տարրը գերակշռում է, շրջանի բոլոր պետական հիմնարկություններում ղեկավար գերը հայերի ձեռքին է։ Նա դա բացատրում է դաշնակցության նոր գործելակերպով՝ Խորհրդային Ադրբեջանի պետական հիմնարկները հեղեղել իրենց մարդկանցով, աշխատել խորհրդային իշխանությունը վարկարեկել ժողովրդի աշքերում։ Ադրբեջանի խորհրդային իշխանության պարտականությունն է, շարունակում է Ադրբեջանի կոմիսարը, շարիքը կանխելու համար ձեռնարկել համապատասխան միջոցներ։<sup>2</sup>

Կուսակցական, խորհրդային և տնտեսական մարմիններում ղեկավար հայ պաշտոնյաների փոխարեն առաջ էին քաշվում ադրբեջանցիներ։

Ղարաբաղի հեղկոմի նախագահ՝ Ասադ Կարաևը խորհուրդ էր տալիս հայության դեմ ուղղված բռնություններին ու հալածանքներին զուգընթաց, որպես պայքարի միջոց, գործի զնել նաև կաշառքը։ Հանրահայտ է նույն նախագահի նամակը, որը նա 1920 թ. հուլիսի 19-ին Շուշիից ուղարկել է Զանգեզուրի հեղկոմին։ Ասադ Կարաևը հույժ գաղտնի նամակով Զանգեզուրի հեղկոմի իր գործընկերներին խորհուրդ է տալիս դասեր քաղել անցյալի փորձից։

1 ՀՀՊՊԿ, ֆ.278, գ.1, գ.30, թթ.47—48։

2 Նույն արխիվ, ֆ.200, գ.1, գ.4, թ.58։

«Խորապես սխալ է եղել ձեր հին՝ այն է Ղարաբաղն ու Զանգեզուրը զորքերով գրավելու քաղաքականությունը։ Այսօր զորքերի փոխարեն մեր փողը հրաշքներ է զործում։ Եվ նա հորդորում էր՝ շափոսնալ ոչ մի զումար։ Ապա տեղեկացնում էր, որ կառավարությունը Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու համար հատկացրել է 200 մլն. ռուբլի և նշում, թե ինչպես պետք է այն օգտագործել։<sup>1</sup>

Երկու օր անց Կարանը նույն հասցեով ուղարկած նամակում դժոնությունն էր հայտնում, որ Զանգեզուրի հայությունը դեռևս չի զլիսատվել։ Այնուհետև խորհուրդ էր տալիս մարտիկներով հարուստոց վայրերում հայերին թուլացնելու նպատակով, սպանել մի ուստի զինվորի և զրանում մեղադրել հայերին։<sup>2</sup>

Հետագա իրադարձությունները Ղարաբաղի համար դասավորվեցին էլ ավելի աննպաստ։ 1920 թ. սեպտեմբերին թուրքերը սկսեցին իրենց հարձակումը Հայաստանի վրա։ Խորհրդային Ռուսաստանը հանդիս եկավ միջնորդի գերում։ 1920 թ. հոկտեմբերի 14-ին թ. Լեգրանը բանակցություններ է վարում Հայաստանի կառավարության հետ, որպես միջնորդ, կանխելու թուրքական արշավանքը։<sup>3</sup> Բանակցությունները սկսվեցին, սակայն թուրքական հարձակումը շգագարեց։

Հայաստանի Հանրապետությունը քեմալականների հարձակումը հետ մզելու ուժ չունեցավ։ Թուրքերը գրավեցին զգալի տարածքներ, իսկ թիկունքից Խորհրդային Ռուսաստանի զորքերն էին զավթողական ոտնձգություններ անում։

Ինչ վերաբերում է դաշնակից Անդրիային և մյուս երկրներին, ապա նրանք երես թերեցին Հայաստանից, նրան թողնելով միայնակ ու անօգնական։ Ավետիս Ահարոնյանը՝ Փարիզում գտնվող Հանրապետության պատվիրակության ղեկավարը, դիվանագիտական ուղիներով քննություն էր կատարել և պարզել, որ «Անդրիայի կառավարությունը հույսը կորցրել է, թե կովկասյան ժողովուրդները

1 «Нагорный Карабах в 1918—1923», т. 541—542.

2 Նույն տեղում, էջ 544։

3 ՀՀՊՊԿԱ, ֆ.200, գ.1, գ.317, թ.124։

և մասնավորապես Հայերը բոլշևիկների գեմ կզնան և այս պատճառով անօգուտ է Համարում մեղ զենք տալը: ... Ուստի, մեղ զենք մերժելով՝ աշխատում են մեղ ձնշել և ետ քաշել<sup>2</sup>:

Օրհասական այս պահին՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամովին իշխանությունը հանձնեց բոլշևիկներին: Մինչև այդ Ադրբեյջանից իշխան մտած Հայհեղկոմը, բնակչության հիմնական զանգվածների ցանկությանը հակառակ, 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակեց իսրհրդային:

### 3. Լեռնային Ղարաբաղի բոնակցումը Խորհրդային Ադրբեջանին

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Լեռնային Ղարաբաղի հարցը մտավ նոր փուլ: Շահագրգիռ կողմերի շարքում կատարվեց նոր դասավորություն: Հայաստանի Հանրապետությանը փոխարինեց Խորհրդային Հայաստանը: Վերջինիս նկատմամբ փոխվեց Ռուսաստանի, ինչպես նաև Ադրբեջանի վերաբերմունքը: Ավելի ճիշտ, փոխվեց Հայաստանի դեմ Ադրբեջանի պայքարի մեթոդը: Նրա դեկավարությունը Հայաստանի և հայ ժողովդի հանդեպ ունեցած իր հակակրանքն ու ատելությունը թաքցնում էր «ինտերնացիոնալիզմի» քողի տակ:

Երբ Բարգում ստացվեցին Հայաստանի հեղկոմի հեռագրերը՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու մասին, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բաղրյուրոյի և կազմբյուրոյի նոյեմբերի 30-ի համատեղ նիստը Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովին հանձնարարեց հեղկոմի անունից հոչակագիր ուղարկել Հայաստանի հեղկոմին: Նույն օրը Հայաստանում ստացվեց հետևյալ հեռագիրը. «Ադրբեջանի բանվոր—գյուղացիական կառավարությունը, ստանալով ապստամբած գյուղացիների անունից (հզված) Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության հոչակման մասին, ողջունում է եղայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից վերացված են հայտարարվում սահմանային վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի սոցիալիստական հանրապետության մասերը»:<sup>1</sup>

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը նվիրված Բարգի խորհրդի գեկտամբերի 1-ի հանդիսավոր նիստում հրապարակվեց Ադրբեջանի հեղկոմի հոչակագիրը, նախորդ օրվա հեռագրի էական փոփոխությամբ, որը վերաբերում է Լեռնային Ղարաբաղին: Ի տարրերություն նշված հեռագրի, այժմ լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում էր ինքնորոշման լիակատար

1. «Коммунист», 2 декабря 1920, «Бакинский рабочий», 3 декабря 1920.

## իրավունք:<sup>1</sup>

Այսպիսով, 1920 թ. նոյեմբերի վերջին ու գեկտեմբերի սկզբին Կորհրդային Ադրբեջանի կառավարությունը կամովին հրաժարվում էր մինչ այդ վիճելի ճանաշված կեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ ունեցած հավակնություններից, հօգուտ Կորհրդային Հայաստանի, միաժամանակ, ըստ հոչակագրի, կեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցը կապվում էր հանրաքվեի հետ: Ադրբեջանի պատմաբաններն ու պաշտոնական շրջանները, անդրադառնալով հոչակագրի բովանդակությանը, աղաղակում են, թե թյուրիմացություն կամ կեղծարարություն է հոչակարգի մեջ կեռնային Ղարաբաղը Հայաստանին տալու վերաբերյալ տեղեկություն տեսնել: Իսկ իրականում, ասում են նրանք, կեռնային Ղարաբաղի աշխատավորությանը տրվել է միայն «ինքնորոշման լիակատար իրավունք»:<sup>2</sup>

Ադրբեջանական կեղծարարությունը մերկացվել է հայ պատմաբանների կողմից:<sup>3</sup>

Այժմ լուսաբաններ այն հարցը, թե իրականում ինչ էր կատարվել: Կեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալը, ինչպես ասվում էր Ադրբեջանի հեղկոմի հոչակագրում, համազոր էր Հայաստանի հետ միավորելուն: Բանն այն է, որ կեռնային Ղարաբաղի բնակչության 95 %-ից ավելին հայեր էին: Հետեաբար, ոչ մի կասկած չկար, որ երկրամասի բնակչությունն ազատ ինքնորոշման դեպքում հանդես կդար Հայաստանի հետ վերամիավորվելու օգտին: Այլ կերպ ասած, Ղարաբաղի հարցում, ըստ էության, ոչ մի տարբերություն չկար նոյեմբերի 30-ի հեղկոմի որոշման և դեկտեմբերի 1-ի հոչակագրի միջև: Բնավ պատահական չէր, որ գեկտեմբերի 1-ին Օրջոնիկիձեն հենց այդպես հեռազրեց Մոսկվա՝ կենդինին և

1 «Коммунист», 2 декабря 1920, «Бакинский рабочий», 3 декабря 1920.

2 Т. Кочарли, Необходимое уточнение, «Бакинский рабочий», 1 июня 1989; Д. Гулиев. Следовать истине, а не амбициям, «Бакинский рабочий», 12 июня 1989; Его же, С позиций интернационализации. «Бак. раб.», 14 июля 1988.

3 Լ. Խուրշուզյան, Պատմագիտության միակ շափակիցը ճշմարտությունն է, «Երեկոյան Երեան», 22 օգոստոսի 1989 թ., 24 օգոստոսի 1989 թ.:

Հ. Միմոնյան, Մի մոռացեր, փաստերը. «Կորհրդային Հայաստան», 24 օգոստոսի 1989 թ., 25 օգոստոսի 1989 թ.:

Ստալինին. «Երեկ Աղբյեցանը հոշակեց Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու օգտին»:<sup>1</sup> Հոշակագրի բովանդակությունից այդպիսի պատկերացում է ստացել նաև Ստալինը և նույն իմաստով էլ նա փաստը ներկայացրել է դեկտեմբերի 4-ին «Պրավդա» թերթում հրապարակած հոդվածում, «Խորհրդային Աղբյեցանը հրաժարվում է վիճելի տարածքներից և հայտարարում է Զանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին»:<sup>2</sup>

Բնականարար, հարց է առաջանում, թե իսկապես ի՞նչ պատահեց, որ հոշակագրում աղդարարվեց Նախիջևանը և Զանգեզուրը անառարկելիորեն Խորհրդային Հայաստանի մասերն են, իսկ Լեռնային Ղարաբաղի գեպքում՝ գավառի աշխատավոր գյուղացիությանը տրվում էր ինքնորոշման լիակատար իրավունք: Քատ երեսութին, դա թելադրված է եղել մի շաբթ հանգամանքներով.

ա) «Նարիմանովը՝ կատարելով այս փոփոխությունը, — գրում է Լ. Խորշոյանը, — իր համար կովան էր ստեղծում հեղկոմի նոյնմերի 30-ի որոշումից հետագայում հրաժարվելու համար»:<sup>3</sup>

բ) «Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման խնդիրն առաջ էր քաշվում Աղբյեցանի հակախորհրդային ուժերին քաղաքականապես և քարոյապես զինաթափելու համար»,<sup>4</sup> — նշում է Հ. Միմոնյանը:

գ) «Իսկ հանդիսավոր նիստից հետո Նարիմանովն իրեն ազատ է զգացել Հոշակագիրը հրապարակելիս զոնե Լեռնային Ղարաբաղի համար ձեակերպել մի տարրերակ, որն իր կարծիքով հետագայում կարելի կլիներ շուռումուն տալ և շրջանցել: Այսողից էլ իր իսկ ուղղումը, թե «Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ ինքնորոշման իրավունք»,<sup>5</sup> — եղրակացնում է Բ. Ռզուրարյանը:

դ) Ղարաբաղը Աղբյեցանի կազմում տեսնելու նրա բնակչության ամենատարբեր խավերի աղգայնամոլ կրքերը մարելու նպատակադրությունից:

1. Г. К. Орджоникидзе, նշվ. աշխ., էջ 142.

2. «Правда», 4 декабря 1920.

3. Լ. Խորշոյան, «Պատմագիտության միակ շափանիշը ճշմարտությունն է», «Խորհրդային Ղարաբաղ», 19 սեպտեմբերի 1989 թ.:

4. Հ. Միմոնյան Մի մոռացեր փառակը, «Խորհրդային Հայաստան», 23 օգոստոսի 1989 թ.:

5. Բ. Ռզուրարյան, նշվ. աշխ., էջ 127.

ե) Հուշակագրում լեռնային Ղարաբաղին վերաբերվող մասը նարիմանովի համար սոսկ միջոց էր մոլորեցնելու հասարակական կարծիքը, ժամանակ շահել, մինչև որ կդատներ հերթական խաղաղութուղթը: Վերոհիշյալ բոլոր տեսակետներն էլ անխտիր ընդունելի են, որովհետեւ անկախ այն բանից, թե ինչ նպատակներ է հետապնդել Ազգութեանի ղեկավարը, երբ դեկտեմբերի 1-ի հուշակագիր—ղեկավացիայում կատարել է այդ փոփոխությունը, ամեն դեպքում դրանից հարցի էությունը չի փոխվում: Հետագա իրադարձությունները զարգացան այնպես, որ Հայաստանը կանգնեց ներքին և արտաքին ծանր կացության առաջ: Հայաստանի նորաստեղծ խորհրդագյին իշխանությունը հնարավորություն չունեցավ կյանքի կողել Ազգութեանի հեղկոմի հուշակագրով Հայաստանի անբաժան մասը հայտարարված տարածքները Հայաստանի հետ վերամիավորելը:

Հուշակագրի հրապարակումից շատ շանցած Ազգութեանի կառավարությունը, ամենից առաջ նրա ղեկավար Նարիմանովը, համագործակցելով հայ ժողովրդի ոխերիմ թշնամի քեմալականների հետ, հիշյալ հուշակագրի Ազգությունը հակառակ՝ ամեն միջոց գործադրեցին պատերազմից արյունաքամ եղած Հայաստանին բակտերու, նրանից ավելի մեծ տարածքներ բռնապավիթելու համար: Դա ցցուն կերպով երևաց Մոսկվայում խորհրդա—թուրքական պայմանագրի կնքման ժամանակ: Չնայած շահավետ համաձայնագրի նախագծին, որ մշակվել էր 1920 թ. հունիս—օգոստոս ամիսներին Մոսկվայում կայացած խորհրդա—թուրքական առաջին կոնֆերանսում, բայց և այնպես, քեմալականները այդ նախագիծը շստորագրեցին մինչև 1921 թ. մարտի 16-ը: Այդ ամենի պատճառը Անդրկովկասի նկատմամբ քեմալականների զավթողական ծրագրերն էին: Զէ որ նրանք ծրագրել էին զավթել Հայաստանը և սոսկ բարենքը պաստ պահի էին սպասում: Իսկ նարիմանովի երկու նամակները լենինին՝ գրված խորհրդաժողովի նախօրյակին, անվերապահորեն պաշտպանում էին քեմալականների դիրքերը: Առաջին նամակի վրա (այն պետք է, որ գրված լինի 1921 թ. փետրվարի 16-ին) կա լենինի 1921 թ. փետրվարի 19-ի մակադրությունը: Այնտեղ նարիմանովը հիմնականում բարբաջել է այն մասին, որ թուրքերին սիրա-

շահելու համար հարկավոր է հայկական հարցում նրանց բոլոր պահանջները բավարարել, քանի որ թուրքերի համար հայկական հարցը կյանքի և մահվան հարց է: «Եթե այս հարցում մենք զիշենք, զանգվածները շեն դա մեր հետեմց, մենք կկորցնենք Թուրքիայի բարեկամությունը և նա հուսահատված կարող է նետվել Անգլիայի զիրկը»,<sup>1</sup> — կենինին հորդորել է Նարիմանովը: Այնուհետեւ սպառնացել է՝ «Ես պետք է զգուշացնեմ Ձեզ, որ, ընկ. Զիշերինը շփոթում է Արևելյան հարցը. նա շափից ավելի է հրապուրվում Հայկական հարցով և հաշվի շի առնում այն ամենը, ինչը կարող է խզում առաջացնել անգորացիների հետ Հայկական հարցի պատճառով: Ես կարականապես հայտարարում եմ՝ Կովկասում ստեղծված դրության մեջ, եթե կամենում ենք մեր ձեռքում պահպանել Ադրբեջանը, մենք պետք է ամուր դաշինք կնքենք անգորացիների հետ՝ ինչ դնով ուղղում է լինի: Կրկնում եմ. այդ դաշինքը մեզ կտա ամբողջ մուսումանական Արևելքը»:<sup>2</sup>

Նախքան երկրորդ նամակին անդրադառնալը, ըստ անհրաժեշտության, նպատակահարմար ենք համարում մի քանի խոսք ասել այն մասին, թե ինչու<sup>3</sup> Ռուսաստանի արտօրոքժողկոմ Զիշերինը դարձել էր Ադրբեջանի թիվ մեկ կոմունիստի աշքի փուշը: Մեր համոզմամբ Նարիմանովը փորձել է Մոսկվայի խորհրդա-թուրքական առաջիկա կոնֆերանսի նախօրյակին Ռուսաստանի ազգեցիկ պետական գործիչների, մասնավորապես կենինի մոտ, վարկարեկել, հեղինակագրեկել, նսեմացնել Զիշերինին, դրանով իսկ կոնֆերանսում նրան զրկել բացառիկ ազդեցիկ դիրքից: Նարիմանովը քաջատեղյակ էր, որ Զիշերինը անշահախնդիր ջանադրությամբ ձգտում էր միջադային ատյաններում պաշտպան կանգնել Հայկական կողմի ոտնահարված ազգային ու տարածքային իրավունքներին: Այս խնդրում Զիշերինը առանձնակի հետևողականություն է հանդես բերել Մոսկվայի բանակցություններում: Այդ մասին ուղղակի խոստովանություններ կան Հայաստանի և Ղարաբաղի խնդրի հետ կապված շատ վավերագրերում: Վկայակոչենք այն օրերի Թուրքիայի պետական քաղաքականությունը կերտողներից երկու մարդու կար-

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 164—167.

2 նույն տեղում:

ծիք: Խորհրդա—թուրքական առաջին բանակցություններին (1920 թ. Հուլիս—օգոստոս) մասնակցած թուրք պատվիրակներից Յուսուփ Քեմալ Թէնդիրշէքը զրել է. «Մոսկվայում մեզ դիմավորեցին ոչ սիրալիր: Արտաքին գործերի նախարար Զիշերինը մեզ երես չեր տալիս: Մի անգամ Զիշերինը մեզ կանչեց իր մոտ և հարցրեց. «Թէրթերում հրապարակվել է պայմանագրի նախադիր, Դուք այն տեսել եք: Մենք այն չեինք տեսել: Հետագայում մեզ համար պարզվեց, որ սուսներն այդ պայմանագրով ձգուում էին մեր և իրենց միջև կապեր հաստատել Հայաստանի կառավարության միջոցով: Խոկ Մոսկվա կատարած մեր այցելության նպատակն էլ հենց այն էր, որ խոսափեինք Հարցի նման լուծումից: Եվ մենք Զիշերինին առաջարկեցինք ուղղել այն: Զիշերինը մերժեց այդ պահանջը»:<sup>1</sup> Զիշերինին «Հայամետության» մեջ մեզագրել է նաև թուրքական երկրորդ պատվիրակության անդամ, Մոսկվայում Թուրքիայի գնուպան Ալի Ֆուադ փաշան: Վերջինս գժողովել է Ռուսաստանի արտգործքողկումից այն բանի համար, որ նա պահանջել է Հայերին տարածք հատկացնել Վանի և Բիթլիսի վիլայեթներում, ապա թուրքերին օգնություն ցույց տալը պայմանավորել է Հայաստանին տրամադրվող տարածքներում Հայերի բնակեցման իրականացումով»:<sup>2</sup>

Վերադառնանք Նարիմանովի երկրորդ նամակին: Նամակը զրվել է փետրվարի 21-ին: Նրանում հիմնականում խոսք է գնում Հայաստանում փետրվարյան հեղւփոխության հետևանքով խորհրդային իշխանության տապալման մասին: Օգտագործելով՝ այդ հանդամանքը, Ադրբեյջանի ղեկավարը առաջարկել է Լենինին, որ Հայկական Հարցը թուրքական պատվիրակության հետ տեղի ունեցող բանակցություններում այլևս գեր չպիտի խաղա: <sup>3</sup> Այս բոլորը հիմք են տալիս կարծելու, որ Հիշյալ նամակները զրվել են քեմալականների ցուցումով:

Այն օրերին Հակաճայկական կրքեր բորբքող հրապարակում-ներով աշխի բնկավ Խոսաւստանի աղջությունների գործերի ժողկո-

1 «Հրաբեր ՀՍԽՀ հասարակական գիտությունների», 1988, թիվ 6, էջ 10:

2 Նույն աղջում, էջ 11:

3. «Нагорный Карабах в 1918—1923», с. 614—617.

մատի «Ժիզն նացիոնալնոստել» թերթը: Հիշյալ ժողկոմատի աշխատակից Ա. Սկաշկոն, ձայնակցելով Խորհրդային Ռուսաստանի թուրքամետ ուժերին, Մոսկվայի պայմանագրի ստորագրման նախօրյակին այդ հարցին նվիրված տպագրեց «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» վերտառությամբ հակառայկան ուղղվածություն ունեցող հոգվածը: Մեծ ու փոքր բոլոր ազգերի իրավահավասարության իրավունքների պաշտպանությանը կոչված գերատեսչության աշխատակիցը, առանց վարանիլու, բացեիրաց հրեշտավոր հայտարարություններ էր անում, թե Հայաստանը պետք է զեկավարվի համուն համաշխարհային հեղափոխության «ազգային գոհարերությունների մասին լենինյան սկզբունքով», թե վազ թե ուշ նա ստիպված է լինելու համաշխարհային հեղափոխությանը գոհարերել իր նախկին տարածքները և այնտեղ մնացած իր ժողովրդին:<sup>1</sup> Հոդվածագիրը, անշուշտ, արտահայտում էր հայ—թուրքական առնչությունների վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի բարձրաստիճան զեկավարության գերակշիռ մասի պաշտոնական տեսակետը: Դրանում ավելի ենք համոզվում, երբ առնշվում ենք այդ գերատեսչության զեկավար Ստալինի հայտուց վերաբերմունքին: 1921 թ. փետրվարի 12-ին Ստալինը նամակով դիմել է Լենինին. «Էնկ. Լենին. Ես միայն երեկ իմացա, որ Զիլերինը իրոք ինչ որ ժամանակ թուրքերին է ուղարկել մի հիմար (և պրովակացիոն) պահանջ՝ Վանը, Մուշը և Բիթլիսը (թուրքական գավառներ՝ թուրքերի հսկայական գերակռությամբ) մաքրելու մասին՝ հօգուտ Հայաստանի»: Այդ հայկական—իմապերիալիստական պահանջը շի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով թուրքերին նոտաներ ուղարկելը:<sup>2</sup> Այս նամակը Ստալինը գրել է Օրջոնիկիձեից տեղեկություն ստանալուց անմիջապես հետո: Արտահայտելով աղբբեջանցի քեմալական—կոմունիստների շահերն ու տրամադրությունները Ան-

1 А. Скачко, Армения и Турция на предстоящей конференции. «Жизнь национальностей», 4 марта 1921.

2 ՀՀՀՔԿԱ, ֆ.1022, ց.4, գ.5214, թ.2: Հմմա. Հ. Սիմոնյան, Ազգերգության պահին, «Գարուն», 1981, թիվ 4, էջ 48:

ղըրկովկասի ամենաազգեցիկ ու հեղինակավոր կռմունիստներից մեկը՝ Գ. Օքոնիկիձեն փետրվարի 9-ին հեռագիր է ուղարկել Լենինին (պատճենները՝ Զիշերինին, Տրոցկուն, Ստալինին) և խորհրդանշական բացատրություն տվել, որ խորհրդային պետության շահերի օգտին է բարեկամություն պահպանել թուրքերի հետ, ամեն տեսակի զիջումների գնով, քանի որ Մուշը, Վանը և Բիթլիսը Հայաստանին տալու մասին Զիշերինի պահանջը կարող է Մուստաֆա Քեմալին ստիպել «Անտանտի հետ մերձեցման ուղիներ որոնելու»:<sup>1</sup>

Ստալինի ու Նարիմանովի, ինչպես նաև Օքոնիկիձեի դավադիր եռյակի ճնշման տակ Զիշերինը նահանջեց Հայկական Հարցում իր նախկին տեսակետից և ինչպես վկայում է Մոսկվայում Թուրքիացի դեսպանը, նա այլևս նախկին Զիշերինը շեր: Զիշերինը դարձել էր զիջող Ստալինի միջամտության շնորհված:<sup>2</sup> Վերոհիշյալ դիրքորոշումներից շի կարելի չեղուակացնել, որ Մոսկվայի բանակցությունների նախօրյակին ստեղծվել էր Հակահայկական ամուր թուրքական ճակատ, որն էլ վողօրոք կանխորոշեց սոացիկա բանակցությունների ելքը՝ ի վնաս Հայաստանի ու Հայ ժողովրդի:

Այսպիսի իրադրության պայմաններում 1921 թ. փետրվարի 26-ին բացվեց Մոսկվայի կոնֆերանսը, որի գլխավոր հարցերից մեկը Խորհրդային Հայաստանի սահմանների, նրա տարածքների հարցն էր: Որքան էլ տարօրինակ ու զարմանալի է, Հայաստանի ներկայացուցիչներին շրջայացրեցին մասնակցել կոնֆերանսի աշխատանքներին: Այդ ի՛շպե՞ս էր, որ ոռու—թուրքական պայմանագրի այդպիսի հարց էր լուծվում՝ սուանց Հայկական կողմի մասնակցության: Կարելի է մոտածել, թե Թուրքիայի համար շահեկան որոշումներ ընդունելու հեռանկարն է եղել պատճառը, որ այդպես վարվեցին Հայ պատվիրակների հետ: Մենք Հակված շենք կարծելու, թե Հայաստանի մասնակցությունը կարող էր ազգել բանակցությունների ընթացքի վերջնական արդյունքի վրա, որովհետև ինչպես խոստովանել է Զիշերինը Ալ. Բեկզադյանին, կոնֆերանսի ավարտից հետո, սկզբունքային հարցերի վերաբերյալ որոշումներն

1 Նույն տեղում:

2 «Հայոց պատմություն» (նյութերի ժողովածու): Եր., 1933, էջ 202.

բնդումվել էին ոչ թե բանակցթյունների միջոցով, այլ մինչ այդ  
ՌԴ/թ/կ Կենտկոմի և նրա քաղցրուրոյի կողմից:<sup>1</sup> Ինչ վերաբերում է  
տվյալ ժամանակամիջոցում Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշ-  
մանը Արևելքի հարցում, ապա դա պարզից էլ պարզ էր: Թուշելի  
զեկավարները տարված էին համաշխարհային հեղափոխության  
մոտալուս հաղթանակի ոչ իրական ակնկալությամբ, և հայ ժողո-  
վորդի ազգային շահերը զբհարերվում էին Արևելքում հեղափոխու-  
թյունը տարածելու անիրականանալի հույսերին և այդ հեղափոխու-  
թյան զիսավոր օջախ Թուրքիայի նվաճողական խնդիրներին: Այո,  
ճիշտ այդպես: Թուշելիկյան Ռուսաստանի զեկավարությունը, մաս-  
նավորապես Ստալինը, որն ի պաշտոնն է գտնվում էր քաղաքակա-  
նության կենտրոնացման ղեկի մոտ (Վ. Լենինից հետո), համարում  
էր, որ Թուրքերն արդեն հայերի ապագայի վրա խաչ են քաշել և  
այլևս հայկական հարց չկա: Երբ Մոսկվայի կոնֆերանսի նախօր-  
յակին Ստալինը առիթունեցավ տեսակցելու թուրքական պատվի-  
րակների հետ, իր համոզությունների նվիրական արգասիքները պար-  
զեց նրանց: Երբ Թուրքական կողմը անհանգստացել էր՝ լինի, թե  
հայկական հարցը օրակարգ մտցվի, Ստալինը նրանց հանգստա-  
ցրել էր. «Դուք հայկական հարցը լուծել եք ինքնուրույն: Եթե դեռևս  
մնացել են լուծված հարցեր՝ վճռեք մինչև վերջ»:<sup>2</sup> Հետեւարար, Ռու-  
սաստանի բարձրաստիճան ղեկավարությունը կաշվից դուրս եկավ  
ձեռք բերելու Թուրքիայի համակրանքը, որպեսզի վերջինս շմերձե-  
նար Անգլիային, որի հետ այդ նույն օրերին կոնդոնում տարվում  
էին բանակցություններ: Ռուս—Թուրքական կոնֆերանսը ավարտ-  
վեց 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված «Բարեկա-  
մության և հեղայրության մասին» պայմանագրով: Իրավական  
հիմքերից զուրկ, տիրահոշակ այդ պայմանագրով Թուրքիային են  
անցնում Կարսի նահանգը, Արդահանը, Սուրմալուի գավառը, որը  
երբեք թուրքերին չի պատկանել: Պայմանագրի 3-րդ հոդվածով  
Նախիջևանի մարզը անջատվեց Հայաստանից, մտցվեց «Ազրբեջա-  
նի խնամակալության տակ, պայմանով, որ Ազրբեջանը սույն խնա-

1 Նույն տեղում, էջ 203:

2 «Էրարեթ Հայաստանի 9Ա հասարակական դիտությունների», 1988, թ.6, էջ 12:

մակալությունը շպիցի մի Յ-րդ պետության»<sup>1</sup> (այսինքն՝ Հայաստանին):

Մոռկվայի 1921 թ. մարտի 16-ի ու այժմանակի արդյունքներից թուրքիան և Խորհրդային Ազգբեջանը լիուլի բավարարված էին: Հայաստանի տարածքների հսկայական մասը թուրքիայի կողմից ուժով բռնազավթելու, ինչպես նաև Ազգբեջանի կողմից Շարուրին ու Նախիջևանին տիրելու շնորհիվ թուրքիայի սահմանը ընդհուպ մոտեցավ Ազգբեջանին: Դրանով թուրքիայի հետ ընդհանուր սահման ունենալու գաղնումը էր ավելի իրական:

Անդրադառնալով այդ պայմանագրին՝ Ժ. Կայզերը նշում է, որ խորհրդա-թուրքական բանակցությունները շափազանց արդյունավետ եղան վերջինիս համար: Թուրքիան ավելին ստացավ, քան տվեց խորհուրդներին:<sup>2</sup>

Հայաստանից զավթած տարածքների դիմաց թուրքիային և Ազգբեջանին անհրաժեշտ էր մեղմել հայ ժողովրդի և նրա ղեկավարության զայրույթը: Ազգբեջանի ղեկավարությունը, ի գեմս Նարիմանովի, անկասկած քեմալականների թելադրանքով, դիմեց նոր քայլի, այն է՝ հայ ժողովրդին կեղծ խոստումներ տալու միջոցով շեղել նրա ուշադրությունը կորուսյալ հոգերից:

Բոլշևիկյան Ազգբեջանն իր նպատակին հասնելու համար որոշեց վերստին «օգտագործել» Արցախի ցավոտ հարցը, այն դարձնելով դիվանագիտական խաղաքարտ: Եվ այսպիս, դարաբաղյան հարցը, որ արդեն լուծվել ու հռչակվել էր ի լուր աշխարհի, վերստին դիվանագիտական զոհասնդան հանդից և քննության դրվեց ՌԿ/ՐԿ Կիևտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի նիստում: Նիստը, որին մասնակցում էին Օրջոնիկիձեն, Մախարաձեն, Նարիմանովը, Մյասնիկյանը, Ֆիզատները և ուրիշներ, միաձայն որոշում է. «... Հայաստանի կառավարության հոչակագործ նշել, որ կեռնալին Ղարաբաղը պատկանում է Հայաստանին»:<sup>3</sup>

Կավրյուրոյի որոշումը, որի իրավական փաստաթուղթ լինելը իր

1 «Документы внешней политики СССР», т.3, М., 1959, с. 599.

2 Ж. Кайзер. Европа и новая Турция. с.52.

3 «Нагорный Карабах в 1918—1923», с. 633.

ՄԱ ԿԿԱ, ֆ.64, գ.1, դ.1, թ.77:

սառրագրությամբ հաստատել է նաև Նարիմանովը, հիմնովին ի շիք  
է դարձնում 1920 թ. դեկտեմբերի 2-ի հոչակագրում առաջ քաշված  
տեսակետը՝ Արցախում հանրաքվե անցկացնելու մասին։ Հունիսի  
3-ի նիստում Նարիմանովը քվեարկել է ընդունված որոշման օգտին։  
Ինչո՞վ բացատրել Նարիմանովի կողմից իր իսկ հոչակած որոշման  
գրժումը։ Համարել դա Անդրկովկասի մուսուլման բոլշեվիկների զե-  
կավարի կողմից ժողովուրդների իսկական եղբայրության կամքի  
արտահայտության դրսերում, Անդրկովկասում ժագած տարած-  
քային բարդ հարցերը ճշմարիտ, ինտերնացիոնալիստական սկզբ-  
րունքներից լուծելու միտում, որպեսզի համայն աշխարհի աշխա-  
տավորությանը համոզեր, որ միայն խորհրդային իշխանությունն է ընդունակ լուծելու ազգամիջյան թշնամանքի հետ կապված բոլոր  
տեսակի հարցերը, թե մի քանի ամիս առաջ իր տարածքների գգալի  
մասը կորցրած (անդամահատողներից մեկն էլ իրենք են եղել) «եղբայրական» հանրապետությանը «ապաքինելու» անշահախնդիր  
ձգտում։ Մեր կարծիքով, ո՞չ մեկը և ո՞չ էլ մյուսը։ Գլխավոր պատ-  
ճառը քաղաքական այն իրավիճակն էր, որ տվյալ սլահին ստեղծ-  
ված էր Հայաստանի շուրջը։

Մուկվայի անարդարացի պայմանագիրը ժամանակին մեծ աղ-  
մուկ հանեց Հայաստանում և նրա սահմաններից գուրս։ Հարկավոր  
էր մեղմել շահագրգիռ կողմերի բորբոքված կրքերը, նրանց մոլո-  
րության մեջ ցցել։ Ահա թե ինչու Կավբյուրոյի հունիսի 3-ի նիս-  
տում «Լարախաղաց» Նարիմանովը առանց որևէ պայմանի, քվեար-  
կեց ընդունված որոշման օգտին։ Վաղվա աղրբեջանական ընդդի-  
մախոսին մեզ ճիշտ շնասկանալու և սիսալ դատողությունից զերծ  
պահելու համար ասենք, որ Նարիմանովը հարկագրաբար, թե կա-  
մովին է տվել իր համաձայնությունը, որևէ նշանակություն չունի։  
Կատարելով Կովկասյան բյուրոյի որոշումը, Հայաստանի կառա-  
վարությունը հունիսի 12-ին ընդունեց հետևյալ որոշումը։ Ազրբե-  
ջանի հեղեղութի դեկլարացիայի և Հայաստանի ու Ազրբեջանի հան-  
րապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնու-  
թյան հիման վրա հայտարարվում է, որ կեռնալին Ղարաբաղը այ-  
ժքմանից կազմում է Խորհրդային Հայաստանի անբաժան մասը։

Որոշման տեքստը Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրատարակվում է երեք լեզուներով՝ Հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն։<sup>1</sup> Ըստ երեսութին, վաղօրոք այս որոշումը խմբովել էր նաև Ռուսաստանի բարձրաստիճան զեկավարության ու Անդրկովկասում նրա ներկայացուցիչների շրջանակներում։ Մեզ այդ հետևողությանն է Հանգեցրել հետևյալ վավերագիրը։ 1921 թ. Հունիսի 9-ին առաջին Կովկասյան կորպուսի շտարի պետ Վորոնկովն ի պատասխան Ռուսաստանի Արտգործժողկոմատի Հունիսի 2-ի հարցման, պատասխանել է՝ «Ղարաբաղն ու Զանգեզուրը, որպես Հայ բնակչության մեծ տոկոս ունեցող նահանգներ, Ադրբեջանի հեղկոմի որոշմամբ, Զանգեզուրում Հակահեղափոխության վերացումից հետո, պետք է անցնին Հայաստանին»։<sup>2</sup>

Հայաստանի կառավարությունը Ա. Մոավյանին նշանակեց Ղարաբաղի արտակարգ կոմիսար՝ խնդիր ունենալով՝ կազմակերպել գավառի ներքին կյանքն ու կենսագործունեությունը։ Նա Թիֆլիսից Ադրբեջանի ներկայացուցիչ Ալիհեյգար Կարանի ուղեկցությամբ պետք է մեկներ Ղարաբաղ։ Եվլախ կայարանում վերջինս առաջարկում է Մոավյանին գնալ Բաքու և այնտեղ՝ Նարիմանովի հետ հստակեցնել անելիքները։ Մոավյանը մերժեց այդ առաջարկությունը և մենակ ուղևորվեց Ղարաբաղ, որտեղ նրան դիմավորեցին մեծ ցնծությամբ։ Սակայն, Ադրբեջանական կառավարության առարկությունների պատճառով՝ կարողացավ երկար մնալ Ղարաբաղում և մի քանի օր անց վերադարձավ Թիֆլիս։<sup>3</sup>

Խորհրդային Հայաստանին նոր հիմնավորություններ էին սպասում։

1921 թ. Հունիսի վերջերին Լեռնային Ղարաբաղի հարցում Խորհրդային Ադրբեջանի զեկավարությունը կարուկ փոխեց իր գիրքորոշումը, թերևս ճիշտ կլինի ասել, հրապարակայնորեն հայտարարեց այն, ինչի համար իրականում իրենք թաքուց պայքարում էին։ Նարիմանովը «հանեց դիմակը», բացեց խաղաքարտերը և պահանջեց, որ Լեռնային Ղարաբաղը տրվի Ադրբեջանին։ Խնդիրը տրամա-

1 «Нагорный Карабах в 1918—1923», շ. 536.

2 Ալի Կեկ, ֆ.83, գ.16, գ.44, թթ.2—3:

3 «Կոմունիստ» (Բաքու), 5 Հուլիսի 1921 թ.:

բանական շարունակություն ունեցավ: Հունիսի 25-ին Անդրկովկասի հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովի նիստում, նրա նախագահ Ս. Կիրովը հայտարարում է, որ բաղաքական նկատառումներով տարածքային վերաձեռումներ չեն լինելու: <sup>1</sup> Հունիսի 26-ին հանձնաժողովի աշխատանքները կանգ առան: <sup>2</sup> Այդ կապակցությամբ, Օրջոնիկիձեն և Կիրովը հունիսի 26-ին հեռագրեցին Նարիմանովին և Հայտնեցին, որ Զանգեզուրում ստեղծված իրավիճակում Հայաստանի սահմանների որոշման բանակցությունների դադարեցումը թողնում է շափազանց աննպաստ տպագրություն, խնդրելով շտագ հրավիրել քաղըրյուրո և ժողկոմխորհ՝ լուծելու Դարաբաղի հարցը, այն հաշվով, որ հաջորդ օրը՝ հունիսի 27-ին հնարավոր լիներ բանակցություններն ավարտել: <sup>3</sup> Այս անգամ նրանք առավելագույն եռանդ են ցուցաբերում տարածաշրջանում աղքային—տարածքային լուրջ վեճերը վերջնականացնեն լուծելու ուղղությամբ և նարիմանովից պահանջում՝ լեռնային Դարաբաղի հարցը լուծելիս անհրաժեշտ է առաջնորդվել այն սկզբունքով, որ ոչ մի հայկական գյուղ չմիացվի Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չմիացվի Հայաստանին: <sup>4</sup> Մինչդեռ Ադրբեջանի ղեկավար այրերը, որոնք սերտորեն համագործակցում եին քեմալականների հետ և ստանում Ստալինի անմիջական օգնությունն ու հովանավորությունը, շուղեցին անգամ լսել այդ մասին: Հունիսի 27-ին Հրավիրվեց Ադրբեջանի կոմիտեի կենտկոմի և ժողկոմխորհի համատեղ նիստ, որը քննության առավ Հայաստանի և Ադրբեջանի սահմանների հարցը: Նիստը որոշեց՝ անընդունելի գտնել Բեկզադյանի հարցադրությունը: Իսկ Բեկզադյանը ընդամենը պահանջում էր նկատի ունենալով Հայաստանի տարածքային անբարենպաստ վիճակը և «Հանուն ընդհանուր համերաշխության, հանուն մեկրնդմիշտ

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 642.

2 Կովկասյան բյուրոն, մայիսի 2-ին Անդրկովկասի հանրապետությունների սահմանները որոշելու համար ստեղծել էր հանձնաժողով, որի կազմում էին երկու վրացի, չորս ադրբեջանցի և մեկ հայ (Ալ. Բեկզադյան): Այսպիսի անհամաշխատ կազմը վեհայացմ էր, որ հանձնաժողովը չէր կարող օրինակութիւն վճիռներ նախադարձության շէին արժանանում: Տե՛ս «Нагорный Карабах в 1918—1923», с. 640—644.

3 «Нагорный Карабах в 1918—1923», с. 640—641.

4 Նույն տեղում, էջ 644:

ամենաանկեղծ բարեկամական փոխարարերություններ հաստատելու՝ անել որոշ տարածքային զիջումներ, ընդ որում՝ խիտ հայ բնակչություն ունեցող շրջաններում»:<sup>1</sup>

Նիստն ընդունեց որոշում, արտահայտելով իր անհամաձայնությունը կեռնային Ղարաբաղը Հայաստանին հանձնելու կապակցությամբ: Նրա որոշումն էր՝ կեռնային Ղարաբաղի հարցը լուծել Աղրբեշանից նրա անառարկելի տնտեսական կախվածությունից ելնելով: Եարունակության մեջ նշվում էր, թե հանուն «հայու մահեղական չքավոր բնակչության բարօրության ու հեղափոխության ամրապնդման» անհրաժեշտ է կեռնային Ղարաբաղը միացնել միայն Աղրբեշանին:<sup>2</sup> Այս անհեճնիք որոշման համար, անշուշտ, հիմք է ծառայել ոչ թե տնտեսական գործոնը, կամ թե հայու մահեղական բնակչության բարօրության խնդիրը, այլ ամենից առաջ Աղրբեշանի ղեկավարի սպառնալիքները: Նիստում նարիմանովը գործի է դնում փորձված մեթոդ՝ սպառնում, որ եթե կեռնային Ղարաբաղը շտրվի Աղրբեշանին, ապա հնարավոր անկանխատեսելի հետեանքերի համար ինքը հրաժարվում է պատասխանատվությունից:<sup>3</sup> Այսպիսի որոշումից հետո Անդրկովկասի հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովն իր աշխատանքները չէր կարող վերականգնել, ուստի ցըլում է: Այս որոշումով Աղրբեշանի ղեկավարությունը, ի գեմա նարիմանովի, շեղյալ է համարում իր իսկ ընդունած նախորդ բոլոր այն որոշումները, որտեղ խոսք էր գնում կեռնային Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու մասին: Այդ է հաստատում նաև՝ հունիսի 27-ին Հուսեյնովի հետ նարիմանովի ունեցած հեռախոսագրույցը: Թիֆլիսում գնտվող Հուսեյնովին տեղյակ պահելով կեռնային Ղարաբաղը Աղրբեշանի կազմում մտցնելու իր որոշման մասին, նա միաժամանակ պատվիրում էր. «Ասացեք, որ դա բաղդ. և կազմ. բյուրոյի կարծիքն է, իսկ եթե նրանք հիշատակում են իմ հոչակագիրը, ապա այնտեղ տառացիորեն ասված է հետեւյալը. կեռնային Ղարաբաղին տրվում է ազատ ինքնորոշման իրավունք»:<sup>4</sup>

1 ՀՀՊՊԿ, ֆ.128, գ.1, գ.1420, թ.15.

2 ՄՒ ԿԿ, ֆ.85, գ.13, գ.66, թ.1.

3 «Нагорный Карабах в 1918—1923», с. 640—641.

4 Նույն տեղում, էջ 646;

Նույն օրը Կավբյուրոյի նախագահությունը (Օրջոնիկիձեն, Կիռով, Ֆիդատյաներ) քննության առավ Աղրբեջանի արտգործողություն Հուսեյնովի հաղորդումն իր ու Նարիմանովի վերը նշված հեռախոսազրույցի մասին և ընդունեց որոշում՝ հրավիրել ՌԿ/Բ/Կ Կավբյուրոյի արտահերթ պլենում, Նարիմանովի ու Մյասնիկյանի մասնակցությամբ:<sup>1</sup> 1921 թ. հունիսի 4-ին հրավիրվեց ՌԿ/Բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենում: Նրան մասնակցում էին Օրջոնիկիձեն, Մախարաձեն, Մյասնիկյանը, Կիրովը, Նարիմանովը, Նազարեթյանը և Ֆիդատյաները: Ներկա էր նաև Ռուսաստանի ազգությունների գործերի ժողովը Ստալինը, որին Նալչիկի հանգստավայրից հրավիրել էր Օրջոնիկիձեն: Ղարաբաղի հարցի քննարկման ժամանակ երեսն եկան երկու տիսակետներ և քվեարկության դրվեցին հետեւյալ առաջարկները.

1. Ղարաբաղը թողնել Աղրբեջանի սահմաններում: Կողմ քվեարկեցին Նարիմանովը, Մախարաձեն, Նազարեթյանը: Դեմ՝ Օրջոնիկիձեն, Կիրովը, Մյասնիկյանը, Ֆիդատյանը:

2. Հանրաքվե անցկացնել ամբողջ Ղարաբաղում, ինչպես հայ, այնպես էլ մուսուլման ամբողջ բնակչության մասնակցությամբ: Կողմ քվեարկեցին Նարիմանովն ու Մախարաձեն:

3. Ղարաբաղի լեռնային մասը մտցնել Հայաստանի կազմի մեջ: Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Ֆիդատյանը, Կիռովը:

4. Հանրաքվե անցկացնել միայն լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ միայն հայերի մեջ: Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Ֆիդատյանը, Կիրովը:

Որոշեցին. Լեռնային Ղարաբաղը մտցնել Խորհրդային Հայաստանի կազմում, հանրաքվե անցկացնել միայն լեռնային Ղարաբաղում:<sup>2</sup> Փաստորեն, ընդունվել էր երկու որոշում: Կավբյուրոն անհրաժեշտ համարեց տեղ տալ նաև հանրաքվեին, եթե, իհարկե, Աղրբեջանցիները պահանջեին այն: Որոշումից, սակայն, դժգոհ էր Նարիմանովը: Նա հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի,

1 Մի Կոմ, ֆ.17, ց.13, գ.384, թ.26:

2 Նույն տեղում, թ.66, նույն տեղում, ց.2, գ.1, թթ. 117—118:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը Աղբբեջանի համար՝ անհրաժեշտ էր համարվում այն փոխադրել ՌԿ/Բ/Կ Կենտկոմի վերջնական լուծմանը։ Աղբբեջանի զեկավարի հայտաբարությունից հետո ընդունվեց նոր որոշում. «Նկատի ունենալով, որ Ղարաբաղի հարցը առաջացրել է լուրջ տարածայնություններ, ՌԿ/Բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿ/Բ/Կ Կենտկոմ, վերջնական որոշման համար»<sup>1</sup> Հարցի քննարկումը ՌԿ/Բ/Կ Կենտկոմում լսելու փոխարեն, Շուլիսի 5-ին հրավիրվեց Կավբյուրոյի արտահերթ պլենում, որին մասնակցում էին նրա բոլոր անդամները և Ստալինը։ Կավբյուրոյի անդամներ Օրջոնիկիձեն և Նազարեթյանը բարձրացրին նախորդ օրվա վերջին որոշումը վերանայելու հարցը։ Պլենումը կայացրեց բոլորովին նոր որոշում։ Ամբողջությամբ մեջ ենք բերում նիստի արձանագրության լրիվ տեքստը։

Լսեցին. Ընկ. Ընկ. Օրջոնիկիձեն և Նազարեթյանը հարց են բարձրացնում Ղարաբաղի մասին նախորդ պլենումի որոշումը վերանայելու մասին։

Որոշեցին. ա) Ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից, Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, Աղբբեջանի հետ ունեցած նրա մշտական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել ԱԽԱՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ ինքնավար մարզի կազմում մտնող Շուշի քաղաք վարչական կենտրոնով։

բ) Հանձնարարել Աղբբեջանի կոմկուտի Կենտկոմին՝ որոշելու ինքնավար մարզի սահմանները և ներկայացնելու ՌԿ/Բ/Կ Կենտկոմի հաստատմանը։

գ) Կավբյուրոյի նախագահությանը հանձնարարել՝ պայմանավորվելու Հայաստանի Կենտկոմի և Աղբբեջանի Կենտկոմի հետ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի թեկնածուի մասին։

1 ՄԵՒ ԿԵԱ, ֆ.17, ց.13, գ.384, թ.66, ց.2, գ.1, թթ. 117—118:

գ) Աղբբեջանի կենտրոնին՝ պարզել և Կավճյուրոյի հաստատ-  
մանը ներկայացնել ինքնավարության ժավալը:<sup>1</sup>

Արձանագրության մեջ, ինչպես տեսանք, խոսք չկա հուլիսի  
5-ի որոշումը քվեարկելու մասին, որը և թույլ է տալիս ենթադրել,  
որ հարցը լուծվել է առանց քննարկելու և քվեարկության (այլապես  
կնշվեր, թե որոշումը ձայների ինչպիսի հարարերությամբ է ընդուն-  
վել): Ընդ որում, կա աղբբեջանական մի հրատարակություն, որում  
տեղ են գտնել նաև տվյալ որոշման քվեարկության տվյալներ՝ 4  
կողմ, 3 ձեռնպահ:<sup>2</sup> Ամենայն հավանականությամբ, ժողովածուի  
հեղինակներն այս շինծու տվյալները խցկել են փաստաթղթի մեջ,  
Կավճյուրոյի որոշմանը օրինական բնույթ հաղորդելու նպատակով:  
Որոշման անօրինականությունը հավաստում է նրա բովանդակու-  
թյունը: Փաստարկները պարզունակ են, թույլ, անհեթեթ ու գորկ  
ներքին տրամարանությունից: Նախ, առաջին կետի մասին, որը  
հանդիսանում է որոշման առանցքը. Լեռնային Ղարաբաղը թողնել  
Աղբբեջանի սահմաններում, Ասված է պարզ ու որոշակի: Կարծես  
թե անրնական ոչինչ չկա. պաշտպանվել է տարածքային հարցի  
լուծման պատմական սկզբունքը, ասել է թե՝ եղել է նրա սահման-  
ներում, չիմա էլ թող մնա: Որոշման էությունը այսպես կարող է  
մեկնարաննել միայն Ղարաբաղի պատմությանը անծանօթ ընթեր-  
ցողը: Խսկ որ այդպես մտածել ու այդպես էլ գործել են հարցին  
քաջատեղյակ Կավճյուրոյի անդամները, մեղմ ասած, ծիծաղելի է:  
Իրեն հարգող յուրաքանչյուր մարդ, առավել ևս պետական գործիչը,  
դժվար թե այդքան շուտ «մոռացության» տար մեկ օր առաջ կողմ  
քվեարկած փաստաթղթի գոյությունը, խսկ հաջորդ օրը իր ստորա-  
գրությունը զներ բոլորովին հակառակ վճիռ պարունակող որոշման  
տակ, ինչպես որ արեցին Կավճյուրոյի անդամները: Հետաքրքիր է,  
ե՞րբ Կավճյուրոն կայացնում էր այդպիսի որոշում, նրա կազմում  
շտանվեց մեկը, որ գոնե իր գործընկերների հիշողությունը «ստուգե-  
լու» համար, հարցներ, ո՞ր մնաց մեկ օր առաջ նույն մարմնի կող-

1 Մի ԿԱ, ֆ.17, ց.13, գ.384, թ.67, նույն արխիվ, ֆ.64, ց.2, գ.1, թ.118.  
2 «К историю образования Нагорно-Карабахской автономной области  
Азербайджанской ССР». Документы, и. материалы, с. 321.

մից ընդունված որոշումը՝ Ղարաբաղը Հայաստանին տալու մասին, երբ այսօր դա դիտվում է որպես ազրեցանական տարածք։ Անշուշտ, եղած կլինեն, բայց նրանց էլ, ըստ երևոյթին պակասել է համարձակությունը։ Այդպես պետք է ենթադրել, քանի որ նիստում տոն տվողը հայատյաց Ստալինն էր։

Հակված ենք կարծելու նաև, որ որոշման հեղինակներն այդպես վարվել են պատմության համար, որպեսզի գալիք սերուղներին ցույց տան, որ հարցը «օրյեկտիվ» լուծում է ստացել։ Ակնհայտորեն կեզծելով իրականությունը, Կավրյուրոյի անդամները, ըստ երևոյթին, հույսը դրել են այն բանի վրա, որ խնդրի հետ առնչվողը կրավարարվի հովիսի 5-ի որոշումով և նախորդ օրվա՝ հովիսի 4-ի որոշումը չի կարգաւ։

Ինչեմքէ, փաստը մնում է փաստ, որ հովիսի 5-ի ապօրինի որոշումով հայկական Արցախը բռնակցվեց Խորհրդային Ազրբեջանին։ Այժմ՝ մյուս հարցը՝ Բայց, այնուամենայնիվ, ինչո՞ւ «թողնել» թողնել, որովհետեւ, ըստ որոշման հեղինակների, կեռնային Ղարաբաղը տնտեսական կապերով կապված էր Դաշտային Ղարաբաղի և Ազրբեջանի հանրապետության հետ։ Հենց սկզբից ասենք, որ տնտեսական կապի մասին փաստարկը շինծու պատճառաբանություն էր անօրինականությունը օրինականացնելու և բռնակցումը արդարացնելու համար։ Ի գեալ, ինչպես արդեն ցույց ենք տվել, այս տեսակետը առաջին անգամ արտահայտել էին մուսավաթականները, որ առանց Արցախի Ազրբեջանը կենսունակ շէ (այդ գաղափարը նրանց մեջ արմատավորել էին բրիտանական գաղութարարները)։

Կավրյուրոյի որոշումը արտահայտում էր Ազրբեջանի ղեկավարության քաղաքական գիծը, այն է՝ տնտեսական «կապի» գործունը օգտագործել որպես տարածքային պահանջների քաղաքականություն Ղարաբաղի նկատմամբ։ Այո, Ղարաբաղի նկատմամբ, որովհետեւ ինչպես հովիսի 5-ի որոշման մեջ է ասված՝ «Ղարաբաղը «թողնել» Ազրբեջանին նաև «ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային համերաշխության անհրաժեշտությունից»։<sup>1</sup>

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 644—645.

իսկ ինչ վերաբերում է Ղարաբաղի երկու մասերի և Աղրբեջանի հանրարեսության միջև տնտեսական կապերին ընդհանրապես, ապա պետք է նշել, որ Հարեան երկրների միջև տնտեսական և ոչ միայն տնտեսական կապերի առկայությունը մարդկային հասարակության զարգացման ընդհանուր օրենքներից է: Անշուշտ, կեռնալին Ղարաբաղը նույնպես դուրս չի մնացել այդ օրենքից:

Այդ դեպքոնմ ի՞նչը ստիպեց Կավրյուրոյին 1921 թ. հուլիսի 4-ի վճիռը վերանայել և հաջորդ օրն ընդունել միանգամայն հակառակությունը: Այս հարցին տարրեր առիթներով իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են մի շարք պատմաբաններ: Տիրապետող տեսակետը այն է, որ Կավրյուրոն հուլիսի 4-ի որոշումը հուլիսի 5-ին վերանայել է Նարիմանովի և Աղրբեջանի մյուս զեկավարների ճնշման ու շանտաժի աղղեցության տակ: Նարիմանովի սպառնալից տոնը և շանտաժը, որը նա շատ ճարպկորեն օգտագործում էր քաղաքական հարցերը լուծելիս, անշուշտ, իր շարդը կատարեց նաև Ղարաբաղի հիմնահարցում: Այդ կապակցությամբ վկայակոչենք Հայաստանի կոմկուսի առաջին համագումարում (1922 թ. հունվար) Մյասնիկյանի խոսքը: Այն հարցին, թե ինչու Լեռնային Ղարաբաղը չի միացվել Հայաստանին, նա պատասխանել է, թե Կովկասյան բյուրոյի պլենումի վերջին նիստը հիշեցնում էր Անդրկովկասի նախկին պետությունների զեկավարների պայքարը: Աղրբեջանն ասում էր. «Եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա մենք նրան նավթ շնոր տա»:<sup>1</sup>

Սակայն Ղարաբաղի հիմնահարցի լուծման գործում Նարիմանովի այդ դիրքի շափից ավելի կարևորումը, մեր կարծիքով, համոզիլ է: Եթե, իրոք, ոս այդպես լիներ, ապա Կավրյուրոյի հուլիսի 4-ի նիստը պետք է, որ աղրբեջանամետ որոշում ընդուներ. Հէ՛ս որ Ղարաբաղի հարցի կապակցությամբ Նարիմանովը, ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, բազմիցս անգամներ, բացահայտ ճնշում ու սպառնալիք էր գործադրել խորհրդային զեկավարության և Կովկասի բոլշևիկ գործիչների վրա: Գալով Կավրյուրոյի անդամներին Աղրբեջանին զիջումնային կողմնորոշում թելադրելու Ստալի-

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 660.

նին վերապրված գլխավոր դերին, պետք է ասել, որ ուսումնասիրողների կողմից փաստացի շիմնավորված, անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով։ Բանն այն է, որ եղած վավերագրերը ոչինչ չեն հաղորդում այն մասին, թե թուրքերի հիացմունքը շարժելու համար, հուլիսի 4-ի գիշերը, կուլիսների հետևում ինչ ստոր գործարքներ են կատարվել։ Հետազոտողներն այդպիսի հնիթագրություն անելու համար հիմք են ունեցել Ստալինի հակահայկան գործելակերպը։ Մենք ևս համակարծիք ենք, որ այդ գործում Ստալինը իր բացասական դերը կատարել է։ Սակայն, մեզ համար անընդունելի է այդ հարցում նրան հիմնական պատճառ համարելը։ Իրավացի տարակուտանք է հարուցում անժխտելի մի իրողություն։ այդ գեղագում ինչու՞ Ստալինը իր բացառիկ հեղինակությունից շօգտվեց հուլիսի 4-ին, չէ՞ որ դրա համար նրան ոչ ոք չէր խանգարում։ Հարցը մնում է անպատասխան։ Մենք հակված ենք ենթագրելու, որ Կավբյուրոյի հուլիսի 4-ի որոշումը վերանայվել է Մոսկվայի թելագրանքով։ Բայ երկույթին, Կավբյուրոյի սույն նիստից անմիջապես հետո Նարիմանովը հեռախոսային խոսակցություն է ունեցել կենինի հետ և դիմել նրա օգնությանը։ Վերջինս էլ «համաշխարհային հեղափոխության» շահերից ելնելով, պահանջել է Կավբյուրոյի անդամներից հարցը վճռել Աղրբեջանի օգտին։ Ճիշտ է, վավերագրերում այդ կարգի վկայություններ չեն պահպանվել։ Սակայն, կան այլ փաստաթղթեր, որոնք այդպիսի ենթադրություն անելու հիմք են հանդիսանում։ Այդ տեսակետից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետեւյալ հանգամանքի վրա։ Վերը արդեն նշել ենք, որ Նարիմանովի դեմ լինելու պատճառով որոշվեց հարցի վերջնական քննարկումը փոխադրել Մոսկվա։ Բայց զա տեղի չունեցավ։ Հայտնի է նաև, որ Հայաստանի ժողկոմիորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, որը Հայաստանի կողմից մասնակցում էր նիստին, պաշտոնապես շի դիմել Կավբյուրոյին կատարելու հուլիսի 4-ի որոշման պահանջը, այն է՝ հարցի քննարկումը փոխադրել Մոսկվա։ Մնում է ենթագրել, որ կենինը հանձնարարել էր Կավբյուրոյին հարցը վճռել տեղում, ի նպաստ Աղրբեջանի։ Զքննարկելով այն հարցը, թե այդ երկու (կենին, Ստալին) պետական գոր-

ժիշներից որն է ավելի որոշիչ դեր կատարել Հուլիսի 5-ի ապօրինի որոշումը կայացնելու գործում (գա համակողմանի վերևության կարիք ունի), ուղարկում ենք ուղղակի ասել, որ երկուսն էլ համաձայն են եղել Արցախը որևէ կարգավիճակով Աղրբեջանի կազմում թողնելու գաղափարին:

Հայ ժողովուրդը միահամուռ մերժեց այդ որոշումը, որը ՀԿ/Բ/Կ Կենտկոմի բյուրոն իր 1921 թ. Հուլիսի 26-ի որոշման մեջ որակեց որպես հիմքից սխալ որոշում:<sup>1</sup>

Կավլյուրոյի սույն որոշման ապօրինի լինելու հանգամանքը լավ էր գիտակցում նաև Աղրբեջանի ղեկավարությունը և ամեն ինչ անում էր այն արդարացնելու համար, Աղրբեջանի կուսակցական և պետական պաշտոնատար անձինք փորձում էին լեռնային Ղարաբաղում, ի նպաստ Աղրբեջանի, Հայ ազգարնակշությունից կորցել որևէ որոշում: Այդ ուղղությամբ առանձնահատուկ ակտիվությունն էին դրսեորում Աղրբեջանի նախարարների խորհրդի նախագահ և արհմիությունների խորհրդի նախագահ Լևոն Միրզոյանը և հանրապետության ռազմածովային ուժերի կոմիսար Ալիքեյդար Կարակը: Ընդ որում, Աղրբեջանի պատմարաններ Զ. և Դ. Գուլիեները և ուրիշներ, օգտագործելով այդ, փորձում են ընթերցողին համոզել, թե իր 1921 թ. Հուլիսի 5-ի որոշումից հետո լեռնային Ղարաբաղի ազգարնակշության համար լայն հնարավորություններ էին ստեղծվել ազատորեն արտահայտելու իր կամքը, որն իր միշտ էլ ի շահ Աղրբեջանի է եղել: Եվ որպես ապացույց վկայակոչում են 1921 թ. օգոստոսի 1-ին Շուշիի գալարի 2-րդ տեղամասի խորհուրդների արտահերթ համագումարի որոշումը, ըստ այդմ կատարելով ակնհայտ կեղծիք: Իրականությունն այն է, որ համագումարը մի շարք հարցերի հետ քննության է առել նաև լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցը: Համագումարի աշխատանքներին մասնակցող Լևոն Միրզոյանը առաջարկում է սույն հարցը օրակարգից հանել, պատճառարանելով, որ Ղարաբաղը տնտեսական, քաղաքական, հոգեսր կապերով սերտորեն կապված է Աղրբեջանի կենտրոն Բարվի հետ: Ի պատասխան և Միրզոյանի, պատվիրակներից շատերը հայտա-

1 «Нагорный Карабах в 1918—1923», 351.

բարում են, որ «իրենք չեն կարող բնակչության անունից այդ հարցի կապակցությամբ արտահայտվել և առաջարկում են գյուղերին այդ հարցերի նախնական քննարկման հնարավորություն տալ»: Իսկ պատգամավոր Պետրոսյանը համագումարի մասնակիցների անունից հայտարարում է, որ ոչ ոք չի ցանկանում Միրզոյանի կարծիքը պաշտպանել, քանի որ «բոլորին լավ հայտնի է Խորհրդային Հայաստանի հետ միավորված լինելու գյուղացիության ցանկությունը»:<sup>1</sup>

Լ. Միրզոյանի լրացուցիչ բացատրությունից հետո համագումարը այդ հարցի շուրջ առանց որևէ որոշում կայացնելու անցնում է օրակարգի հաջորդ հարցի քննարկմանը:<sup>2</sup>

Նույն ձևով են ընթացել նաև Լեռնային Ղարաբաղի մյուս շրրջանների համագումարները: Մեկ այլ փաստաթղթում, որը 1921 թ. հոկտեմբերի 1-ին Ղարաբաղից ուղարկվել է Երևան, ասված է. «21 թ. հուլիսի 28-ին ընկ. Կարանը և Բաքվից եկած Միրզոյանը գումարեցին Խանքենդիի առաջին շրջանի գործկոմների համագումար, ըստ որում, օրակարգում դրված էր Բաքվի բանվորների համար «Հացամթերքի» հարցը: Համագումարին եկել էին մոտ 60 մարդ: Համագումարի քննարկմանը ենթակա «Հացամթերքի» հարցը հետին պլան մղվեց. օրակարգի առաջին հարց դարձավ Լեռնային Ղարաբաղը: Կարանը, բացատրելով Լեռնային Ղարաբաղի կախվածությունը Թաշտային Ղարաբաղից, հավաքվածներին առաջարկեց իրենց կարծիքը ասել Աղրբեջանի հովանավորության տակ ինքնավար Ղարաբաղ՝ իրը արգեն լուծված հարցի մասին: Համագումարում հավաքվածները պատասխանեցին, որ նրանք համագումար են եկել ոչ այդ հարցը քննարկելու և որ իրենց կարծիքն արտահայտել չեն կարող, իսկ իրենց շրջանի կարծիքը արտահայտել լավորված չեն: Միրզոյանը ավելի եռանգուն կերպով պաշտպանեց Աղրբեջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի հարցը և ավելի ուժգնորեն հարկադրում էր այդ հարցի կապակցությամբ դրավոր բանաձեռ ընդունել հօգուտ Աղրբեջանի:

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 651—652.

2 Տե՛ս՝ նույն տեղում, էջ 652:

Բայց նրանց ջանքերը դեմ առան Հավաքվածների սառը հակա-  
հարվածին միայն, Դրանով նրանք ձգտում էին ձեռք դցել մի փաս-  
տաթուղթ, որով Լեռնային Ղարաբաղի ազգարնակշությունը համա-  
ձայներ Աղրբեջանի կազմում ինքնավար Ղարաբաղին:

Հրավիրվեցին առաջին շրջանի գործկոմների նիստեր, ինչպես և  
մյուս շրջաններում առանձին՝ ցանկալի համաձայնություն ձեռք բե-  
րելու նպատակով: Կարեոր է զեկույցի ավարտը՝ «Դրությունը օրհա-  
սական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղը  
Խորհրդային Հայաստանին միացնելու համար»:<sup>1</sup>

Այսպիսին է եղել արցախահայության կամքը և վերաբեր-  
մունքը Աղրբեջանի նկատմամբ: Սա է պատմական իրողությունը:

Այսպիսով, ի մի բերելով ասվածը, հանգում ենք այսպիսի  
հետևության.

ա) 1921 թ. ամռանը Լեռնային Ղարաբաղում հանրաքվե շի կա-  
տարվել և արցախահայությունն էլ շի արտահայտվել Աղրբեջանի  
կազմում մարզային ինքնավարության օգտին: Երկրամասի մի քա-  
նի շրջաններում Հրավիրված ներկայացուցչական ժողովներն ու  
համագումարները վճիռներ են կայացրել Աղրբեջանի դեմ:

բ) Լեռնային Ղարաբաղը «Աղրբեջանի անքաժան մասը» դարձ-  
նելու Բաքվի բոլոր ձեռնարկումները ապարդյուն անցան, չնայած  
աղրբեջանցի պատմաբանները պնդում են բոլորովին հակառակը:

1 «Нагорный Карабах в 1918—1923», с. 653—654.

## ՎԵՐՋԱԲԱՆ

Փետրվարյան բուրժուա—դեմոկրատական նեղափոխուրյան շնորհիվ զարքոնի ապրեց ազգային կյանքը: Ազգային պետական շինարարուրյան, տարածքային և այլ հրատապ նիմեահարցերը ակտիվ շարժման մեջ ներգրավեցին երկրամասի ժողովուրդներին, ազգային ժաղաքական կուսակցուրյուններին և հասարակական լայն զանգվածներին:

1918 թ. մայիսին Անդրկովկասյան դաշնակցային հանրապետուրյան փլուզումից հետո ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ հանրապետուրյունները: Հայաստանի Հանրապետուրյան գոյուրյան գրեթե ամբողջ բնրացում մուսավարական Ադրբեջանի հետ հարաբերուրյունները լարված քնույր ունեին: Դրա հիմնական պատճառը սահմանային վեճերն էին: Այդ հանրապետուրյան առաջին ժայլերը եղան հայկական տարածքների նկատմամբ նվաճողական, զավրողական ոտնձգուրյունները: Ադրբեջանը նավակնում էր տիրել հայկական Ղարաբաղին ու Զանգեզուրին: Այս լեռնաստանը, որն ամբողջ մարդկուրյանը հայտնի է իրեւ հայերի և նրանց ժաղաքակրուրյան բնօրրան, փաստուն կովածադիկ էր դարձել նրա օրինական տիրոջ ու հարեան հանրապետուրյան միջև:

Հայոց արեելից կողմանց կամ Արցախ—Ղարաբաղ հայաշխարենի տարածքը Հայաստանի միջնարեդն է Արևելից սպառնացող վտանգների դեմ: Հայոց նակատագրի նոր տնօրենները գիտակցում ու հաշվի էին առնում, թե Արարատյան երկրի նորելուկ հանրապետուրյան ոտքի կանգնելու և զորացման համար ինչ ուզմագրական կարեւոր նշանակուրյուն ունի Ղարաբաղը: Այդ գիտակցուրյամբ էլ Հայաստանի կառավարուրյունը պաշտոնական հայտարարություն արեց, որ կենային Ղարաբաղը և Զանգեզուրը Հայաստանի անրածան մաս են և միշոցառումներ նախատեսեց դրանց կառավարման համ որ: Հայաստանին շնաշողվեց իր իշխանուրյունը տարածել Ղարաբաղի վրա: Արցախահայուրյունն ինքը պիտի լուծեր իր նակատագրի վրա ծանրացած նիմեախսնդիրը, ժանի ու Հայաստանի նորաստեղծ հանրապետուրյունը բավարար ուժ չուներ Ադրբեջանի և նրա բիկունիքին կանգնած Թուրքիայի նավակնուրյուններին դիմակայիլու համար:

Աղրբեշանի ղեկավարների ամբողջ ջանքերը, կատարված բրո-  
նաւարելների, զազանությունների ու հանցագործությունների իրա-  
կանացնողների և անմիջական մասնակիցների բոլոր գործողություն-  
ները մի ճպատակ ունեին՝ բնիկ ժողովրդին արմատախիլ անել իր  
պատմական բնօրրանից:

Թուրքերի հեռանալուց հետո Լեռնային Ղարաբաղում, ինչպես  
նաև Զանգեզուրում Աղրբեշանի իշխանության հաստատմանը օժան-  
դակում էին բրիտանական զինվորական իշխանությունները:

Հայ—աղրբեշանական հարաբերություններին նոր սրույյուն  
հաղորդեց Աղրբեշանի խորհրդայնացումը: Լեռնային Ղարաբաղին ու  
Զանգեզուրին բռնությամբ տիրելու մուավարական Աղրբեշանի  
բաղաժականությունը շարունակեց Աղրբեշանը՝ Խորհրդային Ռու-  
սաստանի և Տեմալական Թուրքիայի հետ համագործակցած: Խոր-  
հրդային Աղրբեշանը և բոլշևիկյան Ռուսաստանը ձգում էին ղե-  
պի Թուրքիա, որն իր զարձել էր Արևելքի հեղափոխության կենտ-  
րոնը: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուր և Նախիջևանը նրանց  
պետք էր Թուրքիայի հետ անմիջական կապ ստեղծելու համար: Այս  
զաղափարի իրականացմանը զոհաբերվեցին հայ ժողովրդի ազ-  
գային—բաղաժական ու սոցիալական շահերը՝ նաև այն բանից հե-  
տո, երբ Հայաստանը դարձավ խորհրդային: Խորհրդային Ռուսաս-  
տանը, բնդառաջելով բոլշևիկացած Աղրբեշանի և Տեմալական Թուր-  
քիայի հայատյաց ցանկություններին, ավելի քան երեք տարիների (1918—1921 թթ.) անհավասար գոյամարտում իր ազատությունն ու  
անկախությունը պաշտպանած Լեռնային Ղարաբաղը հանձնեց Ա-  
ղրբեշանին: Հայ ժողովուրդը վեռականուեն մերժեց Լեռնային  
Ղարաբաղը Աղրբեշանին միացնելու մասին որոշումը: Կավրյուրո-  
յի անօրինական որոշումից հետո Աղրբեշանի ղեկավարները համառ  
ջանքեր գործադրեցին ստանալու արցախահայության համաձայնու-  
թյունը՝ Աղրբեշանի իշխանությունը նանաշելու մասին: Նրանց  
ջանքերը ձախողվեցին՝ նանդիպելով Լեռնային Ղարաբաղի հայ  
բնակչության համառ դիմադրությանը

Խորհրդային իշխանության հետագա տարիներին Աղրբեշանի  
կողմից արցախահայությունը ենթակվեց անասելի ննջման ու հա-  
լածանների: Բոլշևիկյան ամբողջատիրության պայմաններում նա

շրնկելեց ու գլուխ շխտնիարեց: Ավելին, առիքը եղած դեպքերում բարձրացրեց Ղարաբաղի հիմնահարցը: Ղարաբաղյան հիմնահարցի լուծման համար 1940—ական թվականներից աշխուժացում ապրող շարժումը նոր ուժով բորբոքվեց 60—70-ական թվականներին և ժայրեց 80—ական թվականների վերջերին: Ազրբեջանի իշխանությունները, կենտրոնի աջակցությամբ, ձեռնամուխ եղան բռնի ուժով Լեռնային Ղարաբաղի վերջնական հայարափմանը: Արցախահայուրյունը զենք վերցրեց պաշտպանելու իր հայրենիքը: 1991 թ. գարնան և ամռան ամիսներին մարզում հայ—ազրբեջանական ազգամիջյան խսկական պատերազմ սկսվեց, որը շարունակարար ծավալից ու խորացավ: Այդ կոփեներից ծնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետուրյունը (1991 թ.):

Լեռնային Ղարաբաղի այս և նախորդ տարինների կենաց ու մասնություն իրենց համազգային պոռկումով վկայում են ոչ միայն հայ ժողովրդի աներեւ կամքը ու զորության, երա գոյատեման, այլև հաղթանակի համար պայմանական հայարափման անսասան կորովի ու հնարավորությունների մասին:

Բայց, ցավոն, այդ միասնուրյունը միշտ չէ, որ գիտակցվել է: Բացարձակ միաբանուրյուն է հարկավոր Ղարաբաղի և պատմական Հայաստանի մյուս կորուսյալ տարածքների համար պայմանում: Իսկ որ այդ հիմնահարցի լուծումն Արցախից է սկսվում, տարակուսանել չի առաջացնում: Ուրեմն, ազգովի մշտապես ականջալուր պիտի լինենք և ունկնդիրը Արցախի հայրենասեր զավակներից Դավիթ Անանունի մարզարեական խոսին: «Ղարաբաղն ամբողջական Հայաստանից դուրս՝ զա խոց է, որ նախ և առաջ գերեզման պիտի իջեցնի անկախ Ազրբեջանի զաղափարը: Բայց միաժամանակ նա պիտի բունավորե և Հայաստանի անզորուրյունի: Եթե Ազրբեջանում խելքը զլիին բաղաբակեաներ լինեն, երանք ամենից առաջ պիտի երաժարվեն Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզիչ զործիշներ կան, երանք օրն ի բուն պիտի մտածեն Ղարաբաղի մասին»:<sup>1</sup> Ուրեմն, եթե կամենում ենք անվտանգ ու զորեղ մեալ, ապա պետք է պաշտպան ու տեր կանգնենք Արցախին:

Մասն

5

ԿԱՌԻՆ ԱՌԱՋԻՆ

Առնային Ղարաբաղը ճոկտեմբերյան նեղափոխությունից նետք  
Հայկական իշխանության ստեղծումը

11

ԳԱՌԻՆ ԵՐԱԲՐՈՒԹ

Թաւրիսի Եւրիսումը Առնային Ղարաբաղ և նայ ժողովրդի  
ինչնապաշտպանական կոփիլները

29

1. Աղբրեշտանի փորձերը Առնային Ղարաբաղին տիրելու համար  
2. Պալքար թուրքական նվաճողների գեմ

29

37

ԳԱՌԻՆ ԵՐԱԲՐՈՒԹ

Հույսի աստղեր

72

1. Անդրանիկը Զանգեզուրում և Արցախի ճանապարհին  
2. Շուշիի գտնոցը

72

104

ԳԱՌԻՆ ԶՈՐՅՈՒԹ

Անգիայի դիրքորոշումը և Ղարաբաղի ողբերգությունը

122

1. Ղարաբաղը բրիտանական բազարականության ոլորտում  
2. Սուլթանովը ասստիքացնում է բնեությունները

122

167

ԳԱՌԻՆ ՀԻՆԴԵՐԱԲՐ

Պատերազմական գրեթեպարյանները Ղարաբաղում և Զանգեզուրում

186

1. Հերոսական պայքար Զանգեզուրում՝ Հանուն գոյատեման  
2. Համաժողովրդական ապստամբությունը Լեռնային Ղարաբաղում

186

202

3. Հայկական զորամասերի մուտքը Ղարաբաղ

229

ԳԱՌԻՆ ՎԱՅԵՐԱԲՐ

Առնային Ղարաբաղը Խորեղային Ադրբեյջանի և Խորեղային  
Ռուսաստանի Տաղականանուրյան ոլորտում

235

1. Խորհրդային կարգերի մուտքը Ղարաբաղ  
2. Խորհրդային Ադրբեյշտան — Խորհրդային Ռուսաստան երկյակը բնդեմ  
Լեռնային Ղարաբաղի

235

249

3. Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Խորհրդային Ադրբեյշտանին

273

ՎԵՐՃԱԲՐԱՆ

296



ՀԱՄԼԵՏ ՄԱԼԻԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՇՆԱՅԻՆ ՊԱՐԱԲԱՂԻ 1918—1921 թթ.

ԽԱԺՔԱՂԲԻՐ՝ Ս. Հ. ՌԱԶԵՒՅՑԱՆ

ՆԻԿԱՐԻՀ՝ Ն. Վ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԳԵՂ. ԽԱԺՔԱՂԲԻՐ՝ Տ. Ա. ԱԼՄՈՅԱՆ

ՏԵԽ. ԽԱԺՔԱՂԲԻՐ՝ Վ. Տ. ԱԼՄՈՅԱՆ

ՍՐԳԱՂԲԻՀՆԵՐ՝ Լ. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Հ. Գ. ԽՈՂԻԿՅԱՆ

Հանձնված է շարվածքի 7. 11. 96 թ.: Ստորագրված է տպագրության  
5. 12. 96 թ., Զափը 42X60 1/16: Թուղթ տպագրական №1: Տառատեսակը  
«Գրքի սովորական», բարձր տպագրություն: Տպագր. 19,0 մամուլ:  
Հրատ. 14,8 մամուլ: Տպաբանակ 1000: Պատվեր №7: Հրատ. № 8032:  
Դիեր պայմանագրային:

ՀՀԳԱԱ «Գիտություն», Հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ  
Բագրամյանի պող. 24 գ:

Կամոյի տպարան, Գրիգոր Էռոսավորչի № 21: